

# ՄԱԼԻԳԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3-4 1896

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ

1896 № 3-4

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ

երես

1 ԱԴԵԼԵԱՆ, Ա. . . . .	347	Հիւանդոտ խիղճը (պատկեր),
2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .	367	Կանաչ անդաստանը... (բանաստ.),
3 ԳԵՕՐԳԻՑ-ՄԱԴԻՆԵԱՆ . . . . .	368	Էկմոնտ (դրամա, շարունակութ.),
4 ՄԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . . . .	399	Եթիմի մէրը (բանաստ.),
5 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ. . . . .	401	Աստուծոյ համար (պատմևածք),
6 ՄԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . . . .	406	Գրչի հանաքներ (բանաստ.),
7 ԶԱՔԱՐԵԱՆՑ, ՄԿՐՏԻՉ . . . . .	408	Կողբայ աղահանքում (շարունակ.),
8 ՇԱՆԹ. . . . .	423	Դրացուհիս (բանաստ.),
9 "	424	Հողմաղացը (բանաստ.),
10 ՄԻՒՄԱՆԵԱՆՑ, ՅԱՐՈՒԹԻՒՆ . . . . .	425	Շոթա Ռուստաւելի և նորա պօէման,
11 ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ, Յ. . . . .	441	Երեանի բամբակի առեսուրը:
12 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. . . . .	452	Ռուս գիւղացու դրութիւնը:
13 ՄԵՂԱԿՈՐԵԱՆ, Յ. . . . .	463	«Աղապրական հանդէս».
14 ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ, Ա. . . . .	470	Ժամանակակի. Տեսութ. — Հայկական խնդիր. — Ընդհանուր դրութիւնը. — Նպաստների գործը. — Պատրիարքի հաշիւը.
15 *** . . . . .	483	Դաւանութիւնների խնդիր Սլաւո- նական բարեգ. ընկ. մէջ.
16 ԼՈՒՄԻՆԻ. . . . .	485	Բար. ընկ. Ախալցիս. Ճիւղի առիթով.
17 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .	462	Հայկական թատրոն. VII.
18 ՄԵՒԵԱՆ, Հ. . . . .	499	Թատրոնի չուրջը, VII.
19 Ն. . . . .	502	Բաշխնջաղեանի պատկերահանդէսը.
20 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ. . . . .	504	Անգլիական նամակներ, VII.
21 ԽՄԲ. . . . .	513	«Մուրճ»-ի նիւթերը 1889—1895 թ.
22 ԽՄԲ. . . . .	518	Զանաղան լուրեր.

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐՈՆ Մ. Դ. Ա-ՅՈՒՆԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанца, Гол. пр., д. № 41

1896



# ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 3—4 1896

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

1896 № 3—4

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ

Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա.ՕՏԻԵՎԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія M. D. Rotinianca, Год. пр. д. № 41.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 2 Апрѣля, 1895 г.

# ՀԻՒԱՆԴՈՏ ԽԻՂՃԸ

(Պատկենը ներկ)

## I

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

## I

Այս երկու օր է, որ ես շանթահարի նման եմ: Դարադաղցի Սահակի խոստովանքը՝ իւր մահւանից երկու օր առաջ՝ ինձ վրա այնպիսի մի խոր տպաւորութիւնն է թողել, նրա պատմածը այնքան զարհութելի և սարսափելի է, որ ես յաճախ նոյն տպաւորութեան տակ ինքս ինձ հարցնում եմ: Տէր Ասուած, մի՛թէ մարդու, այն էլ գիւղի ծոցում մնաած, մեծացած մարդու սիրու այնքան կարծր կարող է լինել և խիզը կորած, որ նա գազան դարձած իւր գազանացին կրքերի յետելից լնկնից Ի՞նչու մարդը ոտքի տակ տալով այն ամենը, ինչ որ մարդիկացին է, ազգքան այլանդակւում, հրէշանում է: Դարադաղցի Սահակի կատարածը մի սարսափելի եղեւնազործութիւն է, որի պատճառով նա թէ Փիզիքական և թէ հողեկան տանջանքներ էր կրում իւր կեանքի վերջին ժամերին շնորհիւ նոր արթնացած խզմի: Ես մտածում էի. մի՛թէ նրա արածը խկասէս աղքատութեան և գոյութեան կուի արդիւնք պիտի համարել: Բայց դու տես, թէ քանի՛քանի աղքատներ կան, որոնք լուռ ու մունջ և զլխակոր աշխատում են իրանց պարենը, քրտինք են թափում, ուրախ և հանգիստ սրտով վայելում են սեպհական աշխատանքի հալալ արդիւնքը և մնում են իրանց հասարակութեան մէջ միշտ համեստ, միշտ բարի, ասուածասէր, պարզասիրտ և կարեկցող: Նրանց սիրու բիւրեղի նման միշտ մաքուր է և նրանց դէմքին շարունակ փայլում է երջանկութեան քաղցրա-

բարոյ ժողիալը։ Ապա թնջու նրանք չեն փշանում նոյն իսկ քայրայւած կեանքի ողբալի պայմաններում և վամպիրի նման կրծքեր պատառում։

Փշաքաղլում է մարմինս, մնում եմ շշմւած ու շւարած, երբ լսում եմ Սահակի խոստովանքը... Սակայն պատմեմ լսածս։

Չորս օր սրանից առաջ առաւօտեան պահուն ինձ մօս եկաւ Սահակի կինը, որ նիհար և մարդու մէջ կարեկցութիւն զարթեց նող զէմք ունէր։ Մտնելով սեննակս, նա ինձ խնդրեց, որ գնամ նրա ծանր հիւանդ ամուսնուն մի ճար անեմ։ Նո ընդունեցի նրա ինդիրը և մի ժամկց ցետոց գնացի Սահակին տեսնելու։

Այսուղ պիտի նկատեմ, որ ես երկու տարի մնալով դիւղում ստիպւած էի զործնական այնպիսի զբաղմունքներով հետաքրքրել որոնց մասին ես քաղաքում իսկի չէի մտածում։ Երևակայցեցէք բժշկականութիւնից ես արգէն մի քանի անհրաժեշտ և կարեղ աեղեկութիւններ եմ ձեռք բերել և ունիմ հարկաւոր զեղեր, այս պէս որ ինքնակրթութեամբ ձեռք բերած պաշարովս համարեա կարողանում եմ զիւղական սովորական հիւանդութիւնների առաջն առնել։ Նոյն զործով հետաքրքրում է գիւղի քահանան ևս, տէր Գրիգորը։ Գիւղական խեղճ հասարակութիւնը միշտ զուրկ է մնում բժշկական օդնութիւնից։ Գիւղում հիւանդին յանձնում են հիւանդութեան ձեռքը և թողնում են նրա կամքին։ Ոչ բժիշկ կա ևս միջոցներ հիւանդութեան զէմ կուելու համար։ Եթէ բարեխիղճ է ցաւը, այն ժամանակ հիւանդը ազատում է, հակառակ զէտքում վայը եկած տարած է նրան։ օգնութիւն է ազերսում խեղճ հիւանդը, զուք տեսնում էք, թէ նա ինչպէս տանջւում։ Հալումաշ է լինում ցաւի ճանկերում։ «մի ճար», գոչում է նա աղեկառը ճայնով և մեկնում իւր ձեռքը, բայց ոչ լսող կայ ևս ձեռքից բռնող։ Անտանելի և զարհուրելի դրութիւն։

Դուրս գալով անից, ես ուղղակի գնացի Սահակի մօսու ներս մնաց նրա տան ցածր, նեղ և ծխից սեացած դոնով։ Դա մի մութ ահնեակ էր, որի սեացած պատերը մի քանի խլւակներ <sup>1)</sup> կային։

<sup>1)</sup> Բացւածքներ, որ պահարանի տեղ են ծառակում։

Առաստաղը ամբողջապէս նոյնպէս սեւացած էր տան ներսում բանւող թռնրի պասճառով։ Լոյսը ներս էր թափանցում այնուեղ փոքրիկ երդկից և գոնից։ Մտնելով սենեակ, ես մի բոպէ մնացի տեղս կանգնած, որ լոյսից յետոյ առջևս բացւած խաւարը փարաւի։ Ահա վերջապէս տեսայ հիւանդին, որը պառկած էր սենեակի վերին պատի երկանութեամբ կեղտոտ ու սեւացած անկողնի մէջ։ Նա պառկած էր մէջքի վրա, աչքերը առաստաղին յառած։ Զարհուրելի էր Սահակի զէմքը։ Նա այնքան մաշւած էր, որ երեսի ոսկրները ցիցցից էին կանգնած։ Ծնոտը գուրս էր ցցւած, իսկ աչքերը խոր ընկած։ Մի ասկը էր, մի կաշի։ Նիհարութեամբ, կաշի սեւութեամբ և չեչոտութեամբ հիւանդը եգիստական մումիացի էր նմանուում։ Ճակատը և քունքերը պատած էին բազմաթիւ կընճիռներով, որոնցից իւրաքանչիւրը ասես մի առանձին վիշտ կամցաւ արտայացուում լինէր։

Իմ գալը իմացաւ Սահակը։ Խսկոյն զարմացմամբ և հետաքըրքութեամբ վրաս նայեց, խսկ քիչ յետոյ նրա աչքերը կրկին շարունակեցին իրանց անորոշ պատցաները։

Ես մօտեցայ նրան։

— Սահակ, ի՞նչդ է ցաւում, հարցրի ես, ասա իմանամ։

Նա չլսեց։ Ես կրկնեցի հարցս։ Այս անդամ նա շրջեց կողքի վրա։ Մօտեցայ ու նստեցի։

— Սահակ ի՞նչդ է ցաւում։

— Ասում ես ի՞նչս է ցաւում... Սաղ տեղ չունիմ։ Սաղ ջանս ցաւում է. ես կը մեռնիմ... հանգիստ չունիմ։

— Ի՞նչ է քեզ շատ նեղութիւն տալիս, Սահակ։

— Ամեն բան, թուլացել եմ, շարժւել չեմ կարողանում, քառասուն տարեկան չկամ, բայց ոաներս էլ իմը չեն։ Իշտահ չունիմ։ Մի բան էլ զօշիս<sup>2)</sup> ու բողազիս վրա նստած շարունակ խեղտում է ինձ, մանաւանդ գիշերները։ Էլ միանգամից չի խեղդում, որ ջանս դուրս գայց, սպրծնեմ... Զէմ, տանջում է, տանջում է։ Ինչեր ասես չեմ՝ քաշում<sup>1)</sup>։ մէկ էլ տեսնես վերցրին ինձ տարան։ բորիկ, տկլոր... էնակէս տեղերով են տանում, որ տեսնես՝ կը զարհուրես։

<sup>1)</sup> Կրծքիս։ <sup>2)</sup> Ինչեր չեմ կրում։

քարքարոս, տատասկներով լի... Առներս քարի և տատասկի բաժին  
են դառնում: Արիւնը աղբիւրի պէս պզպզում է ոտներից, ջանս  
ցրտից դողրւմ փետանում է, Տանում են, տանում են մի մեծ ժայռի  
գլխի կանգնեցում: Գնալուց ինչ չարչարանք. մշջքս քիչ է մնում  
կորւրի, շունչս կորւրի, հոգիս դուրս գայ: Թուլացած և շունչս  
կորւրած կանգնում եմ ժայռի գլխին... Նայում եմ ներքեւ... Ո՛հ,  
ոչ տեսնես. ինչ անդունդներ. տակը չի երեռում, գլուխս պատում  
է, վեր <sup>1)</sup> եմ ընկնում, գլորւռում... Գլորւռում եմ ինչպէս. ժայռէ  
ժայռ, քարերով, մացառներով... Գլորւռում եմ և չեմ կարողանում  
ձեռքս մի բանի ձգել ինձ պահել: Մի բարձր տեղից որ քար ես  
գլորում, տեսել ես ինչպէս քարը տեղ-տեղ տափ <sup>2)</sup> է տալիս, թըռ-  
չում վերս, անցնում օգով կրկին զետին ընկնում և էլի գլորում.  
ճիշդ էղպէս էլ ինձ հետ է պատահում: Յետոյ տուն եմ ընկնում  
քրոնած, թուլացած... Մի օր էլ չգիտեմ որտեղ էի վեր ընկած,  
մի ծանր քար վզիս: Զէի կարողանում տեղիցս շարժւել: Նուրջս չոր  
անապատ էր, օրը տաք, խաշւում, տապակւում էի: Մի փոսի մէջ  
մի քիչ ջուր կար, չէի կարողանում մօտ գնամ, մի կաթիլ խմեմ.  
բողազս խանձւել, չորացել էր: Հենց մին էլ տեսնեմ մի մեծ թըռ-  
չուն, ինքը սև, չգիտեմ բայցուշ <sup>3)</sup> էր, թէ արծիւ, վրա տւա-  
ճանկերով բռնեց մշջքիցս ու տարաւ... Տարաւ, տարաւ, բարձրաց-  
րեց, աշքերս շաղւեցին, էլ ոչինչ չտեսայ: Մէկ էլ զգացի, որ յան-  
կարծ բաց թողից և ես գետին փռւեցի: Մեր տանեցիք մօտ վա-  
զեցին, տեսան որ շատ եմ չարչարում, ճակատիս սառը ջուր զրե-  
ցին, որ մի քիչ հովանամ: Ե՛հ, էսքան էլ տանջանքներ կը լինեն ախր:  
— Ո՞վ է քեզ ազդքան չարչարողն և քարեքար ձգողը, Սա-  
հակ, հարցրի ես:

— Ես գիտեմ, ես նրանց չեմ տեսնում, ամա նրանք ինձ տես-  
նում են. Զեմ էլ մեռնում, որ պրծնեմ:

— Ի՞նչու ազդքան յուսահատուում ես, ասացի ես, զեղեր կը  
տամ, կը խմես, կառողջանաս:

— Ե՛հ, զեղերից յոյս չունիմ. զեղեր որ խմեմ էլ, բոլորովին  
չեմ առողջանալ: Ասենք գլխացաւս կորւեց, ջանս, ոտներս հանգս-

<sup>1)</sup> Վայր եմ ընկնում: <sup>2)</sup> Գետնին է կպչում: <sup>3)</sup> Բու:

տացան, ոյժերս մի քիչ եկան տեղը. ամս ախր էդ բաւական չի:

—Օրհնած, պա էլ ի՞նչ ես ուզրում. այդքանն էլ որ լինի բաւական է. այնուհետ ոտքի կը կանգնես և աւելի կը կազդուրեն:

—Ասում ես էդքանը բաւական է, խօսեց հիւանդը դառնագին ժպիտով, որ կարծես գժւարութեամբ արտայայտւեց նրա դէմքի վրա Խնչն է բաւական, եթէ ոտքի էլ կանգնեմ, ես օր չեմ տեսնիր: Քիչ մարդիկ կմն ջանով առողջ, բայց որ չարչարւում, տանջում են: Երեսները մի օր էլ պարզ չես տեսնիր: Էլ ի՞նչ առողջութիւն: Պիտի արմատից առողջ լինել: Հա, եթէ զու ինձ էնպիսի մի զեղ կը տաս, որ ես արմատից է, բոլորովին արմատից բժշկւեմ, շատ ուրախ կը լինեմ, շատ շնորհակալ և բախտաւոր կը լինեմ:

—Արմատիցն էլ մրը կը լինի. գեղերի միջոցով, կրկնում եմ, դու ոտքի կը կանգնես և կը կազդուրեն: Գուցէ քո հիւանդութիւնը արմատախիլ չանւի, բայց և այնպէս զու գեռ կ'ապրես:

—Ամր արմատից բժշկելը էդ չի, ասաց հիւանդը կարծես յոդնած և զայրագին. Էնպիսի զեղեր տուր, որ հոգիս էլ բժշկւի: Մարմինը ուրիշ է, հոգին ուրիշ, գեղերը մարմնի համար է. ասենք մարմինս առողջացրին, բայց հնգիս. նա կը մնայ հիւանդ և հիւանդ, եթէ նրա համար էլ գեղեր չտաս: Ի՞նչ օգուտ, որ վերկացաց հիւանդ հոգով, հիւանդու խղճով:

Վերջին խօսքերը նա արտասանեց վրդովւած և դառնագին: Ցուզմունքը նրա մէջ հազ առաջացրեց: Խուլ էր, շատ խուլ էր այդ հազը, որ հիւանդը հազիւ էր կարողանում դուրս թողնել իւր մաշւած կրծքից: Այդ հազի խուլ և զլլացող ձայնը ցոյց էր տալիս, որ հիւանդի թոքերը այլեւ են կարողանում կատարել իրանց գերը: Հիւանդը շրջեց մէջքի վրա և աչքերը առաստաղին դարձնելով, կրկն մկնեց մանածել նրանց:

Նա մնացի սառած նրա վերջին խօսքերից: Բժշկել արմատից: Անա թէ ի՞նչ է նշանակում դա, որը ինձ համար մի փոքր առաջ տարօրինակ և մութն էր թւում: Ուրեմն նրա խիղճն է հիւանդ և նու հոգու բժշկութիւն է պահանջում:

— Սահակ, ասացի ես, առ առաջժմ այս և գեղերը, զործածիր կը խմացնես առաւատեան, կէսօրին և երեկոյեան, զարձայ ես նոր կնոջը, կ'ածես մի գդալ ջրի մէջ ամեն մէկը և բաժակով խմա-

ցնել կը տաս: Խոկ արմատից բժշկելը, Սահակ, իմ բանը չէ, դա  
տէրտէրի գործն է, էլի հէնց նա մի բան կարող է անել, կը թե.  
թեւացնի հոգիդ: Կուզես նրան մի օր բերեմ այսուղ:

—Ամա, լաւ, շնորհակալ եմ, մի օր տէրտէրին վերառ եկ  
էստեղ: Նրան որ տեսնեմ էլ, մի քիչ կը հանգստանամ: իսկ որ  
կարողացաւ բժշկել, նրանից յետոյ ես էլ մարդկանց շարքը կընկ-  
նեմ և դժոխքի տանջանքներ չեմ քաշիլ:

—Շատ լաւ, կը բերեմ, պատասխանեցի ես և հիւանդին առ-  
ողջութիւն մաղթելով, դուրս գնացի:

## II

**Փողոց համնելով,** քայլերս ուղղեցի դէպի տէր-Գրիգորի տու-  
նը: Դա մի երիտասարդ անձնաւորութիւն էր, որը աւարտելով Գէ-  
որգեան ճեմարանը, քահանայ էր ճեւնադրւել և իւր հայրենի զիւլը  
եկել, զիւղում գործելու նպատակով: Լինելով աշխատասէր, միր և  
գործունեայ անձ, տէր Գրիգորը բաւականին աշխատում էր զիւլա-  
ցիների լուսաւորութեան գործի համար, նպատուելով միևնուն ժա-  
մանակ և նրանց բարոյական զարգացմանը: Գիւղական տղէտ և  
իրանց գոյութեամբ անօգուտ քահանաների ամբողջ լէգէնի մէջ  
նա հազեւդիւտ բայցաւութիւն էր կազմում թէ մխաւոր զարգաց-  
մամբ և թէ իւր կեանքի օգտակարութեամբ: Մի խօսքով նա կա-  
տարելապէս համապատասխանում էր թէ իւր կոչմանը և թէ պաշ-  
տօնին: Իւր գործունէութիւնը տէր-Գրիգորը տարածում էր և  
շրջակայ զիւղերի վրա շնորհիւ այն հանգամանքի, որ նա գործա-  
կալ էր:

Մանելով նրա սենեակը, տեսայ որ տէրտէրը թունդ զբաղւած  
է, գինի էր մաքրում և լցնում շիշերը:

—Այդ ի՞նչ գործի ես, տէրտէր:

—Վերջապէս ժամանակ եմ գտել զինիս մաքրելու և շիշերը  
լցնելու: Դպրոցական հաշիւները պարզելու գործից վերջապէս  
ազատւեցի: Դու չդիտես, թէ մեր հոգաբարձուների շնորհիւ ինչ  
զլիսացաւանքներ եմ ունեցել: Պաշտօն են ստանձնել, հոգաբարձու  
անուն են կրում, բայց իսկի չեն հասկանում, թէ ինչումն է կա-  
յանում նոյս կոչումը և ինչ պարտականութիւններ է դնում:

նրանց վրա իրանց պաշտօնը: Երբ մասնացոյց ես անում նրանց անտարրերութեան և անզործունէութեան վրա, վիրաւորում և հրաժարում ենք են ասում: Մեծ համբերութիւն պիտի ունենալ նրանց հետ զլուխ գնելու համար: Հիմա հարկաւոր է զինի պատրաստել չ որ ուսումնարանի տարեդարձը մօտենում է, աւելացրեց տէրտէրը ծիծաղերես:

— Ղուաղ ես, ասացի ես, ուրեմն մի լաւ քէֆ պիտի անենք:

— Անպատճառ, պատասխանեց նա, ինձ մօտ կը լինես հանդէսը կատարելուց յետոյ: Մէկ-մէկ քէֆ անել, զւարճանալ է հարկաւոր, որ զործելու համար անհրաժեշտ թարմութիւն, եռանդ ձեռք բերւի:

— Լաւ ես ասում, բայց դու զիտես, թէ ի՞նչու եմ այսոեղ եկել, մի շատ հետաքրքիր բան ունիմ պատմելու:

— Ի՞նչ կայ, հարցրեց տէրտէրը հետաքրքրութեամբ և զարմանքով, նորութիւն է:

— Ոչ, նորութիւն չէ, բայց մի հետաքրքիր անձնաւորութիւն, որը ծխականներիցդ մէկն է:

— Ո՞վ է, հարցրեց տէրտէրը փոքր ինչ խորհրդաւոր եղանակով և խոժուելով դէմքը, ով է այդ:

— Սահակը, Վարագաղցի Սահակը:

— Նա հիւանդ է, անցեալ օրերին կինը ինձ մօտ էր եկել: Մի քանի գեղօրացք տւեցի տարաւ, բայց բան դառնող չի, շատ մի ասլրիլ:

— Ես էլ այսօր Սահակի մօտն էի: Բարդւել է նրա ցաւը և առողջութիւնը բոլորովին քայքայւած է: Կատարեալ կմախք է դարձել:

— Ե, լաւ, ինչ հետաքրքրական բան տեսար այդ անձնաւորութեան մէջ, խօսքս կտրեց տէրտէրը, շարունակելով լցնել շիշերը:

— Նրա մօտն էի, կինը խնդրել էր, որ գնամ ամուսնուն մի տեսնեմ և կարողացածիս չափ օգնութիւն հասցնեմ: Գնացի. թէ ի՞նչ պայմաններում է գտնւում հիւանդը, Ասուած հեռու տանիւ չաղի և ընդհանրապէս կազդուրիչ դեղիր տւեցի, որ ընդունի: Դէ մենք ինչ կարող ենք անել այդպիսի հիւանդի համար. պարզ է, որ ոյժներիցս վեր է: Սահակը այդ օգնութիւնն էլ իզուր է հա-

մարում, ասելով—եթէ իմ հոգին ու խիզճը հիւանդ են մնայու,  
մարմնի առողջութիւնը աւելորդ է:

—Յիմարը չգիտէ, որ առողջ մարմնի մէջ միայն առողջ հոգի  
կարող է լինել:

—Այդ ացդպէս է, բայց դու ուշադրութիւնն դարձրու նրա  
խօսքերի վրա: Նա ասում է. բժշկեցէք ինձ արմատապէս, զեղերը  
շնաւ-շնաւ մարմնս բժշկեցին, բայց չէ որ հոգիս չեն բժշկելու. և  
ես եթէ առողջանամ, վերկենամ, ասում է, էլի շարունակ-տանջը-  
ւելու հմ: Ուրեմն էլ ինչ հարկաւոր է առողջանալը: Հա, ասում է,  
եթէ այնպիսի զեղեր տաք, որ հոգիս ու խիզճս էլ բժշկեն, այն  
ժամանակ հասկանալի է: Մնացի զարմացած. ասացի, զա բժշի  
գործը չէ. գրան, ասացի, էլի հէնց քահանան կարող է օդնել  
Գնանք, տէրտէր, Սահակի մօտ և տեսնենք, թէ ինչումն է կայանում  
այդ մարդու խղճի հիւանդութիւնը, որ շատ հետաքրքրական է  
—Ես ինչ կարող եմ անել նրա հոգու համար, ծիծաղելով  
ասաց տէրտէրը:

—Ի՞նչ պիտի անէք. խոստովանեց, էք, գլխին կարգացէք մի  
քանի ազօթքներ, խրախուսեցէք, թողութիւն շնորհեցէք, մի  
խօսքով գործ գրէք այն ամենը, ինչ դարման որ եկեղեցին առա-  
ջարկում է հոգու փրկութեան և խղճի թեթևութեան համար:

—Նատ բարի, կարելի է:

—Դէ նշանակեցէք ժամը:

—Երբ որ կամենաք:

—Աղը առաւօտեան:

—Նատ լաւ:

—Հետաքրքիր է, շատ հետաքրքիր, աւելցրի ես, խորա-  
սուզելով մոտածունքների մէջ:

Քիչ զէն դէն քայլելուց յետոյ ես վերցրի գլխարկս և ցըսե-  
առութիւնն ասացի տէրտէրին,

—Ուր էք գնում, գինի խմեցէք:

—Շնորհակալ եմ:

—Ի՞նչ շնորհակալ, օրհնած, սպասեցէք. և բաժակը արդէն  
գինով լիբը ինձ մօտեցրեց:

—Մեր հիւանդի կենացը, ասացի ես ընդունելով բաժակը:

Ասուած ձեզ այնքան ոյժ տայ, որ նրա հոգուն և խղճին բժշկութիւն տաք, — դատարկեցի բաժ ակը:

— Ա. Ա. որ այդպէս է, մէին էլ ես խմեմ: Ես դուրս դնացի տէրտէրի մօտից:

## III

Հետեւալ օրը նշանակած ժամին ես տէրտէրի հետ Սահակի մօս գնացի: Նա պառկած էր դարձեալ նոյն տեղը, նոյն անկողնում և նոյն զրութեան մէջ: Տեսնելով տէրտէրին, նա ճիգ արեց վերգենալ պառկած տեղից և կամացուկ հասկացրեց կնոջը, որ իրեն օգնէ, բայց տէրտէրը հասկացաւ այդ և ասաց.

— Վեր մի՛ կենալ, Սահակ, ի՞նչ հարկաւոր է, հիւանդ ես, կարող ես մրսել, ի՞նչու ես նեղութիւն քաշում:

— Այ տէրտէր, պա վեր չկենամ, պա մեղք չի՛. մեղաւոր մարդու ջանն էլ դուրս գայ, պիտի վերկենայ. ա կնիկ, դարձաւ նա կնոջը, դէ օգնիր է, օգնիր վեր կենամ:

— Սահակ, խօսաց կրկին տէրտէրը, ախր բան ասացի քեզ. հարկաւոր չէ:

— Տէրտէր, չեմ կարող, մեղաւոր եմ; թեթևութիւն կը լինի ինձ համար:

Նա վերկացաւ պառկած տեղից կնոջ օգնութեամբ և նստեց անկողնում: Կինը խնամքով ծածկեց նրան վերմակով և մեղանից փոքր ինչ հեռու կանգնեց տեղը:

— Նստիր, ի՞նչու ես կանգնել, ասաց տէրտէրը, տռանց այն էլ հոգնած կը լինես, նստիր:

Կինը ոչինչ չխօսաց և շարունակեց կանգնած մնալ:

— Նստիր էլի, ասացի ես, նստելն էլ իօմ աշօթ չէ:

Նա քիչ էլ տատանեց նստելու և վերջապէս զիջեց մեզ:

— Սահակ, խօսաց տէրտէրը, ի՞նչպէս ես հիմա, աջնօրւանից դէսը լաւացել ես թէ ոչ:

— Տէրտէր ջան, որտեղից եմ լաւացել. դու չես իմանում, որ լաւանալու ճար չկայ ինձ: Էս ցաւը որ ես ունիմ...

— Վեղեր կը խմես կը լաւանաս:

—Տէրտէր ջան, հոգիս էլ է հիւանդ, հոգիս բժշկիր. հերիք է, էն ժամանակ ջանս էլ առողջ կը լինի:

—Պա հոգիդ թնչու է հիւանդ:

—Արթնացած խիզմ ինձ հանգիստ չի տալիս. տանջում է, տանջում է, որ ու գիշեր տանջում է:

—Ի՞նչու, աղքատներից էլ արդար ու բախտաւոր մարդ կա աշխարհում:

—Ես էն աղքատներիցը չեմ, ես մեղաւոր եմ, շատ մեղաւոր, տէրտէր ջան. իմ արածները որ մին-մին պատմեմ, կը զարհուրեա ես մարդավարի կեանք չեմ վարել, այլ գայլավարի: Մեղքերս շատ են:

—Ստհակ, յայտնի է, որ անեն մարդ մեղք ունի, մեղանից նվ է մեղքից ազատ. ամենքս էլ մեղաւոր ենք:

—Ճշմարիտ է, բայց դէ դուք ուրիշ շատ լաւ գործեր էլ կը կատարում և ձեր մեղքերը զրանով ծածկում, ջնջում էք. իսկ նու ես մի լաւ բան չեմ արել կեանքումս. ընդհակառակը, էնպիսի դործեր եմ արել, որ հիմա ցիշելուց չեմ իմանում որտեղ փախչեմ խղճիս առաջ. քիչ է մնում խեղպւեմ: Որտեղ զնում էի, ինչ որ խօսում, չմիտք էի անում, նա միշտ աչքիս առաջին էր: Հիմա էլ մէկ-մէկ տեսնում եմ: Այսր մի լաւ գործ եմ կատարել, որ զրանով մխիթարւեմ, փոքր ինչ թեթևանման:

—Ասուած ողորմած է, շատ մի յուսահատւիր, թեթևութիւն կը զգաս. դու մի առ մի խոստովանւեիր քո մեղքերը, ես թողութիւն կը շնորհեմ, աղօթքներ կը կարդամ, մեղայ կը գտ և կը թեթևանաս: Դա հարկաւոր է. հոգուդ բժշկութեան համար ուրիշ ճար էլ կայ, զրքերը. բայց դէ դա քո բանը չէ, բացի խոստովանւելուց, զղջալուց, մեղայ գալուց և հոգեւոր հօրից թողութիւն ստանալուց ուրիշ ճար չկայ քիզ համար: Մարդ եթէ մի ցաւ է ունենում և ուրիշի առաջ բաց է անում իւր գարդերը, այնուհետ բաւական թեթևանում, հանգստանում է: Պատմիր որդի, խոսո՞վանւիր:

—Խոստովանւեմ. հնազանդ եմ, տէրտէր ջան:

Նա լոեց մի բոպէ: Նշան արեց, որ վերմակով լաւ ծածկեն ուսերը: Կինը կատարեց նրա ցանկութիւնը: Այնուհետ Սահմկը օրօրեց գլուխը, որ շարունակ գետին էր խոնարհած և ասես չէր

կարողանում բարձրացնել։ Կարծես թէ վզից կոտրւած լինէր։ Նա իւր աչքերը յառել էր վերմակին և չորացած մատներով ոլորում էր վերմակից դուրս ցցւահ թելերը։ Նրա գէմքը մռայլ էր և շարունակ դժգոհութիւն էր արտայացում։ Նրա վերին շրմունքը յաճախակի ցնցումն էր դործում կարծես ներքին ցաւերից դրդւած։ Ամեն մի ցնցումից բացւում էին նրա գեղնած ատամները, որոնք Սահակի կմախք դարձած դէմքը զարհուրելի էին դարձնում։

—Խոսովվանեմ, տէրտէր, մեղքս, թեթևութիւն կը լինի, կը բժշկւմ արմատից էլի։ Պատմեմ, պատմեմ, միայն թէ հոգիս բժշկւի, խիղճս մաքրւի։ Տէրտէր, դու գիտես, որ ես զարադաղցի եմ։ Կարադաղում ես մի լաւ տուն էի։ Հայրս որ մեռաւ ինձ համար կարդին տուն-տեղ թողեց։ Մայրս էր, երկու քոյր, կինս և աւ հոգ ունէինք, որ մեզ կառավարում էր հօրս կենդանութեան օրերով։ Հայրս մի շատ աշխատաւոր մարդ էր։ Ծերութեան հասակումն անգամ հանդսուութիւն չունէր. առանց աշխատանքի մի ժամ չէր կարող մնալ։ Եթէ պատահում էր, որ մի օր պարապ էր մնում, շարունակ գանգատուում էր։ Էնքան աշխատասէր էր։ Ողորմած հոգին հետո չունէր<sup>1)</sup>, որովհետեւ ես իր ասած տղան չէի։ Խնձանից միշտ անբաւական էր, միշտ ինձ ատում, նախատում էր, որ ես անհոգ էի, աշխատանքի ցետեից սիրով գնացող չէի, այլ պարապութիւնն էի սիրում, քէցվերը և գատարկ, անօգուտ խօսակցութիւնները։ Արտեղ մի անպէտք տղայ կար, նրա հետն էի ընկեր դառնուում։ Հօրս երեսին չէի կարողանում կանգնել ու պատասխանել, երբ նա ինձ թնդաւծ նախատում էր։ Հանդարտ, տուս ու փուս լուսում էի նրա նախատինքները, բայց էդ ամենը մի ականջովս մըտնում էր, միւսովը դուրս գալիս։ Նարունակում էի ծոյլ, անհոգ լինել և քէցվերի ետեից ընկնել, շարունակում էի լոթի շառլատան տղերանց հետ ընկեր մնալ և վատ վատ գործեր բռնել<sup>2)</sup>։ Հէնց հօրս գերեզման տանողներից մէկն էլ հոգսն ու դարդն էր. նա իմ մասին շատ էր մտածում. տանջւում էր, որ ես իրա նման չէի, այլ անարժան որդի էի։ Ներմն էր գցել էդ մտածմունքները և ինքը իր ջանը ուտում էր. թէև երեսին չէի կարողանում խօսել,

<sup>1)</sup> Խնձ հետ լաւ չէր։ <sup>2)</sup> Կատարել։

բայց սրտումս ատում, հայնոյում էի հօրս և ընկերներիս մօռ  
մասխարա անում նրան. լսում ես, մասխարա էի անում խղճ  
ալեռքին, որ իմ օխին <sup>1)</sup> եկաւ: Էս օրը, էս տանջանքը ինձ հա-  
մար գեռ քիչ է: Հօրս սպանում էր մի բան էլ. իր մինուճար տղան  
լինեմ և էդպէս անպէտք: Փոյրերս խելք աղջկերք էին. աշխա-  
տասէր, համեստ: Տէր Ասուած, ասում էր հայրս, ինչու սրանցից  
մէկը տղայ չստեղծեցիր ինձ համար:

Երբ հայրս մեռաւ, տան ծանրութիւնը վզիս ընկաւ: Բայց  
ես ոչ մի ծանրութիւն չէի զգում և շարունակում էի իմ շոալ  
ու դատարկ կեանքը Սայրս ասում էր: այ որդի, էդ մարդկութիւն  
չի, որ դու ես անում: այ որդի, ախր դու էլ մարդու զաւակ ես,  
մենք էլ մի օջախ ենք, ամօթ է, պա դու թէասիր, նամուս չու-  
նես: Զէի լսում նրան. երեսին կանգնում, ինչ ուզում էի, ասում  
էի, էլ հայոցանք, էլ... ինչ որ ասես: Խեղճ պատաւը նատում էր  
օրերով լաց լինում: Մի ուրախ օր չէր տեսնում, երկինքը նրա  
զիսին իմ պատճառով միշտ սեացած էր, բայց ես նրան չէի խըդ-  
ճում: Զէի խղճում, տէրտէր, լսում ես, չէի խղճում: Հիմա էդ բո-  
լորն էլ եկել է իմ առաջը: Մայրս էլ իմ օխին եկաւ, նա էլ  
մեռաւ. և նրանից ցետոյ ես ինձ բոլորովին կորցրի: Մէկ էլ չի  
նայեցի, տեսայ թալակի մէջ եմ ընկել. հողերիս մեծ մասը ձեռ-  
քիցս դուրս է եկել և պարտքս էլ քանի գնում, մեծանում էր:  
Քիչ յետոյ մնացած հողս էլ պարտատերէրիս ծախեցի: Մնացի բո-  
լորովին լիւթ <sup>2)</sup>: Սկսեցի տանամէջս ծախել, ուտել: Տանամէջ, ինչ  
տանամէջ. հայրս ինչեր ասես չէր առել տունը լցրել. պղնձեղին,  
դորգեր, կապերաներ, չէջիմներ, թէ բրդի և թէ արթեշումի...  
լիքն էր, լիքը: Նամուսս դէն շպրտած՝ անամօթի նման սկսեցի  
տանամէջը զուրս հանել, ծախել ու լափել: Փոյրերիս քթներից  
մուխ էր բարձրանում, երբ տեսնում էին, որ մեր տան բարիքները  
ուրիշները կրում, տանում են: Լաց, կոծ ու շիւան էին սարքեր  
բայց ես նրանց երեսներին չէի նայում, բարկանում էի և երբեմ  
ծեծում էի նրանց: Տունս էլ զատարկեց: Ել ինչպէս մնալի էնտեղ  
մի օր վերկացայ, ճանապարհ ընկայ, անցկացայ Արաքսը և եկայ

<sup>1)</sup> Ինձ գոհւեց: <sup>2)</sup> Դատարկութեաց:

կոտեղ: Հետո էր և Զարգարենց Սարգիսը, որը մեր զիւղի ամենաապօտ մարդն էր: Տեսնում ես հիմա էստեղ ինչ տուն է դառելք. քոյրերը մարդու տւաւ, ինքն էլ էստեղ պսակւեց, հիմա կարգին համփա<sup>1)</sup> է դառելք: Կնկանս ու քոյրերիս թողեցի էստեղ, ինքս եկաց էս զիւղը: Նրանց ասացի. ես գնում եմ, թէ կարողացաց էստեղ աշխատանք անել, հող ձեռք բերել, տուն շինել, կը զամ ձեղ էլ կը տանեմ, թէ չէ, միայն վող կ'ուղարկեմ: Նոր էի խելքի եկել, փոշմանել էի. ինչպէս էի փոշմանել: Տնուր տրտում եկաց էս զիւղը, միշտ էլ տխուր մնացի: Առաջ մի կարգին աշխատանքի կապաց, հողեր վերցրի չարէքով, կիսու, բանտորութիւն էի անում, լաւ վարձ էի ասանում: Տուն կարողանում էի վող հասցնել: Երկու տարուց յետոյ էլ զնացի մեր տանեցոց բերեմ: Ճանապարհին լսեցի թէ կիսս մեռել է. էլ չգնացի, ասացի քոյրերս աղջիկ խիզաններ են, թող մնան իրանց հայրենիքում, կը բերեմ էստեղ, ցաւ կը դառնան ինձ համար: Նամակ գրեցի, թէ ես առողջ եմ, մի քիչ էլ փող ուղարկեցի, որ ուրախանան: Տուն անդ թողեցի իրանց: Ես էլի աշխատանքի յետեկից ընկայ: Հինգ տարուց յետոյ կարողացաց մի արո ձեռք ձգել Ամուսնացաց: Կնիկս, դուք էլ գիտէք, թէ որքան աշխատաւոր է. տան լուծը ինձ հաւասար քարշ էր տալիս: Հիմա էլ մենակ ինքն է էս տունը պահողը: Առաջ ապրում էինք եկեղեցու խուցերում, յետոյ կարողացանք մի տուն էլ ձեռք ձղել: Հենց որ տեղս մի քիչ պնդացրի, սկսեցի էլի իմ առաջւայ կեանքը: Կամաց-կամաց անհոգ, ծոյլ և շառլատան մարդիկ եկան ինձ գտան: Հալալ, քաղցր աշխատանքը թողեցի և ընկայ վատ-վատ գործերի յետեկից: Մաղ օրով թափառում էինք Արաքսի ափերում, ձուկն էինք որսում, մի մասը ծախում, մնացածը տանում ուտում, գինի խմում, հարրում, դալիս տունն: Փանի քանի անդամ գնացել ենք պինի գողացել դրա համար: Մոռացել էք, որ մեր մի գողութիւնը բռնեց. տաւարած Օւանէսի հնձանից մի կարաս զինի էինք գոտացել: Բռնեցին մեզ լաւ ծեծեցին, կապեցին չինարի ծառին, երեսներիս մուր քսեցին և ամեն մէկիցս էլ 25 մանէթ շորամ<sup>2)</sup> առան: Եղ էր մեր կեանքն ու աշխատանքը Տունս քանդողներից

<sup>1)</sup> Հասարակական անդամ և կալւածատէր: <sup>2)</sup> Տուղաճը

մէկը ձուկ որսալն էր։ Դա մի էնպիսի փեշակ է, որ կպտր, էլ չես կարող յետ կենալ։ Գիշերներով մնում էի Արաքսի ափերում, խոնաւ աւազի, խոնաւ քարերի վրա պառկած։ Մէկը լինէր ասէր, թէ այ լիմար, էն քաղցր ռաշուղարութիւնը<sup>1)</sup> թողած, գնացել ծով մարդու աշխատանք ես անում։ Ախր գրանից ինչ օգուտ ես ստանալու որ... Բայց ասող չկար։ Ինչ տեսակ հիւանդութիւն ասես առաջացաւ իմ մէջ, և առողջութիւնս Արաքսի ափերում թողեցի։

Եգալիսի գործերով էինք պարապւում ես և մղդսի Ակոփը։ Նա էլ մեր գիւղացի էր և ինձանից շատ շուտ էր եկել էս գիւղը Խաչագող էր, ինչ խաչագող։ Ինչ օյխն, ինչ վատ գործ ասես, ձեռքովը կը գար։ Կէ գուք նրան, փառք Աստծոց, ճանաչում էք։ Եդ փշացածը, որ սատկեց, ձեռքիցը պրծաց, քանի-քանի անգամ ինձ վերցրել, գնացել է զազախների մօտ, եկել ենք միասին մի գիշերում երեք հնձան ենք կտրել. և գիւղացիք չեն իմացել, թէ ով է էդ արել։ Գինու մի մասը ծախել ենք ուրիշ գիւղերում, մի մաս էլ ինքներս ենք խմել։ Քանի-քանի անգամ խոտանոց, գոմ ենք մասել, խոտ ենք գողացել տարել ծախել, ոչխար, այծ, տաւար ենք գողացել... Եւ էդ ամենը էն անիծւածի խորհուրդներով։ Սահնք ես էլ մի կարգին մարդ չեի. եթէ կարգին մարդ լինէի, նրա հետ մուր էի ընկերանում։ Վերջապէս էդ անիծւածը, էդ գեօռբագէոռը ինձ մի գործի էլ տարաւ և էն գործից դէսը էլ իմ մէջ հայ չէ մնացել, էլ հանգիստ օր չունիմ։ Մէջքս մի անգամ կոտրեց. Գիշերները քուն չունէի, վախինում էի մարդկանց մէջ գուրս գալ գուրս գալուց էլ մարդկանց երեսին չեի կարողանում նայել։ Միշ զլուխս քարշ էի պահում, աչքերս գետին գցած։ Եկեղեցի չեի կարողանում գնաւ. սարսափում էի, ջանս փշաքաղում էր։ Մի քանի անգամ գնացել եմ մինչեւ եկեղեցու գուռը, բայց չեմ կարողացի ներս մտնել, ոտներս չեն դնացել, յետ եմ դառել. էն անիծւած մղդսին ժամ էր գնում և էնպէս աղօթքներ էր անում, որ տեսմով կասէր—սրանից էլ արդար մարդ կը լինի։ Նրա համար ոչինչ կին ինձ հարցնում էր—այ մարդ, էդ ինչ է պատահել քեզ, հէնց է

<sup>1)</sup> Հողագործութիւնը

իսկի հանգիստ չունես, բայց ես միշտ նրան խարում էի ու ասում։ ոչինչ, միայն մի քիչ հիւանդ եմ։ Զեմ՝ համարձակւել քեզ մինչև օրս ասելու, տէրաէր ջան, մինչև հիմա էս վթած, հոտած սրառումն եմ պահել, որ տանջւեմ, իրակ ընկածի նման էրւեմ, խորովւեմ։ միս ճշգնդայ, շան նման սատիեմ։

Սահալի ձայնը դողաց։ Նա բոլորովին դունառւեց։ Երեացին արտասուքի կաթիլներ։ Նրա աչքերը շաղւեցին և նա վայր ընկնելու մօտ էր, երբ կինը առաջ ժռաւ, բանեց անարժան ամուսնու ուսերից և պահեց նրան։ Անցեալի դառն յիշառակների ու հիւանդի խղճի խայլոցների ազգեցութիւնից առաջացած յուզմունքին չկարողացաւ զիմանալ Սահակը։ Նա ուշաթափւելու մօտ էր համարեա, բայց կինը հանդորտութեամբ պառկեցրեց նրան անկողնում և ջուր սրմկեց երեսին։ Քիչ յետոց հիւանդը կրկին ուշքի եկաւ, ժողովեց իւր բոլոր ոյժերը, զարմացմամբ մեզ նայեց և յանկարծ։

—Էստեղ ես, տէրտէր ջան, ասաց, քեզ զուրբան, լաւ ես արել, որ եկել ես, արի խոստովանեցրու ինձ, որ հանգստանամ։ Այս ես խեղճ եմ, ասենք շատ մեզքերի տէր եմ, բայց ախր ես մինչեւ երբ չարչարւեմ։ Խոստովանեցրու, թողութիւն տուր ինձ։

—Ի՞նչ ունես սրտումդ, ասա, էսանդ ուրիշ մարդ չկայ։ կինդ է, աղջիկդ և մեր վարժապետը։

—Վարժապետն էլ է էստեղ, ասաց հիւանդը, իւր սառն հայեցքը ինձ վրա ուղղելով։ Կարծես առաջին անգամը լինէր տեսնում։

—Վարժապետն էլ է էստեղ, շնորհակալ եմ, վնաս չունի, կասեմ, տէրտէր։ կարելի է, չէ։

—Ի հարկէ, քաշւելլ իզուր է, մեր մարդն է։

—Հա, խոստովանւեմ։ տէրտէր։ մի քիչ ջուր ինձ, բողազ չորացել է, ջուրը խմեմ, սիրտս հովանայ, որ կարողանամ մեզքերս պատմել։

Կինը ջուր տւեց նրան, որ դժւարութեամբ կարողացաւ ներս լնդունել։ Յետոց մի փոքր հազեց և սկսեց իւր խոստովանքը։

—Տէրտէր, որ իմ սաղ<sup>1)</sup> կեանքը հեշ ու վիռէ է եղել, էդ

<sup>1)</sup> Ամբողջ։

դու գիտես: Բայց մի բան, որ մինչև հիմա քեզանից թագցրել եմ, մի սպանութիւն է...

—Ես սատանայական ձեռքներն ու հոգին, որ ես ունեմ, մարդ են խեղդել, Արաքսը ձգել: Ա'ս, ինչու ես էլ Արաքսի ափերում գայլի կամ արջի կերակուր չեմ եղել մինչև օրս:

Թոյլ հեկեկանքը կրկին խեղդեց նրա ձայնը: Իմ մարմնի սառսուռ անցաւ: Կինն ու աղջիկը նրա զլսատակին նստած, երես ները թաշկինակով ծածկած՝ արտասում էին: Ես ու-տէրտէրը լարւած ուշադրութեամբ և սարսափած սպասում էինք շարունակութեանը: Վերջապէս Աահակը կրկին հաւաքեց իւր ոյժերը և շարունակեց.

—Եդ անիծւած, էդ դէօրազէօռ մղկսու տունը Արաքսի էն կողմից մի մարդ էր եկել: Ամառ ժամանակ էր, երկու ջորի էր բերել ծախելու: Զորիները ծախեց երկու օրումը, 125 մանէթ՝ փողը դրեց գրապանումը, մի օր էլ մեզ մօտ զոնաղ մնաց և յետոց գիշերով ճանապարհեց գէպի իրանց գիւղը: Ինչ քէցի արեցինք էն օրը: Դիշերով զնացինք միասին բէպի Արաքսի ափից, ծածուկ պիտի անցկենար: Մղղսին ինձ ասաց, թէ բարեկամ մարդ է, մօտը էն քան փող, գնանք ճանապարհ գցենք, զազախներին<sup>1)</sup> աեսնենք, որ չխօսացնեն: Էդալէս էլ արեցինք ճանապարհին մղղսին ոչինչ չէր խօսում, բայց միայն ժամանակ-ժամանակ փէշս քաշում էր: Ոչինչ չէի հասկանում: Մղղսին վրաս բարկանում էր: Նրբ հասանք փոշտի մօտ ջորի ծախողին թողեցինք ճանապարհի վրա, իսկ ինքներս գնացինք զազախներին յայտնեցինք, թէ մեր մի ծանօթ մարդը պիտի անցկենայ Արաքսով: Նազախների մեծը ոչինչ չխօսաց, ես մի կոլա<sup>2)</sup> գինի և մի շիշ արագ ունէի հետս, իրան տւի: Յետոյ վորշտից դուրս եկանք: Մինչև մեր հացի մօտ գնալը, մղղսին տես ինձ ասաց.

—Աղա, շան որդի, ճանապարհին էնքան փեշըդ քաշում եմ, չես հասկանում: Աղա, պա աչքերս բաց-բաց թողնեմ 125 մանէթը տանի՞: Ես իմ Աստւածը՝ ձեռքիցը առնելու եմ:

—Ի՞նչ ես խօսում, այ մղղսի, ասացի ես:

<sup>1)</sup> Աահմանապահ ձիաւոր կոզակներ: <sup>2)</sup> Լոււէ աման—կուլա

— Բան չունե՞ս, առնելու եմ, կը տեսնես, ծպտուն <sup>1)</sup> չհանես, թող մի քիչ հեռանանք:

«Ել ոչինչ չխօսացի: Ասես կամաց-կամաց 125 մանէթը իմ ուշքն ու միաքն էլ տարաւ: Սկսեցի շուտ-շուտ շրթունքներս կըր-ծոտել: Ամեն մէկիս բաւականին փող կ'ընկնի: Ոտքս ու ձեռքս դող ընկաւ, սպասում էի անհամբեր: Մենք գնում էինք լուռ ու մունջ, որ ոչ ոք մեր ձայնը չլսէր: Ախր մեր ծանօթը ծածուկ պիտի անց-կենար Արաքսով: Հէնց որ մի խոր ձորակով, որտեղով մի փոքրիկ ջուր էր գնում, սկսեցինք քաշանալ դէպի Արաքսը և փէալէաչուն <sup>2)</sup> կանչել, մղդսին յանկարծ կանգնեցրեց մեզ և ասաց.

— Մկրտիչ (Չորապանի անունն էր) սկա 125 մանէթը սաղ էլ տանում ես, պա մեզ իսկի մի բան չես տալիս: Քեզ բերել ենք էս-քան տեղ ճանապարհ ենք գցում, զազախներին տեսել ենք, խօս-ցըրել...

«Մկրտիչը մնաց սառած և ոչինչ չսկատասխանեց:

— Հը, թնչ ես սուս կացել, հանիր մի բան մեզ տուր, ջանդ <sup>3)</sup> խօսմ դուրս չի գալ. 125 մանէթ է, 25-ը մեզ տուր:

«Մկրտիչը էլի չխօսաց: Շատ մութն էր, չէի տեսնում նրա դէմքը, որ իմանամ, թէ արգեօք ծիծաղում, ամաչում թէ բարկա-նում էր: Ես էլ չէի խօսում ու շարունակ մղդսու խօսքերին ու նշանին էի սպասում:

— Զես տալի էլի, կրկնեց մղդսին, լաւ չես անում, աւելաց-րեց նա նեղացած:

— Այ եղբայր, ախր թնչու տամ, բարեկամ մարդիկ ենք. մի լաւութիւն էք անում ինձ, որ եկել էք անցկացնէք ինձ, դէ ՛լ թնչ վարձատրութիւն: Հաւատացէք, ես ձեզ տեղ ամաչում եմ:

— Ամաչելու բան չկայ, քեզանից փող ենք ուզում, տներ, էդ-քան փողը ինչիդ է հարկաւոր: Մի քիչ էլ մեղ բաժին տուր: Մկրտիչը էլի մնաց լուռ: Երեսի խեղճը մնացել էլ քարացած մղդը-սու խօսքերը լսելով: Քիչ յետոյ նա ասաց.

— Ի սէր Աստծոց, հանսքներդ թող, լաւ անցկացնելու ժամա-նակ է, մօտ դնանք Արաքսին, փէալէաչուն կանչենք: Մինչեւ որ

<sup>1)</sup> Ոչ մի շշուկ: <sup>2)</sup> Նաւակի աէր: <sup>3)</sup> Հոգիդ:

գայ, մինչեւ որ անցկացնի ինձ, բաւականին ժամանակ կը գնար  
—Մինչեւ ուզածս չտաս, քեզ էստեղից բաց չեմ թողնելու,  
Մկրտիչ:

—Այ մղղսի, հանաքներդ թող, ի սէր Աստծոյ:  
—Հանաք չեմ անում, դիւզ 1) խօսքս է:  
—Հանաք ես անում:  
—Երուսաղէմ գնացած ճանապարհս ինձ կտրի, թէ հանաք  
լինեմ անում, երդւեց մղղսին, բոնելով ջորապանի դօտուց:  
—Տէր Աստւած, խաթի մէջ չընկմնք:

—Ինչ խաթա, շան մարդ, առամները կրծտացնելով ասաց  
մղղսին, զանդ զուրս կը գայ համա, որ մի քանի մանէթ մեզ տաս,  
երդում կերայ, էլի ժլատութիւն ես անում. ինչ ես հոգիով տալիս 2)  
Որ էգպէս է, փողիդ կէսը պիտի տաս:

«Մկրտիչը հասկացաւ, որ մղղսին հանաք չի անում և կարծես  
զդաց, որ մի վառ բան պիտի գայ իր զլուէլը: Էդ պատճառով  
բոռնցքի հարւածով զէն հրեց մղղսուն, գոտին ազատեց նրա ձեռ-  
քից և սկսեց փախչել: Մենք յետելից ընկանք: Մի քանի քայլից  
յետոյ մղղսին նրան բանեց, ևս էլ քիչ էր մնում հասնեմ, բայց  
Մկրտիչը զուրս պրծաւ ձեռքից և շարունակեց փախչելը: Ես էլ  
սկսեցի արագութեամբ նրա յետելից ընկնել և բանեցի Մկրտիչ:  
Մենք կպահեք իրար: Նա ինձ վայր ձգեց և սկսեց խեղղել: Հասա-  
մղղսին: Ես տակից զուրս պրծաւ նրա օդնութեամբ և երկումներո  
էլ թափւեցինք Մկրտչի վրա:

—Փողը հանիր, թէ չէ քեզ կը խեղդենք և կը դցենք Արաքու,  
հանիր էս սհաթին, շան որդի, ասում էր մղղսին կատաղած:

—Էշի տղակ, ումն էիր ուզում խեղդել, ասացի ես, մի քանի  
քայի տալով նրա կողքին: Քո փողերը էնպէս առնեմ, որ քէփի  
գայ: Մէկ էլ դրա կողքին խփեմ, խեղճը բոլորովին թուլանայ:  
Մի քիչ յետոյ որ ուշքի եկաւ՝ ասաց. առեք փողերը, ի սէր Աս-  
տծուցոյ, առէք և ինձ բաց թողէք: Նա տւառ մեզ 125 մանէթը:  
«Առէք, տարէք կշտացէք, աէր Աստւած, դու դատիր սրանց» դու  
քո արդար դատաս ոանը սրանց գլխին հասցրուս:

1) Աւղիզ: 2) Փողի վոլւարէն հողին տալիս:

«Մենք փողերը առանք, բայց նրա էդ խօսքերից կատաղեցինք,  
արիւններս գլխներովս տւաւ:

—Եան հայ, ումն ես անիծում, ասացի ես մէկ էլ նրան  
խփելով:

—Այ տղայ, Սահակ, բռնիր դրան ասեմ:

«Մզգսին յետ արեց մէջքից մի թոկ, կապեց Մկրտչի վիզը և  
սկսեց քաշել դէպի գետի ափը:

—Սահակ օգնիր ինձ, գոռում էր նա կատաղած, սրան պիտի  
Արաքսը ձգեմ, սրան սաղ բաց թողնելու չի. էսպէս որ սրան եմ  
աեսնում, ով գիտէ մեր գլուխը ինչ օցին բերի: Սա փողը հեշտու-  
թեամբ մեզ տւաւ, որ յետոյ մեր գլուխը գործի մէջ դցի: Քաշիր  
շրան:

«Ես էլ սկսեցի քաշել: Տէր Աստւած, կարողանալու եմ դա-  
տաստանիդ առաջ կանդնել: Որ հիմա միտս է գալիս, թէ ինչպէս  
էինք քաշում էն խեղճին: Օ՛հ, տէր Աստւած, էն ժամին մենք  
ինչեր էինք դառել: Աչքներս արիւնով լցւել էին, դացլեր էինք  
դարձել: Քաշում էինք խեղճին. գլուխը քարերին էր դիպչում, ոտ-  
ները մացառներին: Սաղ մարմինը արիւնկալել էր:

—Զեզ մասաղ, խղճացէք ինձ, ասում էր Մկրտչը, տանը  
բալէք<sup>1)</sup>, մանը երեխաներ ունեմ, խղճացէք նրանց, նայեցէք վե-  
րև, գլխներիդ երկինք, Աստւած կայ... ախր ձեզ վրա նայում է,  
այ անխիղճներ:

Նրա ձայնը բոլորովին խեղճւած էր: Նա հեռում ու խռխռում  
էր, բայց մենք չէինք լսում:

—Սահակ, քաշիր դրան, ականջ մի գնիր խօսքերին:

«Քաշեցինք բերաննք Արաքսի ափը: Ինչքան աղաչեց պաղատեց,  
չեղաւ. մի մեծ քար կապեցինք վիզը և զցեցինք Արաքսը: Երբ  
միամուեցինք, որ խեղճւեց, եկանք գիւղը: Փողերը կէս արեցինք,  
բայց չվայելեցինք. մզգսին մի քանի ամիս յետոյ լնկուզենու ծա-  
ռից վեր լնկաւ աստկեց, իսկ ես էլ էս օրն եմ ընկել: Յետոյ փոշ-  
մանեցայ, բայց էլ ուշ էր: Եթի ուրախ օր չտեսայ նրանից յետոյ:  
Խղճիս տակ մինչեւ հիմա տանջւել եմ, ինչպէս կը տանջւի վիրա-

<sup>1)</sup> Որդիք, գաւակներ,

ւորւած, իսանչալով ծակծկոտւած մարդը։ Հիւանդ եմ մարմնով էլ հոգով էլ։ Դրա համար էլ ասում վարժապետին, թէ եթէ կարելի է, արմատից բժշկեցէք ինձ. որ հոգիս չէք բժշկելու, թողէք մեռնեմ։

Սահակը լոեց։ Ես մնացել էի քարացած, լսելով Արաքսի ափին կատարւած եղեռնազործութեան մասին։ Տէրտէրն էլ էր սառած և նայում էր հիւանդին։ Քիչ յետոց նա երեսը ինձ դարձրեց ու սարսափած շշնջաց։

— Սա ի՞նչ է, հաւատանք։ Յետոյ հիւանդին նայելով.

— Աստւած թողութիւն շնորհեսցէ, սրտումդ էլ ոչինչ չունիս ասելու, Սահակ։

— Ոչ, տէրտէր ջան, էլ ոչինչ չունիմ։

Այնուհետ տէրտէրը մի քանի զլուս մաշտոյից կարգաց, սրբութիւն տւալ հիւանդին և մենք դուրս գնացինք այնտեղից ծանր տպաւորութեան տակ։ Մոռացայ ասել, որ պատւիրեցինք դեղիրը շարունակի գործածել, չնայած, որ յոյս չունեինք նրանից։

— Ինչեր ասես չեն կատարւում կեանքի մեջ, քիչ լոռութիւնից յետոյ խօսաց տէրտէրը, հաւատալի՞ է։

— Ինչեր ասես չի ծնեցնում նոյն կեանքը պատասխանեցի եռ։

— Խիղճը բացակացում է, մաքուր սրտեր չկան։

— Դրա հետ միասին կեանքի պայմաններն էլ ընկած են, կեանքն էլ լճացած է։ Ամենուրէք տիրում է կատաղութիւն աւերում։

— Երբ խիղճը կորաւ, ինչ դագանութիւններ որ ասես, կան մարդիկ։

Մենք սկսեցինք բաժանւել միմեանցից։

— Կարծեմ հիւանդը շուտով այն աշխարհը կը ճանապարհի ասացի եռ։

— Ի հարկէ, նրա ինչն է մնացել որ...

Մենք չէինք սխալում։ Մեր վերջին այցելութիւնից երկու օր յետոյ Սահակը երեկոյեան դէմ բաժանւեց ընդմիշտ իւր դառնանմխիթար և քայքայւած կեանքից։

## ԿԱՆԱԶ ԱՆԴԱՍԱՆԸ ԵՐՓՈՒՄ Է ՀԱՄԱՐՏ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Կանաչ անդաստանը ծըփում է հանգարտ,  
Հաղիւ վըբայով քամի է անցնում.  
Գեղջուկը նայում է ուրախ և հըպարտ,  
Նայում է արտին—և չէ կըշտանում:

—«Պարձեալ մի ամիս քըրտինք կը թափեմ,  
Սինչեւ որ սիրուն իմ արտը հասնի.  
Ազրիւրի վըճիս ջըրով կը ջըրեմ,—  
Եւ ոսկի հունձը պատրաստ կը լինի»:

Բայց ախ, մըրրիկը կուտակեց ամպեր,  
Ամպերըն ահեղ ձայնով գոռացին,  
Եւ տեղաց կարկուտ... Օ, ափսոս հասկեր,  
Չարդւած զօրքի պէս գետին փըռւեցին!...

—«Օ, Տէր իմ, այս ինչ ու օր ինձ հասաւ?  
Անբախտութիւնը իմ մէջքը կոտրեց.  
Յոյսեր, չարչարանք—բոլորը կորաւ.  
Սիրուն իմ արտը կարկուտը ծեծեց!»

«Խըղճնեկ զաւակներ, իմ խեղճ գերդաստան,  
Տիրոջ ցասումը ձեր հացը կըտրեց!  
Զըմեռը կը դայ—քաղցած կը մընան.  
Սիրուն իմ արտը կարկուտը ծեծեց!»...

## ԵԳՄՈՆՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Վ. Ֆ. ԳԵՂԹԵՒԻ

Գերմաներէնից Թարգմ. ՀՄԱՅԵՍԱԿ ՄԱԺԻՆԵԱՆ

(Շաբունակութուն <sup>1)</sup>)

## ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՈՒԵԳԵՆ ՏՈՒՀՈՒ պալատը

Մարզարիտ Պարմացի, ապա Մաքիաւելլ

Մարզարիտ (միայնակ): Ես պէտք է այս գուշակած լինէի: Հայոց նեղութեան ու աշխատութեան մէջ մարդ անց է կացնում օրերը, կարծում է թէ անում է ամենը, ինչ որ միայն հնարաւոր է. իսկ ով հեռւից է նայում ու հրամացում, կարծում է թէ միմիայն այն է պահանջում, ինչ որ միայն կարելի է: Ո՞չ, թա դաւորներ: Երբէք չէի կարող երևակայել, թէ իշխելլ կարող էր ինձ այդպէս ձանձրացնել: Ի՞նչ հիանալի բան է իշխելլ, բայց հրաժարւելը:—Ես չեմ հասկանում, թէ հայրս ինչպէս էր կարող այդ անել, բայց ես ել նոյնն եմ կամենում: (Մաքիաւելլը երեսով է

<sup>1)</sup> Տես «Մուլճ» 1896 թ. № 1 և 2.

թեմի խորքուր). Մօռ եկէք, Մաքիաւելլ, ես մտածում եմ եղբօրիցս ստացած նա հակի վրայ:

Մաքիաւելլ: Իրաւժնէք ունիմ ես գիտենալու, թէ ինչ է բոլանդակութիւնը:

Մարզարիտ: Այնքան քնքոյշ ուշադրութիւն դէսլ ինձ, որքան խնամք իւր նահանգների համար: Նա գովում է այն անյող դողդութիւնը, ջանքն ու հաւատարմութիւնը, որոնցով ես այս երկիրներում նորին Մեծութեան իրաւոնքների վրայ հակել եմ մինչև օրս: Նա ցաւում է իմ մասին, որ այս անսանձ ժողովուրդը այնքան հոգսեր է պատճառում ինձ: Նա իմ հասկացողութեան խորութեան մասին այնպէս կատարելապէս համզւած է, և խելօք վարւեցողութիւնից այնպէս չափազանց գոհ, որ ես համարեա պէտք է ասեմ: — նամակը իբր թագաւորի գրած՝ շատ է սիրուն, իբր եղբօր նամակ—անշուշտ:

Մաքիաւելլ: Այս առաջին անգամը չէ, որ նա ցոյց է տալիս ձեզ իւր իրաւացի գոհութիւնը:

Մարզարիտ: Բայց առաջին անգամն է դրւածի այս ճարտասանական ձեւը:

Մաքիաւելլ: Ես ձեզ չեմ հասկանում:

Մարզարիտ: Կը հասկանաք: — Որովհետեւ — ասում է նա այս ներածութիւնից յետոց — առանց զինւորների, առանց գէթ փոքր դրբի այստեղ ես միշտ մի տիսուր դեր պիտի խաղամ, ուստի անիրաւացի վարւած կը լինենք, եթէ բնակիչների գանգատի վրայ՝ մեր զօրքը գաւառներից գուրս հանենք: Մի պահապան զօրք որը քաղաքացիների մէջքին կը ծանրանայ, նորա ասելով՝ նոցակարգելէ այդ ծանրութեան տակ մեծ թռիչքներ գործելու:

Մաքիաւելլ: Այդ նոցա չափազանց կը գրգռէր:

Մարզարիտ: Սակայն թագաւորը այլպէս է կարծում, լսում ես: Նա կարծում է որ մի արի զօրավար, մի այնպիսին, որը բնաւոյն մի պատճառաբանութիւն չի ընդունում: կարող կը լինի ժողովրդի, աղնւականութեան, քաղաքացիների ու գիւղացիների հետքանը շատ շուտ վերջացնել, և այդ պատճառով բաղմաթիւ զօրքով ուղարկում է գուքս Ալբացին:

Մաքիաւելլ: Ալբացին:

Մարզարիտ: Դու զարմաննում ես:  
 Մաքիաւէլլ: Դուք ասում եք—«Նա ուղարկում է»։ Նա, երկի,  
 հարցնում է, արդեօք ուղարկ՞»։  
 Մարզարիտ: Թագաւորը չի հարցնում։ Նա ուղարկում է։  
 Մաքիաւէլլ: Ուրեմն մի փորձւած զինւոր կ'ունենաք Ձեր  
 ձեռքի տակ։

Մարզարիտ: Եմ ձեռքի տակ։ Շիտակ խօսիր, Մաքիաւէլլ  
 Մաքիաւէլլ: Ես չեմ ուզենալ Ձեզնից առաջ ընկնել։  
 Մարզարիտ: Բայց ես կ'ուզէի կեղծել։ Այդ ինձ համար վի-  
 րաւորական է, շատ վիրաւորական։ Ես սիրով կ'ուզէի, որ եղբայր  
 առէր թէ ինչ է մտածում, քան թէ ստորագրէր այն ձեական նա-  
 մակները, որ մի դիւանադպիր դրում է։

Մաքիաւէլլ: Միթէ չպիտի նկատին, որ։։։  
 Մարզարիտ: Ես նոցա ճանաչում եմ տակ՝ խտակ։ Նոքա սի-  
 րով կը ցանկանացին ամէնը լաւ սրբած ու աւլած ունենալ և  
 որովհետեւ իրանք անձամբ չեն ձեռնարկում, ուստի վստահութին  
 է դժնում ամէն ոք, ով գալիս է աւելլ ձեռին։ Ո՛հ, ինձ այնպէս է  
 թւում, որ կարծես թէ տեսնում լինեմ թագաւորին և նորա  
 խորհուրդը այս գորդի վրայ գործելիս։

Մաքիաւէլլ: Այդպէս կենդանի։  
 Մարզարիտ: Ո՛չ մի դիմ չկայ պակաս։ Նոցա մէջ բարի մար-  
 դիկ կան։ Ազնիւ Ռոռը իսը, որը տյնպէս փորձւած և չափաւոր է  
 որ ոչ չափազանց բարձրին է ձգտում, ոչ էլ իւր աստիճանից Թ  
 մազ իջնում, շիտակ Սլոնցո՞ն, աշխատասէր Ֆրէնէդա՞ն։ Հաստատավոր  
 Լաս-Վարդա՞ը և էլի մի քանիսը, որոնք միշտ հետն են գնում  
 երբ լաւ կուսակցութիւնը զօրեղանում է։ Բայց ահա նստած է և  
 խորակին Տոլէդոցին երկաթէ ճակատով և հրացաց աչքերով։ Իս-  
 բարբանջումէ կանանց թուլութեան, նոցա վազաժամ զիջողութեան  
 մասին։ Թէ կանացք թէեւ վարժ ձիերի վրայ լաւ վազում են, բայց  
 իրանք շատ վատ ձիավարժներ են, և նման կատակներ, որ եռ Թ  
 ժամանակ ստիպւած էի լսել քազաքազէտ պարոններից։

Մաքիաւէլլ: Նկարի համար ներկերի լաւ անօթ էք Ծնորել  
 Մարզարիտ: Միայն թէ խոստովանեցէք, Մաքիաւէլլ, որ ի՞  
 ամբողջ ստերատը ութեան մէջ, որով ես երեկէ կարող կը

նկարել, ոչ մի երանդ այնպէս գորշ դեղին և այնքան աւ լեզի չէ ինչպէս Ալբայի դէմքի գոյնը, և քան այն գոյնը, որով նա ինքը նկարում է: Ամէն ոք նորա աչքում սրբապիղծ և տիրանենդ մարդ է, որովհետեւ այդ հիման վրաց կարելի է նոցա բոլորին անիւի տակ անցկացնել, ցից հանել, յօշոտել, այրել:—Լաւը, ինչ որ ես այստեղ արել եմ, հեռուից անկասկած ոչինչ է երևում, հէնց նորա համար որ լաւ է: Մատին փաթեթ է շինում ամէն մի ստահակութիւն, որը մոռացրած է, յիշում է ամէն մի խոռվութիւն, որը հանգըստացրած է. և թագաւորի աչքին այնքան դաւաճանութիւն, ապստամբութիւն, խիզախութիւններ են պատկերանում, որ նա երևակայում է, թէ այստեղ մէկ մէկու ուսում են, երբ մեզ մօտ մի կոպիտ ժողովրդի թեթև անկարգութիւնը վազուց մոռացւած է: Եւ յզանում է նորա սրտում անսահման ատելութիւն դէպի այդ խեղճ ժողովուրդը: Նոքա պատկերանում են նորան զգւելի, այս, ինչպէս գազաններ ու հրէշներ: Նա ձեռք է մեկնում կրակի ու սրի և կարծում է թէ այդպիսով կարող են մարդոց սանձել:

**Մաքիաւէլլ:** Շատ գրգուած էք երևում: Շատ մեծ նշանակութիւն էք տալիս իրերին: Դուք ռեգենտումի չէք մնում:

**Մարգարիտ:** Գիտեմ: Նա հետը մի հրահանդ կը բերի:—Քաղաքական գործերի մէջ բաւականին փորձեցի, և զիտեմ, թէ ինչպէս կարելի է մէկին տեղից վոնտել, առանց պաշտօնը ձեռքից խլելու: Նախ մի հրահանդ կը բերի, որը կը լինի անորոշ և երկդիմի: Եւ իւր ձեռքը կը գցի ամեն ինչ, որովհետեւ իշխանութիւն ունի. և երբ ես գանգատւեմ, առաջս կը ձգի մի ուրիշ գաղտնի հրահանդ. եթէ տեսնել ուղենամ, պատեսպատ ման կ'ածի ինձ. եթէ ես սինդեմ, մի ուրիշ թուղթ ցոյց կտայ, որ բոլորովին ուրիշ բան է բովանդակում: Խոկ եթէ գորանով էլ չբաւականանամ, նա այնումը չի ցցիլ, ինչքան էլ խօսեմ: Նա արած կը լինի, ինչից որ ես վախենում եմ, և ինչ ես եմ ցանկանում—դէն կը լինի նետած:

**Մաքիաւէլլ:** Եթէ կարողանացի, կուղենացի Զեզ հակածառել:

**Մարգարիտ:** Ինչ որ ես անսասելի համբերութեամբ խաղաղացրի, նա իւր կոշտութեամբ ու վայրագութեամբ կը գրգոէ. ես պէտք է աչքիս առաջ իմ գործը կորած տեսնեմ և, բացի գորանից, նորա մեղն էլ վրաս առնեմ:

Մաքիաւէլլ: Սպասէ թող Զերդ բարձրութիւնը:  
Մարզարիտ: Ես այնքան իշխում եմ ինձ, որ կարող եմ  
հանգիստ մնալ: Թող նա գայ: Ես ամենալաւ ձևով նորան տեղ  
կ'անեմ, նախ քան նա ինձ տեղահան կ'անէ:

Մաքիաւէլլ: Այդպէս շուտ այդպիսի ծանր քայլ:

Մարզարիտ: Աւելի ծանր, քան կարծում ես: Ով իշխու  
սովոր է, ով այնոեղն է հասցրել, որ օրական հազարաւորների  
բախտն իւր ձեռին է, գահից իջնում է ինչպէս դէպի զերեզման  
Բայց լաւ է այդպիս, քան կենդանիների մէջ մնալ ինչպէս ուր-  
ւական, և գատարկ անունով կամենալ մի տեղ իշխել, որն արդէն  
ուրիշն է ժառանգել, և արդէն տիրում է և վայելում:

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Կ Հ Ա Ր Ա Յ Ի Ք Ն Ա Լ Ա Ր Ա Ն Ո

Կլարան եւ իւր մայրը, ապա Եգիսնտ:

Մայր: Այդպիսի մի սէր, ինչպէս Բրակենբուրգինն է, երբէք  
չէմ տեսած: Ես կարծում էի թէ այդ միայն դիւցազներգութիւն-  
ների մէջ է լինում:

Կլարա: (Սենեակում գնում գալիս է մի երգ միմնջալով)

Երջանիկ է միայն

Հոգին որ սիրում է:

Մայր: Նա գուշակում է քո յարաբերութիւնը եգմոնտի հետ  
և ես կարծում եմ, որ եթէ զու մի փոքր սիրալիր լինէիր դէպի  
նա, եթէ ուզինայիր՝ նա հիմա էլ քեզ հետ կ'ամուսնանար:

Կլարա: (Երգում է.)

Խնդում,

Ցաւում է,

Մտածում է միշտ.

Զգաւում է,

Անձկում է,

Տանջում է մեծ վիշտ.

Անհուն

Ցնծում է,

Յմահ տրտմագին.  
Երջանիկ է միայն  
Հոգին որ սիրում է:

Մայր: Թող այդ օրօր նանիկը:  
Կլարա: Միք կշտամբիլ, սա մի աղղու երդ է: Ես երթեմն  
սորանով մեծ երեխայ եմ քնացրել:

Մայր: Դու հօ ոչինչ չունիս զլսում՝ բացի քո սէրից: Մի-  
այն թէ ամէն ինչ չմուանացիր այդ մէկի պատճառով: Բրակեն-  
բուրգին դու պէտք է պատով վերաբերւես, ասում եմ քեզ: Դեռ  
նա քեզ մի օր կարող է բախտաւորացնել:

Կլարա: Նմ:

Մայր: Օ', լաւ. կը գայ մի ժամանակ: Դուք երեխաներդ  
ոչինչ չէք նախատեսնում և ականջի եաւեն էք զցում մեր փոր-  
ձերը: Երիտասարդութիւնն ու սիրուն սէրը, ամէն ինչ վերջ ու-  
նի: Եւ մի ժամանակ է գալիս, երբ մարդ Աստուծուց շնորհակալ  
է լինում, եթէ կարողանում է մի որեւ է կտուրի տակ ծածկւել:

Կլարա: (Ցնցում է, լուս, վերջը բացականչում): Թող գայ, մայր  
իմ, այդ ժամանակը, ինչպիս մահ: Առաջուց նորա վրայ մտածելը  
սարսափելի է. բայց երբ կը գայ, երբ մենք ստիպւած կը լինենք՝  
ապա մի կերպ եօլա կ'երթանք: Ե՛գմօնտ, ես առանց քեզ ապրեմ  
(արտասում է), չե, անկարելի է, այդ անկարելի է:

Եգմօնտ: (Հեծելաշորով, գլխարկը դէմքին ներս է մտնում): Կլարա:

Կլարա: (Մի քայլ առաջ, ապա յետ) Եգմօնտ. (գրկում է նորան եւ  
վրան հանգչում): Ո՛հ, դու բարիս, սիրելիս, քաղցրիկս. դու գալիս-  
ես, դու այսո՞ղ ես:

Եգմօնտ: Բարի երեկոյ, մայրիկ:

Մայր: Աստուծոյ բարին, աղնիւ պարոն: Փոքրիկս համարեա  
հալւել է, որ դուք այդքան երկար բացակայ էք: Ամբողջ օրն էլի  
Զեր մասին է խօսել ու երգել:

Եգմօնտ: Արդեօք ինձ ընթրիք կը տանք:

Մայր: Անչափ շնորհ կը լինէր. միայն թէ մի բան ունե-  
նայինք:

Կլարա: Ի հարկէ. դուք հանգիստ կացէք, մայրիկ, այդ մա-

սին ես ամեն ինչ կարգադրել եմ. ես բան եմ պատրաստել. ինձ  
միք մատնիլ:

Մայր: Բաւ ականին աղքատիկ:

Կլարա: Դեռ սպասեցէք: Բայց ահա թէ ես ինչ եմ կար-  
ծում. — երբ նա ինձ մօտ է, ես ամենեին քաղց չեմ զգում. պէտք  
է որ նա էլ մեծ քաղց չունենաց, երբ ես նորա մօտ եմ:

Հգմինտ: Կարծնում ես. (Կլարան ոտով դոփում է եւ տհաճ շրջում)  
ինչ է քեզ պատահել:

Կլարա: Այսօր ինչպէս սառն էք: Դուք ինձ գեռ ոչ մի համ-  
բոցը չեք առաջարկել: Ինչու էք վերարկուով բազուկներդ նորա-  
ծնի նման փաթաթել: Վայել չէ ոչ զինւրին, ոչ սիրահարին բա-  
զուկները փաթաթել:

Հգմինտ: Երբեմն, սիրելիս, երբեմն: Երբ զինւորը դարան է  
մոռել և ցանկանում է թշնամուց բան կորցել նա իրան հաւա-  
քում է. իւր բազուկների մէջ կուչ է դալիս և իւր ցաւն է որո-  
ճում: Խոկ մի սիրահար —

Մայր: Զէք կամենում նստել, լայն ու արձակ լինելու նո  
պէտք է խոհանոց գնամ: Երբ դուք այստեղ էք, Կլարան էլ ոչնչի  
վրայ չի մոտածում: Պէտք է գոհ մնաք:

Հգմինտ: Զեր բարի ցանկութիւնն ամենալաւ համեմունքն է:  
(մայրը գնում է):

Կլարա: Հասկա իմ սէրն ինչ է:

Հգմինտ: Ինչ որ ուզում ես:

Կլարա: Համեմատեցէք նորան, եթէ սիրո ունիք:

Հգմինտ: Աւրեմն նախ և առաջ ահա (վերարկուն դէն է պցուի  
և երեւում շքեղ հագուստի մէջ):

Կլարա: Յի՞ն...

Հգմինտ: Հիմո բազուկներս աղաս են: (Նորան սեղմում է կրծքին):

Կլարա: Թողէք, ես կը փացնեմ: (Յետ է քաշւում) Ի՞նչ շքեղ  
է: Էլ չպիտի համարձակւեմ Զեզ դիպչել:

Հգմինտ: Դու դմէ ես: Ես քեզ խոստացայ մի անգամ մօտ  
խսպանական տարազով գալ:

Կլարա: Վազուց է որ Զեզ այդ մասին էլ չեմ խնդրած:  
Կարծում էի, թէ չէք կամենում: Այս, և այս ոսկեգեղմը...

Էզմինտ: Դու հիմա հօ տևսնձւմ ես:

Կլարա: Այդ թագաւորն է վրէդ կախել:

Էզմինտ: Այն, սիրելիս, թէ շղթան և թէ նշանը տալիս են դոց կրողին ամենամեծ իրաւունքներ: Ես երկրիս երեսին իմ դրծունէութեան վրայ ոչ մի դատաւոր չեմ ճանաչում, բացի այդ պատւանշանի գրոսմէյստրից և ասպետների համագումար ժողովից:

Կլարա: Օ՛. դու համարձակ կարող էիր թողնել ողջ աշխարհ քեզ դատելու—Թաւիշը շատ հիանալի է. հապա այս բուզմէնաները. հապա գործւածքը: Մարդ չգիտէ որից սկսէ:

Էզմինտ: Դէ մի լաւ կուշտ մոիկ տուր:

Կլարա: Իսկ ոսկեգեղմը: Դուք ինձ դորա պատմութիւնն անում էիք և ասում, որ դա մի նշան է ամենամեծի ու ամենաթանկագնի, ինչ որ մարդս ջանքով ու տանջանքով վաստակում ու ձեռք է բերում: Դա շատ թանկագին է: Ես կարող եմ այդ համեմատել քո սիրոյ հետ: Ես կրում եմ այն նոյնպէս սրտումն—իսկ յետոյ—

Էզմինտ: Ի՞նչ ես ուզում ասել:

Կլարա: Յետոյ էլ համեմատել չի լինում:

Էզմինտ: Ի՞նչպէս թէ:

Կլարա: Ես այն ջանքով ու տանջանքով չեմ վաստակել, ձեռք դցել:

Էզմինտ: Սիրոյ բանն այլ է: Դու վաստակում ես այն, երբ դու նորան չես հետամտում: Եւ մեծ մասամբ այն մարդիկն են այդ ստանում, որոնք նորա յետեից չեն վազում:

Կլարա: Քիզ ես օրինակ վերցնում: Այդ հպարտ նկատողութիւնը ինքը քո մասին ես անում: Դու, որին ամբողջ ժողովուրդը սիրում է:

Էզմինտ: Երանի թէ նորա համար մի բան լինէի արած, երանի կարողանայի նորա համար մի բան անել: Իսկ ինձ սիրելը— իւր բարի կամքն է:

Կլարա: Անկասկած դու այսօր ոեղենուհու մօտն էիր.

Էզմինտ: Նորա մօտն էի:

Կլարա: Դու նորա հետ լաւ ես:

Էզմինտ: Մենք մէկմէկու հետ քաղցր ենք և կամակատար! Այդպէս է գէթ արտաքըռւստ:

Կլարա: Իսկ ներքինւստ:

Էզմինտ: Յանկանում եմ նորա լաւը: Ամէն մէկն իւր զիտառութիւններն ունի: Բայց դա կապ չունի գործի հետ: Նա պատաշան կին է, ճանաչում է իւր մարդոց. և նա բաւականին խորագիտ կը լինէր, եթէ հետը կասկածու էլ չլինէր: Ես նորան շատ հոգս եմ պատճտում, որովհետև նա իմ վարժունքի մէջ միշտ պաղտնիք է որոնում, իսկ ես չունիմ ոչ մէկը:

Կլարա: Ամենեին ոչ մէկը:

Էզմինտ: Հա, ասենք, մի փոքրիկ դարանակալութիւն կ'ա Ամէն դինի՝ ժամանակի ընթացքում, տակառներում քար է նստեցնում: Օրանացին հօ նորա համար աւելի լաւ զբաղմունք է, և միշտ նոր առեղծւած: Օրանացին իւր մասին այնպիսի կարծիք է կազմել տւել, թէ նա անպատճառ մի ինչ որ գաղտնի մտադրութիւն ունի: Ուստի և նա միշտ նայում է Օրանացու ճակատին թէ արդեօք սա ինչ է մտածում, և նորա քայլերին, թէ արդեօք ուր է ուզզում:

Կլարա: Ռեզենտուհին կեղծաւոր է:

Էզմինտ: Ռեզենտուհին. և դու հարցնում ես:

Կլարա: Ներեցէք. ուզում էի հարցնել.—նա խարդախ է:

Էզմինտ: Ոչ աւելի և ոչ պակաս, քան ամէնոք, որն ուզում է նպատակին հասնել:

Կլարա: Եթէ ես ինձ ու ինձ մնայի, գլուխս կը կորցնէի: Բայց նա առնական ոգի էլ ունի, նա մեզնից—հասարակ դերձափ ներիցս ու խոհարարուհիներից—տարբեր կին է. նա մեծ է, սրտու վճռական:

Էզմինտ: Այս, եթէ իրերը տակնուվրայ չեն եղած: Բայց և այնպէս այս անգամ նա վրդովւած է:

Կլարա: Ի՞նչպէս:

Էզմինտ: Նա մի բեխիկ էլ ունի վերին շրթունքի վրայ և երբեմն ոսկրացաւ: Կատարեալ ամազոնա:

Կլարա: Մեծաշուք կին. ես կ'ամաչէի նորա առաջ գուրս գալ:

Էզմինտ: Դու հօ առհասարակ երկչու չես:—Բայց սա իմա:

պէս երկիւղ էլ չէր լինիլ, այլ կուսական ամօթիսածութիւն։  
(Ալարան աչքերը գետին է ծգում, բռնում էզմոնտի ծեռը եւ յենում նորան։)  
Ես հասկանում եմ քեզ, սիրելի աղջիկ, դու կարող ես աչքերդ  
բարձրացնել։ (Համբուրում է նորա աչքերը։)

Կլարա։ Թող լռեմ, թող քեզ բռնեմ, թող նայեմ աչքերիդ,  
ամէն ինչ մէջը գտնեմ։ և միսիթարութիւն, և՝ յոյս, և՝ ուրախու-  
թիւն, և՝ տրամութիւն։ (Նա դրկում է էզմոնտին եւ նորան նայում։)  
Ասն ինձ, ասն, ես չեմ հասկանում, գու էզմոնտն ես, կոմն էզ-  
մոնտը, մեծ էզմոնտը, որը այնքան հեղինակութիւն ունի, որի  
մասին լրագիրներում գրում են, որին յարած են նահանդները։

Էզմոնտ։ Ո՛չ. սիրելի Կլարաս, այն ես չեմ։

Կլարա։ Ի՞նչպէս։

Էզմոնտ։ Տեսնում ես, Կլարա։ թող նատեմ։ (Նա նստում է եւ  
խոնարհուում է նորա առաջ մի նստարանի վրայ. ծեռները դնում է նորա զողին եւ  
նորան նայում։) Այն էզմոնտը մի ճանձրացուցիչ, իոշտ, սառն էզ-  
մոնտ է, որը ստիլւած է իրան զսպել, մէկ՝ այս տեսակ, մէկ՝ այն  
տեսակ դէմք ցոյց տալի ծանծւած, չգնահատւած, իմճւած է նա,  
մինչ մարզիկ նորան համարում են ուրախ ու զւարթ, սիրւած մի  
ժողովրդից, որն ինքը չի իմանում, թէ ինչ է ուզում. յարգւած  
ու մեծարած մի ամբոխից, որի հետ ոչինչ չի կարելի անել. շրջա-  
պատւած բարեկամներով, որոնց նա չի կարող վստահանալ իւր  
անձը. նկատւած մարզկանցից, որոնք ամէն կերպ կ'ուզէին նորան  
բռնել. աշխատող, տանջւող, յաճախ առանց նսլատակի, մեծ մա-  
սամբ առանց վարձի... Ո՛չ, թող լռեմ, թէ նա ինչպէս է, ինչ  
սրտի է։ Բայց սա, Կլարա, սա հանգիստ է, անկեղծ, բախտաւոր,  
սիրւած ու ճանաչւած ամէնալավ սրտից, որին և նա է ճանաչում  
և ամենայն սիրով ու վստահութեամբ իւր սրտին է սեղմում։  
(Նա գրկում է կլարային։) Սա քո՞ էզմոնտն է։

Կլարա։ Այսպէս թող մեռնեմ։ Աշխարհա սորանից բարձր ու-  
րախութիւն չի կարող տալ ինձ։

(Վարագոյր)։

## ՀՈՐԻՌՈՒ ԳՈՐԾԱՂՈԽԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՓՈՂՈց

ՅԵՍՈՒՏՔ. ՀԻՒՄ

ՅԵՍՈՒՏՔ: Ե՞ց, հ՛ամաս: տօ, հարեւան, մի խօսք:  
Հիւմն: ձանապարհղ շարունակիր. և սուս կաց:  
ՅԵՍՈՒՏՔ: Մէկ խօսք միայն. նոր ոչի՞նչ չկաց:  
Հիւմն: Ոչի՞նչ, բացի այն, որ մեզ նորից արդելած է խօսել:  
ՅԵՍՈՒՏՔ: Ի՞նչպէս:

Հիւմն: Այստեղ՝ տանը - մօտեցէք. զգուշացէք: Դուքս Ալբան  
դալն և եթ իսկոյն մի հրաման է հրատարակել, որի զօրութեամբ,  
եթէ մի կամ երկու մարդ փողոցում խմբւեն և խօսեն, առանց  
քննութեան պետական գաւաղիրներ կը հրատարակւեն:

ՅԵՍՈՒՏՔ: Աւազ:

Հիւմն: Յմահ բանտարկութեամբ արգելած է պետական գոր-  
ծերի մասին խօսել:

ՅԵՍՈՒՏՔ: Ափսառ մեր ազատութիւններ:

Հիւմն: Եւ մահւան պատժով արգելած է կաւավարութեան  
արարքը պարւատել:

ՅԵՍՈՒՏՔ: Վայ մեր զլուխներին:

Հիւմն: Եւ մեծ խոսոումներով հրաւիրում են հայրերը, մայ-  
րերը, որդիները, ազգականները, բարեկամները, ծառաները — ինչ  
որ աների խորքերում պատահում է՝ առանձին հաստատած դատա-  
րանում յայտնել:

ՅԵՍՈՒՏՔ: Գնանք տուն:

Հիւմն: Խոստանում են հլու հպատակողին չհասցնել ոչ մի վի-  
րաւորանք ոչ անձի կողմից, ոչ պատւի, ոչ կալւածքի:

ՅԵՍՈՒՏՔ: Որչափ ողորմածութիւն: Ես հէնց իսկոյն ցաւ զբացի-  
երք գուքս Ալբան քաղաք մտաւ: Այն ժամանակից ի վեր թւում  
է ինձ, կարծես երկինքը մի սև քօղով պատած լինի և այնքան  
խորը ցած ընկած, որ մարդ պէտք է կորանաց, որ չգիպչի:

Հիւմն: Բացց ի՞նչպէս դիւր եկան քեզ նորա զինս որիները: Այ-

Ժէ: Նոքա մեր սովորաբար տեսածներից տարբեր ցեղի խեցգետիններ են:

Յետտէր: Թու, մարդու սիրա է կծկում, երբ տեսնում է այդպիսի մի հրոսակ փողոցում արշաւելիս: Մոմերի պէս ուղիղ, օտարոտի հայեացքով, քայլելիս կարծես մի անձն է շարժւում իսկ երբ նոքա՝ պահապահն են կանգնած և դու մօտներո՞ն անցնում ես, կարծես ուզում են քեզ տակւիտակ աեսնել և աջնպէս կոշտ ու բարկացկոտ են երևում, որ թւում է թէ ամէն անկիւնում դահիճ ես տեսնում: Նոքա ամենևին դիւր չեն գալիս ինձ: Մեր տեղացի զօրքը հօ մի ուրախ ժողովուրդ էր. նոքա համարձակ էին, ոտները չած, գլխարկները ականջին թեքած, ապրում էին և ապրել էին ուալիս: Բայց սոքա կարծես մեքենաներ լինեն, որոնց մէջ սատանայ է նստած:

Հիւսն: Եթէ այդպիսի մէկը կանչէր պանդնիր և նշան դնէր,  
ինչ ես կարծում, մարդը կը կանդնէր:

Յետտէր: Ես տեղնուտեղը կը մեռնէի:

Հիւսն: Գնանք տուն:

Յետտէր: Լաւ բան չեմ սպասում: ցտեսութիւն:

Զօէստ: (Մօտենում է առաջիններին): Բարեկամներ, Հարեւաններ:

Հիւսն: Լուռ. եկէք գնանք:

Զօէստ: Գիտէք:

Յետտէր: Չափից էլ աւելի:

Զօէստ: Ռեգենտուհին հեռացել է:

Յետտէր: Հիմա արդէն Աստւած աղատէ:

Հիւսն: Նա դեռ էլի մեզ պահում էր:

Զօէստ: Միանգամից և սուսուփուս: Նա չի կարողացել դուքս Ալբայի հետ հաշտւել: Նա ազնւականութեանը յացնել է տւել, որ կը վերադառնայ. բայց ոչոք չի հաւատում այդ բանին:

Հիւսն: Աստւած թող ների ազնւականութեանը, որ նա այս պատիժը բերաւ մեր գլխին: Նոքա կարող էին խափանել: Մեր արտօնութիւնները կորան:

Յետտէր: Իսէլ Աստուծոյ, արտօնութեան մասին խօսք մի ասիլ: Ես առաջարկուայ գլխատութեան հոտ եմ զգում: Արեգակը չի ուզում ծաղել. մշուշից արիւնի հոտ է գալիս:

Զօէստ: Օրանացին էլ է գնացել:  
 Հիւսն: Դէ ուրեմն մենք բոլորովին անպաշտական ենք:  
 Զօէստ: Կոմս էզմոնտը դեռ այսուղ է:  
 Յետտէր: Փառք Աստուծոյ. բոլոր սուրբերը նորան այնպէս  
 զօրացնեն, որ ձեռքից եկածն անէ. նորա ձեռքից միացն կարող է  
 մի բան գալ:

Փանզէն: (դալիս է). Կը դանեմ վերջապէս մի զոյգ, որ ծա-  
 կերը դեռ մտած չլինի:

Յետտէր: Ենորհ արէք մեզ. ճանապարհներդ շարունակեցէք:  
 Փանզէն: Դուք քաղաքավարի չէք:  
 Հիւսն: Կոմպիսէնսների ժամանակ չէ բնաւ։ Ձեր կուզը էլլ  
 քոր է զալիս, արդէն առողջացել էք:

Փանզէն: Հարցնում էք մի զինւորի նորա վէրքերի մասին:  
 Եթէ ևս հարւածներին նշանակութիւն աւած լինէի, իմ օրումն  
 ինձնից մարդ գարձող չէր լինիլ:

Յետտէր: Իրերը կարող են աւելի ծանր կերպարանք ընդունել:  
 Փանզէն: Բարձրացող փոթորկից, ինչպէս երևում է, խղճակ  
 յոդնածութիւն էք զգում ձեր անդամներում:

Հիւսն: Քո անդամները շուտով մի ուրիշ տեղ մարզութիւն  
 կանեն, եթէ հանգստանաս:

Փանզէն: Թշւառ միներ, որոնք իսկոյն յուսահատում են  
 երբ տան տէրը մի նոր կատու է ճանկում։ Թէւ մի փոքր այլ կերպ  
 բայց մենք կը շարունակենք այսուհետեւ մեր կենցաղավարութիւնը  
 առաջւաց պէս, անհոգ կացէք։

Հիւսն: Դու յանդուդն անպիտանն ես։  
 Փանզէն: Վաղուշների թագաւոր. թող դքսին իւր բանուդու-  
 ծին։ Ձեր կատուն այնպէս է երեսում, կարծես միների տեղ սստու-  
 ն աներ լինի լաված և հիմա կարողանում չլինի մարսել։ Դեռ թող  
 նորան։ Նա էլ պէտք է ուտի, խմի, քնի, ինչպէս միւս մարդիկ  
 ես չեմ վախենում, եթէ միացն մենք ժամանակից օգուտ քաղինք։  
 Ակզրում բանը արագ է դնում։ բայց յետոյ նա էլ կը գտնի, որ  
 աւելի լաւ է ապրել սեղանատանը իւղոտ սպատառների մօտ, և  
 զիշերները հանգստանալ, քան թէ շտեմարանում հատհատ մինք  
 որ ալ։ Գնացէք մի. ես ճանաչում եմ կառավարչապետներին։

Հիւսն: Այդպիսի մարդու համար ի՞նչ ամէն բան անսպատիժ է անցնում: Եթէ ևս երբ և է այդպիսի բան ասած լինէի, մի ըսպէ չի կարող ինձ ապահով համարել:

Փանզէն: Անհոգ կացէք. Ասուած երկնքում չի տեղեկանում ձեզ՝ ճճիներիդ՝ մասին, ուր մնաց ուղենտուհին:

Յետտէր: Մեղապարտ ուկի!

Փանզէն: Ես ճանաչում եմ ուրիշներին, որոնք լու էր, եթէ փոխանակ հերոսական քաջութեան՝ դերձակի արիւն ունենալին երակներում:

Հիւսն: Դորան ով ի՞նչ էք ուզում ասել:

Փանզէն: Հըմ. խօսէք կոմսի մասին է:

Յետտէր: Էգմոնտի. նա ընչից պէտք է վախենայ:

Փանզէն: Ես մի հէգ արարած եմ. և կարող էի ամբողջ տարի ապրել նորա մի երեկոյում կորցրածովը. բայց և այնպէս նա կարող էր տալ ինձ իւր մի ամբողջ տարւայ եկամուտը, եթէ իմ զլուխն ունենար մի քառորդ ժամ:

Յետտէր: Դու քեզ մեծ բան ես կարծում: Էգմոնտի մազերում աւելի խելք կայ, քան քո ուզեղում:

Փանզէն: Ճառում էք. բայց ոչ շատ նուրբ: Տէրերը խարսում են ամենաառաջինը: Նա չպէտք է հաւատար:

Յետտէր: Ի՞նչ է զուրս տալիս: Այդպիսի մի քաջը:

Փանզէն: Հինգ որովհետեւ նա մի դերձակ չէ:

Յետտէր: Մուրտառ ուկի!

Փանզէն: Կը ցանկացի, որ նա գէթ մի ժամ ունենար իւր անփամներում ձեր սրտոտոթիւնը, որը այնտեղ անհավատահութիւն պատճառէր և նորան այնքան դրզուէր, մինչւ նա ստիսպէր քաղաքից հեռանալ:

Յետտէր: Ձեր ասածները բոլորովին անհասկանելի են: Նա այնպէս ապահով է, ինչպէս աստղը երկնքում:

Փանզէն: Երբէք չես տեսել նոցա ընկնելիս. հետքն անդամ չի մնում:

Հիւսն: Խսկ ով է ուզում նորան բան անել:

Փանզէն: Ով է ուզեղում: Զլինի թէ զու ուզում ես արգելել: Կուզես մի ապստամբութիւն յարուցանել, եթէ նոքա բռնեն նորան:

Յետտէր: Ա՞հ:

Փանզէն: Նորա խաթեր ձեր կողերից ձեռք եք ուզում քաշել  
Զօհսու: Ե՞հ:

Փանզէն: (Նոցա խեղկատակելով). Ի՞հ, ոհ, ուհ... Կրկնեցէք բոլոր  
բացակ անչութիւնները: Ասածս ասած է: Թող Սստւած պահապան  
լինի նորան:

Յետտէր: Ես սարսափում եմ ձեր անամօթութեան վրայ  
Այդպիսի մի ազնիւ, աննենդ մարդ պէտք է բանից վախենար:

Փանզէն: Ստահակը ամեն տեղ օգտի կողմն է: Ամբաստանեալի  
նստարանի վրայ՝ ծաղրում է դատաւորին. դատաւորի աթոռի  
վրայ՝ հաճութեամբ ամբաստանեալին շինում է յանցաւոր: Ինձ  
պատահել է արտադրել այնպիսի մի արձանագրութիւն, ուր մի  
ուստիկան պալատից ստանում էր խոշոր գումար և գովասանք:  
որովհետև մի ազնիւ թշւառի, իրանց ուզածի համեմատ՝ հարցու  
փորձով խաբեբայ էր գուրս բերել:

Հիւսն: Այս էլ պոչաւոր սուտ էր: Ի՞նչ կարելի է արդեօք  
հարցուփորձով դուր բերել, երբ մէկն անմեղ է:

Փանզէն: Հաստագնութիւն Որտեղ հարցուփորձով բան չի կարելի  
գուրս բերել, այնտեղ ներս են հալում: Շիտակութիւնը մարդու  
անկշռադատ է դարձնում, նաև կամապաշտ: Նախ թեթև կերպով  
են հարցնում: և ձերբակալածը, հպարտ իւր իբր թէ վկայած  
անմեղութեան վրայ, ուզդակի պատմում է ամէնը, ինչ որ մի  
հասկացող կը ծածկէր: Ապա հաւատի քննիչը պատասխաներից  
նոր հարցեր է շինում և ուշք է դարձնում, թէ որտեղ մի չնչին  
հակասութիւն է երկում, այնտեղից կապում է իւր ցանցը, —  
թողնում խեղձ ողորմելուն որ շփոթւի, — թէ այստեղ մի փոքր  
աւելի, այնտեղ մի փոքր պակաս է ասել, կամ թէ, Աստւած ոչ զիտէ:  
ինչու մի հանգամանք ըսութեան է տւել, կամ մի որեւ է տեղ վախեցել  
է, և — մենք արդէն ուղիղ ճանապարհի վրայ ենք: Եւ ես ձեզ հաւա-  
տացնում եմ, որ մուրացիկ պառաւներն աղբիւսից վիալասները  
այնքան հոգաստարութեամբ չեն ժողովում, որքան մի այդպիսի  
խարդախու չնչին, երկդիմի, եղծւած, խանգարւած, ճմւտած,  
վերջացած, ծանօթ, ատած ցուցմունքներից և հանդամանքներից  
վերջը՝ մի ծիծաղալի խրտիլակ է շինում, որպէս զի իւր ամբաս-

տանեալին գէթ in effigie կարողանաց կախել։ Եւ թող թշւառականը Աստծուն փառք տաց, եթէ իրան կախելը տեսնել կարդանաց։

Յետտէր։ Կեզւանին է հաւ։

Հիւսնւ Ճանճերի համար կարելի է, որ սէտք գայ, բայց բրէտները կը ծիծաղեն ձեր ոսուցնի վրայ։

Փանզէն։ Նայելով ինչ սարգեր են Տեսէք. երկայն դուքսը մի խաչասարդի պատկեր ունի, ոչ հաստափորի—նոքա այնքան վնասակար չեն—այլ երկար ոտներով, բարակփորով, որը ուտելուց չի կշտանում և քաշում է շատ նուրբ թելեր, բայց նոյնքան և մածուցիկ։

Յետտէր։ Եգմօնար ոսկեգեղմի ասպետ է, ով է կարող նորան ձեռք տալ։ Միայն իրան հաւասարներից կարող է նա դառւել. միայն ամբողջ կարգից։ Փո անսանձ ուելու, քո չար խիզճն ենքնազ գայթակղեցնում գէպի մի այլպիսի դատարկախօսութիւն։

Փանզէն։ Միթէ գորանով ես նորա վատն եմ՝ ուզում։ Ինձ համար ողջ մէկ է։ Նա հիանալի տղամարդ է։ Իմ բարեկամներից մի զոյգին, որոնք ուրիշ տեղ արդէն կախւած կը լինէին, նա բաց է թողել՝ մէջքերնին լաւ ճիպուներ հասցնելով։ Դէ գնացէք, զնացէք։ Հէնց քեզ եմ խորհուրդ տալիս։ Ահա էլի պահնորդներ են երեւում։ Զի երեւում, որ նոքա այնպէս շուտով մեզ հետ ընկերական թաս խմէին։ Սպասենք և հանդարտ դիտենք։ Ես արագ ծախող կնքաւոր ունիմ և մի հօրեղոր զոյց աղջիկներ։ Եթէ գոյամատ նոքա կուշտ հաց ուտեն և էլի ձեռնասուն չդառնան, հասպանքա երկաթի ստամոքսով գայլեր են։

### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐՄՆ

Կուլէնքուրգեան պալատը։ Դուքս Ալբայի ընակարանը

Սիլա եւ Գոմէց միմեանց հանդիպում են

Սիլա։ Կատարել ես զուքսի հրամանները։

Դումէց։ Կէտ առ կէտ բոլոր օրական պահնորդներին պատկրւած է որոշեալ ժամանակին դունել զանազան տեղերում։ ուր նոցա նշանակել եմ։ Նոքա առայժմ շըջում են՝ ըստ սովորութեան,

քաղաքի մէջ, կարդ պահպանելու համար։ Ոչ մէկը չգիտէ միւսի մասին։ ամէն ոք կարծում է, թէ պատւէրը միայն իրան է վերաբերում։ և կարելի է յետոյ մի ակնթարթում զօրաշղթայ կապել և պալատի բոլոր ճանապարհները բռնիլ։ Գիտե՞ս դու այդ հրամանի պատճառը։

Սիլլա։ Ես սովոր եմ կուրօրէն հնազանդելու։ և մւմ աւելի հեշտ է հնազանդել, քան դուքսին, երբ շուտով հետևանքը ցոյց է տալիս, որ նա իրաւացի է հրամացել։

Գոմէց։ Լաւ, լաւ։ ինձ չես զարմացնի դորանով, որ դու այդ պէս ծածկամիտ ու սակաւախօս ես նորա նման, որովհետև դու պէտք է միշտ նորա մօտ լինես։ Բայց ինձ այդ օտարութի է թւում, որովհետև ես սովոր եմ խոտալական աւելի թեթև ծառայութեամբ հինն եմ։ բայց հիմա ես սովորել եմ շատախօսութեան և վիճաբանութեան։ Դուք բոլորդ էլ լուսկեաց էք և միշտ տիսուր։ Դուքսը իմ աչքում նմանում է մի երկաթեաց աշտարակի, առանց դռան, որի համար պահնորդները պիտի թեմեր ունենացին։ Նորիրս ճաշի վրայ լսեցի, թէ ինչպէս նա մի ուրախ ու սիրալիր մարդու մասին ասում էր, որ նա նման է վատ պանդոկի, օդի վաճառելու ցուցագրով՝ զատարիա շրջիկներին, մուրացկաններին և գողերին ներս գրաւելու համար։

Սիլլա։ Բայց մի՞թէ նա լուսութեամբ չառաջնորդեց մեզ այս տեղ։

Գոմէց։ Դորա դէմ ոչինչ չունիմ ասելու։ Անկասկած, ով վկաչ էր նորա խելօքութեան, որով նա զօրքը Խոտալիացից այստեղ առաջնորդեց, նա բան տեսած մարդ է։ Ինչպէս նա դուրս պրծաւ բարեկամի ու թշնամու, Փրանսիացոց, թագաւորականների և հերետիկոսների, Նվեցուրացիների և գաշնակիցների միջից հաւասարապէս, ամենախիստ կարդ պահպանեց և մի արշաւանք, որը այնպէս վտանգաւոր էին համարում, իմացաւ հեշտ և առանց խոչնդուի զլուխ բերել։ Մենք սովորելու արժանի շատ բան ենք տեսել

Սիլլա։ Միթէ այստեղ և ամէն ինչ հանդիսու ու խաղաղ է։ Այնպէս որ՝ կարծես ոչ մի ապստամբութիւն եղած չլինէր։

Գոմէց։ Ասենք, մեր զալուց առաջ էլ մեծ մասամբ խաղ էր։

Սիլւա: Նահանգներում աւելի ևս խաղաղացել են, և եթէ էլի մէկը շարժւում է՝ միայն փախչելու նպատակով է: Բայց դորա նանապարհներն էլ շուտով կը կատի, կարծում եմ:

Գոմք: Հիմա որ խակապէս թագաւորի հաճութիւնը կը գրաւի:

Սիլւա: Խսկ մեզ համար ամենակարեորը մնում է,—որ մենք էլ նորա հաճութիւնն ստանանք: Երբ թագաւորը այսոեղ դայ, անկասկած տնվարձ չեն մնայ դրքա ու նորա ներկայացրած մարդիկ:

Գոմք: Հաւատո՞ւմ ես թագաւորի գալուն:

Սիլւա: Այնքան պատրաստութիւններ չն տեսնում, որ շատ շատ հաւանական է:

Գոմք: Խնձ չեն համոզում դոքա:

Սիլւա: Դէ այդ մասին մի՛ խօսիլ գննէ: Որովհետեւ, եթէ թագաւորի կամքն էլ չլինէր դալ, այսքանը հօ անկասկած է, որ մարդ պէտք է հաւատայ:

Փերդինանդ (մտնում է): Հայրս դեռ դուրս չի՛ եկել:

Սիլւա: Նորան ենք սպասում:

Փերդինանդ: Իշխանները շուտով այսոեղ կը լինեն:

Գոմք: Այսօր են գալիս:

Փերդինանդ: Օրանսացին և էգմոնտը:

Գոմք: (Սիլւային ցածր): Հիմա մի քիչ զլիսի եմ՝ ընկնում:

Սիլւա: Դէ այդ քեզ համար պահիր:

(Դուքս Ալբան մտնում է: Նորա մտնելու եւ առաջ գնալու հետ՝ միսսունը յիտ են քաշւում):

Ալբա: Գնմէց:

Գոմք: (Առաջ գուղվ) Տէր իմ:

Ալբա: Պահնորդները բաժանել ու կարգադրել ես:

Գոմք: Ամենաճշորէն: Ցերեկւայ պահնորդները...

Ալբա: Բաւական է: Քալանում կը սպասես: Սիլւան քեզ կ'ասէ բոսէն, երբ դու պէտք է նոցա հաւաքես, պալատը տանող ճանապարհները պահնորդներով բռնես: Մնացածը դիտես:

Գոմք: Այն, աէր իմ: (Գնում է):

Ալբա: Սիլւա:

Սիլւա: Այսոեղ եմ:

Ալբա: Ամենը, ինչ որ վաղուց ի վեր քեզանում գնահատել

եմ—քաջութիւն, վճռականութիւն և սկսածն անխափան զլուկ  
բերելը—ցոյց տուր այսօր:

Սիլլա: Շնորհակալ իմ ձեզանից, որ ինձ առիթ էք տալիս  
ցոյց տալու, որ ես հինն եմ:

Ալբա: Դէս որ իշխանները ներս մտնեն ինձ մօտ, դու շտա-  
պիր իսկոյն էգմոնտի դրագոին ձերբակալելու: Միւս նշանակւածնե-  
րին ձերբակալելու հոմար բոլոր պատրաստութիւնները տեսել են

Սիլլա: Վստահացիր մեզ: Նոցա ճակատագիրը, ինչպէս ճիշ-  
ճաշւած արեգակնային խաւարումն, կը կատարեի կէտ առ. կէտ և  
սարսափելի կերպով:

Ալբա: Դու նոցա ճիշտ դիտել ես տւել:

Սիլլա: Բոլորին: Էգմոնտին ամենից առաջ: Նա միակն է,  
որը քո այստեղ լինելուց ի վեր չի փոխել իւր վարմունքը: Ամբողջ  
օրը մի ձիուց միւսին է թոչում, հիւրեր է հրաւիրում, սեղանի  
վրայ միշտ ուրախ է և զւարճախօս, խաղում է, նետում է, և  
գիշերները սլկում է սիրեկանի մօտ: Միւսներն՝ ընդհակառակը,  
նկատելի միջադադար են արել իրանց կենցազավարութեան ձեր  
մէջ. Նոքա տանն են մնում: Եւ նոցա դռներն այնպէս են, կար-  
ծես տանը հիւանդ լինէր:

Ալբա: Ուստի շնուր, քանի դեռ նոքա բարեբախտաբար չե՞-  
առողջացել:

Սիլլա: Ես կը կանգնեցնեմ նոցա: Զեր հրամանով մենք նոցա  
մեծամեծ պատիւներ կը տանք: Նոքա սոսկում են: Քաղաքագիտո-  
րէն նոքա երկչու շնորհակալութիւն են անում, զգում են, որ  
ամենալաւը—փախչելն է, բայց ոչ մէկը չի համարձակում մի  
քայլ անել: Նոքա դանդաղում են, միանալ չեն կարողանում, իսկ  
առանձնակի մի որ և է համարձակ քայլ անելուց էլ յետ է պա-  
հում նոցա ընկերական ողին: Նոքա սիրով ուզում են ամեն մի  
կասկածից աղատուել, բայց աւելի կասկածաւոր են դարձնում  
իրանց: Ուրախութեամբ տեսնում եմ արդէն Զեր ողջ նախաղիծը  
կատարւած:

Ալբա: Ես ուրախ եմ միայն կատարածի համար, և այն էլ  
ոչ հեշտ. որովհետեւ միշտ մնում է դեռ էլի մի բան, որ մեղ մոտ-  
ծել և հոգս քաշել է տալիս: Բախտն իրանածի է. յաճախ ստորվ

չնշինը—ազնւացնում է, իսկ լաւ նախամտածած գործերը՝ մի անարդ ելքով անպատճումն Մնացիր, մինչև իշխանները դան, ապա Դոմէցին պատւէր տուր փողոցները բռնել, իսկ ինքոյ շտապիր ձեր-քակալելու էգմոնտի գրագրին և բոլոր նշանակւածներին; Երբ կա-տարւած լինի այս, եկ աւստեղ և յայտնիր որդուս, որ նա այդ լուրը խորհրդարանում ինձ հասցնի:

**Սիլլա:** Ես յոյս ունիմ, որ այս երեկոյ Զեր առաջ պարզերես կը լինեմ (Ալբան մօտենում է իւր որդուն, որը մինչեւ այժմ կանգնած էր դաշտանում: Ցածը): Ես չեմ վատահանում խոստովանել, բայց յոյսս տա-տանում էր Ես տեսնում եմ առաջս ոգիներ, որոնք լուռ և մտա-յոյզ կշուռմ են սե նժարներում իշխանների և շատ հազարաւոր-ների բախտոք: Դանդաղ վեր ու վէր է անում լեզւակը: Դատաւոր-ները, երեսում է, խորասուզւած են մոքի մէջ: Վերջապէս իշնում է մէկ նժարը, բարձրանում է միւսը բախտի քմահածութեամբ—և վճռած է: (Դնում է):

**Ալբա:** (Ֆերդինանդի հետ առաջ դալով): Ինչպէս գտար քաղաքը:

**Փերդինանդ:** Ամեն ինչ կատարւած է: Ես՝ իբրև թէ ժամա-նակ անցկացնելու համար, ձիով զբօսնում էի փողոցն ի վայր, փո-ղոցն ի վեր: Զեր լաւ բաժանած պահնորդները այնպէս լարւած են պահում երկիւղը, որ ոչ մէկը չի համարձակւում ծպտուն հա-նել: Քաղաքը նման է մի գաշտի, երբ հեռւից փայլում է կայ-ծակը. չեն նկատում ոչ թռչուն, ոչ անասուն, բացի՝ որոնք շտա-պով դէպի մէկ ապաստանարան են ուզում:

**Ալբա:** Քեզ ուրիշ ոչինչ չպատահե՞ք:

**Փերդինանդ:** Էգմոնտն էր մի քանիսի հետ ձին հեծած դէպի շուկան արշաւում: Մենք միմեանց բարեւեցինք: Նա մի վայրագ ձի ունէր, որը ես ստիպւած էի գովել: «Նոտապենք մեր ձիերը վար-ժեցնելու, շուտով պէտք կ'ունենաք—կանչեց դէպ ինձ: Նա ինձ այսօր նորից կը տեսնի,—ասաց նա, —և գալիս է Զեր պահանջման համեմատ՝ Զեզ հետ խորհրդակցելու:

**Ալբա:** Նա քեզ նորից կը տեսնի:

**Փերդինանդ:** Իմ այսուեղ ճանաչած բոլոր ասպետների մէջ նա ինձ ամենից շատ է դուր գալիս: Երեխ բարեկամներ կը գառնանք:

**Ալբա:** Դու դեռ ես չափազանց շտապող և անչափ անզդոց

ես. զեռ նկատում եմ քո մէջ մօրդ թեթևամտութիւնը, որը նորան այնպէս անսպացման իմ զիրը նետեց: Քանի քանի վտանգաւոր յարաբերութիւնների մէջ ես մտել շտապով՝ արտաքինից շլայշած:

Փերդինանդ: Զէր հրամանին ես միշտ հնագանդ եմ գտնւած:

Ալբա: Քո երիտասարդ արեան ներում եմ այս թեթևամտութարեկամութիւնը, այս անզգոց զւարթամտութիւնը: Միայն դու մոռանալ թէ ես ինչ գործի եմ ուղարկւած և թէ գորանից ես քեզ ինչ մաս կ'ուզէի հանել:

Փերդինանդ: Յիշեցրէք ինձ և միք խնացիլ, երբ կարեոր էք համարում:

Ալբա (կարճատե՛ լուսթիւնից յիշոյ): Որդեակ իմ:

Փերդինանդ: Հայր իմ:

Ալբա: Շուտով կը գան իշխանները—Օրանացին և Էդմանոր կը գան: Անվտանութիւնից չէ, որ քեզ հիմա նոր եմ յայտնում այն, ինչ որ պէտք է կատարւի: Նոքա այտեղից այլ ես չն դուրս գնալու:

Փերդինանդ: Այդ ինչ միոք է:

Ալբա: Վճռւած է նոցա բռնել: — Դու զարմանմում ես: Խիրանելիքդ: Պատճառներն այն ժամանակ կ'իմանաս, երբ իրողութիւնը կատարւած կը լինի: Հիմա այլ ես ժամանակ չի մնում այլ բացատրելու: Քեզ հետ միայն կ'ուզէի ամենամեծ և ամենախորհրդաւոր բանի մասին խօսել: Մի ամռւր կապ պահում է մեզ միասին շղթայած: Դու ինձ համար թանկ ես և սիրելի: Քեզ վրայ կ'ուզէի ես ձգել բոլոր ծանրութիւնը: Ես չէի կամենալ քո մէջ տպաւորել միմիայն հնագանդելու սովորութիւնը, այլ և հրամայելու, արտայայտելու, գործադրելու զգացմունքն էլ կ'ուզէի քո մէջ պատւաստել: Քեզ ամենայաւը, ինչ որ ունիմ, օժիտ տալ, որ եղ բայց ներիդ մէջ մտնելիս՝ ամաչելու տեղիք չունենաս:

Փերդինանդ: Ի՞նչ ասես, որ ես քեզ պարտական չեմ լինի այդ սիրոյ համար, որը դու միայն դէպ ինձ ես տածում: Այն մաս առաջ մի ամբողջ պետութիւն է դողում:

Ալբա: Նէ լսիր, թէ ինչ պէտք է արած: Հետո որ իշխան ները ներս մտնեն, պարատի բոլոր մուտքերը կը բռնւեն: Այդ մաս սին կարգադրել է Գոմեցը: Սիլւան կը շտապի ձերբակալելու եղ:

մենակասկածաւորների հետ միասին; Խսկ դու  
պահնորդներին գարպատում և բակերում կարգի կը պահես: Ամենից  
առաջ այս մերձակայ սենեակում պահնորդներ զիր ամենավահնելի  
մարդոց, ապա մնացիր գալանում, մինչև Սիլւան յետ գայ, և բեր  
ինձ մի որ և է թղթի կտոր ի նշան, որ նորա պատուերը կատար-  
ած է. ապա մնացիր գաւթում, մինչև Օրանացին հեռանայ, ու նո-  
րան հետեիր. ես կը պահեմ Եգմոնտին այստեղ՝ իբրև թէ նորա  
հետ էլի խօսելու բան ունենացի: Դալանի ծալում պահանջիր  
Օրանացու սուրբ, մօտ կանչիր պահնորդին, բռնիր շուտ ամենա-  
վասնգաւոր մարդուն, իսկ ես կը բռնեմ Եգմոնտին այստեղ:

Փերդինանդ: Հնագանդուում եմ, հայր իմ: բայց առաջին ան-  
դամն այսպէս խոցւած սրտով և անձկութեամբ:

Ալբա: Ես այդ ներում եմ քեզ: Կեանքումդ այդ առաջին  
ամենամեծ օրն է:

Սիլւա (ներս է գալիս): Անտուերպէնից սուրհանդակ: Ահա Օրա-  
նացու նամակը: Նա չի գալիս:

Ալբա: Սուրհանդակն էր ասում այդ:

Սիլւա: Ո՛չ. սիրաս է վկայում:

Ալբա: Քո բերանով խօսում է իմ չար հրեշտակը: (Նամակը  
կարգալուց յետոյ նշան է անում երկուսին, նոքա զալաններն են քաշւում, ինքը  
միայնակ է մնում բեմի առաջին մասում): Նա չի գալիս: Մինչև վերջին  
բոլէն յետաձգում է իւր միտքը պարզ արտայատել: Նա համար-  
ձակում է չգալ: Այսպէս ուրեմն՝ այս անգամ, հակառակ ենթադ-  
րութեանս, խելօքը բաւականին խելօք էր՝ խելօք չլինելու չափի: Ժա-  
մացոյցը շարժւում է. էլի սլաքի մի փոքր ճանապարհ—և մի մեծ  
դործ կամ գլուխ է բերւած, կամ կորցրած, անդարձ կորցրած,  
որովհեաւ էլ ոչ նորից ձեռք ձգելու է, ոչ էլ ծածկելու: Ես վա-  
զուց ամենը հասուն կերպով կշռադատել էի. և այդ հանգամանքն  
էլ աչքի առաջ էի ունեցել ու վճռել, թէ այս դէպքում ինչ  
պէտք էր արած. իսկ հիմա, երբ գործելու ժամանակ է, հաղիւ  
եմ դիմագրում, որ թերն ու դէմը նորից հոգուս մէջը չտառան-  
ան: Սրդեօք լաւ է միւսներին բռնել, երբ նա իմ ձեռից դուրս  
պրծնի: Յետաձգեմ և թողնեմ Եգմոնտին խւրացինների հետ, այն-  
քանի հետ դուրս սլիւել, որոնք միմիայն հէնց այսօր են դուցէ

ձեռքումս: Ուրեմն բախտը քեզ վրայ էլ է բռնանում, դու  
անրոնաբարելիդ: Ի՞նչ երկար մտածած, ի՞նչ լաւ պատրաստած,  
ի՞նչ սիրուն նախագիծ: Ցոյսը որքան մօտ էր նապատակին: Եւ այդ  
վճռական բովէին երկու չարիքի մէջն եւս Խնչպէս քւէտուփի մէջ  
ձեռքդ մեկնում եսդէպի մութ ապագան. ձեռքդ ընկածը գլորւումէ,  
առանց քո գիտութեան, թէ արդեօք սպիտակ է, թէ սև: (Նա ու  
շաղիր է դառնում ինչպէս մէկը, որ մի բան է լսում, եւ մօտենում է պատու  
հանին). Նա է այս.—Էզմոնտը: Զիդ քեզ ացգտէս հեշտ ներս բերեց  
և չխրանեց արեան հոտից և սուսերամերկ նգուց, որը դռան մօտ  
քեզ ընդունում է: Իջիր: Ահա դու հիմա մի ոսով գերեզմանումն  
ես. ահա և երկուսնկ: Այս, գուրզուրիր գորան և մէջքը շոյթի հոր  
վերջին սրտոտ ծառայութեան համար:—Էլ ինձ ոչ մի ընտ-  
րութիւն չի մտում: Այսպիսի կուրութեամբ, ինչպէս Էզմոնան է  
այստեղ մօտենում, նա չի կարող երկրորդ անգամ իրան քո ձեռք  
մատնել: Լսեցէք: (Ֆերդինանդն ու Սիլւան մօտենում են). Կ'անէք, ինչ  
որ հրամայեցի, ես իմ վճիռը չեմ փոխելու: Ես կը բռնեմ, ինչպէս  
կարող եմ, Էզմոնտին, մինչև դու Սիլւայից լուր բերես: Այս  
մեացիր մօտիկ: Քեզանից էլ է բախտը յափշտակում ամենամեծ  
ծառայութիւնը—թագաւորի ամենամեծ թշնամուն քո ձեռով  
բռնելը: (Սիլային): Շտապիր: (Ֆերդինանդին): Գնա նորա առաջ: (Ա-  
րան մնում է միայնակ մի բանի վայրկեան եւ լուս զնում-զպիս).

**Էզմոնտ:** (ներս է դաիս): Ես դալիս եմ թագաւորի հրամանը  
լսելու, տեղեկանալու՝ թէ ինչ ծառայութիւն է պահանջում մեր  
հաւասարմութիւնից, որը նորան յաւիտեան նւիրած կը մնայ:

**Ալբա:** Նա ցանկանում է նախ և առաջ ձեր խորհուրդը լսել:  
**Էզմոնտ:** Ի՞նչ առարկայի մասին: Օրանացին էլ է դալու: Ես  
նորան այստեղ էի կարծում:

**Ալբա:** Յաւում եմ, որ հէնց այս ծանրակշիռ ժամին նա բա-  
ցակայ է: Ձեր խորհուրդը, ձեր կարծիքն է ուզում լսել թագա-  
ւորը, թէ ինչպէս պէտք է այս նահանգները նորից խաղաղացնել: Այս, նա յոյս ունի, որ գուք գօրեզ աջակցութեամբ կ'օդնէք նո-  
րան այս անհանդասութիւնները խաղաղացնելու և նահանգներում  
կարգը կատարեալ և յարատե անելու:

**Էզմոնտ:** Դուք ինձնից աւելի լաւ կարող էք գիտենալ որ

ամեն ինչ բաւականին խաղաղացրած է. այն, աւելի ևս խաղաղացրած էր, մինչ նոր զինուորների երևալը երկիւղով ու հոգսերով պղտորեց նոցա մոքերը:

Ալլահ: Դուք, երեսում է, ուզում էք հասկացնել, որ ամենից լան այն եղած կը լինէր, եթէ թագաւորը ամենեին ինձ այնպիսի մի դիրքում դրած չլինէր, որ ձեզ հարց տայի:

Էզմոնտ: Ներեցէք: Թէ թագաւորը պէտք է զօրք ուղարկած լինէր, թէ միայն նորա մեծաշուք ներկայութեան զօրութիւնը աւելի զօրեղ չէր ազդած լինիլ արդեօք—այդ դատեն իմ գործը չէ: Զօրքը այստեղ է, ինքը—ոչ: Բայց մենք պէտք է շատ ապերախտ, մոռացկոտ լինենք, եթէ չցիշենք, թէ որքան մենք պարտական ենք ուեգենտուհուն: Խոստովանում ենք, որ նա իւր զրան խելօք, նոյնքան և քաջ վարմունքով, ուժով և հեղինակութեամբ, համոզելով և խորամանկութեամբ ապստամբներին խաղաղացրեց և, ի զարմանս աշխարհի, մի ապստամբ ժողովրդին սակաւ ամիսների ընթացքում ճանաչել տւեց նորա պարտաւորութիւնները:

Ալլահ: Ես այդ չեմ ուրանում: Խոսվութիւնը հանգստացրած է, և ամենքն իրանց հնազանդութեան սահմանը մտած են երեսում: բայց ամեն մէկի քմահաճութիւնից չէ կախւած թողնել այդ սահմանը: Ո՞վ պէտք է ժողովրդին արգելէ ապստամբել: Ո՞ւր է նորան խափանող ոյժը: Ո՞վ է երաշխաւորում մեզ, որ նոքա այնուհետեւ հաւատարիմ և հպատակ կը մնան: Նոցա բարի կամքն է բոլոր գրաւականը, որ մենք ունինք:

Էզմոնտ: Բայց միթէ մի ժողովրդի բարի կամքը ամենաապահով և ամենաազնիւ դրաւականը չէ: Ասուած վկայ, որ մի թագաւոր այն ժամանակ կարող է իրան աւելի ապահով զգալ, երբ կանգնած են ամենքը մէկի և մէկն ամենքի համար. աւելի ապահով ընդդէմներքին և արտաքին թշնամիների:

Ալլահ: Հիմա դուք ուզում էք համոզել մեզ, որ այստեղ հիմա այդպէս չ:

Էզմոնտ: Եթէ թագաւորը մի ընդհանուր ներողութիւն հրապարակէր, նա կը խաղաղացնէր մոքերը, և շուտով կ'երեւար, ինչպիս հաւատարմութիւնն ու սէրը վստահութեան հետ նորից վերադառնում են:

Ալբա: Եւ ամեն ոք, որը թագաւորի մեծութիւնը, կրօնի սրբութիւնը անպատճել է, արձակ համարձակ շրջէր, ապրէր ու րիշներին իբրև պատրաստի օրինակ, թէ ինչպէս հրէշաւոր յանցանքներն անպատճէ են մնում:

Էզմինտ: Բայց անմտութեան ու արբեցութեան մի յանցանք աւելի լաւ չէ ներել, քան անգութ կերպով պատճել, մանաւանդ ուր ազգպիսի հաստատ յոյս, ուր հաւաստիութիւն կազ, որ չարիքն էլ չի կրկնւելու: Թաղաւորներն ազգպիսով աւելի ապահով չեն: Ներկայ և տպագայ սերնդից չեն գնահատուիլ ու գովել նոքա, որոնք կարողացել են իրանց պատւին հասած վիրաւորանքը ներել, ափսոսալ և արհամարհել: Նոքա հէնց նորա համար չնի Աստուծոյ հաւասար ընդունում, որը շատ և շատ մեծ է, քան եթէ ուղենար ամեն օրբապղծութեան վրէժինդիր լինել:

Ալբա: Հէնց դորա համար էլ պէտք է թագաւորը Աստուծոյ կրօնի արժանաւորութեան, իսկ մենք՝ թագաւորի հեղինակութեան համար պատերազմենք: Ինչ որ պետն արհամարհումէ պատճել, մեր պարտըն է վրէժինդիր լինել: Անպատիժ, ըստ իմ կարծեաց, պէտք է ոչ մի յանցանք չմնայ:

Էզմինտ: Կարծում ես թէ դու նոցա բոլորովին կը հասնեմ Ամեն օր չի լսում, թէ երկիւղը նոցա դէս ու դէն է ցրում և երկրից դուրս քշում: Հարուստներն իրանց ստացւածները, իրանց որդիներին, բարեկամներին կ'առնեն կը փախցնեն: աղքատն իւր օդտակար ձեռները հարեւանին կ'առաջարկի:

Ալբա: Նոքա կ'անեն, եթէ նոցա չկարողանան արգելել: Ուստի և թագաւորը պահանջում է իւրաքանչիւր իշխանից խորհուրդ և գործ, լրջութիւն ամեն կուսակալից, բայց ոչ պատմութիւն, թէ բանն ինչպէս է, ինչպէս կը լինէր, եթէ թողնէին շարունակ կմլու իւր նախկին ձեռք: Մէկ չարիքի դէմ կանգնել նայել, ո՞յս սերով իրան խաբել, իրան ժամանակի բերմունքի յանձնել, մեկ մէկ վրան յարձակւել, ինչպէս բարեկենդանի խաղերում, այնպէս ո՞յ աղմուկ լինի և երևաց թէ մի բան են շինում, երբ ոշինչ չէ լինում—այդ չի նշանակում կասկածանքի տակ գցել իրան, թէ զւարձութեամբ ես տեսնում այդ ապստամբութիւնը, որը կ'ուղել թէւ ոչ յարուցանել, բայց գէթ սիրով նայել:

**Էղմինսու:** (Մորամադիր է բարեկանուլ, բայց իրան համար է պահում, մի փոքր լրելուց յետոյ խօսում է նստած): Ամեն, դիտաւորութիւն ակնյացտնի չելինում և շատ մարդոց դիտաւորութիւն կարելի է չար մեկնել: Մարդ ստիպւած է, օրինակ, ամեն կողմից լսելու, թէ թագաւորի դիտաւորութիւնն այնքան նահանդները միաձեւ և պարզ օրէնքների համեմատ կառավարելը չէ, կրօնի վեհութիւնն ապահովելը և իւր ժողովրդին մի ընդհանուր խաղաղութիւն տալը չէ, որքան աւելի նոցա անպայման նւաճնելը, նոցա հին իրաւունքները յափշտակելը, իրան նոցա կալւածների տէր դարձնելը, ասհմանափակել ազնւականութեան գեղեցիկ իրաւունքները, որոնց համար և եթ ազնւականութիւնը կարող է նորան ծառացել, նորան նւիրել իւր կիանքն ու արելու կրօնն, ասում են, մի հոյակապ զորդ է, որի յետեւը մարդ ամեն վտանգաւոր միտք աւելի հեշտ կարող է յղանալ: Ժողովուրդը ծունկ է չոքում, աղօժում նկարած սուրբ նշանին, իսկ յետել դարան է մտած թռչնորսը, որն ուզում է նոցա որսալ:

**Ալբա:** Այս պէտք է լսեմ ևս քեզնից:

**Էղմինսու:** Խնձնից, բայց ոչ իմ մոտածմունքները, այն միայն, ինչ որ երբեմն այստեղ, երբեմն այնտեղ մեծ ու փոքր, խելօք ու խելառ խօսում ու արձակ տարածում են: Նիդերլանդցիները վախենում են մի. կրկնակի լծից: Եւ ոչ է երաշխաւորում նոցա ազատութեան մասին:

**Ալբա:** Ազատութիւն. սիրուն խօսք, երբ մարդ ուղիղ հասկանայ: Խնչ ազատութիւն են ուզում: Խնչ է ամենաազատի ազատութիւնը.—զործել իրաւը—բայց թագաւորը ացդ չի արգելիլ: Ոչ, ոչ, նոքա իրանց ազատ չեն համարում, երբ չեն կարող վեսանել թէ: Իրանց և թէ ուրիշներին: Աւելի լաւ չէր լինիլ հրաժարւել, քան այդպիսի մի ժողովուրդ կառավարելը երբ նեղում են արտաքին թշնամիները, որոնց մասին ոչ մի քաղաքացի չի մոտածում, այլ վիայն իւր մերձաւորով է զբաղւած, և թագաւորը պահանջում է օգնութիւն, այն ժամանակ նոքա միմեանց հետ զժուում են, դաւաճանելով պետութեան՝ միանում են թշնամիների հետ: Աւելի լաւ չէ նոցա այնպէս սահմանափակել, որ կարելի լինի պահել, ինչպէս երեխաներին, և, ինչպէս երեխաներին՝ առաջնորդել դէպի իրանց

բարին: Հաւատուա ինձ, որ ամբոխը չի ծերանում, չի խելքանում, ամբոխը միշտ մնում է երեխայսմիտ:

Էզմինտ: Ինչպէս սակաւ է պատահում որ մի թագաւոր խելքի է գալիս: Բայց աւելի լաւ չէ որ շատերը շատերին վստահանացնին, քան մէկին. և ոչ անգամ՝ մէկին, այլ այդ մէկի քչերին, ժողովրդին, որը ծերանում է իւր տիրոջ աչքն ու ունքը պահելով: Նա միացն իրաւոնք ունի խելօք լինելու:

Ալբա: Գուցէ հէնց նորա համար, որովհետեւ նոքա իրանց կամքին չեն թողած:

Էզմինտ: Եւ դորա համար էլ ոչ ոք չէր ուղենալ յօժարաբար իրան յանձնել նոցա տնօրինութեանը: Թող անեն, ինչ ուղում են: Քո հարցին պատասխանել եմ և կրկնում եմ.—Անկարելի է. չի լինիլ: Ես ճանաչում եմ երկրացիներին: Նոքա Աստուծոց հողը կոխելու արժանի մարդիկ են. իւրաքանչիւրը պինդ իւր համար, մի փոքրիկ թագաւոր, տոկուն, գործոն, ընդունակ, հաւատարիմ, յարած հին բարքերին: Դժւար է նորա վստահութիւնը գրաւել, բայց հեշտ է պահպանել: Յամառ և աննկուն: Նոցա ճնշել կարելի է, բայց նւաճել—ոչ:

Ալբա: (Այդ միջոցին մի քանի անգամ շուրջն է նայում): Եւ դու կարող պիտի լինէիր այդ բոլորը թագաւորի ներկայութիւնմբ կրկնել:

Էզմինտ: Աւելի վատ, եթէ նորա ներկայութիւնն ինձ վախեցնէր. տաելի լաւ նորա համար, նորա ժողովրդի համար, եթէ նա ինձ սիրո տար, եթէ նա ինձ վստահութիւն ներշնչէր դեռ աւելի շատն ասելու:

Ալբա: Ինչ որ օգտակար է, ես էլ եմ կարող լսել նորա նման:

Էզմինտ: Ես նորան կ'ասէի.—Հեշտ կարող է հովիւը ոչխար ների մի ամբողջ հօտ իւր առաջը քշել. եզր քաշում է իւր արօրն առանց ընդդիմադրութեան. բայց երբ ուղում ես մի ազնիւ ձի հեծնել, պէտք է նորա բնոցթին յարմարւես. նորանից ոչ մի ան խելք բան, ոչինչ անխելք կերպով չախհանջես: Դորա համար և յանկանում է քաղաքացին իւր հին սահմանադրութիւնը պահպանէլ, իւր հայրենակիցներից կառավարւել, որովհետեւ նա գիտէ, թէ ինչպէս պէտք է առաջնորդւի, որովհետեւ կարող է նոցանից յուսալ անշահախնդրութիւն և իւր վիճակին մասնակցութիւն:

Ալբար Եւ պետք պէտք է իշխանութիւն չունենայ այս վաղմի սովորութիւնը փոփոխելու. և ուղղակի այս չպիտի լինէր նորա ամենասիրուն արտօնութիւնը: Ի՞նչ կայ մնացուն այս աշխարհում, որ մի պետական կարգադրութիւն կարողանայ մնալ: Որոշեալ ժամանակամիջոցում միթէ ամեն յարաբերութիւն չպէտքէ փոխակի: Եւ մի հին կազմակերպութիւն դորա համար չի կարող ուղղակի հազարաւոր չարիքի պատճառ գառնալ, որովհետև ժողովրդի ներկայ վիճակին լիովին չէ համապատասխանում: Ես վախենում եմ, որ գուցէ այս հին իրաւունքները նորա համար են հաճելի, որովհետև կազմում են թագստոցներ, որոնց մէջ խելօքը, ուժեղը՝ ի վես ժողովրդի կարող է թագչե, կամ միջից դուրս պրծնել:

Էզմինտ: Իսկ բարձրագոյն իշխանութեան անսահման ձեռնադրութիւնները և այս քմահաճ փոփոխութիւնները, միթէ սոքանշաններ չեն, թէ մէկն ուղում է անել այն, ինչոր հտզարներն իրաւունք չունին անելու: Նա կամենում է միայն իրան ազատարձնել, որ կարողանայ իւր ամեն մի ցանկութեանը յագուրդալ իւր ամեն մի դիտաւորութիւնն ի կատար ածել: Եւ եթէ մենք նորան, այդպիսի բարի և իմաստուն թագաւորին՝ բոլորովին վստահանացինք, երաշխաւորում է նա մեզ և իւր յաջորդների համար, որ նոցանից ոչ մէկը առանց ակնածութեան և առանց խնայելու չի կառավարիլ: Ո՞վ կ'ազատէ մեզ այն ժամանակ կատարեալ քմահաճութիւնից, եթէ նա իւր ծառաներին, իւր մերձաւորներին ուղարիէր, որոնք առանց երկիրն ու նորա կարիքը ճանաչելու լատ իրանց քմահաճութեան ձևէին ու կտրէին, ոչ մի ընդդիմութիւն չգտնէին և ամեն պատասխանառութիւնից իրանց ազատ համարէին:

Ալբար (որը այդ միջոցին էլ շուրջն էր նայում), Դորանից էլ աւելի բնական բան չկայ, քանի որ մի թագաւոր կամենում է լինել ինքնիշխան, և իւր հրամաններն ամենայն սիրով նոցա է յանձնում կատարելու, որոնք նորան ամենայն սիրով են հասկանում և հասկանալ ուղում, և որոնք նորա կամքն անպայման կատարում են:

Էզմոնտ: Նոյնքան բնական է և՛ այն, որ քաղաքացին ուղում է կառավարւել նորա միջոցով, որը նորա հետ ծնւել ու մնել

է, որը նորա հետ նման գաղափար ունի կազմած իրաւի ու անիրաւի մասին, որին նա կարող է ընդունել եղբօր տեղի

Ալբար: Եւ սակայն ազնւականութիւնն իւր այս եղբայրներին շատ անհաւասար է մասնակից արել:

Էզրոնտ: Այդ գարերից առաջ է պատահել և հիմա առանց նախանձի տանում են այդ: Բայց եթէ նոր մարդիկ՝ առանց կարիքի, ուղարկեին, որոնք կամենացին երկրորդ անգամ՝ ի հաշուազգի, հարստանալ, եթէ մարդ տեսնի իրան մի խիստ, յանդուդն, անսպայման շահախնդրութեան զոհ գնալիս, այս այնպիսի մի խուռաթիւն առաջ կը բերէր, որ այնպէս հեշտ ինքն իւր մէջ չի լուծելի:

Ալբար: Դու ինձ ասում ես այն, ինչ որ չպիտի լսէի: Ես էմ օտարական:

Էզրոնտ: Եթէ այդ ասում եմ քեզ երեսիդ, այդ ցոյց է տալիս, որ քեզ չունիմ աչքի առաջ:

Ալբար: Եւ ոչ ացդպէս կ'ուզենացի քեզնից լսել այդ: Թաղաւորը ուղարկեց ինձ այն յուսով, որ ես այստեղ ազնւական ութեան աջակցութիւնը պիտի գտնէի: Թագաւորի ասածն ասած է: Թագաւորը խոր կշռադատելուց յետոց տեսել է, թէ ինչ է նպաստաւոր մի ժողովրդի. իրերը չեն կարող մնալ ու շարունակել ինչ պէս մինչև հիմար Թաղաւորի դիտաւորութիւնն է նոցա սահմափակել՝ իրանց իսկ սեպհական օգտի համար. նոցա սեպհական վըր կութիւնը, եթէ այլ կերպ չի կարելի, զօրով ընդունել տալնրանց. վասկար քաղաքացիներին զոհել, որպէս զի մնացածները խաղաղութիւն գտնեն, կարողանան մի իմաստուն կառավարութեան բարեքը վայելի: Այս է նորա վճիռը: Այս բանն ազնւականութեանը յացնելու հրամանն ունիմ: Եւ խոր հուրդ եմ պահանջում յանուն նորա, թէ «ինչպէս և ոչ թէ «ինչ» պէտք է անիլ, որովհետեւ «ինչ»-ը նա է վճակը»:

Էզրոնտ: Դժբախտաբար քո խօսքերը արդարացնում են ժողովրդի սարսափը, ընդհանուր սարսափը: Որովհետեւ նա այնպէս է վճռել ինչպէս ոչ մի իշխան չպիտի վճռէր: Իւր ժողովրդի ոյժը, նոցա սրաերը, այն գաղափարը, որ նոքա իրանց մասին կազմել են, ուզում է նա թուլացնել, ձնել, խորտակել, որպէս զի կարողանաց հեշտ կառավարել: Նա կամենում է նոցա ինքնուրոյնութեան ներքին ծուծը վճացնել՝ անկասկած նոցա բախտաւորաց:

նելու դիտաւորութեամբ։ Նա կամենում է նոցա ոչնչացնել, որպէս զի նոքա մի ինչ գառնան, մի ուրիշ ինչ։ Ահ... եթէ նորա դիտաւորութիւնը բարի է, ապա սխալ ճանապարհ է բռնել։ «Թագաւորին» չեն ընդդիմադրում, այլ հակառակում են այն թագաւորին միայն, որը առաջին դժբախտ քաջն է անում գէպի մի սխալ ճանապարհ։

Ալբա։ Խնչողիս որ զաւ ես մտադրւած, երեւում է, զուր փորձ է մեր միաբանել կամենալը։ Դու թագաւորի մասին աննշան՝ և նորա խորհրդականների մասին—անարգական համարումն ունիս, եթէ կարծում ես, որ այս ամենն արդէն չի մտածւած, գատւած ու կշռադրատւած։ Աս ոչ մի պատուիր չեմ ստացել մէկ էլ նորից քննելու ամեն թեր ու դէմ։ Հնավանդութիւն եմ պահանջում ժողովրդից, այսկ ձեզնից—առաջնորդներիցդ և ազնիւներից։ Խորհուրդ ու գործ, իբրև դրաւական այս անտայման պարտաւորութեան։

Էզմոնտ։ Դէ պահանջիր մեր գլուխները, և ամեն ինչ միանգամից կը վերջանաց։ Արդեօք պարանոցը պէտք է այս լծի տակ ծռւի, թէ կացնի տակ կծկուի—մի ազնիւ հոգու համար պարող է միւնոյնը լինել։ Հենց ի զուր եմ այդքան խօսել։ Օդն եմ միայն շարժել և ոչինչ շահել։

Փերդինանդ (զախս է). Ներեցէք որ ընդհատում եմ ձեր խօսակցութիւնը։ Ահա մի նամակ, որի բերողը թախանձանքով մնում է պատաժիւանի։

Ալբա։ Դրաւունք տւեք նորա բովանդակութիւնն իմանալու (Իի կողմէ)։

Փերդինանդ (Էզմոնտին). Եատ հիանալի ձի է, որը ձեր մարդկը բերել են Ձեզ առւն տանելու։

Էզմոնտ։ Նա ամենավայր չէ։ Բաւականին ժամանակ է, ինչ որ նա ձեռքիս է. մտադիր եմ ձեռք քաշել նորանից։ Եթէ ձեզ զիւր է զալիս, զուցէ գնի մէջ համաձայնենք։

Փերդինանդ։ Լաւ, տեսնենք։ (Ալբան ակնարկում է իւր որդուն, որը յիս է քաշուում)։

Էզմոնտ։ Մնաք բարով։ Արձակեցէք ինձ, որովհետեւ, Սառւած վկայ, էլ ասելու ոչինչ չունիմ։

Ալքա: Բարեբախտաբար դէպէն արգելեց քեղ միտքդ էլի աւելի մասնելու: Անզգուշաբար յետ ես տալիս զու սրտիդ ծալ քերը և զու քո դէմ աւելի խիստ ես գանդատւում, քան մի ոխելիմ հակառակորդ կարող էր անել:

Էզմինտ: Այդ յանդիմանութիւնն ինձ չի շփոթում: Ես ինձ բաւականին ճանաչում եմ և գիտեմ, ինչպէս եմ թագաւորին պատկանում, աւելի շատ, քան շատերը, որոնք, նորա ծառացութեան մէջ, իրանց անձին են ծառաշում: Ակամայ եմ բաժաննում այս վէճից՝ առանց այն վերջացրած տեսնելու: բայց յանկանում եմ միայն, որ տիրոջ ծառացութիւնն ու երկրի շահը կարողանան մեղ շուտով միաբանեցնել: Գուցէ մի երկրորդ խօսակցութիւն, ներկայութիւնը մնացած իշխանների, որոնք այսօր բացակայ են, մի բախտաւոր վայրկեանում գլուխ բերեն այն, ինչոր այսօր անկարելի է թւում: Այս յուսով հեռանում եմ:

Ալքա: (Թուկոյն Ֆերդինանդին նշան է տալիս): Կանգնիր, Էզմինտ, սուրբըդ:

(Միջին դուռը բացւում է, զալանը լիքն է զինուորներով, որոնք անշարժ են):  
Էզմինտ: (Զարմացած լոռութիւնից յետոյ): Այս էր նպատակդ: Դորահամար ես ինձ կանչել: (Սուրբ քաշելով պաշտպանելու): Միթէ ես անզէն եմ:

Ալքա: Թագաւորի հրամանով, դու իմ գերին ես: (Երկու կրոմից զինուորները մտնում են):

Էզմինտ (մի փոքր լոելուց յետոյ): Թագաւորին: Օրանացի, Օրանացի: (մի փոքր լոելուց յետոյ տալիս է սուրբ): Դէ առ, նա շատ աւելի յաճախ թագաւորի դատն էր պաշտպանած, քան այս կուրծքը հովանաւորած:

(Միջին դռնով ներս է գնում. սենեակի զինուորները հետեւում են նորան, նոյնպէս Ֆերդինանդը. Ալքան կանգնած է մնում. վարադոյրը իշնում է):

(Վերջը քաջորդ համարում):

## ԵՐԻՄԻ ՍԵՐԸ

(Ժողովրդական մոտիւ)

ԱԼՔԻՔԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Ա'լս սե աչիկ,  
Զան հայ աղջիկ,  
Սե աչերիդ ես զուրբան.  
Մտիկ արա,  
Որ իմ եարա  
Ոլրտիս անես մի դարման:

Եշիիդ առած՝  
Բլբուլ դառած,  
Գիշեր ցերեկ քո սիրուն  
Գըժւածի պէս,  
Երգում եմ ես,  
Աչքիս կըտրած քաղցր քուն...

Ճամբէս քարոտ,  
Սիրոլս եարոտ,  
Էս աշխարհում վայնաչար  
Քաշ եմ գալիս,  
Օրըս լալիս,  
Կարիբ, եթիմ ու անճար...

## Մ Ա Խ Բ Ճ

Ո՛չ հեր ունիմ,  
Ո՛չ մեր ունիմ,  
Ո՛չ էլ մի տէր, տիրական.  
Սըրտիս սէրը,  
Տըրտիս տէրը  
Դու ես, այ իմ սիրական:

Ա՞ն սեաչիկ,  
Զան հայ աղջիկ,  
Աւ աչքերիդ ես զուրբան.  
Տաթիկ արա,  
Որ իմ եարա  
Սըրտիս անես մի գարման...

1894թ. Մոսկվա:

## ԱՍՏՈՒԺՈՅ ՀԱՄԱՐ

(Տուրիստի յիշողութիւններ)

Վ. ՓԱՓԱԶԵԱԽԻ

Դուրս էի եկել օդ շնչելու. ձիով էի: Քիչ արշաւելուց յետոց, Նիմրանի լայն հառապւոյ միջից, աջ կողմումն երևեց մի ջուր և նրա կողքին էլ մի սրճարան:

Չիհւց ցած իջայ, կապեցի նրան մի ծառից և ներս մտաց: Թէ խմելու նպատակով:

Ներսու Մ, հմգից շինւած և փաթաթներով ծածկւած օթոց-ների վրայ, նստոտել էին 5—6 պարսիկներ, փաթաթւած իրենց արաւ-ների մէջ: Չնայելով որ արև էր, բայց ցուրտ էր զեռ. յուն-ւար ամսւաց մէջ էինք:

Թէ ուզեցի և նստեցի: Պարսիկներից մէկը, որպէս յատուկ է պարսկական լեզվին, պահմում էր լիքը բերնով թէ որպիսի շքե-ղութեամբ Թէհրան մուտք էր գործել թագաժառանգը: Միւսները զմայլութեամբ լսում էին:

Երկու հոգի, կկզած պատի տակ, կարծես երազում էին. Նրանց մեւելային դէմքը և մոլորւած աչքերը ցոյց էին տալիս որ նոր էին սթափել օպիումի ազդած թուլութիւնից:

Թէ փոքրիկ գաւաթը կողքիս դրւեց. պատրաստում էի խմել, երբ երկու նոր անձեր սրճարան մտան:

Վերջին տաս տարւայ ընթացքում, այս կողմերի պարսիկ ժո-ղովուրդը այնքան խառնւել է թուրանական ցեղի հետ, որ դոյաց-ըել է մի նոր անհամակրելի գծագրութեամբ զզւելի դէմքեր. դրա-համար էլ Թէհրանում հազւադիւտ է դարձել լաւ դէմքերով պար-սիկների հանդիպելը:

Ներս մանող անձերը, սակայն, ունէին այն տխուր մելամաղձոս և համակրելի գծադրութիւնները, որոնք յատուկ են պարսիկներին, արխական ցեղերին:

Նրանցից մէկը գրեթէ պատանի էր, իսկ միւսը երիտասարդ: Սա փաթաթւել էր մի աբայի մէջ, իսկ միւսը հազին ունէր միայն մի հնամաշ կապոյտ արխալուզ: Յրտից սատիկ դողում էր. երկուսի ոտքերն էլ բորիկ էին, հազցրած հին հողաթափների մէջ:

— Դու նստիր քիչ, Խոսրով, ասաց հասակաւորը պատանուն, երբ յառաջանում էին դէպի մեզ:

Պատանին մերժեց և կանդ առաւ աւազանի կողքին: Դժգոյն էր, աչքերի մէջ այնքան ակներև կերպով թալիծ կար գծւած, որ մարդ ակամայ տխրութեամբ համակում էր նրան նայելիս պատանի հասակից սկսած վիշտն ու դառնութիւնները ընկնում էին նրան:

Անունից ենթադրեցի որ կրակատաշտ պարսիկ պիտի լինէին նրանք:

Հասակաւորը ուղղակի մօտ գնաց սրճագործին և ընդհանուր շրութեան մէջ—որովհետեւ պատմիչը լոել էր և եկողներին էր գննում—ասաց.

— Ինձ քիչ փող է հարկաւոր, մէշէդի. այս վրայիս վերարկուն ծախում եմ, չես առնիլ:

Սրճագործը, որ երևի շատ այդպէսների հանդիպած կը լինէր, ուղղակի հարց դրեց.

— Քանի, ասաց նա զննելով աբան:

— Չորս թուման արժէ, խօսեց ծախողը—բայց երկու թումանով կը տամի:

— Ոհո... ծիծաղեց մէշէդին—այս կտրուած վերարկուին երկու թումանն... դարձիր մէկ տեսնեմ:

Վերարկուի տէրը իր վրայ դարձաւ և մէջքը ցոյց տւեց:

— Կտրուած չկայ, դիտեց նա—նոր ժամանակ 6—7 թումանով հազիւ տան:

— Լաւ, լաւ, մէջը մէկ ցոյց տուր:

Այն ժամանակ պարսիկը բաց արաւ միմեանց վրայ բերած վերարկուի փեշերը և ցած ձգեց աբան: Ամենից առաջ ես տեսալ:

Վերարկուն ծախելուց յետոյ թշւառը մնալու էր մի բարակ կտաւէ շաղիկով։

Մի շարժում յառաջացաւ նստող պարսիկների մէջ։

—Մարդ Աստուծոյ, գոչեց պատմիչը ծախողին—ի՞նչպէս ևս ծախում միակ հագուսող, չէ որ ցրտից կը սառես։

—Ի՞նչ անեմ, ասաց տիրութեամբ՝ ծախողը—փողի պէտք ունիմ... շատ պէտք։

Սրճագործը, որի ձեռքումն էր արան, ասաց.

—15 զրան կը տամ։ աւելի չարժէ։

Օտարականը գունաթափւեց, իսկ աւագանի կողքին կանգնած պատանին մեռելի դոյն ստացաւ. աչքերը թրջւեցին։

—Ահա փողն էլ, շարունակեց սրճագործը։

Յետոյ հանեց գրպանից և 15 հատ հին զրաններ համրեց ծախողի բաց ափի մէջ։

—Քիչ է... ասաց միայն վերջինս։

Բայց մեքենայօրէն առաւ։

—Քիչ չէ, դիտեց սրճագործը՝ այդքանն էլ դեռ չարժէ։

Այդ միջոցին պարսիկներից մէկը զայրացած՝ ցած թռաւ օթոցից, մօտեցաւ, խլեց սրճագործի ձեռքից արան և դոչեց։

—Ալլահ աքակը, այդ ի՞նչ անխղճութիւն է արածդ. մարդ, 4 թռւմաննոց հագուստին 15 զրմն ես տալիս... տուր այստեղ, ես երեք թռւման կը տամ։

Սրճագործի վայրենի աչքերը արիւնով լցւեցին, նա մի քայլ արեց զէպի յանդուգն միջամտողը և ասաց.

—Քեզ ինչ. ինչնւ ես խառնուում մեր գործի մէջ. արայի տէրը սա էր. իր ասպրանքի գինը ասաց, ես էլ իմ տալիքս տւի. յօժարեց, և այժմ՝ ասպրանքը իմ ձեռքումն է. առնողն էիր՝ թրղուտ ձայն հանէիր։

Առաջին քայլը որովհետեւ եղել էր, իսկոյն բոլոր միւս պարսիկները մօտեցան և միջամտողի կողմը բռնեցին։ Վերարկուն բըռնութեամբ կորզեցին սրճագործի ձեռքից։

—Անօրէն, գոշում էր մէկը—խիզճդ նւր է, որ օգտուում ես մարդու թշւառ գրութիւնից,

Սրճագործը գուսում էր, հայնոյում էր։

Նրան լռեցրին, յետոյ պատմիչը, արան ձեռքին, մօտ գնաց օտարականին, պարզեց նրան ու ասաց.

—Ահա վերարկուդ, վրադ ձգիր, ցուրտ է:

Օտարականը կարմրեց:

—Ի՞նչու էք խառնւում իմ գործին, ասաց նա—ինձ փող է հարկաւոր, տեհք իրեն արան:

—Քեզ փնդ է հարկաւոր. շատ լաւ, սպասիր ուրեմն, ասաց մի պարսիկ—մենք էլ մարդ ենք, մեր խիզճը չի տանիլ որ այսուղից այդ դրութեամբ դու րս գնաս:

Ասաց, արան զօրով ձգեց ծախողի ուսին, յետոյ հանեց գըլ խարկն ու սկսեց փող հաւաքել:

—Աստուծոյ համար... ասում էր նա:

Պարսիկը ջնջւեց, մի շարժում գործեց պրգելելու, բայց նրան եւ հրեցին նա գնաց ընկաւ մի անկիւն:

Իսկ Խոսրովը ձեռքերով դեմքը ծածկեց:

Փող հաւաքողը հերթով մօտեցաւ ամենքին:

—Աստուծոյ համար...

Եւ բոլորն էլ տալիս էին. ինչ որ ունեի տւի—շատ բան չունէի: Մինչև իսկ սրճադործը բարկութեամբ մի հատ երկու զռնոց շպրտեց պլիսարկի մեջ:

Երբ ժողովարարութիւնը վերջացրեց պարսիկը, համեց փողը:

—Երեք թուժան, 4 զռան, ասաց նա... Աստւած բարաքնաթ տայ...

Յետոյ ծանր քայլերով մօտ գնաց կրակապաշտին ու գլխարկինը շուռ տւաւ նրա առջեւ:

—Ով որ էլ լինիս, ասաց—ինչի համար էլ որ պէսք ունենաս, բաւական է որ թշւառ ես... մենք մեր պարոքը կատրում ենք, ահա...

Ոքքան վսեմ էր այդ միջոցին այդ խօսքերը ասող պարսիկի դեմքը. կարծես նւիրական խօսքեր էր արտասանում Աստուծոյ սեղանի առաջ կանգնած:

Կրակապաշտը ապուշի հայեացքով նայեց խօսողին, նոյնից փողին և պահ մի անշարժ մնաց:

Յետոյ յանկարծ շարժեց, վեր կացաւ, համբեց, փողից 10  
դան վերցրեց և մօտ գնաց Խոսրովին.

—Խոսրով—կոպաւ նա նրա թեմին—ահա փող:

Պատանին դէմքից ձեռքերը ետ քաշեց. աչքերը կարմրել էին.  
լալիս էր:

—Առ, շարունակեց պարսիկը... մուրացինք, բայց եղբայրդ  
կազմատւի. շտապիր և գնա՞...

Պատանին տեղից չշարժւեց. ուշադրութեամբ իւր բարեկամի  
աչքերի մէջն էր նայում:

—Երբէք չենք մուրացել... ասաց պարսիկը—բայց Աստւած  
մեզ վերից նայում է. գնա՞...

Խոսրովը քիչ էլ սպասեց, յետոյ առաւ փողը ու դուրս գնաց:  
Նէմիքի վրայ նա դարձաւ և մէկ էլ նայեց դէպի մեզ: Կարծես  
շնորհակալ էր լինում. լուռ մի շնորհակալութիւն որ ամէն բան  
արժէր:

Իսկ միւս կրակասպաշտը, երբ պատանին հեռացաւ, աղան մի  
կանգնած մնաց իր տեղում. ապա, առանց մի խօսք արտասանելու,  
դլուխը կրծքին կախեց և դէպի դուռը քայլեց:

—Փողերիցդ մնաց էլի, մարդ, գոչեց նրա ետեից սրճագործը:

Մարդը շէմքի վրայ կանգնեց, դարձաւ և մի հպարտ բայց  
տխուր ակնարկ ձգեց մեզ վրայ:

Յետոյ փաթաթւեց վերարկուի մէջ ու հեռացաւ:

Երբ դուրս ելայ, գեռ երկար տեսայ նրան ծառերի տակից  
հեռանալիս: Մի անգամ իսկ ետ չնայեց. փախչում էր կարծես,  
քայլերը արագ, իսկ գլուխը միշտ դէպի կուրծքը խոնարհած...

## ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Հազար թշւառի արիւնը ծըծել  
Մեղք չէ—կը լսես դու հայ աղայից.  
Բայց փորձիր մի ճանճ ոտքի տակ գըցել,  
Աղան երկիւղով կ'անցնի վերայից...

Նա ժամ կը մտնի, Աստծու գառան պէս,  
Երեսին անվերջ, անվերջ խաչ կ'անի.  
Բայց թէ կեանքի մէջ դու ճանկը ընկնես,  
Մըսագործի պէս, կաշիդ կը հանի...

Գիտենք, որ մարդըս պէտք է իւր անձից.  
Միշտ բարձր դասէ պատիւն անարատ.  
Եւ ով զրկւած է այդ անգին գանձից,  
Նա է կեանքի մէջ ամենից աղքատ...  
Բայց եթէ հարցնէք դուք հայ Կրեսոսին,  
Կ'ասէ. «Պատիւն է—արծաթ-աբասին,  
Եւ կեանքում անփող, գատարկ գըրպանը,  
«Դա է ամենից անպատիւ բանը...»

Ասում են, թուքը ոյժ է զօրաւոր,  
Մարդուն կարող է իւր պատից գըցել.  
Բայց մեր մէջ... տեսէք... նա է պատւառուց.  
Ով միշտ երեսը թուքովն է լւացել...

Երբ հայոց թերթում  
Ներբող են կարդում  
Հարուստ աղալին և նորա փողին,  
Խոկոյն իմ մըտքում  
Մի հարց է ծագում.  
Թերթը հրքան է ստանում տողին...»

---

Իւղ են քըսում կառքի անւին,  
Որ ընթացքը թեթևանայ.  
Կառքը իւղած անիւներով  
Մանըր ձամբան հեշտ կ'ընթանայ:

Կեանքում կաշառքն, ով բարեկամ,  
Շատ նըման է անւի իւղին.  
Կաշառք տալով՝ մենք շատ անզամ  
Հեշտ անցնում ենք գըժւար ուղին...

Մոսկա, 1896թ.

# ԿՈՂԲԱՅ ԱՂԱՐԱՆՔՈՒՄ

(Գիտական ուսուցչի յիշատակարանից)

ՄԿՐՏԻՉ ԶԱՔԱՐԵՍՆՅԻ

(Շարուճակութիւն) <sup>1)</sup>

VI

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՕՏ

Ապօր կողմ զիւղը սովորականից ուրիշ կերպարանք ունէր. թէն նոյն ժողովուրդը, նոյն կողբն էր իւր ամենօրեակ տեսարաններով, բայց ամեն մարդ տխուր, գլուխը խոնարհած, աչքերը գետին գցած, կարծես թէ մի կորուստ ունէր, նրա փետեից ման էր գալիս գտնելու անպատճառ խոստանալով որ նրան միւս անգամ լաւ կը պահպանի. Աղահանքի սովորական, աշխատութիւնները չկային, մշակները խումբ-խումբ խանութիւնների առաջ ժողոված մի ինչ որ ինձ անհասկանալի բանի վրայ էին մոռածում, հարան ու աղջիկ աղջիւրի <sup>2)</sup> վրայ նստած, սափորները ջրով լեցնելուց չետու անմիջապէս չէին վերադառնում, ինչպէս սովորական օրերում, այլ միմեանց մօտ նստած, իրալու երեսի նայում պաղ-պաղ և ցած ձախով խօսում էին:

1) Տես «Մուրճ» 1896 թ. № 1, 2:

2) Կողբում կան երեք հատ աղբիւրներ, որոնցից երկուսը բացի ուրիշ բաների գործածութիւնից, զործ են ածում շատ անգամ թէի համար իսկ երրորդ ամենաառատ աղբիւրի ջուրը միաւն խմորի համար, որովհետեւ զգալի չափով աղի է. Ժողովուրդը այդ բոլորից գերազասում է խմելու համար երկու վորքը առուանման գիտակների ջրերը, որոնք հոսում են կողըի հարաւային կողմի Սենակ կոչւած լեռներից:

Տիրութիւնը ընդհանուր էր, տխուր էր և բնութիւնը. արեւ անչափ սպածառ չէր փազլում, երկնքի վերաէ տեղ-տեղ թանձրացած սպիտակ ամպերը երբեմ ծածկում էին նրա փակուն երեսը և երբեմ աղատում. Այդ զգալի երեսութիւնից ես ես զերծ չէի. այդ անորոշ տըլսութիւնը ինձնից հեռացնելու համար որոշեցի զուրս գնալ, մինչև Զանազի վերադարձը, որը այդ օրը շատ վաղ որսի էր գնացել. Ես զուրս եկած գիւղից, իմ աչքի առաջն էին ամբողջ Կողբը, աղահանքը, շրջակաէ մեծ ու փոքր լեռները, հովտներն ու ձորերը:

Բարդող լեռների խճամակալ Թաքալթու սրածալը լեռը, հսկաչածն արթուն պահապանի նման կանգնած, նացում էր ամեն կողմ անարգել կերպվ, նրա սուր գագաթից, հեռու մշուչի միջից երեսում են՝ Արարատեան ընդարձակ զաշտը, Էջմիածնի կաթուղիկէն, Արմաւրի (Թափա դիպի) կարմաւուն բլրակը, Երևանդակերտը (Ղարազալա) վիթխարի Մըէնը, Երևանդաշատը (Ղզըլթափա), Անուկ և Բագարանի լեռները և վերջապէս Արաքս և Ախուրեան (Արփաչաց) գետերը իրենց հարիւրաւոր բաժանւած ծիրերով ու առուներով. Նրա ընդարձակի և հիւրասէր կրծքի վերաէ սևին ևս տալիս չշնչիկի թեների նման քրդական վրանները, իսկ նրա ստորոտը ծածկած էր զանազան տեսակի բուսականութեամբ, ցորենի, գարու, կընջութի, կտաւահասոի, կորեկի, առողտի, բամբակի, սեխու ձմերուկի, կանեփի, հաճարի ու ուրիշ տեսակ կանաչեղէնների արտերով. Ես անչափ ուրախանում էի նրանց նաևերով. բաց և չափազանց տիրում էի երբ պատահում էր զանկարծ տեսնել, թէ ինչպէս կողբացի տասը տարեկան առողդ տղան, փակու ձեռքին բոնած, տրեխները հագած, իւր օրական պաշարը հացը մէջքը կապած, կանգնած էր աւանակների<sup>1)</sup> և եղների առաջ, առաջնորդում էր նրանց աւելի խոտաէտ տեղերում արածելու. Գիւղակն կեանքի կենդանութիւնը իւր փառաչեղութիւններով աւելի դաշտավն աշխատութեան միջոցներին են նկատելի լինում, իւրաքանչիւր տասը քաղաքիսից լետու անմիջապէս նոր-նոր պատկերներ և երեսութիւններ են լառաջանում:

Ես զնում էի և իմ առաջ բարձրանում էր դէպի երկինք թանձր մուխը, որի շուրջը կանգնած էին կանակը ու աղջկերք. Ես կարծում էի թէ անշուշտ վառում են լւացքի համար ջուր տաքացնելու, բաց չարաչար սիրալւած էի, իմ կարծիքների և ենթադրութիւնների մէջ. նոքա սապոն նիկելու համար դայլաքար էին պատրաստում. ես զարմացակ, որովհետեւ

<sup>1)</sup> Կողբացիք գործ են ածում աւանակներ և եղներ իրենց ապրուստը հավթակթելու համար. գարի, ցորեն և ամեն ինչ նրանցով են զաշտից տուն բերում. Աւանակներով աղ են տանում շրջակաէ գիւղերը ծախելու և հացի կամ ցորենի հետ փոխանակելու. Կողբում սալիկը չկան, գիւղի անշարժար դրութեան և մակերեսութիւն անհաւասարութեան պատճառով:

ալդ ձեռվ պատրաստելու մասին ոչինչ գաղափար չունէի: Նոքա փորել էին գետինը մի մարդահասակ խորութեամբ և ծածկել էին հորի բերանը քարերով, անպէս որ քարերի մէջ մնում են ծակեր ահազին քանակութեամբ: Փոսի բերանը ծածկող քարերի վրա ժողովել էին շորան կոչած բոլոր մի տեսակը, որը անթիւ մանր բշտիկներ ունի, իսկ բշտիկները լցւած են առատ ջրանման հեղուկով: Կանաչ ու կարմրաւուն գոյնով շորանը վառելով, նրա միջի հեղուկը քարերի ծակոս տեղերից թափում էր փոսի մէջ. և այնքան շարուրակում նն ազդպէս, մինչև որ այրուած շորանի մէջ ոչինչ խոնաւութիւն չի մնում: Վելջացնելուց չետոյ արտաքին աշխատութիւնը, սկսում են բանալ փոսի բերանը, և նրա մէջ ժողովւած հեղուկը զգուշութեամբ ծածկում են մաքուր բաց փոքր ինչ խոնա հողով. երկու օրից չետոյ հալւած հեղուկը սառելով հողի մէջ, դուանում է պատրաստի գալլաքար: Ես համոզւեցի որ հայ գեղջկուհին գիտէ և ծանօթ է իւր բնական հանճարով տեսակ-տեսակ արհեստների հետ, նա լաւ տեղեակ է հարիւրաւոր տեղական վալրենի ծաղիկների և բոլսերին որոնք ծառալում են նրա կեանքի մէջ ինչպէս բժշկական միջոցներ, զանազան հիւանդութիւնների և վէրքերի համար և նա՝ (գեղջկուհին) գիտէ նրանց բաղադրութիւններից կազմել, պատրաստել հետաքրքիր և աղնիւ դուներ, կապերուներ հիւաելու և ուրիշ կահկարասինների համար ալդ գունաւոր թելերից գործադրել, ծածկոցներ և եամանիներ (կապերտի մի տեսակը, որը աւելի նուրբ է) հիւաել, որպէս զի իւր տան ծալքը<sup>1)</sup> պակաս չմնայ Հայ գիւղացին չափաւոր է նիւթականապէս, ալդ բորբը նա տանում է անսահման համբերութեամբ. իսկ եթէ նրա աչքի առաջ, օրական թաժանացը ամբարած չլինի, նրա տան ծալքը պակաս լինի,—ալդ հայ գիւղացուն չափացնց զգալի կը լինի. հայ գիւղացու տան կանոնաւոր ծալքը՝ նրա հիւրասիրութեան և քաղցր բնաւորութեան ամենազլիսաւոր չափանիշն է: Վերջապէս ես համոզւեցի որ հայ գեղջկուհին, ինչպէս սապոնի (օճառ) պատրաստութեան ձևը, գիտէ և շատ արհեստներ, միան սահմանափակ և մասամբ անմշակ ձևով:

0դը բաւական թարմ էր. ես կամաց-կամաց բարձրանում էի դէպի վեր, մտածում էի հայ գեղջկուհու տնտեսական կեանքի մասին. հետզինչ լառաջանում էի, բրուրներն ու լեռները ինձ արձագանք տւին, ևս լսեցի մի ձան: Նա հնչում էր մթնոլորտի միջից և կոռունկի տիսուր ձանի էր նմանում, բաց նրա թրթրուն ելսէջների փոփոխութիւնը իւր երկար տե-

<sup>1)</sup> Տան աւելորդ տեղաշորերը, որ պատրաստում են միմիակն հիւրերի համար:

<sup>2)</sup> Սուրմալուաց գաւառում հայ կինն է պատրաստում իւր տան համար պատւական օճառ, առանց փողոցից գնելու:

տղականութեամբ իմ կարծիքը փոխեցին. նա մնտալական էր և տիուր, նրա բարձր ու ցած խաղերի մէջ ծածկւա՝ էին վիշտ, սէր, և ուրախութիւն արտագալսող նուրբ զգացմունքներ. նս գնում էի ճանի ուղղութեամբ, գնում էի և շուտ-շուտ կանդ առնում, առելի պարզ որոշելու համար. բաց ես սխալւած չէի, իմ լսողութիւնը ինձ չէր խարել, նա հեռու էր, և որչափ նա հեռու էր, այնչափ արագ էր կատարում այդ հեռաւորութիւնն անցնելը. Վերջապէս ես հասալ այդ ձաւնին, նա մի անհատի ձան չէր. տասից տասներկու հոգի միասին մէկ հնչիւնով երգում էին նոքա կողբացի քաղհանաւոր հարսն ու աղջիկներն էին. Նս տակաւին չէի հասել նրանց, երբ ինձ տեսնելով բոլորն էլ խոնարհած զլուխները բարձրացրին, կուացած տեղներից վերկացան, և կարծես մի խորհրդաւոր միտք արագապէս գործադրելու վճռեցին. Իմ ճանապարհը, որտեղից պէտք է անցնէի, քաղհանաւորներից քսան քայլ հեռու էր Ազդ աշխատաւոր խմբից չանկարծ բաժանւեցին երկու հասուն օրիորդներ. անմիջապէս ինձ հասկանալի եղաւ նրանց միտքը և փոքր ինչ առաջեղած խօսակցութեան նիւթը. Ինձ մօտեցան օրիորդները, իւրաքանչիւրը ձեռքին բանած էր մէկ-մէկ կարմիր, զեղին ու սպիտակ ծաղիկներով բամբակի ծառ իւր արմատով. երկուսն մեկնսեցին դէպի ինձ «քե փեշքաշ»<sup>1)</sup> խօսքերը արտասանելով. Օրիորդները կանգնեցին, աչքները գետին խոնարհցին. շառագունեցին նրանց դէմքերը, որոնք դեղջկունու ամօթխածութեան առաջին պայմաններն են. Որչափ նիւթականից զուրկ է հայ ուսուցիչը, այնչափ աւելի առատաձեռն է նա դէպի բարեգործական նպատակը, դէպի պատւապահանջ խնդիրները և դէպի խղճի հանգստութիւն պարգևող գործը. բարեխախտաբար ես փող ունէի, և այդ նրա համար, որպէստե գեռ նոր էի ստացել, զեռ ուսումնական տարին շատ հեռու չէր դնացել. Համեստաղէմ օրիորդները սպասում էին իմ դրական կամ բացասական պատասխանին. Նրանք տրեխներ էին հագած, նրանց ձեռքերը ճաքնքուած էին արեի տաքութիւնից և զանազան սուր ու ծակող դաշտավին փշերից. Նս նւիրեցի իւրաքանչիւրին քառասնական կոպէկ, որոնք մեղմ ժապիտով ու զլուխ տալով լաւտնեցին շնորհակալութիւն և հեռացան իրենց ընկերուհիների մօտ, կրկին շարունակելով քաղհանի հնտեւեալ երգերը, որոնք պարունակում են նրանց սրտի և հոգւոյ զանազան զգացմունքները.

<sup>1)</sup> Ազդ սովորութիւնը Սուրմալուաց զաւառի բոլոր գիւղերում կաչ, բաց այդ ձեռ գործադրում են միան աչն ժամանակ, երբ հացարուսների և կամ թէ բամբակի նոր հասած կամ հունձի ժամանակն է, իսկ միւս հանգամանքներում չեն գործածում. իսկ պարաիկ պարաբնակութեան մէջ չիալ այդ սովորութիւնը.

1. Սասըսի քամին էկաւ,  
Երիկնահովըն ընկաւ  
Շուտով մարկը պրծընենք,  
Աւրս հանդից տուն եկաւ.  
2. Աղջի բամբակի քաղ հանենք,  
Սև օրւան գարման ճարենք.  
Թող մեր բանը լաւ ընի—  
Մենք մեր ասածը կ'անենք:  
3. Հանդին քաղնան եմ էթում,  
Աւրից կարօտ եմ մնում.  
Մեռակ վերև նայելէն—  
Էրկէն օրը չի մըթնում:  
4. Կարմիր ու սիստակ ծաղիկ,  
Բամբակի սիրուն ծաղիկ,  
Մեռակ քաղնան անելէն—  
Իմ զարդին դարման չարիք:

Ժամանակը անցել էր, ևս ուրիշ ճանապարհով տուն գերադաշտ դեռ ևս գիւղը չմտած, իմ աչքի առաջ ճերկարացաւ. Կողը գերեզմանատունը, որի մէջ աւելի նկատելի էր գեսնից բաւական բարձրութեամբ մի փոքրիկ շնչք. դա մի նեղ ցեխից և քարից շինւած մատուռ էր. Այ անտէր և անպաշտպան մատուռը՝ իւր մէջ պահում էր հինգերորդ դարու մատենագիր նրբամիտ Եղնիկ կողբացի վարդապետի գերեզմանը, նրա մէջ և մատենագրի ոսկորները. Այդ գերեզմանը ընկած էր արհամարհւած դրսթեան մէջ, նրան ոչ ոք չէր ճանաչում, նրան միայն գոյի բոցքով բռնւածներն էին զիմում բժշկւելու. Մատուռի մէջ մի կողմը զերեզմանաքարն էր, որի չորս կողմը շարւած էին հողից շինւած բաղմաթիւ ճրագներ:

Մատուռի մի կողմում կար մի կոյտ բաղմաթիւ մանր խեցիների. իւրաքանչիւր ուխտաւոր ալդ խեցիներովն է փորձում իւր ճակատազիրը և բաղդը, Վերցնում է մի հատ խեցու կտոր և խիում է գերեզմանաքարին ասելով. «Յթէ իմ նպատակը, կամ իմ որոշած միտքը կը կատարէի կը կպչես զերեզմանաքարից. իսկ եթէ չի կատարէի, վայր կ'ընկնեա»: Պատհմամբ եթէ խեցին քարի ձիթոտ տեղին է խփում, կպչում է նա—մարդը հաստատ համոզւում է որ իւր նպատակին անշուշտ կը հասնի. Մինոնցը և ևս փորձեցի, բարեբաղդաբար լաջողւեց ինձ, անմիջապէս ինձ մօտ կանգնած կողբացի պառաւը սկսեց բարձր-բարձր և խռապու ձախով.

— Ենա, լաւ էլաւ, որդի ջան, մուրազիդ (նպատակ) կը հասնեա Խթստ<sup>1)</sup> ևս էկել, հօ չես էրացնում. թէ էրացնում ևս, լաւ ես արե եկել ևս իմ կշտին. արի, բալա ջան, էրոցքըդ կը կըտրեմ. մեռնիմ ընդու սուրբ զօրութեանին, ընդու տւածը տւած ա, կըտրածըն էլ կտրած ա, ևս ընդու անըմովն, ընդու ձեռովն եմ կըտրում, բալէս:

Խեզձ պառաւը անպէս էր կարծում թէ ևս հեռաւոր անդից եկած ուխտաւոր եմ, դողէրոցքով բռնւած:

— Ոչ, նանի ջան, էրոցք չունեմ, պատասխանեցի հանդարտութեամ:

<sup>1)</sup> Խթ, խթստ, բառերը նշանակում են բնչու, երկուքն ևս գործ են ածւում կողբացւոց լիզւում:

—Մի ամաչիր, բալէս, շարունակեց պառաւը, է, խիստ ես ամաչում, թէ էնա մի ցաւ, եա մի զիլակ (խորհուրդ) ունիս սրտիդ վիչին, մսա, ես քե հմար աղօթք կ'անեմ, մնոնիմ ընդու սուրբ գերեզմնին. է, խիստ որ, դու չես խմանըմ, որ էսա քսանչնդ տարի ա, ընդու գերեզմնի աղաքին ես եմ դուզուզ (ծառալութիւն) անում, ընդու դուլը ես եմ, ընդու ճրագները քըմմա ես եմ վառում, դուս ու ներսը ես եմ աւում, թամիզ անում:

Այս խօսքերից անմիջապէս լիտոյ, պառաւը վեր առաւ աւելը և սկսեց ջրանջելով, բարձր-բարձր մրթմրթալով աւել:

Մատրան խարխուլ և կիսաքանդ չէնքը, ինձանում ծագեցրեց զա. նազան մտքեր. ես լիշեցի նեռն Բիւզանդիան, լմա. տուն Աթէնքը և նրանցում տարագրւած հայ եկեղեցւոյ, հայ լեզվի և գրականութեան բեղմնաւոր մշակները. Ես համոզւեցի, որ հայ ժողովրդի անտարբերութիւնը նոյն օրինակ է եղել ամեն տեղ, ամեն ժամանակ թէ անցեալում և թէ ներկայում դէպի իւր նախնի բարերարները. հայ ժողովուրդը՝ ապերախտ է եղել դէպի ազգութեան հոգի, լուսաւորութիւն և մոտաւոր ոչ պարզեղ անհասները և նոցա շիրիմները. Այդ մասին անմիջապէս լիշեցի Յիսուսի հետմեալ խօսքը.

«Ժողովուրդս այս շրթամբք պատւէ զիսոյ»:

Արգէն կէս օր էր, ես համբուրեցի սուրբ հօր գերեզմանը և վերադաց տուն. ինձ մօտեցաւ Զանազը, որը որսից դեռ նոր էր վերադաել:

—Եղ վարդից (որտեղից) ես գալի, վարժապետ. հէչ էլա չես ասում, մեր Զանազն ինչ ելաւ, ուր գնաց, էդ խի ըտէնց ուշացաւ, ամա չէ, էլի լաւ էր, քըմմա էդ ձորերն իրար տի, մի քանի կաքաւ էլա բերի, հէչ չընելուց լաւ ա:

—Ես եկել էի քեզ զիմաւորելու, Զանազ. ես նոյնպէս նոր վերադաց դաշտից:

Զանազը իւր բերած կաքաւները տևեց քիւրդերին. և մեղ համար պատրաստեցին պատւական ճաշ. Մենք ճաշում էինք. դեռ ես չէր վերչացել ճաշը, լանկարծ ամի Սաքօն ներս մտաւ:

—Վահա, վառւիս դու, Սաքօ, վառւիս դու, բացականչեց Զանազը. այս ողորմած հէր, էնա մի քիչ թէզ կը գալիր, կաքաւի միսը քեզ էլ արժանի կըլլեր, բաս որ ըտէնցա, ամի Սաքօ, քու զոքանչը քեզ չի սիրում: Նստիր, դէ՛ նստիր, հայ տենանք թաղա խաբար ինչ կաչ գեղի վիչին,

—Այսօր մեր զիւղացիք շատ տիսուր են, պատասխանեց Սաքօն նստելով:

—Ե, խիստ (ինչու) որ ..

—Մենք, վարժապետ ջան, ունինք մի կապալառու աղահանքի վիրաց, որի ձեռքին կողբացի մշակ դասակարգը խաղալիք է դարձել, իրաքանչիւր ամիս մի անգամ գործադուլ է անում բանտրներին, պակասեցնելով նրանց օրավարձը. խեղճ մշակները ճարահատուած երկու երեք օր սպասելուց լեռով, վերստին գնում են աշխատելու—կապալառուի առաջարկած վարձի համաձայն, նոյնն արել է և այսօր, մեր հասարակութիւնը ամեն ինչ ակամավից տանում է:

—Ի՞նչ տեղացի է աղահանքի կապալառուն, ամի Սաքօ, հարցրեցի ես:

—Պարսկաստանցի է, վարժապետ ջան, Մարկոս աղա են ասում, ինքը իմ հասակին մարդ է, բաց տակաւին ամուրի է: Այս չորրորդ անգամն է, որ Կողբի աղահանքը կապալով վեր է առնում: Նրա կեանքը՝ թէ անցեալում և թէ ներկազումն իւրաքանչիւր կողբացու լատոնի է. Մարկոս աղան վերին աստիճանի շահամոլ, նախանձուտ և իտրամանի մարդ է, նրա աչքերը մանր են և խոր ընկած, գլուխը փոքր և երկու կողմից սեղմած դէպի վեր, ակտերը ցամաքած: Տասնեակ տարիներ առաջ մեր երիտասարդութիւնը և ժողովուրդը փչացան նրա ձեռքի տակ, այժմ դեռ անքան չէ, որովհետև ներկազումն նրա տարիքը չեն օգնում նրա նենդ և չար մտքերին գործադրելու այն, ինչ որ մտածում է անել: Հարստութիւնը՝ նրա սացրասուր զէնքն էր, նրա մոլի կրքերի և կամքի առաջնորդն էր, որով ամեն նպատակի հասնում էր, և ամեն ինչ ձեռք էր բերում: Նրա կեանքի բոլոր գաղտնիքները մեր հասարակութեան բոլոր շրջաններում ընդհանրացած բնաւորութիւն էին ստացել, բայց այս մասին մէկը միւսին լաւտնելու, լուս աշխարհ հանելու համար նրա գործողութիւնները՝ ամեն մի անհատ առանձնապէս իւր երկիւղն ու նախազգուշութիւնն անէր: Նա իւր կեղծ և շողոքորթ լեզուկ գրաւել էր մեր հասարակութեան առաջաւոր անդամներին, նա շրջապատւած էր մի խումբ լրտեսներով, որոնց միջոցով ծանօթացել էր իւրաքանչիւր անհատի ներքին և արտաքին հանգամանքների հետ, բոլորի վերաէ տիրաբար իշխելու հռչակն էր սատացել, և այդ բոլորը նրա համար, որպէս զի իւր նպատակին հասնի:

—Եղ շատ դրուստ ես ասում, ամի Սաքօ, շարունակեց ջանադր, ընդու ովտախն ես թող ըստէ ըլլենախի, դու կը տեսնիր թէ մանցի ընդու հախիցը գալի, ես ընդուն գէղան-գեալմազի ճանպէն էնթաւուր շանց կըտի, որ էթալն ըլլէր, ու էլ հէչ չետ չդառնէր:

—Է՛, ջանազ, գլուխը շարժեց ամի Սաքօն, քեզ նման ասողներ շատերը եղան, բաց գժբաղդաբար ալսօրւակ ասողը հետեւալ օրը խօսքը փոխեց ու ընդհակառակը սկսեց հակառակ դէպում աւելի պաշտպանել և չարդել Մարկոս աղին: Աղքատ դիւղացու ձաւնը առաջնորում շատ քի:

էր լուռում, ճշմարտութիւնը ծածկում էր աղքատութեան արհամարհելի կեանքի սև վերարկի տակ, իսկ չաղթանակը կրում էր նա, ով մեղաւոր էր, Սկզբանից տասնեակ տարիներ առաջ և նույն խակ պարագ հպատակութեան միջացներին ալդ տեսակ կապալառուները իրենց զեխ կեանքով ինչ խաղեր ասես չեն խաղացել մեր ժողովրդի գլխին, եթէ Լեկթէմուրը ճնշում էր սպանում նիւթապէս, սոքա ժողովրդի բարուական զգացմոնքներն անգամ մեռցնում էին. Թէս կապալառուների ալդ կերպ վարմունքի դէմ ժողովուրդը երբեմն-երբեմն բարձրացրել է իւր դլուխը, բողքել է հակառակորդից իւր պատի և օգուտի համար, բայց ժողովրդի ամենաիրաւացի և արդար ճանաչած բողոքը մնացել է «ձայն բարբառոց լանապատի» և ընդհակառակը՝ լաւի փոխարէն աւելի վեսակար հետևանք է ունեցել. Այն որ ոճրագործ է համբարում և որի մասին իւրաքանչիւր ոք գիտէ ինչպէս ճշմարտութիւն, փոխանակ անկեղծօրէն իւր կարծիքն ասելու, լուռում է ալդ հանդամանքում և զանցառութեան է տալիս ճշմարտութիւնը, պաշտպանելով հարկաւոր դէպքում ոճրագործին. Ահա ալդ հանդամանքներն հասկանալով մեր գիտցցիները մէկը միւսի վերաց լուս զնել չեն վստահանում. Ուստի իւրաքանչիւրը նախապատիւ է համարում լուռութիւնը, և գործի կէտ նպատակին համելու համար՝ պահպանում է իւր գործութիւնը և արտաքին կեղծ ձեականութիւնը:

## VII

## Ա Ն Մ Ե Ղ Զ Ո Հ Ե Ր

Գիշեր էր. մենք սովորականի համաձայն նստած էինք կտուրը. Ամի Սաքօն, ալդ պատկառելի անձնաւորութիւնը՝ կարծես մի անհանգստութիւն էր դդում իւր կրծքում, մի սուր խալթում չարաչար տանջում էր նրա խիղճը ասելով՝ պատմիր, պատմիր մանրամասնօրէն քո կեանքի անցեալը և այնուհետեւ հոգւու և խղճի անդորրութիւնը կը վացնես. Լուսնկաչ գիշերը աւելի էր ազդում արկածներին կենցանութիւն տալու ամի Սաքօն կեռասի փակտից շինւած չիրուխը լցրեց ծխախոտով, վառեց և մի քանի անդամ ծարաւից արտածի նման ծծեց մուխը ու շարտնակեց.

Վարժապիտ ջան, ևս ասացի որ մենք ժողովւում էինք մեր ժողովարնը, և ալդ շատ ճշմարիտ էր. Մեր ժողովարանը Շամամենց կարօի դիտետունն էր. Կարօն մեր կեանքը շատ լաւ իմաստասիրել էր, նրա ամենաճաղանդ և հաւատարիմ ժողովուրդը մենք էինք, նա մեզ սիրում էր նրա համար, որպէս զի աւելի քաղցր կերպով ծծէր մեր արիւնը. Նրա անառակ և անվտել վարմունքը, անպատիւ խօսքերը, լի ամեն տեսակ զգելի հաճուանքներով մենք շաքարի տեղ էինք ընդունում. Կարօն իւր դրժունէութեան մէջ բաւական ճարպիկ, հնարապէտ և խորամանկ էր.

Նրա խոր ընկած մանրիկ և փալուն աչքերի մէջ պարող կերպով կարելի էր նկատել խղճի պսկասութիւն, զրկողութեան սէր և կեղծաւորութիւն իրենց բնական պատկերներով։ Կարօն բաւականին չարմարացրել էր իւր խանութը մեր կեանքին, Խանութում ոչ մի գրաւիշ առարկայ չկար, ոչ նաշակաւոր շէնք և ոչ զարդարանք։ Խանութի երկու կողմում ծավրէ ի ծավր դրած էին պատերի հնտ, ցցերի վրաէ ամրացրած հաստ տախտակներ, որոնց ծառաջում էին մեզ համար իւր աթոռներ և նստարաններ Խանութի մի կողմում, որը բաժանւած էր մի առանձին տախտակով, զրւած էին երկու մեծ տիկ գինի, մի հատ ամենահասարակ և փոքր հատերով համրիչ, հողից չինւած մի հատ թանաքաման փետուրէ գրչով և մի քանի թուղթ, Խանութը մտնելուն պէս էին ընկնում ածուխով դաղած չորս պատերը, ալդ ածուխէ գծերը ցուց էին տալիս իմ ընկերների իւրաքանչիւրի պարտքը։ Մենք նստում էինք տախտակների վերայ, շատերը ևս գետն ի վեր մեկնուսմ էին խառն ի խուռը, իւրաքանչիւրը սկսում էր պատմել իւր անցեալ և ներկայ կեանքից. չանցած մի քառորդ ժամ, բաժանում էինք առանձին-առանձին խմբերի, Խւրաքանչիւր իւռմբ բաղկացած էր լինում հինգ կամ տասը հոգուց, Մեզնից ամեն մէկը պէտք է գինի առնէր կարդով, մեր առաջ զնում էին երկու մեծ և ժանդուած թիթեղների մէջ գինի և երեք կամ չորս հատ էլ կաւից պատրաստած բաժակներ, Խւրաքանչիւրը առաջարկում էր իւր ցանկացած կենաց բաժակը, և խմում էինք, Մենք խմում էինք մէկ, երկու, երեք, վրայ չորրորդին արդէն բոլորիս երակները թուլանում էին, մեր մտքերը սկսում աւելի աղատ մտածել, ամբողջ երկրագունդը մի աղջի էինք երևակացու, իսկ մենք նրա տիրապետողը, Կին, երեխաց, տուն ու տեղ, ամեն ինչ մոռացած, մեր խօսակցութեան առարկան գինին էր և աղանձնքը, Ժեսարանը բաւական հետաքրքիր էր, մէկը հեռակց գոռում էր՝ Էջ Կարո, և խիստ (ինչու) չես լցնում կւարթը, չանք հըմի քո փարէն վաւա պահել, Մէկուրիշը նրան ձախակցելով ա, Կարօ, էի՞ս որ, հՀմի դու զափի (չօժար) չես, վար (որ) քո մուշտարիքը քըմմա մեզ պէս հախտուր ըզզենան, չանք հըմի մեղնից վար մէկն ա քու մի կապէկն էլա դանմշել (ուրացել)։

— Տօ դէ լակըմէք լակէք է, ինչ էք գլխներս տանում. արտասանում էր կարօն, ձգելով իւր գժոխալին դառը և արհամարհական հակացքը նստողների վեր այ Մեզնից ոչ մէկը միւսից չէր ալիսածում, մեր բոլոր մշակների խմբերից բացառութիւն կազմողը միմիան Վարոսն էր, որը ոչ մի հանդամանքում մեզ հետ չէր միանում, այլ շարունակ պախարակում էր իւր ընկերակից մշակներին, նոյն իսկ և ինձ կշտամբում էր իմ ընթացքիս համար. և հէնց ալդ էր պատճառը որ իմ ընտանեկան կեանքի մէջ տիրապետում էր երկու կուսակցութիւն, ամբողջ ընտանիքի անդամները ինձ գէմ էին մղում իրենց պատերազմը, իմ ընթացքիս պատ-

ճառուկ: Ով մեզանից գինի խմելու ժամանակը որ և է տիսրութեան նշան. էր ցոյց տալիս, նա ենթարկւում էր անմիջապէս մի կւարտ գինու տուգանքի:

Ալսապէս գինու մոլեցնող տպաւորութեան տակ արագ-արագ փոփոխուում էր տեսարանը:

—Եղքան վար խմումիք, ամի Սաքօ, փողը վարդից էր, ընդհատեց. Զանազը:

—Փող որտեղից էր. մենք ամրող շարաթ աշխատում էինք, միան մեր վարձը ստանում էինք կիւրակի օրերը. բայց կարօն բոլորիս էլ տալիս էր, ամենքս էլ նրա մօտ հաւատարմութիւն ունէինք:

Վերեկի կարգերից մէկը ձան էր տալիս իւր ընկերին, Օգո<sup>1)</sup>, մի նալը<sup>2)</sup> սարքա տեսնենք. մի օր էլել ենք, մի օր էլ պըտի մեռնենք. քէֆ անենք, բալքի մի անըմ հանենք էս դիմիւմը<sup>3)</sup>. ընէնց չի, Ոսկան ջան, հարցնելով իւր միւս ընկերին. —Հըլա մի կաց ասեմ, Ոսկան ջան, մէջ էր մտնում Եղնակը:

—Եզուց որ աղանքի էն քեալիցը ոտը սոթ տւուց, վեր ընկար ու մեռար, էն ոխտը՝ մի հետ էլ հօ չպտի զաս էս աշխարհը. դէ քանի որ սաղ ես՝ քէֆ արա, ինչ որ ուզում ա թող ըլլենալ: Իսկ նա, որը բոլորովին ստացել էր իւր բաւականութիւնը, թթւած գինին մինչև կոկորդն էր հասցրել. այնպէս որ հազիւ ոտքի վերաց կանգնած, օրօրուում էր աջ ու ձախ, աչքերը ոչինչ չէին տեսնում. ալդ հանգաման քում երբ նրան առաջարկում էին տուն գնալ, հանգստանալ. նա պատասխանում էր. «մի բան որ էգուց էլի պըտի գանք ըստէ, էլ ուր էրթանք»: Ահա այս զզւեկի գործողութիւններով շաղախւած, իւրաքանչիւր օր մեզանից շատերը պատէ պատ բռնած տուն էինք հասնում, ոմանք բոլորովին շարժմալու կարողութիւնից զրկւած գիշերը անսուե դ իւանութումն էին մնում, ոմանց ևս կինը կամ մեծ որդին գալիս ու տուն էին հասցնում շալակով: Ալսապէս զուրկ կնոջից, զուրկ ընտանեկան կեանքի քաղցրութիւնից, և զուրկ թոթովախօս մանուկների սիրալիր զգւանքից՝ կրկին հետեւալ առաւօտը նոյն տաֆանակիր աշխատանքին էինք ենթարկւում:

Այժմ մնում էր ասպարէզը կարօվին, կարօն իւր հիւրերին ճանապարհ զնելուց չետոյ, սաթաէլեան ուրախութ եամբ լցւած, տետրակն ու համրիչը ձեռքին բռնած հաշւում էր և գրում. արդար խիզճ չկար որ խալթէր, իսկ ճշմարտութիւն չնամացնող ողի՝ ոչ երբէք, աչն՝ որ պարտ էր քառասուն կոպէկ, գրում էր ջիսուն, իսկ աչն որ վտուն էր, լրացնում էր մանէթը: Խւրաքանչիւր բուպէ մահն աչքներիս առաջ ժպտում, խաղում էր մեր աղահանքում աշխատութեան միջոցին. ահա ալդ մի-

<sup>1)</sup> Յովհաննէս. <sup>2)</sup> Եղեգից պատրաստած փող. <sup>3)</sup> Աշխարհ:

ջոքներով վաստակած վերջին կոպէկն անդամ կարօի անկուշտ խանութի էր մտնում. Մեղանից ամեն մէկը մի ոճրագործ էր, մի հրէշ էր, որի հաճոլքներին զոհւում են անթիւ ընտանիքներ, իրենց զաւակներով, ընտանիքներ՝ որոնց բարոկական և նիւթական հոգացողութեան իւրաքանչիւր կէտը մեր խզձի վերաէ էր ծանրացել. Մեր սիրալի զործողութիւնները մեր մոլի կենցաղավարութեան օրինակները մեր աննախանձելի կեանքի մէջ հետզիւտէ զարգանում և լառաջ էին դնում, ահա այդ կերայ չառաջդիմական արդիւնքներն այն աստիճան բեղմնաւորւեցին, որ իրենց զզւելի հետևանքներով մի սև ստւեր ձգեցին մեր ընտանեկան բարոկական կեանքի վերայ:

Թշւառ ընտանիք. Նահապետական դարու այդ որդիները՝ իրենց ամուսինների օգնութիւններից զուրկ, նիւթական ամենաչնչին միջոցներն անդամ ունենալուց լուսակտուր, ուրախութեամբ գերեզման մտնելու պատրաստ էին, այդ անելանելի զրութիւնից ազատելու համար, եթէ ազատ լինէին մարդական հոգսերից և անմեղ մանուկները սնուցանելու պարտականութիւնից.

Մի տխուր՝ կարծես աշնանալին օր լինէր, համատարած երկինքը սև ու մոխրագոյն ամսերով ծածկւած էր, քիչ էր մնում որ անձրեց կաթկաթիւ. Ես իմ մի քանի ընկերներով միասին կարօի խանութից մեր տունը վերադարձանք լաւ թունդ խմած: Քանի քանի անդամներ իմ չափազանց խմելու համար ամուսինս անպատել էր ինձ, մինչև անդամ կոհիւներ էին տեղի ունեցել մեր մէջ, որդիքս ամուսնու կողմն էին պաշտպանել: Այս անդամ նոյնպէս երբ տուն մտակ, երբ կնոջս տխուր ու արհամարհող աշքերը տեսակ, որոնք բարկութեան և արհամարհի ատելութիւն էին արտավազուում զէպի ինձ, անմիջապէս սթափեցի գինուց, կարծես թէ նոյն բոպէին մի սափոր սառը ջուր ածեցին գլխաբաց և սոչ մէկը չկարողացաւ նկատել իմ մէջ կատարւած բոպէական փոփոխութիւնը: Հակառակ զէպքում ես կ'ենթարկւէի իմ ընկերներիս խթի և տգէտ մոքի անիրաւ քննաղատութեանը, իսկ այն ժամանակ ես նրանց մօտ ոչ թէ ինչպէս տղամարդ, այլ ինչպէս մի ամենաթուլ էակ կը համարէմի, որը կնոջից երկիւղ է կրում և կնոջ խօսքին լսելով է զործ կատարում: Կնոջ կոչումը մնզանում իւր նախնական ձերի և նշանակութեան մէջ է պահպանւած, թէ կին և թէ տղամարդ, երկուքն ես հաստատապէս պահպանել են իրենց մէջ, ինչպէս ամուր հիմնաքար, պսակի խորհրդից հետեւեալ խօսքերը իրենց նշանակութեամբ: «Մարդը՝ կնոջ գլուխն է» Այդ խօսքերի տակ զիւղացի կինը՝ առանց մի մաղաշափ անդամ չնղելու, հնազանդում է իւր ամուսնուն, կատարում է իւր կանացի պարտականութիւնները զէպի իւր մարդը: Իսկ տղամարդը՝ իրան զլում համա-

թելով, սկսում է աւելի հեռանալ զիշեալ խօսքերի բուճ նշանակութիւնից, և նրանց սխալ ըմբռնելով, այնուհետեւ նաչում է կնոջ և նրա կոչման վերաէ ինչպէս երկրորդական առարկալի վերաէ Մարդը համոզւած է, որ ինքը կնոջ գլուխն է, աւելի ևս հաստատ համոզում է, որ կինը պէտք է իւր ոտները լինեն, հետեապէս կնոջ իրաւունքները և կամքը պէտք է մարդի ոտներից բարձր չհամարւեն, Տղամարդը իրաւունք է տալիս իրեն կնոջ վերաէ նաչել ինչպէս մի չնզոք առարկալի. ինչ որ բերի մարդը, կինը պէտք է հագնի, առանց նրա լաւութեան կամ վատութեան մասին մի բառ անգամ արտասանելու իրաւունք ունենալու, Աչդ դէպքում բըռնալատում են կնոջ մէջ գեղեցկի ճաշակը և հոգեկան ազնիւ զգացմունքները: Տղամարդը սկսում է աւելի ևս ընդարձակել իւր անպատճան ազատ իրաւունքների կնոջ վերաբերութեամբ և մինչեւ ան աստիճան՝ որ չանուգնում է ասել թէ կնոջ սպանման իրաւունքը նոցնալէս մարդուն է տրւած, Աչդ բոլոր գաղափարները երկու ամոլակից զուգերի մէջ լառաջանում է գիւղական տղէտ քահանակալ սխալ բացադրութիւններից, որից չետոր, սխալ ևն ընդունում և ամուսնացող զուգերը: Գիւղացին ընդհանրապէս իւր կրօնական զգացմունքների հետ կցւած ունի և նախապաշարմունքը ինչպէս դէպի մէն մի առարկալ, նոցնալէս և դէպի իւր կինը: Գիւղացին համոզած է, որ կնոջ զագաթի մազերի մէջ գեերի մի ամբողջ լեզուն է բոյն դրել և անստեղ ընակւում են:

Աչդ դեները շարունակ աշխատում են մարդի և կնոջ մէջ թշնամութիւն ձգել բաժանել միմեանցից կին և մարդ, Բայց մարդիկ շաբաթը մի անգամ իրենց ողֆեղ բուռցքներով կանանց ուղղակի գագութի մէջ տեղը մի քանի անգամ լովելով, ցրում են զեները և կինը խաղաղութեամբ սկսում է հնազանդել իւր ամուսնուն: Գիւղացի կինը և տղամարդը ունին և իրենց կեանքի ամենաքաղցր բուքները, և այդ ան ժամանակն է լինում, երբ նոքա հասակ առած զաւակներ են ունենում, և աւելի ան ժամերին և այն օրերին՝ երբ կինը ինչպէս հարազատ եղբար, ինչպէս իւր ամուսնու ցաւերն ու հոգսերը հաւասարապէս բաժինարար ընկեր՝ օգնում է իւր ամուսնուն նրա ծանր տնալին և դաշտավն աշխատութիւնների մէջ:

Մենք նստած էինք մեր տանը թաղիքի վերաէ բոլորովին անհոգ կերպով, հայն ու կւարտով գինին առջեներիս զրած, ուտում էինք և խմում. Թէպէտ լի էր օրը, բայց աչդ օրը բոլորա էլ զանաղան պատճառներով աղանանքից բացակաէ էինք. աշխատելու չէինք զնացել: Մենք քէֆի և ուրախութեան անպատմնլի քաղցր բուքների մէջ կորած էինք. սեղանապետ և կառավարիչ զանաղան կենացների և առաջարկութիւնների բաշխման համար նշանակած էր Եղնակը, իսկ և իսկ ճիշտ և հմուտ աչդ արհեստի մէջ: Եղնակը երբեմնապէս աւելի գինի զործածելու համար ալնպիսի իննացներ էր առաջարկում, որ մենք դժւարանում էինք երեակաւել

անգամ. երբ կենացների աղքիւրներն սպառում էին, այն ժամանակ  
Նոյ նահապետից սկսում էր և վերջացնում իւր անւանակից Եղնիկի  
գերեզմանով. Մեր քաղցր տրամադրութեան և ուրախութեան հէնց այլ  
միջոցին չանկարծ մեր դուռը բացւեց և մէկը ներս մտաւ բոլորովին չէ-  
արգել և հեւալրվ, կարծես թէ, թշնամիներից փախառական հալած-  
ւած, մեղ մօտ ապաստարան գտաւ. դա աղահանքի բանող մշակներից  
էր, Ոսկան անունով. Ոսկանը կանգնած էր լուռ և բարկացած դէմքով  
ամբողջ մարմնով տատանման մէջ էր, կարծես մի հոգեկան տարօրինակ  
անհանգստութիւն ճնշել և կաշկանդել էր նրան չափնելու մի կա-  
րսոր միտք, մի դժոխսացն դէպք. Ոսկանը ալլավլած մտածում էր թէ  
Բնչպէս չափնելու մեղ չանկարծակի իւր սրտի չուզման պատճառը, Բնչպէս  
դուժէր ալդ ցաւալի իրողութիւնը, միթէ-վտանգաւոր հետևանք չէր կարող  
ունենալ. ալդ բոլորը ամենաչն արագութեամբ անցնում էին Ոսկանի մոքից  
Ամենքս սկսեցինք չառած աչքերով նաև դէպի Ոսկանը որի գրութիւնը  
հետզհետէ կասկածաւոր կերպարանք էր ստանում:

—Աղա, իմստ չես ձէն էլա տալի, բացականչեց Եղնակը. Ի՞նչ ա-  
գողցնում ես. արի ըստի, իմ կշտին նստի, ես քու գողը կ'կըորեմ.

—Չէ, չեմ դողցնում, պատասխանեց Ոսկանը, ցած և կիսակտոր  
ձախով,

—Արի, զու մեր աչքին ու գլխին ես էկել, արի մի ստաքան (բա-  
ժակ) էլա գինի խմիր, հէր օրհնած, սկսեց չողոքորդել Եղնակը:

—Չէ, չեմ խմիլ պատասխանեց Ոսկանը գլուխը խոնարհելով.

—Ե, բաս Բնչ ես ասում:

—Ամի Սաքուի հետ թաքուն բան ունիմ, պատասխանեց Ոսկանը

—Ե, խմստ ես մեղնից թաքցնում, մէջ մտաւ մեր ընկեր Թաթոսը,  
մենք քմմա էլ մի տնով ենք, մեր միջին զարիր մարդ չկաչ, որ մեր սըն-  
իմանակ. մենք չորսով էլ աղքերութիւնի խաթրի հըմար էնթաւոր վառ-  
ւած ենք, որ չուր էլա չի ընցնի մեր միջից:

Ոսկանը դուրս գնաց, ես հետեցի նրան. հէնց դուս եկած միջոցն  
մի ինչ որ խուռն ի խուռն բան արտասանեց անհասկանալի կերպով, և  
արագ ու արագ սկսեց փախչել դէպի դուրս Երկինքը համատարած ամ-  
պել էր, և անձրմը կաթկաթում էր. Ազդ երսութը մի խաբուսիկ երացի  
նմանւեց. կանգնեցի փոքր ինչ. չանկարծ լսելի եղան դրսից զանազան  
խառն ի խուռն կանացի ձաներ, որոնց մէջ երբեմնապէս կրկնւում էին  
սախ ջիւան ումրիդ դուրբան, բռուանակ մօրդ աչքերը, մանոց քոռացաւ  
նախագասութիւնները. Դուրս եկանք փողոցը, ոչինչ չիմացանք. միան  
ամեն կողմից սպառաւ կանաչք, ծեր, երիտասարդ, և մինչեւ իսկ մասնուկ-  
ները վազում էին դէպի աղահանքը. մենք ես հետեւեցինք նրանց. Նա-  
խաղղացմունքը իմ մէջ շատ վառ էր, լինձանում ծագեց անմիջութէս մի

միտք, երբ կահանց աղաղակը լսեցի. որչափ մօտենում էի աղահանքին՝ անչափ երկբազութիւնը ստանում էր ինձանում ովֆ և զօրութիւն։ Վերջապէս հասանք աղահանքը, ուր ամբողջ բաղմութիւնը կանգնած, կարծես ինձ հանդիսաւոր կերպով ընդունելու համար էին սպասում. բոլորը ինձ վերակ էին նախում, դեղնած, սարսափահար գերեզմանական ուրւակաների, նման, Բազմութիւնը ինձ ճանապարհ տւեց, ես անցակ դէպի յառաջ, մէկ, երկու, իսկ երրորդ քաղաքովսին ես կանգնեցի. իսկ իմ առաջ զետնի վրայ տարածւած էր արլւնաշաղաղ անչնչացած մի դիակ. աչքերս սեացան, ես ընկաւ։

Ամի Սաքօն ազլ ես շկարողացաւ շարունակել, նրա աչքերը կարմը-րեցին, նա սկսեց հեկեկալ և թաշկինակը երեսին դրած՝ սրբում էր աչքերի արտասուքը. լուսութիւնը թագաւորեց հինգ բոպէի չափ, որից չետու ես հարցրեցի.

—Ամի Սաքօ, ով էր արդեհօք աչդ անբաղդը. և ինչ էր նրա անբախութեան պատճառը.

—Աչդ անբախտ երիտասարդը մեր գիւղացի Ագարովի որդի Յովասափին էր, նա իմ որդի Վարոսի թէ մանկական և թէ մակութեան ամենահաւատարիմ ընկերն էր. Աչդ ազնիւ երիտասարդը բաւական փալլուն ապագակ էր խոստանում, բախտը նրան դաւաճանուց խապառ, և աղահանքը նրա կիանքին լաւտեան վերջ զրեց. Աչդ չէր միայն ընդհանուր սրտերին տիրութիւն և ցաւ պատճառող դէպքը. նոյն ժամուն աղահանքի ժակուրի տակ ծածկւած ննջում էր իմ անդրանիկ Վարոսի դլակը. Միւնո՞ն ժամուն պատահած դէպքը շատ կասկածներ լառաջացրեց ամբոխի մէջ, հասարակական զանազան շրջաններում պտտում էին զանազան ենթադրութիւններ, անթիւ կարծիքներ, բայց և ոչ մէկը չունէր իւր հաւանականութիւնը. Ումանք ասում էին թէ Յովասափիը ինքն էր դիմել անձնապանութեան, իսկ Վարոսին չանկարծակի աղաժալուերն էին ծածկել իրենց տակ. Բայց ան մշակներ՝ որոնք աչդ օրը միասին աշխատել էին Յովասափի հետ միմեանց կից աղահանքերում, ասում էին, որ Յովասափը աչդ օրը Մարկոս աղի մօտ էր եղել Վարոսի հետ և երբ որ եկաւ, նա շատ տիրուր էր. կրկնեց մի քանի անդամ թէ սիրտս ճնշում է, միրտս տախին ու վրակ է լինում. Յովասափը վերկացաւ աղաշերտի վրայ և սկսեց աղխատել. չանցած քառորդ ժամ, մենք միախն նրա ցած ընկնելու ձանը լսեցինք, որից չետու պատահեց աղային շերտերի խորտակումը, ուր յափտեան ննջեց Վարոսը. Մշակների ասածները իրենց հաւանականութիւնն ունէին. մենք հասկացանք որ աչդ գործողութիւնների մէջ Մարկոս աղայի մատը շարժւել էր. Յովասափի գլխի մազերը թափւում էին, չէմքը կապտել էր. Անցաւ մի առժամանակ. երբ գործը խապառ հնացաւ,

երբ ծնողական սրտերի լուզմունքները դադարեցին, այն ժամանակ ամեն ինչ պարզւեց, ամէն ինչ լուրջ կերպարանք ստացաւ. այնուհետև շատերը անվախ, նոյն իսկ գործին աւելի մօտ ծանօթները խոստովանեցին որ Յովասափը թունաւորւած էր...

(Շարունակելի)

## ԴՐԱՑՈՒՅԻՍ

Շ Ա Ն Թ Ի

Հ ն, դիմացս, լուսամուտին  
Նստած է ան լուռ, գլխահակ.  
Փոքրիկ ձեռքը ասեղին հետ  
Կ'ելնէ կիջնէ վարժ ու արագ :

Մինչ անպատկառ յոխորտանքով  
Երես առած մի ճառագայթ  
Անոր այստէն պինդ կը ծըծէ  
Անվերջ համբոյր մը հրակաթ :

Ու նախանձն կուզեմ ես ալ  
Ճառագայթի փունջ մը լինիմ;  
Վարագոյրի ծալքերէն վար  
Անոր վառւող դէմքին նետւիմ:

Ու ցրւիմ հոն, դողամ, գըգւեմ  
Դեղձան, ցրիւ մազերը ճոխ.  
Ու գաղտուկ մը մազին մշշէն  
Սահիմ կուրծքը սէր ներշնչող,

Ուր բոցի մը փայլվլուկով  
Հուր համբոյր մը դնեմ կամաց,  
Իր նենդ սրտի թըրիլուտուքին  
Ականջ դնեմ յափրշտակւած:

## ՀՈԴՄԱԴԱՑԸ

Շ Ա Ն Թ Ի

Հեռուն դաշտին մէջ՝ բլրակի ուսին  
Կիսափուլ, կըքած հողմաղացը ծեր  
Նստած էր տիսուր, լուռ ու առանձին  
Ու լարւած մոքով խոր կը մտածէր:

Եւ իր խարխլուն անիւն ահագին  
Քուրջ պաստառներովն իր պատառ-պատառ,  
Որ ճռընչելով՝ հովերու կամքին՝  
Կը դառնայ անվերջ հոս ամբողջ մի դար:

Ինծի կը թւի, թէ զառամածին  
Յոգնած մոքերն են, որ կը ջանան զեռ  
Պատասխան մը տան այն խրթին հարցին,  
Որուն վրայ զնուր դար մը խորհած էր:

1894թ. Գևորգ Լալաջիկ.

# ՇՈԹԱ ՐՈՒՍԹԱԻԵԼԻ

ԵՒ ՆՐԱ ՊՈԽՄԱՆ

ՑԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՐԻՄԱՆԱՍՆՅԻ

«Ընձենաւորը»<sup>1)</sup> վրաց ազգի անցեալի գրական ամենափայլուն արտադրութիւնն է: Այս գրքի գոյութեամբն է, որ պահպանւել է վրաց մէջ այն ճոխ լեզուն, որ գործ էին ածում հեղինակի կեանքի օրոք, այն է՝ 12-րորդ գարում: Այդ գրւածքի հեղինակը ընծացեց վրաց ազգին այնպիսի մի գանձ, որ անգնահատելի է: Դա մի ընդարձակ պօէմա է, որի հետ ծանօթութիւնը հայ լնժերցող հասարակութեան համար անհրաժեշտ է, մանաւանդ այն հիմնաւոր ակղքնաւորութիւնից յետոց, որ արել է «Մուրճ»-ը վրաց գրականութեան և ազգի հետ հայերին ծանօթացնելու համար: Այդ մենք կը կատարենք «Ընձենաւորը» վերածելով համառօտ պատմածքի, գիտենալով հանդերձ, որ դորանով պէտք է ստիպւած լինենք զոհել բնագրի սաղածափութեան շաա գեղեցկութիւնները: Բայց նախքան այդ՝ ներկայ յոդւածով մենք կը զբաղւենք հեղինակի անձնաւորութիւնով և թէ նրա գրւածքը ինչ նշանակութիւն է ունեցել վրաց համար թէ իւր ժամանակում և թէ մինչև օրս եօթ դար շարունակ: Ասենք հէնց այս տեղում, որ Շոթա Ռուստաւելու «Ընձենաւորը» վաղուց արդէն իւր վրաց է գարձրել նաև եւրոպացի բանասէրներից ոմանց ուշադրութիւնը:

1) Ալսինքն ընծու մորթի հագած մարդը. վրացերէն «Վեկիսւիս աղաօսանի» (Հյոթեցու շցառեան):

Վրաց գրականութեան լուսատու աստղը և բանաստեղծների նահապետ Շոթա Բուսթաւելին ապրում էր 12-րդ դարում Թամար թագուհու ժամանակի: Այդ երեսում է նոյն իսկ Ընձենաւորի յառաջաբանից և զանազան պատմագիրների առաջ բերած փաստերից (Բրոսէ, Բաքրաձէ, Եռուշիանի և այլք):

Շոթա Բուսթաւելին ծնւեց Ախալցխայի մօտ դուրս ւած Ռուսթաւ գիւղում<sup>1)</sup>: Ինքը Բուսթաւելին ասում է իւր համար՝ «Դրում եմ մի ոմն Մեսխի բանաստեղծու Բուսթաւ գիւղից»: Բուսթաւի այն մասը, ուր ծնւել է հեղինակը, կոչւում էր Սամեսխէթ (վրացերէն՝ Սամեսխիթի), այսինքն Մեսխանց թաղ, ուստի և հեղինակը կոչւում է երբեմն Մեսխի:

Բուսթաւելու ծննդավայրի մասին կան թեր և դէմ կարծիքներ. բայց, նայելով ժողովրդի մէջ պահպանւած աւանդութեանց, հաւանական է, որ Ախալցխի կողմերքը լինի: Բուսթաւելու ծննդեան տարին ճիշտ յայտնի չէ. մի հին ձեռագրում միայն նշանակած է 1172—1216: Նոյնպէս դրականապէս յայտնի չէ թէ մվքեր են եղել Բուսթաւելու ծնողները. մի կասկածաւոր ձեռագրից յայտնի է, սակայն, որ նորա հայրը սարկաւագ է եղել: Բուսթաւելին մեծացել է հայրենի գիւղում, ապա նրան տել են Տքէթի վանքի (Արտէինի շրջանում, Աճարայում, այժմ մահմեղական վրացոց մզկիթ) վանականներին, որոնց մօտ նա գրել-կարդալի է սովորել: Տքէթի վանքից բերել են Կախէթի Գրէմ քաղաքի արքունիքը<sup>2)</sup>: Այդ պալատում նա մնացել է հինգ տարի, ապա կրթուել է հղալթուի (Թելաւի մօտերքը) դպրոցում: իսկ այդտեղից ուղևորւել է Աթէնք կատարելադործւելու: (Այս տեղեկութիւնները հանւած են մի հին ձեռագիր պատմութիւնից, որ մինչ օրս էլ չի հրատարակւել): 22 տարեկան հասակում նա Աթէնքից դարձաւ Վրաստան:

Զնայած, որ Բուսթաւելու «Ընձենաւորը» արդէն մի պատկանելի գրականութիւնունի թէ վրաց և թէ օտար լեզուներով, բայց մինչև այժմ չի որոշած թէ ի՞նչ է եղել նրա իսկական անունը և որ-

<sup>1)</sup> Ներկայում այդ տեղում կայ Բուսթաւ անունով պոստի կատարան:

<sup>2)</sup> Թելաւի մօտերքը՝ այժմ աւերակ և համանուն գիւղ:

տեղից են նրան Շոթա անունը տւել։ Իսկ ինչ վերաբերում է մուսթաւելից կոչման, ինքը հեղինակը հետևեալն է ասում իւր գրածքում։ «Ես, արհեստով Ռուսթաւելի, այս գործին եմ ձեռնարկել։ Ինչպէս ընթերցողն էլ կը նկատի, Ռուսթաւելին արհեստ է եղել։ բայց ինչ արհեստ էր այդ—յացտնի չէ։»

Մի աղքիւր միայն կաց նրա իսկական անունն իմանալու համար։ այդ՝ Երուսաղէմի վրաց Ս. Խաչ վանքում նկարած Ռուսթաւելու պատկերի տակ եղած արձանագրութիւնն է։ բայց ցաւօք սրտի մինչ օրս, չնայած բազմաթիւ ուխտաւորների, չի կարդացւել։ Զ. Ճիճինաձէի ասելով, մի հին ձեռագրի համեմատ նրա աշխարհական անունն եղել է Շոթա (հայերէն Աշոտ), իսկ Երուսաղմում ճգնաւելիս Շիօ անունն է ստացել։

Կարծում են, որ Ռուսթաւելին այն երիտասարդներից մինը պիտի եղած լինէր, որոնք 12-րդ դարուց սկսած Դաւիթ Աշխարհաշէն թագաւորի կարգադրութեամբ ուղարկում էին Աթէնք կրթելու։ ինչպէս ցիշատակում է հայոց 13-րդ դարու Վարդան պատմիչը։ նոյն են վկայում Թէյմուրազ թագաւորի գրւածքները։ Վերջնոյս ասութեամբ Ռուսթաւելին բաւական ժամանակ մնացել է Աթէնքում և ուսումնասիրել է աթէնական աստւածաբանութիւնը և փիլիսոփայութիւնը։ այդտեղ նա պիտի ուսումնասիրած լինի նոյնպէս և արաբական ու պարսկական լեզուները։

«Ընձենաւորի» մի հին ձեռագրի վերջում։ մի անյայտ ոմն գրում է։ «Շոթան մեծ ազգի որդի էր. գնացել է Յունաստան, ուր կրթւել է «Խւերիա» վրաց վանքում և Աթէնքում նա լսել է փիլիսոփայութիւն, աստւածաբանութիւն, ճարուասանութիւն... ուսումնասիրել է հայոց Վ. րդ դարու փիլիսոփայ Դաւիթ Անյաղթի գրածքները, վրացի փիլիսոփայ Յովհաննէս Պատրիկի միջոցով։»

Վրաստանի հին և նոր պատմագիրների վկայութեամբ Թամար թագուհու ժամանակները վրացոց համար եղել է ոսկէ դար, այսինքն տէրութիւնը հաստատ հիմքերի վրաց էր դրւած։ Թաւադակնառութերը (իշխան-ազնւականներ) ոսի կանգնած թշնամիների վրայ ահ էին ազդում, շինուում էին բերդեր, աշտարակներ, վանքեր, կուսանոցներ, պալատներ, այլ հաստատութիւններ։ Ճաղ-

կում Հր և զբականութիւնը<sup>1)</sup>: Ահա այդ ժամանակներում՝ իրքի արքունական գանձարանի կառավարիչ, որպէս հաստատակամ մարդ՝ նշանակւում է Ռուսթաւելին:

Ե՞րբ է գրւած «Ընձենաւորը», ինչ առիթով է գրել նա, և ինչ կարևորութիւն է նա ներկայացրել վրացոց համար:

Ոմն Զախրուխանէ, որը 1195 թւականին Թամար թագուհու գովեստն է գրել, չիշում է նաև Ռուսթաւելուն: Պարզ է ուրեմն որ Ռուսթաւելին այդ թւականից առաջ է գրել իւր պոէման. բայց որովհետեւ ոմն Եովանէ, որը նոյնապէս Թամարի գովեստն է գրել բայց արդէն 1188 թ.-ին, և Ռուսթաւելուն չի չիշում, դորանից եղբակացնում են, որ պոէման պիտի գրւած լինի այդ երկու թւականների միջև, այն է 1188—1195 թ.-ին, այսինքն ուժ տարած միջերքում: Թէ աւանդութիւնը և թէ նոյն իսկ Ռուսթաւելու հետեւալ խօսքերը՝ ւես արհեստով Ռուսթաւելի, ձեռնարկել եմ մի այսպիսի բան. ում որ սպանների գունդը հնազանդում է նրա համար եմ աշխատում, նրա համար եմ մեռած. սիրելու կարօտ մնալով՝ ոչ մի դեղ չեմ գանում. նա պիտի տայ ինձ կամ բժշկութիւն կամ գերեզման, այդ խօսքերը առիթ են տալիս կարծելու, որ նա Թամար թագուհու սիրուց զրդւած է գրել իւր սիրահարական հրաշալի կարմներով լի պոէման:

Ռուսթաւելին իւր գրւածքով նկարագրել է Թամար թագուհու գեղեցկութիւնը, ողորմանձութիւնն և իմաստութիւնը, նոյնպէս և նշանաւոր մարդոց արժանիքը և զանազան յատկութիւնները. բայց որովհետեւ ժամանակակից անձնաւորութեանց անունները յականէ անւանէ չէր կարելի տալ, ուստի պոէմային նա տւեց հեքեաթի ձեւ. իսկ գործողութիւնները փոխադրեց Վրաբիա:

Ահա և վրաց մէջ պատուղ մի աւանդութիւն, որ պ. Գէորգ Աստածատրեանը, լսելով մի վրացի հովից, զետեղել է տաղաչափութեամբ «Աղբիւր» ի 1890 թ. մարտ № 3 համարում «Ռուսթաւելու սէրը» վերասութեամբ:

Թամար թագուհին իննջոցք է տալիս իր իշխաններին. ամենքն

<sup>1)</sup> Վրաց պատմութեան այդ շրջանի համար տես «Մուրճ» 1895 թ. № 11 (նույնիւր) «Վրաստանի անցեալը» Ա. Արամիսաննեանցի: Ծան. Հերթ

էլ ուրախ են, որ երկարատև պատերազմներից յեռոյ դարձեալ միմանց կենդանի են տեսնում: Տիսուր է միայն Շոթան և չի հնչում նրա քնարը: Թամար թագուհին նկատելով նորա դէմքի թախիծը, ասում է:

—Զէ որ ազատ է քո Վրաստանը, ինչու ես տխուր:

—Այո, ազատ է Վրաստանը, բայց ես գերւած եմ, պատասխանեց խոր հոգւոց հանելով Ռուսթաւելին: Այդ ասելով վերցնում է քնարը և երգում լոյսը սիրող այն թիթեռի մասին, որ մինչեւ անգամ թևերն էլ այրում ու վերջը ինքն էլ այն լոյսին զո՞ն է դնում:

Թամարը նկատելով որ շատ տխուր է հնչում նրա քնարը՝ ասաց:

—Միթէ հնար չկայ քեզ օգնելու:

—Ոչ, մահս մօտ է. ահա այս գրւածքս կարդա և ինձ յիշիր: Իշխանները խնդրում են որ ինքը կարդայ. նա էլ կարդում է Քնձենաւորը՝ պոէման: Աւնկնդիրները այնպիսի խորին ուշադրութեամբ էին լսում, որ կարծես թէ ողապանձւել էին: Թամարն այդ գրւածքի համար առաջարկեց իւր ամբողջ գանձը. այդ բոպէին Ռուսթաւելին չոփեց նրա առաջ և հնչեցրեց լարերը, երգելով թէ այն թիթեռը՝ ինքն է, և լոյսը՝ Թամարը: Վերջացնելով ընծայեց նրան իւր գրւածքը: Թամարը կատաղած հրամայեց նրան անշապաղ հեռանալ Վրաստանից, ասելով. «Կեծիր շուտ նժոյգներիցս մինը, ապա թէ ոչ՝ դահիճները դլուխոդ կը թոցնեն»: Վշտալի ու յուակտուր Ռուսթաւելին անիծում է Թամարին նրա սառնասրութեան համար, յայտնում է, որ անսուամենայնիւ նա միշտ իրան կը յիշի և նրա աչքերիցը արտասուքը չի հատնիլ: Զարդ ու վշուր անելով քնարը՝ նա անհետացաւ:

Ասում են քազաք կամ ամրոց ու պալատ շինելիս Թամարը միշտ յիշում էր Ռուսթաւելուն և արցունքներով թրջում հիմքերը:

## II

Վրաց պատմագիրները պատմում են, որ երբ Ռուսթաւելին Քնձենաւորը գրեց, նա արքունական պալատում այնպէս գրաւիչ կերպով կարդաց, որ նրանից յեռոյ շատերը երանի էին տալիս նրա

կարդալուն։ Նրա ընթերցումն այնպիսի տակաւորութիւնն թողեց ամենքի վրայ, որ իւրաքանչիւրը նրանցից աշխատում էր ձեռք բերել այդ գրւածքը ու արտադրել՝ ընդմիշտ տանը ունենալու համար։ Մինչև անդամ սկսեցին հարսանիքներում այնտեղից կտորներ երգել։ Այդ սովորութիւնը մնացել է մինչև մեր օրերը. այսպէս, օրինակ, պր. Եռութիւնին վերջերը Դուշեմի գաւառում պատահել է մի հարսանիքում այդ պոէման երգելիս։ Նոյնն է նկատում նոյն պէս մահմեղական վրացոց մէջ (Քաժումի շրջակացքում), ուր շատերը անդիր գիտեն այդ պոէման։

Բայց որովհետեւ հնումն այնքան թուղթ չէր ճարւում, որ ամենքն էլ արտագրել կարողանացին, ուստի ազատ ժամերին հաւաքւում էին ձեռագիրը ունեցողի մօտ և տեղին ու տեղը անդիր անում։ Այդպէս էին վարւում աւելի կիրակի օրերը, ուստի հոգևորականութիւնը վերաբերւում էր թշնամանքով այդ երեսյթին։ Հուշակաւոր սոէման վերջ ի վերջոց այնքան է տարածւում, որ աղջիկ մարդու տալու ժամանակ սովորութիւնն է դառնում տալ նրան նաև մի օրինակ «Ընձենաւոր» իբրև օժիա։ Միով բանիւ այդ գրւածքը դարձաւ ժողովրդի սիրոն ու հոգին։ Նոքա այնտեղ գտնում էին անձնազոհութեան, նեղեաներին օգնելու գաղափարները, հաւատարմութիւնն և իմաստալից առանցներ, օրինակ՝ 12-րդ դարում մարդիկ կանանց բանի տեղ չէին դնում. Տուսշաւելին, այդ բանի նկատելով, վարդապետում է՝ առախճի կորիւնը առիւծ է, եկ լինի թէ արու։

Հին մարդկացին կեցութիւնը հիմնւած էր ստրկութեան և ձորտութեան վրայ. Տուսթաւելին հակառակն է քարոզում. առուրչքաւորներին գանձդ, ձորտերիդ՝ ազատութիւն։

Տուսթաւելու ժամանակակից մարդիկ կենդանի շունը գերագասում էին մեռած առիւծից. իսկ նա քարոզում է՝ անւանի մահը զերադասելի է արատաւոր կեանքից։

Յեղական ծագումը մեծ նշանակութիւն ունէր Տուսթաւելու ժամանակ քան թէ արժանաւորութիւնը. բայց նա, հակառակն էր պնդում. «Հազարով ծաղումն (ազդ) գնահատուեց, տասը հազարով կրթութիւնը. բայց եթէ մարդս ինքը լաւ չէ ոչինչ է նրա ցեղական ծագումը։

Ժողովրդից վարակւեցան և քահանաները. իսկ կղերականութիւնը աւելի ևս գրգռւեց. բանն այնտեղ հասաւ, որ Թամարին ժամանակակից վրաց Յովհաննէս կաթողիկոսը սկսեց յայտնի կերպով քարոզել ընդդէմ Ռուսթաւելու պոէմայի և անիծել նրա ընթերցողներին: Բայց ոչ մի միջոց չէր օգնում նրա տարածմանը առաջն առնելուն, վերջը կաթողիկոսը և ամբողջ հոգևորականութիւնը այն աստիճանի խիստ ամբաստանում են այդ դրւածքը Թամար թագուհու առաջ, որ հեղինակին արքունիք են կանչում զատի և իրանց փափաղին հասնում: Ընձենաւ որը՝ հոչակել են տալիս իրեւ մի անբարոյականացուցիչ գրւածք, որ դա ժողովրդին արգելք է լինում նոյն իսկ աստւածաշտական պարտիք հատուցանելու և որ այդ գրւածքով շօշափում է Թամար թագուհու պատիւը, այսինքն Ռուսթաւելին դրել է այդ՝ գրդւած նորա սիրուց. ուստի վճռում են հեղինակին ապաշխարութեան աքսորել Երուսաղէմի վրաց Ս. Խաչ վանքը:

Եւ իրօք մենք նրան քիչ ժամանակ յետոյ պատահում ենք Երուսաղէմում իբրև կղերական<sup>1)</sup>:

Բնական է, որ հեղինակին աքսորելուց յետոյ կ'աշխատէին նրա գրւածքները ոչնչացնել. բայց այնուամենայնիւ ժողովուրդը հնարք էր գտնում իւր հոգեհատորը պահպանելու: 1738 թիւն Տիմոֆէոս վրաց արքեպիսկոպոսը Երուսաղէմի Ս. Խաչ վանքում տեսնում է Ռուսթաւելու պատկերը և ապա իւր ուղևորութեան նկարագրի մէջ զգւանքով յայտնում է, որ նա եղել է անբարոյականացուցիչ բանասեղծութեան յօրինող և քրիստոնեաներին անբարոյականացնող մի անձն: Ուրեմն նորան առելիս է եղել վրաց հոգևորականութիւնը նոյն իսկ 18-րդ դարում: Հստ ասութեան Թէյմուրազ թագաժառանգի, Ռուսթաւելին մնաց Երուսաղէմում, վերանորոգեց իւր բնակավայր Ս. Խաչ վանքը և այսաեղ էլ վախճանեց. բայց որ թւականին—ճիշտ յայտնի չէ:

Մի այսպիսի հանճարեղ դրւածքի հեղինակ, որպիսին է «Ա-

<sup>1)</sup> Զ. Ճիճինաձէի ասելով Երուսաղէմում գտնւած Ռուսթաւելու պատկերի տակ հին վրացերէն տառերով (խուցուրի, որ նման է հաւոց) գրած է նիւ. Ռուսթաւելին նկարած է աբեղալի շորերով:

ձենաւորը, դրանից առաջ էլ գրութիւններ կ'ունենար և աքսորի մէջ էլ չէր դադարիլ գրել, թէև այդ լիներ կրօնական ուղղութեամբ: Սակայն որ և է այլ գրութեան մասին ոչ մի ցիշատակութիւն չի մնացած <sup>1)</sup>:

Չնայած, որ Ռուսթաւելու մասին այժմ մի պատկառելի գրականութիւն կայ, բայց մի քանի հարցեր դեռ ևս մնում են չը լուծւած:

## III

Այս գրւածքը իւր վեհ բանաստեղծական զգացմունքով, բարյական իմաստներով (որոնք վրացոց մէջ առօրեայ առածներ ևն դարձել) և կեանքի ճշգրիտ պատկերներով գրաւել է ոչ միայն վրացիներին այլ և եւրոպացոց, որոնք կամ ամբողջապէս կամ կորներով թարգմանել են իրանց լեզուներով:

Այս գրւածքը ունեցել է վրացերէնում մի քանի տպագրութիւններ: Մինչ տպագրւելը վրացիք, ինչպէս տեսանք, միմեանցից արտադրում էին:

Առաջին անգամ «Ընձենաւորը» տպագրել տւեց Թիֆլիսում Վահանդ վրաց թագաւորը 1710 թ-ին. դորանից այժմ միայն մի քանի օրինակն է մնացել. այդ տպագրութեան հազւագիւտ լինելու պատճանն այն է, որ Անտօն կաթողիկոսը ացրել տւեց նրա գրեթէ բոլոր օրինակները: Այդ է ամենաընտիր հրատարակութիւնը: Դորանից առաջ արտադրողները միշտ իրանցից աւելցնում էին. ուստի հարկանոր էր զտել, մաքրել և խսկականը վերականգնել. այդ կատարեց ինքը Վախտանգ թագաւորը: Նա տպւած է հաստ թղթի վրայ այժմեան № 1 տառերով և բազկացած է 1584 չորս տողանի տներից:

Մի քանի խօսք պոէմայի արտաքին ձևի մասին: Իւրաքանչիւր տունը բազկացած է 4 տողից և ամեն մի տող էլ 16 վահկից. իւրաքանչիւր տան չորս տողն էլ վերջանում է նոյն յանդով՝ Ահա պատկերը առաջին տան առաջին երկու տողի՝

<sup>1)</sup> Ցիշենք սակայն, որ Խախուլի եկեղեցում գտնւող Աբ. Աստածածնի պատկերի տակ մի անընթեռնելի գրութիւն կայ, որի ներքու կարդացում է «գրեց Ռուսթաւելին»:

Ահա երկրորդ տունը՝



Յիշելու է նաև որ իւրաքանչիւր տան չորրորդ տողը սկսւում է դա (ու եւ շաղկապ) յաւելեալ մասնիկով։ Առհասարակ եթէ բարձրացայն կարգալու լինենք բուօթաւելու պոէման, պահպանելով շեշտաղրութիւնը, տողերը ացնքան ներդաշնակ են, որքան Հոմերոսինք։ Հարկ ենք համարում յայտնել նաև հետեւեալը. բովանդակութիւնը պատմելիս չենք հետևել բնադրի գլուխների դասաւորութեան, այլ մի քանի գլուխներ, նայելով բովանդակութեան, միացրել ենք։

Երկրորդ տպագրութիւնն եղաւ Պետերբուրգում Բրոսսէ, Զուբինով և Փալաւանդով վրացագէտների միջոցով 1841-ին 1600 տնով։ 24-րդ աւելորդ տունը չի եղել Վախտանգի օրինակում, այլ վերցրած է ուրիշ ձեռագիրներից։

Երրորդը կատարեց վրացազգի Զուբինովը 1846-ին առաջին դիմի ռաերէն թարգմանութեամբ։

Չորրորդ անգամ հրատարակեց Զուբինովը բառարանով հանդերձ։

Հինգերորդը կատարեց Թիֆլիսում անյայտ հրատարակիչների ձեռքով, 1867-ին։

Վեցերորդը հրատարակեց 1875 թ-ին Արսէն Կալանդաձէն, ձեռնաս մարդկանց օգնութեամբ։ Իբր օրինակելի հրատարակութիւն՝ սորանից են արտատպութիւններ անում։

Սրանից յետոյ եղան բազմաթիւ էժանագին հրատարակութիւններ Թիֆլիսում, Քութայիսում, Փոթիում, Օզուրգէթում։ Հայերէն լեզով լիակատար թարգմանութիւն չի եղել մինչ օրս, բայց թարգմանւած է պոէմայի սկիզբը (2 գլուխ) տաղաչափութեամբ և Թիֆլիսի բարբառով։ Թարգմանողն էր պ. Բաստամեան, սպակել է «Կոռունկ» ամսագրում 1862-ին յուլիսի և հոկտեմբերի համարներում Սարգս ստորագրութեամբ։ Բնագրից թարգմանած է

ամբողջապէս առաջին և երկրորդ գլուխը. ահա մի քանի տուն  
որպէս նմուշ:

Ուուաթաւելի  
Հ ծու մինթի հազած մարդը:  
Ասածիս կիսատը:

Մէ անճանանչ ոմքին տեսան  
Զրի ափին նստած լալիս.  
Էս աժդահէն թիք էր ննդած,  
Ինչպէս առուծ զնջանալիս;  
Բռնած ունէր լոխտով սև ձի,  
Նաշխուն լոխտով ոսկէ կարած.  
Թամքն ու լկամ, դոշլուզ, լոխտէն  
Մարգրիտներով էին շարած:  
Լալիս էր նա հեկեկալով,  
Ծովին բղիում աչքեր նրա,  
Արալսունքը թոշ էր դրի  
Նուր բաց էլած վարդու վրայ:

Հեհերէն լեզով մի արձակ համառօտութիւն տպեց պ. Կա-  
զիմիր Լուպչինսկու յառաջարանով: (Biblioteka Varszawska լւ.  
հական ամսագրում 1863 թ.):

Յունարէնը տպեց վրաց թէյմուրազ թագաւորը 17-դ դարում.  
բայց օրինակը չի հասել մեզ:

Պարսկերէն լեզով թարգմանել են 1725 թ-ին Պարսկաստա-  
նում եղած վրացի ազգասէրները:

Ռուսերէն լեզով թարգմանեց պ. Գ. Ֆինամձղւարովը արձակ  
Այժմ մոագրութիւն կայ նորից թարգմանելու:

Մի քանի կտորներ կան թարգմանած ֆրանսերէն, գերմա-  
ներէն, անգլիերէն և այլ լեզուներով. վերջերքս պատահեցինք  
1888-ին պ. Ստալինսկու հրատարակութեան վրացերէն, ռսերէն,  
հայերէն, ֆրանսերէն և գերմաներէն թարգմանած մի քանի  
կտորներ: (Հայերէնը վերցրած է նոյն բաստամեանի թիֆլիսարար-  
քառ թարգմանութիւնից՝ «Կոռնեկտ-ից»): Վերջին ամենաշքեղ և

պատկերազարդ հրատարակութիւնը պ. Քարթմանլովինն է (վոացի) և արժէ 15 ռուբլի: 1895 թ. վրաց Մուամբէ (համբաւաբեր) ամսագրի նոյեմբերի համարում պ. Ալ. Ս-շւիլի «Ընձենաւորը» տրամաբանութէն վերլուծելով գանում է շատ կեղծ տներ: Ամենահին ձեռագիրը, որի հետ համեմատում են բոլոր հրատարակութիւնները, 1846 թւականիցն է: Այդ թւականից մինչև 1870 թ. ձեռագիրներում շնորհիւ արտօպղողների սպրդել են 18 տուն. արդ, եթէ երկու հարիւր տարում աւելացրել են 18 տուն, ինչ կարծիք որ 12-րդ դարուց մինչ 1646 թ. ուրեմն 4—5 դարւայ ընթացքումն էլ աւելացած կը լինեն կեղծ տներ:

Համարեա թէ բոլոր հրատարակութիւնների առաջին երեսի վրայ դրւած է Ռուսթաւելու պատկերը: Մի քանի խօսք էլ այդ պատկերի մասին:

Բացի Երուսաղէմում եղած պատկերից, բանաստեղծ Վախոսանդ Օբրէլիանու մայրը (Հերակլ II-ի քոյրը, 18-րդ դար), ունեցել է մի հին ձեռագիր, որին կից է եղել և հեղինակի պատկերը: Այդ պատկերը պ. Պլատոն Եսոսիանին տւել է Կովկասի նախկին փոխարքայ իշխու: Սիմէռն Վորոնցովին: իսկ սա իւր կողմից յանձնել է մի Փրանսիացի ճանասարհորդ Ֆլերին, որ սա տպել տայ Պարիզում: Նա իրաւ տպել է տւել և մի քանի օրինակ ուղարկել Վրաստան: այժմս էլ կայ այդ օրինակներից: ահա այդ վերջիններից են ընդօրինակւած մնացած բոլոր պատկերները: Ռուսթաւելին նկարւած է պարսկական տարազով, ծնկան վրայ «Ընձենաւորը» գրելիս:

Ի՞նչն է արդեօք աղբիւր ծառայել Ռուսթաւելուն իւր «Ընձենաւորի» համար:

Հեղինակը ինքն իր յառաջաբանում ի միջի այլոց գրում է: «Այս սպասմութիւնը պարսկերէն է և վրացերէն թարգմանած: Սրանից կարելի էր եզրակացնել, որ արդէն վրացերէն արձակ թարգմանութիւն եղել է պարսկերէնից: իսկ Ռուսթաւելին տաղաչափութեան է վերածել: Հիմնելով այդ խօսքերի վրայ՝ Վախոսանդ թաւորը (18-րդ դարում) ասում է. «շատ ման եկանք, բայց պարսկերէնի օրինակը չգտանք»:

Մի տեղ միան հեղինակը իրան մատնում է և ապացոյց տա-

լիս, որ պոէման Վրաստանի կեանքիցն է վերցրած և փոխաբերական մոքով գրած։ Այդ այն տեղն է, ուր Աւթանդիլը, երկրորդ տեսութեան ժամանակ Թինաթինի հետ, խնդրում է ի յիշատակ իւր հրաժեշտի իրան մի իր ընծալի. ահա այդուել բուսթաւելին ասում է, որ «Աւթանդիլը խօսում էր քաղցրահնչիւն վրացերէն լեզով»։ Շատերը կարծում են, և այդ հաւանական է, որ Ռութաւելին դիմել է այդ միջոցին, որպէս զի ժամանակակիցներին մի կերպ միամուեցնի, որ նրանք կարծիք չտանեն թէ գրւած է դէպի Թամար թագուհին տածած սիրուց, որին նա հոգով սրառվ պաշտում էր։ Այդ սիրոյ մասին հեղինակը յառաջաբանում յիշատակում է, ասելով. «Խկենք զովել Թամարին արեան արցունքներ թափելով. թանաքի տեղ մեզ կը ծառացի սև սաթէ նման լինը, և որպէս զրիչ՝ նրա ճկուն իրանը. իսկ լսողի սրտին թող ցցէ նետը»։ Որ սա այլաբանութեամբ է գրւած և իսկապէս Ռութաւելու հեղինակութիւն և ոչ թէ պարսկերէնից թարգմանած և ապա տաղաչափութեան վերածած, զորան իբրև ասրացոյց կարելի է բերել նախ հերոսների անունները, որ զուտ վրացական են և գործածական էին այդ պոէմայից աւելի առաջ։ Օրինակ Թինաթին, որ հերոսուհիներից մինն է, եղել է վրաց Կախէթիացի թագուհի, երկրորդ, հերոս թագաւորների շքախումբը կազմում են թաւաղներ (վրացերէն իշխան) և ղիղելքուլներ (վրացերէն մեծաւորներ)։ Երրորդ, նւազաբանները և խաղերը պոէմայում վրացերէն անուններ են կրում. չորրորդ, երդւելու ժամանակ հերոսները վրացոց ձևով են երդւում, օր. Աւթանդիլը ասում է. «Ի՞ր արևը, Թինաթինի արևը վկայ»։ և հինգերորդ, մի տեղ էլ յիշում է որ զանգեր էին խփում (այսինքն եկեղեցու զանգերը)։

Այդ պոէմայում կան նաև արաբական բառեր, ինչպէս օրինակ Նաւրուզ (մուսուլմանների նոր տարի) Մուսսապի (Ղորան). այնպէս որ պ. Ն. Գուլակը բաժանում է երկուսի «Ընձենաւորը». առաջին բաժին, ուր գործողութիւնը կատարւում է Ռոստեանի թագաւորութեան մէջ, զուտ վիրական է այլաբանութեամբ դրւած, (բնութիւն, մարդիկ և սովորոցթներ)։ և երկրորդ բաժին, որ պահածներին է վերաբերում, կարելի է որ վերցրած լինի պարսկերէնից։

Ռուսթաւելին նկարւած է շատ նւազած դէմքով և քնքոյց հայ-  
եացքով։

1893-ին «Կւալի» վրացերէն պատկերագարդ շաբաթաթերթի  
խմբագրութիւնը բացեց Ռուսթաւելուն արձան կանգնեցնելու համար  
հանգանակութիւն, թէե դեռ չի որոշւած թէ ուր պիտի կանգնեցնեն։

Ռուսթաւելու և նրա կնոջ մասին պահպանւած է հետևեալ  
աւանդութիւնը։

Ըստ աւանդութեան Ռուսթաւելին եղել է գեղեցիկ, քաջ,  
մենամարտող և գիտուն մարդ. կինն էլ նոյնպէս նշանաւոր տոհ-  
մից մի գեղանի աղջիկ է եղել. վերջնոյս եղբայրը Ռուսթաւելու  
հասակակից ընկերն էր։ Շոթա Ռուսթաւելին ունեցել է մի արար  
ստրուկ Արդըլլա անունով։

Մի կիրակի օր Թամար թագուհին հրաւերք սարքեց իւր պա-  
լատում և, ի միջի այլ մատենագիրների և գիտնական անձերի,  
հրաւիրեց նաև «Ընձենաւորի» հեղինակին։ Թամարի խնդրանօք  
վերջինս սկսեց կարդալ «Ընձենաւորը»։ Ամենքը խորը զգածւեցին։  
Թամար թագուհին ինչան խորին շնորհակալութեան հանեց մատից  
իր մատանին և շնորհեց Ռուսթաւելուն։ Խնջոյքի ժամանակ էլ  
Թամարն էր առաջինը Ռուսթաւելու կենաց խմողը։

Այդպիսի ուրախ արամադրութեան ներքոյ էր Շոթան, երբ  
ծառաներից մինը մոտաւ և յայտնեց, որ կանչում են նրան։ Ռուս-  
թաւելին գուրս գնալով նկատեց մի գեղեցիկ զրահաւորւոծ երի-  
տասարդ ձիաւոր։ Վցի երիսասարդը մօտեղաւ Ռուսթաւելուն և ասաց։

—Դու այստեղ ես քէփ անում։ իսկ կինը՝ ուրիշի հետո։

Ռուսթաւելին ընկաւ մտածման մէջ և չէր խմանում ինչ  
անէր. նա չկարողացաւ ճանաչել համբաւաբերին, ուստի բացատրու-  
թիւն պահանջեց։

—Հետեւիր ինձ և կիմանաս ինչ եմ ասում։ Շոթան մնաս  
բարեւ ասելով պալատականներին և հիւրերին, հետևեց անծանօթին։  
Վերջինս Ռուսթաւելուն տարաւ նրա տուն և ասաց։

—Տես ինչ է կատարւում և լսիր ինչ որ խօսւում է։

Ռուսթաւելին ակամացնայեց և ինչ տեսաւ... իրանց ստրուկ Արդըլ-

լան իւր կնոջ հետ պառկած... Ռուսթաւելու արիւնը պղտորւեց և չը կամենում իւր լսածին ու տեսածին հաւատալ: Նա յետ նայեց, բայց երիտասարդին այլ ևս չգոտաւ, ուստի շուռ եկաւ և քայլե՞ն ուղղեց գէպի դաշտ. ճանապարհին նա մտածում էր.

«Մի՛թէ ամբողջ Վրաստանում հոչակ վայելող մարդուց նա գերադասեց մի սև արար ստրկին. մի՛թէ ինքը չէր պատճառը, որ ես խաբեցի ինձ համար մեռնող օրիորդին. երանի թէ անծանօթը ինձ ցոյց չտար այս բոլորը: Այսպիսի մատաժունքների մէջ ընկդմած նա քաղաքից դուրս պատահեց անծանօթին. վերջինս տասց.

— Շոթա, ինչպէս ես հաւանում կնոջի:

Այս խօսքերի վրաց Ռուսթաւելին վառւեց որպէս բոց, հանեց դաշոյնը, խրեց երիտասարդի կուրծքը, ասելով.

— Գու ես այս ամենի պատճառը:

— Սիրելի Շոթա, ասաց կիսամեռ երիտասարդը, երանի էի տալիս ոտներիդ տակ մեռնելու, և Աստած ինչիրքս չմերժեց:

Խեղճի լեզուն փորն ընկաւ բանելով Ռուսթաւելու ծնկներից: Ռուսթաւելին, լսելով ծանօթ ձայնը, վրաց ընկաւ, բաց արեց նրա կուրծքը և ապշած յետ կանգնեց... Նա սպանեց իւր նախկին նշանածին: Նա նշմարեց նրա մատին իւր տւած մատանին: Գրիեց աղջկան ու այլ ևս տեղիցը չէր շարժւում, կարծես թէ ասում էր—սրանից յետոյ լաւ է մեռնել քան թէ ապրել:

Աղջկան սպանելուց յետոյ մի անգամ մեր հերոսը խնճոյքի հրաւիրեց Թամար թագուհուն և այլ մեծամեծներին: Խճնոյքից յետոյ ամենքն էլ գուրս գնացին մի մեծ հրապարակ, ձիարշաւ սարքեցին, ուր միշտ յաղթանակը Ռուսթաւելն էր տանում: Վերջը Ռուսթաւելին դարձաւ Թամարին, ասելով.

Պէտքակմն եմ, բան արժե՞մ թէ չէ:

Թամար թագուհին պատասխանեց. քո հատը չունիմ ամբողջ Վրաստանում:

— Պէմքի գծագրութեամբ, կամ խելքով, բնաւորութեամբ ու վարք ու բարքով ուրիշից խօ պակաս չիմ:

Ո՛չ, միաբերան կանչեցին ամենքը. քո ամեն բանն էլ գովելի. է

— Ուրեմն եթէ ինձ նման մարդու կինը անհաւատարիմ գոն-

կ գէսլի իւր ամուսինը և նրան մի արաբի հետ փոխի, այդ տեսակ կնոջը ի՞նչ պէտք է անել:

Ռուսթաւելու կինը և աներոջ որդին սաստիկ կարմրեցին:

—Անմիջապէս պիտի բաժանել և ուրիշի հետ պատկել, հրամայեց թագուհին:

—Իսկ եթէ մարդը սպանել է իւր կնոջ անհաւատարմութիւնը ցոյց տւած անձին, նորան ի՞նչ անել:

—Սպանողը պէտք է ապաշխարի. պատասխանեց թագուհին:

—Սպանողը ես եմ և ինձ անհաւատարիմը իմ կինն է:

Այս ասելով նա ձին հեծաւ ու անյայտացաւ և, ըստ աւանդութեան, զնաց Երուսաղէմ ճգնելու:

Ռուսթաւելու աներձագը չէր ուզում հաւատալ այս բոլորին, ուստի հետամուտ եղաւ իւր քրոջը: Մի անգամ իրօք նա պատահեց քրոջը արաբի հետ նոյն անկողնում և լսեց հետևեալը.

—Ո՞չ, ես քեզանից չեմ բաժանելի, եթէ դու մինչեւ անգամ իջնես դժոխք, ասում էր կինը:

Եղբայրը թռոցից արաբի գլուխը սրով և, կախելով քրոջ պարանոցից, ասաց. չիր կամենում գրանից բաժանել, ահա յափառեան ման ածա հետդ:

Ինչպէս պատմութիւնից ընթերցողն էլ կ'եզրափակի, Աւթանդիլի տիպը զուտ արևելեան քրիստոնէական ասպետի տիպն է, որ չետ չի մնում արևեմտեան Ռուլանդ'ներից և Տանկրէդ'ներից. իսկ ծարիկիլի տիպը՝ մահմեդական վայրենի ասիացու, որ չնայած քաջութեան՝ անսանձ է իւր կրքերում: իսկ հերոսուհիներից նեստանը զուտ հարեմական տիպ է. նա միշտ փակ է և միշտ կրաւորական դեր է խաղում: Թինաթինը, ընդհակառակը, ազատ գործում է, դատողութիւններ է տալիս, հաւատարիմ է սիրոյն և համարեաթէ եւրոպական կնոջ տիպ է ներկայացնում:

Այդ տեղեկութիւնների համար մեղ աղքիւր ծառացն են.

1) Նոթա Ռուսթաւելու «Ընձենաւորը» 1887-ի (վեցերորդ բարեփոխած տպագրութիւն) հրատար. Թաւարթքելիձէի, Օզուրգէթ, և 1893-ի հրատարակութիւնները:

2) Զ. Մթածմինուկելի՞ի «Շոթա Խուսթաւելի» վրացերէն բրոցիւրը, ուր կենսագրական և մատենախօսական տեղեկութիւններ կան:

3) Անտօն Փուրցելաձէ. «Շուսթաւելի» և նորա կինը Աւանդութիւննա:

4) Ն. Գուշակ. «Օ ճարչով կօյք Ռուսական գասախօսութիւններ», տպած 1884 թւին:

5) Գ. Եօսելիանի «Ընձենաւորը» պատմածքը: Այս վերջին գրւածքը մեր ձեռքն ընկաւ, երբ սոյն աշխատութիւնը արդիւ պատրաստ էր. զանց չենք առել սակայն մեր այս գրութիւնը համեմատել այդ գրւածքի հետ:

---

# ԲԱՄԲԱԿԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

Երևանը յայտնի է ամբողջ Կովկասում, որպէս մի ամենաբերրի և արդիւնաւէտ նահանգ, որը, շնորհիւ իւր արգաւանդ հողի և տաք կլիմայի, բուսցնում է հացահատիկներ, բամբակ, խաղող, բրինձ, ծխախոտ, ձիթապտուղներ (գեօրչակ, քնջութ, կտւահատ), շերամ, ծառապտուղներ, բանջարեղին, սեխ, ձմերուկ, վարունկ և պյու, և այլն. սակայն, չնացած այս բոլորին, Երևանեան նահանգի ժողովուրդը, մանաւանդ սարհարթերում, ուր դաշտացին բերքերը չն բուսնում, աննշան բացառութեամբ չքաւորութեան մէջ է գտնուում. նա տնտեսապէս քայքայման հասած՝ նրա նաև մուաւոր և հասարակական կեանքը ոչ մի մսիթարական կողմ չի ներկայացնում: Այս հանգամանքը, ի հարկ է, ունի իւր իսկական պատճառները, որնց վերայ մի փոքր պիտի կանդ առնենք:

Մի ժողովուրդ, երբ թողնում է իւր նախնական սակաւապետ կենցաղը և սկսում է ապրել բազմածախք նոր սկահանջներով, մի- ևնոյն ժամանակ իւր արդիւնաբերութեան, պարապմունքի, այլ խօսքով՝ եկամուտների մէջ ոչ մի փոփոխութիւն չմոցնելով, այդ- պիսի ժողովուրդը բնականաբար սկսում է տնտեսապէս ընկնել, աս- տիճանաբար քայքայել մինչեւ չքաւորութիւնը:

Ահա այսպիսի պայմանների մէջ է գտնուում մեր ժողովուրդը: Նա թողել է արդէն այն շրջանը, երբ իր բոլոր պիտոյքները ննին էր հոգում, երբ իր պատրաստած տրեխոն էր հագնում, իր կիոջ դործած գուլպաները մաշում, նոյն իսկ իր ձեռքով պատրաս- տած և զանազան գոյնի ներկած կտաւի և շալերի հագուստն էր

կրում և մինչև անդամ նաւթի տեղ, որպէս վառելանիւթ, իր ճըմ-  
լած կտւահատի ձեթն էր բանեցնում. բայց այժմ՝ նրա կեանքը  
փոխւել է. նա այժմ ապրում է ճիշտ այնպէս, ինչպէս բազաքա-  
ցին. սկսած հագուստից մինչև տան վերջին պիտոյքը փողով շու-  
կայից է գնում. Խուսաստանի գործարաններում պատրաստած  
գործածներին, վայտից ու զանազան նիւթերից շինուած գոր-  
ծիքներին ու խաղալիքներին էլ փող է վճարում, տուն տանում.  
մինչդեռ նա այսօր այնքան հող է մշակում և գուցէ գեռ աւելի  
քիչ, որքան անցեալում, և այնքան եկամուտ ստանում, որքան տա-  
րիներ առաջ, կեանքի սակաւապետ շրջանում Եց ասելով, ի հարիէ  
մենք չենք ցանկանում, որ մեր ժողովուրդը շարունակէր մնալ իր  
նախնական դրութեան մէջ. բոլորովին ոչ. այդ ոչ մեր ցանկու-  
թիւնից է կախւած և ոչ էլ պատահական հանգամանքներից, այլ  
այդ պիրիօդներից անցնելը, ինչպէս ամեն մի ժողովրդի, այնպէս էլ  
մեր ժողովրդի համար մի բնական ընթացք էր և նա շուտ թէ  
ուշ ներկայ պայմանների շրջանը պիտի թեակուսէր. սակայն կեան-  
քի փոփոխութիւնը չէ յաջորդել իր բոլոր կողմերով ներդաշնակ-  
օրէն. և մեր երկիրը—Կովկասը—մէծամեծ կարիքների և նորանոր  
պահանջների շրջանը մտնելով՝ այդ կարիքները ինքը չի կա-  
րողացել հոգալ, պատրաստել, արդիւնաբերել, այլ ամեն բան դրոից  
է եկել, օտարն է պատրաստել և մեզ վրայ վաճառել դրամով.  
այդ պատճառով մեր գրամը գուրս է գնացել և մեր ժողովուրդը  
աւելի շատ գնելով քան վաճառելով՝ աղքատացել է:

Օրինակ. մեր երկիրը հարուստ է բերքերով, բայց մենք այդ  
բերքերից չենք կարողանում օգտուել այն չափով, ինչ չափով որ  
կարելի էր: Բերքերի մի քանի տեսակները, ինչպէս են ծառա-  
պտուղները, խաղողը, սեխը, ձմերուկը, բրինձը չենք կարողանում  
արտահանել, որովհետեւ երկաթուղի չկայ, իսկ սալլերի միջոցով  
հարիւրաւոր վերստեր տեղափոխելը թէ թանկ կը նստէր և թէ  
կը Փշանար. այդ պատճառով անտեղի նշին գներով սպառում է  
տեղնուտեղը—մեր ժողովրդի մէջ: Հացահատիկներ, օղին, գինին  
նոյնպէս ճանապարհների անյարմարութեան պատճառով չեն արտա-  
հանում, և եթէ արտահանում էլ են երբեմն, վաճառքից շատ  
անշան չափով է շահուում վաճառւողը ծախքերի մէծութեան

պատճառով։ Այսպէս, ուրեմն, չնայած որ Երևանի նահանգը հարուստ է բերքերով, բայց և այնպէս նրա ժողովուրդը աղքատ է, անտեսապէս ընկած, որպէսիւմ այդ բերքերը չեն արտահանում, դրամի չեն վերածում։ Բամբակն է գլխաւոր բերքը, որ արտահանում է դէսլի Ռուսաստան, շատ ու քիչ դրամ ներս բերում այդ նահանգը։

Առ այժմ մեր խօսքը լինելու է յատկապէս բամբակի առևտրի վրա, որը կենտրոնացած է գլխաւորապէս Երևանում։ Տեսնենք թէ այդ առևտուրը ինչպէս էր առաջ և ինչպէս է նա ներկայումն, և թէ տեղացիք ինչ դիրք ունեին այդ գործում առաջ։

Բամբակի առևտուրը ամբողջապէս տեղացիների—Երևանցի, գլխաւորապէս Ագուլիցի, վաճառականների ձեռքումն էր գտնւում մինչև 1886 թւականը, երբ առաջին ան խամ յայտնեց Մոսկվայի Կարզինկին Փիրմայի ներկացացուցիչը։ Ամբողջ նահանգի բերքը, մինչև այդ ժամանակի, բերւում էր Երևանի հրապարակը և այդտեղ էլ վաճառւում էր օրւայ մազանով (գին)։ Բայց Ասուած մազանդա համարէր։ Մազանդա ասելով, այն ժամանակ, պէտք էր հասկանալ վաճառականի ցանկութիւնը, քմահաճոյքը... մինչդեռ այսօր մազանդա ասելով հասկացում է այն հաստատուն գինը, որը կախւած է Մոսկվայում եղած գնից։ Յանկարծ մէկէլ կը տեսնէիք, ի հարիէ այն ժամանակի, բոլոր գնողները խօսքները մէկ արեցին և արհեստական շանապարհով բամբակի գինը իջեցրին մի այնպիսի աստիճանի, որը ոչ մի կերպ չէր համապատասխանում Մոսկվայում եղած գնին։ այդպիսով զիւղացին տուժում էր. մէկէլ կը տեսնէիք այդ դաշնակցած գնողների յարաբերութիւնները յանկարծ լարեցին, մէկի գրժումը խլուսում առաջացրեց ամենքի մէջ և մէկը միւսի ջիգրու սկսեցին բամբակի գինը բարձրացնել Մոսկվայում եղած գնից էլ վեր, ի հարկէ վնասելով միմեանց։ և այսպէս շարունակաբար։ Բացի այս, դրանց առևտուի մէջ կար մի այլ անօրինակ սովորութիւն, փող բաժանելը։ Բամբակ դուրս գալուց գեռ ամիսներ առաջ մեր վաճառականը, կամ աւելի ճիշտ նրա մարդը —միջնորդը—գիւղացուն փող էր առաջարկում այն պայմանով, որ

բամբակի գուրս գալուս՝ վոխարէնը բամբակի վճարի, բայց  
ի՞նչ զնով. բամբակ տալու օրւայ մազանդիլ, ինչպէս առ-  
հասարակ ընդունւած է, կամ գուցէ փողին նաև առկոսիք  
հաշւելով. ոչ բոլորովին, ոչ այս և ոչ այն. այլ փողը վճարելու  
բովին զնահասում էին բամբակի, և որովհետև գիւղացին միշտ  
փողի կարիքի մէջ է, մանաւանդ հարկահանութիւնների ժամանակի  
այդ պատճառով գիւղացու այդ նեղ գրութիւնից օգտաելով, խեղ-  
դում էին գիւղացուն և կիսագին խօսում բամբակը: Օրինակ 5  
ոռութիւնի ստանալով գիւղացին պարտաւորում էր աշնան մէկ փութ  
բամբակ վճարնը, թէև այդ օրը բամբակի գինը շուկացում 10  
ոռութիւնի լինէր...

Գալով բուն վաճառքին, այն է կշռելուն և փողը վճարելուն,  
այդ գէսկըում նոյնալէս մեր վաճառականը իր փայն ու բաժինը պիտի  
ունենար. մի աչքի շարժումով բամբակի հակի մէջ մի որոշ քանակու-  
թեամբ փունտեր կուլ կ'երթացին. հաշւի ժամանակ մի չնչին պատ-  
ճառ—և ահա մանէթներ կը զեղչւէին. յաճախ մի երկուհակը դա-  
տարկելուց յետոց վատութիւնը պատճառ բերելով յետ էին տալիս  
ապրանքը: Այդ գէսկըում գիւղացու գրութիւնը ծանր էր. յետ տւած  
ապրանքին ոչ ոք մօտ չէր գնալ, և գիւղացին ստիպւած խեղդուում  
էր, 8 ոռութիւն վաճառւած բամբակը 6 ոռութիւն էր հաշւելուն և  
վճարւում: Պէտք է նկատած որ այդ տղեղ միջոցը վերջին տարի  
ները կրկին սովորութեան կարգն է անցել և այդ կերպ վար-  
ւում են ոչ միայն գիւղացու հետ այլ և քաղաքացի մանր վաճառա-  
կանների հետ: Այս—վաճառքի վերաբերմամբ:

Այժմ զանք արտահանութեան խնդրին և տեսնենք թէ տե-  
ղացի վաճառականը ի՞նչ կերպ էր վարւում իր գնած բամբակի  
հետ և ի՞նչ միջոցների էր զիմում Մոսկվայում յաջող կերպով վա-  
ճառելու համար:

Նախ և առաջ տեղացի վաճառականը բամբակը տեսակների  
չէր բաժանում, լաւը վատից չէր ջոկում: մինչև անդամ, շատ ժա-  
մանակ, տեղական զարաղողաւ կոչւած և ամերիկական սերմերի  
բամբակները խառը կապում և ինչպէս պատահում էր՝ այնպէս էլ վեր-  
ցնում էր և Մոսկվայի շուկաները ուղարկում: Այդ կերպ եթէ գիւղա-  
ցին էլ էր վարւում, այդ գետ նրա վերաբերմամբ ներկիլի էր, ի նկատի

ունենալով հանգամանքները. որովհետեւ ունենալով մի քանի փոքր կտոր հողեր, այն էլ միմեանցից հեռու ընկած, գիւղացին վերցնում էր մի կտոր հողը տեղական, իսկ միւս տեղը ամերիկական սերմը ցանում. իսկ ժողովելու ժամանակ յաճախ պատահում է, որ մի շատ սովորական բան է, որ գիւղացին չի ունենում մի քանի տոպարաներ (բարդաններ) և ստուպւած վերցնում է ամեն տեսակից, խառը բերում է շուկա և վաճառում. բայց միթէ այդ միևնոցն զործողութիւնը ներելի էր այն վաճառականին, որը առեւտուր էր անում, հազարաւոր հակներ բամբակ էր գնում և միևնոյն ասիական սիստեմով, ինչպէս խառը գնում՝ այնպէս էլ ի վաճառ էր հանում, որի ժամանակ յաճախ խայտառակ դէպքեր էին առաջ գալիս գնողի և վաճառողի մէջ: Օրինակ. ինչ մէջք ունի գնողը, երբ նրա ցոյց տւած լաւ նմուշով գնած բամբակի հակների միջից զուրս էր գալիս ամենավատ տեսակը, ամենացած ապրանքը. այդպիսի դէպքերում, ի հարկ է, գնողը յետ էր կանգնում վաճառքից, բամբակը ամիսներով վերընկած էր մնում, որտէո յետ տւած ապրանք. իսկ վերջը վաճառում էր միմիայն ամենացած գնով վատ տեսակի հետ միասին նաև լաւը: Այդպիսով մեր խելօք վաճառականը, շնորհիւ իր անկանոն զործողութիւնների, ոչ միայն չէր օգտում, այլ և փառաւոր վնասներ էր կրում:

Տեղացի վաճառականը նոյնպէս չէր կարողանում շահւել հակների փոքր կապելու յարմար միջոցից, ինչպէս այժմ են շահւում: Բամբակը սեղմելու համար գործ էին ածում հին սիստեմի ձեռքի սեղմիչներ, որոնց առանցքը պտըտելու համար գործում էին երկոմշակներ, այն էլ մի այնպիսի գանդաղկոտութեամբ, որ օրական հազիւ կարողանում էին կապել երկու երեք տասնեակ հակներ. և որովհետեւ երկու մարդու ոյժը շատ չնչին էր մի քանի ձիերի և շոքի ոյժերի համեմատութեամբ, այդ պատճառով նրանց կտպած հակները, թոյլ սեղմելով, ունենում էին մեծ ծաւալ, պարունակելով իրենց մէջ միայն 7—8 փութ բամբակ. այնպէս որ այդ ձեխի կապած հակը ներկայացնում էր մի շարք անյարմարութիւններ. մէկ՝ որ կապելու համար շատ էր վճարւում, ի նկատի ունենալով սղմած բամբակի փոքր քանակութիւնը, երկրորդ՝ կապելու համար պահանջւում էր շատ կտաւ. (ըեւենդոկ) և թոկ, և երրորդ՝

ճանապարհածակաքը շատ թանկ էր նստում, չնորհիւ հակի բռնած մեծ տարածութեան, մանաւանդ երկաթուղիներում, որտեղ շատ թեթև կշիռ ունեցող ապրանքներից վերցւում է ծաւալի համապատասխան ճանապարհածախք։ Այս հանգամանքը նոյնպէս գնի վրայ ունենում էր իր ներդործութիւնը, այնպէս որ տեղացի վաճառականը, չնորհիւ իր անկանոն առևտրական գործողութիւնների, թէ տեսակների վերսծելու վերաբերմամբ և թէ հակներ կապելու և ճանապարհելու գործում, աւելի շատ վաստում էր քան օգտառմ, վնասելով նաև մեր երկրի այդ բերքին։ չէ որ մեր բամբակի այդպիսի ծանր պայմանների միջից անցնելով՝ չէր կարողանում Մոսկւայում Ամերիկայի բամբակի հետ մրցել, չնայած որ վերջին աւելի հեռաւոր երկրից էր գալիս և մաքսահարկի էր ենթարկած։

Ահա, այսպիսի պայմանների մէջ էր գտնուում բամբակի առևտուրը Երևանեան նահանգում, երբ 1886 թւին, բամբակի առևտրի սեղոնի սկզբում, սեպտեմբեր թէ հոկտեմբեր ամսի մէջ առաջին անգամ ոտք է գնում Երևան Մոսկւայի յայտնի Փիրմայիկարգինկինի—ներկայացուցիչը, ի մեծ զարմանս մէր տեղացի վաճառականների։ Այդ օրւանից հանգամանքները բոլորովին փոխում են, և բամբակի առևտուրը մոնում է մի նոր Փաղիսի մէջ։

Յաջորդ տարին—1887 թիւն—Կարգինկին Փիրման ունենում է իր հետևողները. նրա վրա աւելանում են երկու նոր Փիրմաներ, մէկը կրկին Մոսկւայից—Ալէքսէեւ, —իսկ միւսը Լոձ քաղաքից—Պողնանսկի։ Այսուհետեւ տարեցտարի նրանց թիւը աւելանում է յաջորդաբար, իսկ մեր տեղացի վաճառականների թիւը աստիճանաբար ոլակասում։

Օտար Փիրմանների յայտնելով՝ բամբակի առևտուրը կատարելապէս կերպարանափոխուում է։ Նախ գաւառական մի քանի կենտրոններում բացւում են առևտրական տների ճիւղեր. մնացեալ տեղերում շրջիկ մարդիկ են ողարկւում կոմիսիոնով բամբակ գնելու իսկ մազանդան (զին) թէ Երևանի շուկայում և թէ գաւառներու որոշ սիստեմով կամ բարձրանում և կամ իջնում է համապատասխան Մոսկւայում եղած գների։ Բացի այս, սկզբի տարիններում օտար Փիրմանները կշեռքի և հաշիւների մէջ ցոյց տուին անպայման շիուա-

կութիւն, և այս հանգամանքը մի այնպիսի ազդեցութիւն ունեցաւ նրանց բարեխղճութեան մասին տարածւած լուրերի վրա, որ գիւղացի բամբակավաճառը աւելի շատ մի բան էլ մազանդից պակասով տալիս էր ֆիրմաներից մէկն ու մէկին, բան թէ տեղացի վաճառականին, միայն թէ ազատ լինէր այն զրկանքներից, որոնց ենթակայ էր նախկին տարիներում: Արքան էլ օտարների այս վարժունքը ժամանակաւոր մի խաղ լինէր՝ ժողովրդականութիւն ձեռք բերելուց յետոց գիւրին կերպով գջլելու: մի քանի ձեւերը գործածութեան մէջ մոցնելու համար, բայց և այնպէս նա ունեցաւ իր բարերար ազդեցութիւնը շուկայի վրա: Կամայ ակամաց տեղացի վաճառականը պիտի հետեւէր ֆիրմաների գործողութիւններին, իր հաշվների մէջ նոյնպէս մոցնելով շիտակութիւն, թող թէ այդ լինէր զիղացուն գրաւելու համար:

Երրորդ՝ օտարները հէնց առաջին օրից իրենց առևտորի մէջ մոցրին տեսակների բաժանման սիստեմը: Միմեանցից ջոկում էին ոչ միայն տեղական սերմի բամբակը ամերիկականից, այլ և իւրաքանչիւրը վեր էին ածում՝ սոորաբաժանումների՝ առաջին և երկրորդ տեսակի՝ լաւն ու վատը ջոկելով: Այս հանգամանքը ոչ միայն դիւրութիւն էր տալիս վաճառելու ժամանակ դժւարութիւնների հնանդիսիկ, այլ և ազդեց բամբակի մշակութեան վրա: Գիւղացին փորձով տեսաւ որ մաքուր բամբակը լաւ գնով է վաճառւում, մասնաւոր ամերիկական տեսակը. բնականաբար նա սկսեց թողնել աստիճանաբար տեղական սերմը և ցանել ամերիկականը, որ լաւ խտկութիւն ունենալուց և բարձր գնով վաճառելուց զատ, աւելի շուտ է հասնում քան տեղականը և հեշտութեամբ էլ հաւաքւում բնից: Ամերիկական տեսակի տարածման հարցում չպէտք է ուրանալ նաև այն ծառալցութիւնը, որ արեցին Ալեքսէլ և Կարզինկին ֆիրմաները Ամերիկայից սերմ բերել տալով և ծրիաբար բաժանելով գիւղացիներին միայն այն բարյական պարագը գնելով Կանց վրա, որ եղած բամբակը իրենց վաճառեն:

Եւ երրորդ՝ օտար ֆիրմաները իրենց հետ բերին նոր սիստեմի ծիաքարը եւ շոքեշարժ սեղմիշներ, որոնք մեծ արագութեամբ, այն է օրական հարիւրից աւելի հակներ կապելով՝ գուրս են բերում ժաւալով աւելի փոքր հակներ, պարունակելով իրենց մէջ 13 փթից էլ

աւելի բամբակ, և այս միջոցով տնտեսած վաստակը գուցէ հաւասար լինէր տեղացի վաճառականի տարեկան ամբողջ վաստակին: Այն գէպքում, երբ 7—8 փութ բամբակը կապելու համար հարկաւոր էր 10—12 արշին կտաւ (բեւենդոկ) և 7—8 փունտ թոփ 2 բուբուց աւելի արժողութեամբ, ներկայ գէպքում այդչափ կտան հարկաւորւում է 13 փութ բամբակին, իսկ թոկի տեղ գործ են ածւում երկաթի թելեր, որոնք անհամեմատ աւելի արժան են և ամուր քան թոկը. այսպիսով 13 փթանոց հակի մէջ տնտեսուում է ամենաքիչը 1 ր. 50 կոպ. և եթէ ընդունենք որ այդ ձևի հակը առնազը 50 կ. պակաս ճանապարհածախս է վերցնում քան նախկինը: Ի նկատի ունենալով առաջինի բռնած տեղի փոքրութիւնը, այն ժամանակ կը տեսնենք որ օտարը մի հակի մէջ տնտեսում է 2 ռուբլի. 5000 հակ բամբակ գնած գէպքում տնտեսած կը լինէր 10.000 ռուբլի, մի գումար որով գոհ կը լինէր տեղացի վաճառականը իր մի տարւայ ամբողջ առևտորի շրջանառութեան ընթացքում: Դեռ չը հաշւած, որ ծանր հակները կապելու համար աւելի քիչ վարձ էր հարկաւոր քան փոքրը, իհարկէ երկուսում սպարունակած քանակութիւնների համեմատութեամբ:

Այս բոլորից զատ, օտար վիրմաները, որքան կարելի է շատ քանակութեամբ բամբակ գնելու նպատակով, աւելի ճիշտը՝ բամբակ մշակող գիւղացուն իրենց հետ կապելու համար, զիմեցին այնպիսի խելացի միջոցների, որ տեղացի վաճառականի մոքովն անգամ չէր անցնիլ: Այդ բամբակի մաքրելու մեքենաները (ջրիղներ) բերելու և ժողովրդին փող բաժանելու միտքն էր: Ֆիրմաները աչժըմ զանազան կենտրոններում տանից աւելի այդպիսի մեքենաներուն ունին, որոնք բացի այն, որ օգուտ են բերելու բամբակ մաքրելու վարձով, այլ և այդ մեքենաներում մաքրած բոլոր բամբակը գնում է ինքը մեքենատերը, թէև մի փոքր պակաս գնով, որովհետեւ զիւղացին ուրիշ տեղեր տանելու ծախքից և չարչարանքներից ազատ մնալու պատճառով՝ մի քան էլ պակասով կը համաձայնէր տալ տեղն ու տեղը: Արգեօք երկար տարիների ընթացքում տեղացի վաճառականը մտածեց այդ բանն անելու: Փող ըաժանելը նոյնպէս նպատակայարմար միջոց էր. իւրաքանչիւր ֆիրմա իր մարդկանց միջոցով փող է բաժանում գիւղացիներին, այն պայմանով որ բամ-

բակը օրւայ մազանդով ընդունի իր փողի տեղ. գիւղացին մեծ ուրախութեամբ ամառը կարիք ունեցած ժամանակը փող է վերացնում, իսկ աշնան բամբակ է վճարում փոխարէնը, այն էլ օրւայ գնով, այնպէս որ գիւղացին ազատում է վաշխառուից. իսկ այսպիսի մի հանգամանք քիչ է նպաստում բամբակի առևտուրը օտարների ձեռքը կենարոնացնելուն:

Ահա օտարը այսպիսի խելացի միջոցներով սկսեց իր առետուրը Երևանում, նորա յայտնելու հէնց առաջին օրւանից, որով և ամենածանր հարւած հասցրեց մեր վաճառական դասին:

Վերջինը կամաց տեղի տւեց օտարներին: Խելացի և օրինաւոր գործողութիւնը մէկ կողմից, դրամագլուխ մեծութիւնը միւս կողմից՝ տեղացի խղճուկ փոքր դրամատէր վաճառականին դուրս քշեցին հրապարակից: Խոչ կարող էր անել տեղացին իր մի երիտ տասնեակ հազար ռուբլիներով, երբ օտարը հրապարակ էր եկել մի քանի հարիւր հազարներով: Տեղացի վաճառականին մնում էր նաև՝ բոլոր գործողութիւնների մէջ հետեւ խելացի օրինակներին և երկրորդ՝ խմբակցական ճանապարհով մեծ դրամագլուխ մտցնել առևտուրի մէջ. այդ էր պահանջում գոնէ տեղացիների շահը օտարների գէմ մրցելու համար: Բայց տեղացին, հայը, ընդունակ է արդեօք մի ուժեղ ընկերութիւն կազմելու և միացած ուժերով առևտուր սկսելու: Փորձը միշտ բացասական պատասխան է տւել այդ հարցին: Մեզանում հէնց որ ընկերութիւն է կազմւում՝ ամէն մէկը իր մատն է ուզում խառնել գործի մէջ, իւրաքանչիւրը ձըգտում է գործի գլուխ անցնել և այդպիսով առաջ է գալիս տարածայնութիւն և քայլքայում: Այդպիսի վախճան ունեցաւ Երևանում գիւնես օտարների յայտնելուց առաջ 10 հոգուց կազմւած առեւտրական ընկերութիւնը: Մի այդպիսի անաջող փորձից յետոց այլ ևս ոչ չհամարձակւեց մի նոր փորձ ևս անելու. և եղաւ այն ինչ որ անխուսափելի էր: Տեղացի վաճառականները շուտով քաշւեցին ասպարէզից, նրանց մի մասը բոլորովին չկաչ, միւս մասը գործակատարի և կամ միջնորդի գեր է կատարում օտար: Փիրմաների մօտ. միմիացն մի քանիսն են, զլիաւորապէս Ագուլցք որոնք, յարմարւելով հանգամանքներին, դեռ մինչև այսօր շարունակում են պահպանել իրենց գոյութիւնը: Բայց թէ վերջիններս

ինչ դեր են խաղում Երևանի՝ շուկայում կամ նրանց գնած բամբակը ամբողջի մը տոկոսն է կազմում վերջին տարիներում, դրա համար մենք կը դիմենք անմիջապէս պերճախօս թւերին։ Աւելի ճիշտ գաղափար կազմելու համար վերցնենք օտարների յայսնելու չորրորդ տարին և տեսնենք այդ տարում որքան բամբակ են գնել եկորները և որքան տեղացիները։ Թւերը բերում ենք մօտաւոր ճշտութեամբ և հաւաքած ենք անձնական ծանօթութեամբ գործի հետ։ 1890—91 թւի ձմեռաց սեղոնում—

### Օտարները գնեցին

Հակը հաշւած  $7\frac{1}{2}$ —8 փութ<sup>1)</sup>

Պողնանսակի . . . . .	16.000	հակ.	Բոլորը միասին 32.000 փոքր հակ կամ շուրջ 250.000 փութ:
Կարգինկին . . . . .	7.000	հակ.	
Ալքսէւ . . . . .	5.000	հակ.	
Չիթախեան (Թիֆլիսեցի)	3.000	հակ.	
Գիժքէրգ . . . . .	1.500	հակ.	

### Տեղացիները գնեցին

Գէորգեան եղբ. (Ագուլեցի) 3.000	հակ.	Բոլորը միասին 11.500 փոքր հակ կամ շուրջ 90.000 փութ:
Դուլգարեանց և ընկ. (Ագ.) 2.000	հակ.	
Աֆրիկեան (Երևանցի) . . . 1.500	հակ.	
Բեզլարեան և ընկ. (Ագուլ.) 1.000	հակ.	
Արզումանեան եղբ. (Պարսկ.) 1.000	հակ.	
Բարխուդարեանց (Ագ.), Մա- նուկեանց (Ագ.), Զանիքէկ- եանց (Երևան.) և ուրիշները 3.000	հակ.	

Խնչպէս ընթերցողը տեսնում է, 44.000 հակ բամբակից օտար-

<sup>1)</sup> Հակները իսկապէս ունենում էին  $7\frac{1}{2}$ —8 փութ ծանրութիւն, այդ 1890—91 թւին Կարգինկինի հակներն էին միայն շուրջ 13 փութ, այդ թւականից դէս մեծ հակներ կապելը (չնորհիւ ծխաշարժ կամ շոքեցարժ մեքենաների) դառաւ սովորական, Կարգինկինինը այդ տարի 3.500 կրկնակի մեծութեան հակներ էին, որոնք փոքր հակներով կը կաղմէին 7000 հակ։

ներւ գնեցին այդ տարին 32.500 հակ, իսկ բօլոր տեղացի վաճառականները միասին գնեցին միմիացն 11.500 հակ, այլ խօսքով՝ 26 տոկոսը։

Եթէ վերցնելու լինենք ներկայ տարւայ տեղեկութիւնները և թւանշանները՝ տարբերութիւնը աւելի էլ կը լինէր, որովհետեւ վերը առաջ բերւած տեղացի վաճառականներից մի քանիսն էլ արդէն հեռացել են ասպարէզիդ, առանց որ նոցա փոխարինող լինէր տեղացիներից։

---

Նկատողութիւն Խմբագրութեան։ Յօդւածի հեղինակը Երեւանի բամբակ գնողներին երկու կարգ է բաժանում—տեղացիների և օտարների. և տեղական շահերը պաշտպանելու գովելի զիստաւորութեամբ՝ ցաւելով է արձանագրում, որ «օտարները» դուրս են վանաել տեղացիներին» Երեւանի շուկայից։ Մենք, սակայն, չենք կարող այդ տեսակէտը պաշտպանել։ Յօդւածագրի ասած «օտարները» ոչ այլ ինչ են եթէ ոչ զործարանատէրեր, որնք բամբակ են գնել առաջիս միմիայն իրենց գործարանների համար։ Մինչդեռ յօդւածագրի յիշած տեղացիները» լոկ առուտուր անողներ են, որոնք բամբակ գնում են նոյն այդ «օտարներին» վաճառելու համար։ Առևտրականի գլխաւոր օգուտը կարելին չափ էժան գնելու մէջն է, ի վես գիւղացի-արդիւնաբերողի։ Հեռացնելով ասպարէզից այդ աւելորդ միջնորդներին՝ հնար ստեղծւեց գիւղացի-արդիւնաբերողի օգտին թողնել այն, ինչ որ առևտրականի գրաւանն էր մտնում։ Իսկ այդ օգուտը անհամեմատ աւելի կարևոր է, քան ագեղ հաճոյքը շուկայում մի քանի տասնեակ իրար միս ուտող և գիւղացուն վնասող տեղական» վաճառականներ տեսնելու։ Ոչինչ միիթարական բան չենք գտնիլ եթէ վաճառականները զործարանատէրերի գործակալներին դուրս վրանտէին։ Այդ գործում մի քայլ ևս դէպի առաջ արւած կը լինէր՝ միմիայն եթէ տեղական բամբակը գործ ածւէր տեղն ու տեղը—տեղական գործարանների մէջ, որ գեռ ևս չկան։

---

## ՌՈՒՍ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏՔԵՐԸ ԵՒ ՎԱՐԿԸ

(Ճորտերի ազատութեան 35 ամեակի առիթով):

### ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Երբ որ փետրւարի 19-ին 1861 թ. ճորտութեան վերացման օրէնսդրութիւնը լրց աշխարհ եկաւ, ամբողջ ոռւսաց ազգաբնակութիւնը ամենայն իրաւամբ սպասում էր, որ այդ ազատարար օրէնսդրութիւնը կը տար բարերար հասարակական և տնտեսական արդիւնքներ։ Ներկայ 1896 թւականին լրացաւ գիւղացիների ազատութեան 35 ամեակը. և լրտգրուական մամուլը զգացւած խօսքերով ողջունեց նորան։ Ոչ ոք չի կարող հերքել, որ գիւղացիների ազատութիւնը նախկին կաշկանդով և սարկացնող կապանքներից մեր զարու ամենամեծ սոցիալական դործերից մինն էր։

Գիւղացիները կազմելով մի առանձին անկախ գասակարգ՝ 1861 թւականից յետոյ սկսեցին անկախ իրանց հողերի վրայ տնտեսել։ Եւ իրանց աշխատանքի արդիւնքը պէտք է, հարկա, միայն իրանք վայելէին։ Բայց որպէս զի հողերը իրանց սեփականութիւնը դառնացին, գիւղացիները, համաձայն օրէնքի պահանջման, պէտք է նոցա որոշ պայմաններով և յայտնի ժամանակամիջոցում յետ գնէին<sup>1)</sup>։ Թէ որ աստիճան հողեր յետ գնելու դո-

<sup>1)</sup> Յայտնի է որ նախկին ճորտը (մինչ 1861 թ. պարտաւոր էր նողի սեփականատէր ազնւականին հողի բերքից մաս հանել և նորան պարտական էր որոշ ձրի ծառալութիւններից 1861 թ. օրէնքներով ազատւով ալով ալով պարտաւորութիւններից՝ ճորտ գիւղացին դառնում էր ազատ գիւղացի և հողի սեփականութեան իրաւունք էր ձեռք բերում. և միննի

ծը յաջող կերպով մինչ այսօր կատարւեց, այդ խնդիրը մեզ կը պարզեն սովորե առաջ բերած թւերը։ Պէտք է ասած, որ գիւղացիական տնտեսութեան բարգաւաճումը կախւած էր գլխաւորապէս հողեր յետ գնելու դիւրութիւնից։

1861 թ.-ից սկսած մինչ այսօր 35 տարւայ ժամանակամիջում Խուսիացի ժողովրդական տնտեսութեան այլ ճիւղերը արդիւնաբերական տեսակէտից համեմատապէս յառաջ են ընթացել, իսկ գիւղացիական տնտեսութիւնը սպասածին չափ յառաջդիմութիւն չարւ։ Արդարև 1861 թ.-ից յետոյ զիւղացին դարձաւ տնտեսապէս անկախ, վեցելելով իր աշխատանքի արդիւնքը անձամբ։ Նա սոցիալապէս իր նախկին տիրոջից անկախ դիրք ստացաւ։ Օրէնքի զորութեամբ ձեռք բերելով գոյութեան այսպիսի պայմաններ՝ գիւղացին հետևաբար պարտաւոր եղաւ այնուհետև պատասխանատու լինել իր տնտեսական գործունէութեան համար։ Խոկապէս գիւղացին, սոցիալապէս և տնտեսապէս անկախ դիրք ձեռք բերելով, որպէս զերն էլ ակնարկեցինք, պարտաւորեց իր հողը սեփականացնելու համար աստիճանաբար յետ դնել, այնպէս որ հէնց 1861 թ. օրէնքի երեալուն պէս՝ նա իր վրաց ծանր բեռն վերցրեց։ Դա այն ծանր բեռն է, որ գիւղացու ազատ տնտեսութեանը մեծամեծ խոչնդուներ է առաջ գնում և յետաձգում է ցանկալի յառաջդիմութիւնը երկրագործութեան մէջ։ Գիւղացին չի կարողանում իր պարտքը հեշտութեամբ վճարել, իսկ եթէ դժւար է վճարում, նա այլիս անկարող է լինում իր արդիւնքը լիովին վայելել և իր հողը արդիւնաւէտ դարձնել։

---

ժամանակ օրէնքը պարտաւորեցնում էր նախկին կալւածատիրոջ օրէնքով որոշած չափով հողաբաժին տալ ազատաւած գիւղացուն, բայց ոչ ձրիաբար, այլ օրէնքով որոշած զնով։ Ա. Էղ է որ կոչում է «հող յետ գնելու»— ԵՎԵԿՈՒՅԻ, գիրմաներէն Աblösung (նկատենք որ ճորտութիւն կար նաև գերմանական երկիներում, որ վերացւեց՝ սկսած 18-րդ դարու վերջերքից մինչև 1832 թւականը, իսկ Աւստրիայում մինչև 1848 թ.)։ Ա. Էղ յետ գնելը պարտադիր էր վիւղացու համար, որը հողի գինը պարտաւոր էր վճարել տուրքի ձեռով պետութեան զանձարանը, այնպէս որ կալւածատէրը հողի գինը, փոխանակ գիւղացուց ստանալու՝ պէտք է ստանար պետութեան գանձարանից։ Հողաբաժինները յետ գնելու գործողութիւնը կոչում է ԵՎԵԿՈՒՅԻ օպերացիա։ Ծան. Խմբ.

Ռուսաց լուրջ մամուլը այս խնդրով զբաղւելիս՝ բոլորովին արդարացի նկատում է, որ, աչքի առաջ ունենալով գիւղացիների արդի գրութիւնը, կարծես թէ 1861 թ.-ին շնորհնած ազատութիւնը, սպասածին հակառակ, բացասական հետևանքներ է ունեցել, թէև այդ ազատարար օրէնքը իր առաջադէմ բնաւորութեամբ անշուշտ բարերար նշան մկութիւն պէտք է ստանար գիւղացիների ապագայի համար: Ի հարկէ լոկ խօսքերով յայտնած ազդպիսի կարծիքը կատկածելի կը թւար, եթէ այդ վերոբերմամբ պերճախոս փաստերը մեզ օգնութեան չհասնէին վկաչելու, որ ուու մամուլի յայտնած այդ կարծիքը արդար է:

Երբ որ 1861 թ. օրէնսդրութիւնը յայտարարեց գիւղացիների ազատութիւնը, գիւղական ազգաբնակութիւնը կազմում էր 60 միլիոն հոգի, որոնք ստացան 134 միլիոն գեսեատին հող<sup>1)</sup>: Կւրաքանչիւր գիւղական ընտանիք բաղկացած է միջին թւով 4 մարդուց, այնպէս որ այն 60 միլիոն ազգաբնակութիւնը բաժանելով 4-ի վրայ, մենք կը ստանանք 15 միլիոն գիւղական գերդաստուն: Այս հաշվի համեմատ 134 միլիոն գեսեատին հողից պէտք է ընկնէր իւրաքանչիւր գիւղական գերդաստանի վրայ միջին թւով 9-ական գեսեատին հողաբաժին: Բայց յիշած 134 միլիոն գեսեատին հողից 96 միլիոնը ընկնում է 46 նահանգների վրայ, ուր 1861 թ.-ից սկսած 28 տարում յետ է դնւած զիւղացիներից ու աւելի քան  $1\frac{1}{2}/_0$ , այսինքն 658.000 գեսեատին, որոնցից  $\frac{1}{3}$ -ը անցել է արդէն օտար մասնաւոր ձեռքեր, (պարագերի պատճառով և այն) իսկ  $\frac{2}{3}$ -ը մնացել է զիւղացիների ձեռքում:

Արդէն այս վիճակագրական տեղեկութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ հողեր յետ գնելու գործը ինչ աստիճանի գանդաղ է լինելունում: Խնչ կայ զարմանալու ուրեմն, որ հողերի յետ գնելու առողքերը չվճարելուց գոյացան առաջանիկներ, որ նոյնն է թէ պարագերի զիւղացիների համար: Դեռ ևս ազատելուց առաջ 1860 թւականին յիշեալ նահանգների զիւղացիները պարտ էին տէրութեան գանձարանին 8 միլիոն ուուրլու ազատիկներ: Դոցա վրայ

<sup>1)</sup> Գեսեատինը հաւասար է 2400 քառակուսի սաժէնի կամ մատ 11.011 քառակուսի մէտրի:

ապա եկան բարդւեցին հողեր յետ գնելու տուրքի ապառիկները: 1870 թւականին յետ գնելու տուրքի ապառիկները 33 միլլիօն 400 հազար ռուբլի էին. 1880 թ. նոցա գումարն էր 46 միլլիօն 400 հազար ռուբլի: Այդ արդէն այնպիսի մի ծանր հանգամանք էր, դէպի որը անկարելի էր անուշագիր մնալ, առանց զոհելու գիւղացու ապագան: Կառավարութիւնը այդ ապառիկների խնդիրը լուծեց ողջակի իւր վրայ առնելով այդ պարտքը, կաչսերական երկու հրովարտակներով 1883 թ-ին, որոնք վերացրին գիւղացիներից 47 միլլիօն ռուբլի ապառիկը: Գիւղացիք, ի հարկ է, պէտք է շարունակին այնուհետև վճարել հողերի զնի մնացածը: Եւ ինչ? չնայած անցեալի պարտքի ջնջման՝ գիւղացիների յետ զնման տուրքերի վճարումը շարունակեց անկանոն կերպով կատարել, այնպէս որ ապառիկները հասնում էին 1893 թւականին 127 միլլիօն 300 հաղար ռուբլու: Եթէ վերջին դումարի հետ միացնենք վերացրած 47 միլլիօնը, կը ստացւի 174 միլլիօն ռուբլի ապառիկ, որ ասել է թէ 33 տարւաց ընթացքում գիւղացիների ապառիկները բարձրացել են աւելի քան 20 անգամ:

Բացի յետ գնելու առ ըքից, գիւղացիները, ինչպէս և հասկանալի է, վճարելու ունին նաև պետական և այլ տեսակ հարկեր, որ զնում նոցա վրաց զեմքաւօները և համայնքները զանազան կարիքների համար, այդ տուրքերի մի որոշ մասը յատկացնուում է այն բանին որ Խուսիայում կոչում է Աքոծովյաց կանոնական կայութեա, որ մի գրամագրութիւն է, որով նահանգների վարչութիւնները գիւղացիներին ոգնութեան են հասնում նոցա ընդհանուր մեծ կարիքների ժամանակ. մէկ էլ այդ տուրքերը ծառայում են հացի շաեմարաններ պահպանելուն Այդ բոլոր տեսակ գիւղացիական հարկերից դոյցած ապահովեցները կազմում էին Խուսիայի Ներքին 46 նահանգներում 1893 թ-ին. 336 միլիոն ռուբլի! Եթէ ի նկատ առնենք որ գիւղացիական արական ազգաբնակութիւնը այդ նոյն 46 նահանգներում բաղկացած էր 32 միլիոն հոգուց, կը տեսնենք ո՞յ ամեն ազամարդ ծանրաբեռնաւած էր միջին թւով 10 ռուբլի հարկացին ապահովութեան

Այսպիսով մի ընտանիք ունէր 10—20—30—40—50 ռուբլի ապահովակ, նայած որքան արական հոգի ունէր <sup>1)</sup>):

Ինչպէս տեսնում ենք, ուսւ գիւղացին խոշոր պարագերի մէջ է գտնուում, այնպիսի ծանր տարագերի մէջ, որոնք արդարեւ ու միայն խանգարում և քայքացում են չարքաշ գիւղացու տնտեսութիւնը, այլ ուղղակի նսեմացն ում են երկրագործ ժողովրդի այն մեծ դերը, որ նա կոչւած է կատարելու ամբողջ եւրոպական տնտեսութեան մէջ: Ռուսիան հողագործական երկիր է, որ իր կոչումը ուրիշ եւրոպական երկիրների շարքում պաշտպանած կը լինի իրավայել կերպով, եթէ գիւղացիների արդիւնաբերական ոյժերի պահպանութեան և ընդարձակման համար արմատական միջոցներ ձեռք առնեն: Ռուս լուսամիտ հրապարակախօսութիւնը անընդհատ լուսաբանում և քննում է այդ միջոցների խնդիրը: Ամենուրեք իշխում է այն կարծիքը թէ անհրաժեշտ է նախ յետ գնելու տուրքերի վճարման ծեւը այնպէս փոխել, որ վճարելը հեշտանայ: Բանը այն է, որ հարկը չի վերցնուում հարկին ենթակայ առարկայից, այսինքն գիւղացու այն գոյքից, որի արդիւնքից գիւղացին պէտք է վճարէ հարկերը: Մինչդեռ հանգամանքը այնպէս է որ շատ յաճախ գիւղացին իւր հարկերը վճարում է ոչ թէ գոյքի եկամուց, այլ հարկերը գալիս կլանում են նոյն իսկ գոյքն ինքը, այսինքն գիւղացու եկամուի աղբիւրը, այն է հողը: Ենրհիւ տնտեսութեան վատթար պայմաններին՝ գիւղացին իր գոյութեան ամենաանհրաժեշտ կարիքները լրացնելուց յետոց՝ ոչինչ էլ աւելնորդ չի թողնում պետական և այլ հարկերի համար: Եւ ահա հարկացին պարա-

<sup>1)</sup>) Русская мысль. Июнь 1895 г. Народное продовольствие и по-датель. Г.Г. Голубева.

Временникъ центрального статист. комитета Минист. Внутреннихъ Дѣлъ № 32. 1894 г.

Вѣстникъ финансовъ и промышленности № № Октября 1895 г.

Вѣстникъ Европы. Июнь и октябрь 1895 г.

Э. Тернеръ—Общинное владѣніе. Նորին հեղինակի Կрестьянскіе платежи и способы ихъ взысканія.

Русское Богатство. Ноябрь 1895 г. Народно-хозяйственные наброски.

քերի համար վաճառւում են զիւղացու հողերը։ Սա աչքի լնկնող երեսյթ է, որ իր վերջնական հետև անքով գիւղացուն շպրտում է զիւղական թափառաշրջիկ պրոլետարիատի շէմքը։

Ցիշած երեցիթը ամենահիմնական կէտն է այն ամբողջ խնդրին մէջ, որ վերաբերում է գիւղացու բարեկեցութեանը։ Անկասկած, պարագարի հատուցման դիւրութիւնը արդէն շատ կը նպաստի գիւղացու բարեկըմանը։ Սակայն գիւղացու տնտեսութիւնը աւելի ևս արացնելու համար հարկաւոր են նաև այլ յաջող պայմաններ, որնց մէջ լաւ կազմակերպւած գիւղական վարկը ամենանշանաւոր անդր պէտք է բռնի:

Յայտնի է, որ գիւղացիները իրանց կարիքների դեպքում անդադար դիմում են մասնաւոր փոխառութեան. սակայն մասնաւոր դրամատէրերի փոխառութիւնը վաշխառուական բնաւորութիւն է կրում, կեղեքելով և նեղ գրութեան մէջ զցելով գիւղացիներին: Համարձակ կարող ենք ասել, որ հէնց մասնաւոր գիւղական վարկն է, որ թունաւորում է գիւղացու կեանքը: Գիւղացուն փող է հարկաւոր համայնական կամ այլ պարտքեր տալու և դորա համար նա դիմում է մասնաւոր վարկին: Նրան տնտեսելու փող է հարկաւոր, նաև դարձեալ վաշխառու վարձատուների գիրկն է ընկնում, որոնք իրանց ծանր պաշմաններով կլանում են գիւղացու ստացած բոլոր արդիւնքը: Վարկի պահանջներից ծագած նեղ գրութիւնը այնչափ ջլատում և սպառում է գիւղացու նիւթական ոյժերը, որ նա կառնում է ստրուկը այն կարգերի, որ յառաջացնում է շահամի կապիտալիստական վարկառութիւնը: Վերջինս բռն է դրել դիւղական ազգաբնակութեան մէջ և կամայականութեամբ գործում է, եթե որ գիւղացին անօգնական է: Քանի որ գիւղական վարկը կազմակերպւած չէ, դժւար է յուսալ որ անհետանաց մասնաւոր վարկի կարիքը:

Թուսիայում գոյութիւն ունին քիչ թւով փոխատու խնայողական ընկերութիւններ, որոնց տւած օգուտը չնշին է համեմատած գիշղական վարկի իշղական պահանջների հետ։ Միւս կողմից փոխառու-խնայողական ընկերութիւնները չեն համապատասխանում իրանց կոչմանը։ Նոքա ստացել են այն բնաւորութիւնը, որ ունին Շուշի Դեղիշի սխառեմով զործող հաստատութիւնները Գերմանիա-

յում մանր արդիւնաբերողների և արհեստաւորների համար նոքա հիմնած են առաւելապէս շահագիտական սկզբունքի վրայ՝ սոսացած զուտ արդիւնքը բաժանելով ընկերութեան անդամներին, որոնք ընկերութեան անդամ-փոխառուներ են դառնում միայն իրանց անդամավճարներով։ Գործելով կապիտալիտական ձևով փոխառութիւնայողական ընկերութիւնների տաճ վարկը թանկ և կարծաժամանակեաց է։ Գիւղացի-անդամները ստանում են վարկ, բայց ընկերութիւնը չի որոշում թէ ինչ նպատակի համար է հարկաւոր նրան այդ վարկը և խնամք չէ տանում տաճ վարկի նպատակայարմար գործադրութեան մասին, նամանաւանդ որ գիւղացին փորձանքի մէջ է ընկնում իր ձեռին եկած փողը վատնելով։ Այս տեսակ փոխառութիւնայողական ընկերութիւնների թիւը հասնում է Ռուսիայում 700-ի, մինչդեռ Գերմանիայում 1894 թւին նոյն տիպարի բանկեր կացին 5.489, որոնցից օգտում են յատկապէս մանր արդիւնաբերողները։ Նոյն սիստեմի ընկերութիւններ ունին Գերմանիայի մանր գիւղառնտեսները թւով 603<sup>1)</sup>։

Գերմանիայում գիւղացու մանր վարկի համար կան այլ սիստեմի հաստատութիւններ, որոնք ծագել են սկզբնապէս գերմանական յայտնի գործիչ Ռայֆայզենի ջանքով և բոլորովին զանազան տում են իրանց կազմակերպութեամբ փոխառութիւնայողական ընկերութիւններից։ Թէև նոքա մասնաւորապէս տաշածւած են Հանոսի երկիրներում և ոչ Գերմանիայի ամեն տեղում, սական նոցակատարած գործը խոշոր է։ Ռայֆայզենեան երկու կենտրոնական հաստատութիւնները ունին մինչև 1,425 ճիւղ, որոնք բացարձակ կերպով խորշում են կապիտալիտական շահագիտութիւնից, կոչումն ունենալով գիւղացիների տնտեսութեանը աջակցել։ Գիւղացուն սպէսք է լծկան կամ կաթնառու տաւար, սերմեր, զործիք և այլն, նա զիմում է բոլոր այս գէպքերում Ռայֆայզենի ընկերական բանկին, որ ամենայն պատրաստականութեամբ նրան բաւարարութիւն է տալիս։ Այս ընկերութիւնների մէջ անդամավճար չկայ, հետևաբար նոցա ստացած ամբողջ արդիւնքը չի բաժանում,

<sup>1)</sup> Русская мысль. Июль 1895 г. Къ вопросу о мелкомъ сельскохозяйственномъ кредитѣ.

այլ յատկացւում է պահեստի կապիտալին, որ նոյնպէս դիւղացիների օգտին է ծառացում։ Տաճ վարկը շատ աժան և երկարատեւ է։ Նոյն առաւելութիւններից ամենազլիսաւորը այն է, որ եթէ զիւղացի-անդամը իր պարաւորութիւնները չի կատարում և ստացած գումարը բանկին չի վերադարձնում; զորս համար երաշխատրում՝ են քոլոր անդամները։ Բանկի պաշտօնները վարում են ձրիաբար զիւղում ապրող լրւաւորւածները, որոնք և հակում են զիւղացու պահանջների և վարկի իսկական գործադրութեան վրայ։

Այս բանկերին կից գտնուում են բազմաթիւ այլ հիմնարկութիւններ, որոնք միջնորդում են զիւղացիների կաթնացին և այլ արդիւնքները սոցա օգտին ձեռնոտու պայմաններով ծախելու նորատակով<sup>1)</sup>։

Եթէ Գերմանական երկիրներում գիւղական մանր վարկը մասմբ այսպէս է կազմակերպել, դա միան ապացուց է այն բանի, որ կապիտալիստական տնտեսութեան մէջ վաշխառութիւնը իւր կամայականութեանն էր ենթարկել զիւղացու գործունէութիւնը։ Անկերքելի է, որ այդ կազմակերպութեամբ մի յատնի չափով դարձան է արւել վաշխառուական կապիտալի բռնութեան դէմ։ Մօտիկ ապագացին վերապահւած է լնկերական-համերաշխութեան սկզբունքով կազմակերպւած վարկի հաստատութիւններով մրցել անձնական կապիտալի իշխանութեան դէմ։

Անուրանալի է, որ ուսւ գիւղացին էլ վաշխառուական վարկի հալածանքի տակ է զեգերում։ Ուսւ գիւղացու շահերի պաշտպանողները և ուսումնասիրողները<sup>2)</sup> բարեխզճօրէն մատնացուց են արել այդ երեսովթի աղաղակող հետևանքների վրայ։ Դրգւած իրերի այս անսուողջ գրութիւնից, ֆինանսների մինիստրութիւնը արդէն մի նախագիծ է կազմել հիմնելու Ռուսիայում։ Խաչվալզէնի տիպարի զիւղական վարկի բանկեր, որոնք պետութիւններից պէտք է ստանան զրամագլուխ՝ գործի սկզբնաւորութեան համար։ Եթէ սոքամբ ժամանակի պահանջման համեմատ համերաշխ-ընկերական բնաւորութիւն կրեն, այն ժամանակ իրաւ որ գիւղացու մանր անձ-

<sup>1)</sup> Theodor Krauss. Die Raiffeisen'schen Darlehns-Kassenvereine.

<sup>2)</sup> Сазоновъ. Ростовщество. Петербургъ, 1894 г.

նական վարկի պահանջին բաւարութիւն տրւած կը լինէր: Այս կայ, որ ռուս գիւղացին շուտով կը սովորէր գնահատել վարկի այդ կազմակերպութիւնը, որովհետեւ նա արդէն ընտելացած է համերաշխութեան սկզբունքին, քանի որ այդ սկզբունքի վրայ են հիմնած ռուսաց գիւղական համայնական հողատիրութիւնը (միր—միք կոչւած) և արտէլ անւանւած ընկերութիւնները:

Բացի մանր անձնական վարկից գիւղացին առհասարակ պահանջ ունի և խոշոր հողացին վարկի, որ մեր գարում սոցիալական խնդիրների շարքում շատ նշանաւոր տեղ է բռնում: Գիւղացիները հանդիպում են մեծամեծ տնտեսական վնասների, որոնք ծագում են ընդհանուր անհախատեանելի դժբախտութեան դէպքերից: Եւ որ այդ ժամանակ գիւղացիներին խոշոր միջոցներ են հարկաւոր, որպէս զի նրանք կարողանան ձեռնարկել հիմնաւոր նորոգումներին: Այդ նպատակի համար մասնաւորների մօտ բարձր տոկոսով փող ճարելով՝ նոքա ընկնում են պարտքի տակ, որ միանալով ուրիշ արդէն եղած ապառիկների կամ այլ պարտքերի հետ՝ գիւղացիներին անձարութեան մէջ է զցում, քանի որ նոցա հողը այնքան արդիւնք չի տալիս, որ կարողանար պարտքերը կանոնաւորադիշ վճարելու: Սովորական երեսով է, որ գիւղացիների հողերը այս դէպ քերում՝ օրինական ճանապարհով ծախւում են: Բայց ամենից շատ ենթակայ են այս հետեանքին սակաւահող գիւղացիները, որոնք նոյն իսկ առանց դժբախտութեան խոշոր դէպքերի՝ պարոք են անում իրանց տնտեսութեան մէջ որ և է կատարելադորձութիւն մոցնելու նպատակով: Այս և այլ հանդամանքներում ռուս գիւղացիների պարաքերը տարեցտարի աւելանում են և թուլացնում հողի մշակութիւնը, մի հողի, որ, ինչպէս ենթադրում են, խելացի երկրագործութեան պայմաններում ընդունակ է 6 միլիարդ մարդ կերակրել<sup>1)</sup>:

Արևմտեան Եւրոպայում այս հարցը առաջնակարգ նշանակութիւն է ստացել: Պրուսական արեւելեան բոլոր գաւառներում դիմում անցեալ գարում, այն է 1770 թւականին խոշոր հողատերերի համար սահմանւած հողացին վարկի ընկերութիւնները վազուց գոր-

ծում են նաև գիւղացիների համար <sup>1)</sup>: Սակայն այս հաստատութիւնները, ինչպէս և այլ գիւղացիական հողացին վարկի հիմնարկութիւնները, այլ ևս անընդունակ են՝ գիւղացիների պահանջներին գոհացում տալու, քանի որ նոքա գործում են զուտ կապիտալիստական սկզբունքով: Նոցանով գիւղացիները աւելի ևս մեծ պարագերի մէջ են ընկնում, որոնց շնորհիւ նոքա իրանց հողացին սեփականութիւնը կորցնում են: Հարց է ծագել Գերմանիայում՝ այնպիսի վարկացին կարգեր ստեղծել, որոնցից գիւղացիները օգտւեն, բայց վարկից գոյացած պարագերի պատճառով նրանց հողերը անպայման չվաճառվեն աճուրդով: Դիւղացիները պահպանողական են: Նոցա ապահովութիւնն է, որ երաշխաւորում է սոցիալական կարգերի ամրութիւնը, որովհետու գիւղացու ապահով գոյութիւնը մի երկիր ամբողջ հասարակութեան յենման կէտն է կազմում: Աչքի առաջ ունենալով այս ճշմարտութիւնը, գերմանական տնտեսագէտները ամենայն լրջութեամբ վերաբերել են այդ հարցին: Նոցա մէջ ամենանշանաւորը՝ Շեֆլէն՝ իր մի նոր նշանաւոր գրքում <sup>2)</sup> առաջարկում է ստեղծել գիւղացիների համար հողացին վարկի միութիւններ համերաշխութեան սկզբունքներով (solidarhaft, կրցուայ պորուկ), որպէս զի գիւղացիների հողերի վաճառումն պարագերի պատճառով արգելւի: Յօդւածիս շրջանը ինձ չի ներում նէֆլէի գրքի բովանդակութիւնը ընթերցողին մանրամասնորէն ներկայացնելու: Նէֆլէի հիմնական միտքն է՝ գիւղացու վարկին այն ընկերական կազմակերպութիւնը տալ, որով նրա հողը կարելիին չափ ազատուի հուսմայական իրաւունքի խստութիւնից, քանի որ հուսմայական իրաւունքով պարուզի համար գիւղացու բոլոր գոյքերը աճուրդի են դնուում: Օրէնսդրութիւնները յամենայն դէպս խոշոր գործ կատարած կը լինեն, եթէ նրանք գիւղացու վարկի արգի ձախող պայմանները փոխեն այն հիմունքների վրայ, որ հակառակ չեն ոչ ժամանակակից գիւղութեան խօսքին և ոչ էլ սոցիալական արդարութեան պահանջին: Գուցէ մասամբ Ռուսիան է, որին վիճակւած է այդ քայլն անելու, որովհետև Ռուսիան է, որին ինքը

<sup>1)</sup> Տես իմ Geschichtche des landschaftlichen Creditsystemes, 1894.

<sup>2)</sup> Die Inkorporation des Hypothekarcredits, von Dr Albert Fr. Schäffle.

բնութիւնը երկրագործական կոչումն է յատկացրել. իսկ այդ կոչման բարձրութեան վրայ մնալու համար՝ գիւղացու ապահովութիւնը զլիսաւոր պայմանն է:

Եւրոպան այս գարու լնթացքում աշխատել է իր տնտեսական կազմակերպութեան զործում առաջ մղել լոկ արդիւնաբերութեանը Այդ տեսակետից ազատ անհատական արդիւնաբերութիւնը մեծամեծ զործեր ստեղծելով՝ հասել է իր զարգացման գագաթնակետին Միջնադարեան աւատական տնտեսութիւնը թէև իր կարգերով ապահովում էր գիւղացու գոյութիւնը, բայց կաշկանդում էր արդիւնաբերութեան զարգացումը և անհնարին գարձնում ամէն մի առաջազիմութիւն։ Իսկ աւատականութիւնից դէպի անհատական ազատ տնտեսութիւնն անցնելու պրոցեսից առաջ եկաւ մի նիւթապէս ուժեղ դասակարգ, որ գերիշխող է ամէն մի զործում, ուր հարստանալը նպաստակ է դարձել։ Զօրեղ կատիտալիստ դասակարգը իշխում է ոչ միայն քաղաքներում, գործարանական արդիւնաբերութեան կենտրոններում, այլ նոյնպէս գիւղերում, երկրագործութեան կենտրոններում։ Ներկայիս ազատ գիւղացին մասնւած է կապիտալիստական իշխանութեան հալածանքներին, որոնցից նա զերծ կը լինի, եթէ սոցիալական արգարութիւնը լինի սկզբունք գիւղացու վարկի և այլ կազմակերպութիւնների մէջ։ Եւրոպական օրէնսդրութիւնը գտնւում է պատմութեան այն շնուրում, ուր նա պարտաւոր է այդ սկզբունքին գոհացում տալ:

Սոցիալական օրէնսդրութիւնը բանւոր դասակարգի համար գոնէ սկզնաւորութիւն արել է. բայց գիւղացին նորան գեռ միայն սպասում է:

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ: Հրատարակիչն Եր. Լալաջեանց 1896,  
Գիրք Ա. Շուշի էջ: Գինն է 2 ռ. 50 կոպ.

Վերջապէս Եր. Լալայեանը իրագործեց իւր վաղուցւազ փափազը: Աղջագրական Հանդէսը» ալժմ հասարակութեան առաջն է զրւած և պատում է նրա դատաստանին: Արժէր զորա մասին աւելի երկար զրնել, բայց մենք մտադիր չենք մանրամասն քննադատութիւն գրելու: Ազգագրական հանդէսի երեալը մեր պարբերական մամուլի աննախանձելի առարկզում մի նշանաւոր երևովէ և մեր սրտին շատ մօտ. ուստի այս առթիւ մեր զգացած տպաւութիւնները մի քանի տողով ենք արտապատել:

Ենորհաւորելով հանդերձ պ. Եր. Լալայեանին մի այսպիսի գեղեցիկ գործի ձեռնարկելու համար, ստիպած ենք ցաւելով լաւունել որ նա շատ անժամանակ և խիստ անյաջող հանգաւանքներում լանձն առաւ մի պլափի ծանր պատասխանատու զործ:

Դեռ 1887 թւին Գր. Խալաթեան իւր հրատարած «Ծրագիր Հայ ազգագրութեան» գրքուկի լառաջաբա-

նում մտագրութիւն էր լաւանել մի տարի լեռով ձեռնարկել մի պարբերական աղջագրական հաւաքածուի հրատարակութեան: Այդ մտագրութիւնը մնաց չիրագործւած, և բնական է որ աղջակէս էլ լինէր Մեր կարծիքով մի մասնագիտական հանդիսի խմբագրութիւնն ու հրատարակութիւնը բացարձակապէս վեր է անհատական ուժերից, ով որ էլ կ'ուզէ լինի այդ անհատը:

Մասնագիտական հանդէսները ընդհանրապէս հրատարակութիւն են մասնագիտական ընկերութիւնների ձեռքալի նրանցից կազմւած խմբագրութիւնների միջոցով, որովհետեւ մի աղջափիսի հրատարակութիւն պահանջում է մի որոշ չափով լաւանի մտաւոր ուժերի գործակցութիւնը և գոնէ սկզբներում նիւթական ծանր դռնութիւնները. Մեղանում երկու ուրիշ մասնագիտական թերթերի վորձ է եղել և երկում էլ փորձանքի պատահեցին: «Մանկավարժական» և «Առողջապահական» թերթերը, որոնք հետաքրքրուղների և ընթերցողների

աւելի մեծ շրջան ունենալու հաւասականութիւնն ունէին, թէ բովանդակութեան կողմից և թէ նիւթապէս անհատների ուժի վերաց հիմնած լինելուն պատճառով՝ շուտով մարեցան, գնացին.

Այս տիտուր բազզը սպասում է այս ձեռվ հիմնած բոլոր մասնագիտական հանդէսներին. Եւ միթէ ուրիշ կերպ կարող է լինել մանաւանդ Հայերիս մէջ, երբ մեղանում ընդհանուր գրական և քաղաքական հանդէսներն անգամ, որոնք համեմատապէս աշխատակիցների աւելի մեծ թիւ կարող են ունենալ և ունին և նիւթերի բազմակողմանիութեան պատճառով ընթերցողների աւելի պատկառելի տոկոս կարող են գրաւել դէպի ինքը, իրանց նիւթերի բազմականում են իրանց գոյութիւնը պահպանել՝ այն էլ հազար գժւարութիւններով և պարտքերով. Հայ պարբերական հանդէսներից միան «Մուրճ»-ն է, որ 8-րդ տարին անընդհատ գոյութիւն ունի ուստահաւերի մէջ և որը, չենւած հաւատարիմ աշխատակիցների և իւր նըւիրաւծ խմբագրի գառն զոհազութիւնների վերակ լուտով ենք որ երկար շարունակի. Մենք ի սրտէ բարեմաղթում ենք այդ նրան. Քայց այդ շարունակի. Մենք ի սրտէ բարեմաղթում ենք այդ նրան. Քայց այդ շարունակի աւելի ապահով ու աւելի արդիւնաւելու կը լինէր եթէ այն նոր ուժերը, որոնք նոր հանդէսներ հրատարակելու համար նիւթական զոհողութիւններ չանձնն են սունում, փոխանակ մի նոր հրատարակութեան ձեռնարկելու գոյութիւն ունեցող հան-

դէմներում հրատարակէին իրանց աշխատութիւնները: «Մուրճ»-ի ծըրագրից դուրս չէ ազգագրական չողածներ հրատարակելը և կարծում եմ որ ծաւալն էլ կը ների իրան այդ բանն անելու. <sup>1)</sup>»

1) Մեր կարծիքը այդ մասին հետեւալն է. հայկական կուլտուրական զարգացման աջմենան հանգամանքներում՝ մի լատուկ ազգագրական պարբերական հրատարակութիւն ունենալը վեր է մեր ովերից. Ազգագրական հանդէսի այն չոլւածները, որոնք մասնագիտական լինելով համուկերձ ընդհանուր կրթական են և կամ առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում մասնագրապէս մեր երկրի համար—դրա կարող են տպել Մուրճում. իսկ Ազգագրական հանդէսի այն մասը որը նպատակ ունի ազգագրութեանը հում նիւթեր մասակարարելու—օվանակ Զաւախը բազմակողմանի ուսումնասիրութիւնը, որ ինքնին մի հաստ գիրք կը կազմէր և որը սովորական ընթերցանութեան համար չնշանակւած, — այդպիսի նիւթերը մեզնում կոչւած է հրատարակելու թիֆլոսի Հայոց Հրատ. Ընկ., որը արդէն իսկ հրատարակել է այդպիսի նիւթերի մի քանի հատուրներ (Թիֆլովեցւոց մտաւոր կեանքը, Զաւախը բուրիունք, Սամակ Ծռեր, Հնութիւնք Ակնաչ): Ազգագրութեան վերաբերեալ Մուրճը կը մնար իւր դեռում՝ տալով հանրապէն կրթական չողածներ նույն ճիւղի վերաբերմամբ, բոլորովին անչպէս, ինչպէս նա այն անում է, օրինակ, ընական գիտութիւնների վերաբերմամբ, և բայց այդ՝ կը տար քննադատական չողածներ եղած նիւթերի մասին. իսկ Հրատ. Ընկիրութիւնը կը հրատարակէր այդ նիւթերը. ճիշդ է, ներկայ հանգամանքներում ոչ Մուրճը իւր-

Վայն եկել ու տարել է այն մաս-  
նագիտական թերթը՝ որը չունի կա-  
րող անձինքներից կազմւած աշ-  
խատակիցների մի ստուար խումբ  
և որը մի ընկերական կազմակեր-

պութեան կողմից ապահովւած չէ  
նիւթականապէս Ալդալիսին երբէք  
կանոնաւոր ընթացք չի ունե-  
նալ, քիչ ժամանակից կը քամէ իւր  
մէկ երկու խմբագրողների ուղեղն  
ու քսակը և չետու ինքն էլ անսը-  
ւաղ կը մեռնի:

Մասնաւորենք մեր խօսքը «Ազ-  
գագուական հանդէսիո խմբագրութեան  
մասին»:

Հրատարակիչը մի ճապաղ առաջ-  
նորդողում գժւար հասկանալի կեր-  
պով չաւանում է որ իւր կոչումը  
«նիւթեր հաւաքելն է».

Արդարն մի «Ազգագրական հան-  
դիսի» զլիսաւոր նպատակը հաչ  
ազգագրութեան համար հում նիւ-  
թեր հաւաքելն է և այդ հաւաք-  
ման գործին ուղղութիւն տալը պիտի  
լինի: Նա ծովագէս գիտնական հե-  
տազոտութիւններ պիտի տակ հաչ  
աղջագրութեան մասին և օտար հե-  
ղինակներից թարգմանութիւններ:  
Խրագործել է այս ծրագիրը Ազգա-  
գրական հանդիսի առաջին համա-  
րում: Դժբաղդաբար ոչ Ռւշագրու-  
թեան առէք, «առաջին համար» եմ  
ասում, որը ընդհանրապէս աւելի  
լինամքով կազմւած է լինում քան  
թէ նոյն պարբերականի լաջորդ հա-  
մարները:

Հում նիւթերի բաժնում միմիայն  
«Զաւախէն» ենք գտնում: Ընդունելով  
այդ աշխատութեան ազգագրութեան  
տեսակէտից ունեցած արժանիքը, որը  
մենք արեելագէտների կոնգրէսում  
իսկ (Ճ.Բ.ն) ցոյց ենք տւել, էլի հան-  
գէսը հում նիւթերի կողմից շատ վատ  
խմբագրուած ենք գտնում: Մի լոդ-

ալդ մասում և ոչ Հրատ. ընկերութիւնը  
հում նիւթեր հրատարակելու գոր-  
ծում չեն կարող շատ բան անել  
որովհետեւ ոչ մէկը և ոչ միւսը բա-  
րականաչափ հարուստ չեն նիւթա-  
պէս: Բայց եթէ (օրինակների հա-  
մար հեռու չվագինք): պ. Լա-  
յանեան զործ դրած լինէր այդ եր  
կու հիմնարկութիւնների (Մուրօնի և  
և Հրատ. ընկ.) համար միմիայն կէսը  
այն բոլոր ջանքերին գոհողութիւն-  
ների, որ նա իւր վրայ է վերցրել  
իւր Ազգագրական հանդէսի մի հա-  
տորը հրատարակելու համար, նա  
նոյն իսկ հէն: Իւր սիրած գործին  
աւելի նպաստած կը լինէր: Ասւած  
է թէ գործի սկիզբն է դժւար, բայց  
մենք կ'ասինք որ այդպիս գործի  
սկիզբն է հեշտ և շարունակութիւնը  
դժւար, եթէ շարունակութիւն ասե-  
սով չհասկանամք ամեն երկու-երեք  
տարին մի հատոր զուրս բերելը,  
այլ գէթ տարին երկու աւդպիսի հա-  
տորներ լոյս ընծաւէլը: Եւ եթէ բո-  
լորովին արդարացի է լողւածի հե-  
ղինակ պ. Մեղաւորեանի պահանջը,  
թէ ընդհանրապէս գրական և թէ  
մահաւանդ աւդպիսի գիտնական հե-  
տազոտութիւններին եղինակները պի-  
տի փարձատրւեն, այդ բանին համնել  
կարելի է, եթէ մի-մի անհատներ  
ընան աւելի հաստատում հիմնարկու-  
թիւն, նիւթական ոչժերը ջլատելու,  
այն գան ու նոցա նվիրեն իրենց ոչ-  
ժերը: Այդ պայմանով մենք կ'ու-  
նենանք թւով աւելի քիչ, բայց ըստ  
ամենայնի աւելի զօրեղ մարտիններ,  
որոնց ձեռքով գործը աւելի ապա-  
հով առաջ կ'երթաց, ինչպէս որ նը-  
կատում է նաև պ. Մեղաւորեան,  
«Մուրօն»-ի խմբ:

ւած որչափ էլ մեծ լինի, որչափ էլ լաւ կազմւած լինի, էլի չի կարող մի պարբերական հանդէս գոհացնել. Մի քանի աշխատակիցների, զանազան հարցերի վերաբերութեամբ, ուրիշ ուրիշ գաւառների չառուկ հաւաքածուներ պէտք էր պարունակէր ազգագրական հանդէսը:

Այս պահանջին բաւականութիւն սալու համար պէտք էր աշխատակիցների մի որոշ խումբ: Առանց մեր ժողովրդի կեանքը մօտից ճանաչող և հետազօտող գրողների օժանդակութեան՝ Ազգագրական հանդէսի հում նիւթերի ճիւղը միշտ միակողմանի կը լինի և շուտով էլ կը սպասւի: Հրատարակիչը իւր երկար տարիների աշխատութեան արդիւնք եղող հաւաքածուն առաջին համարում տպեց, վերջացրեց հաղա երկրորդ համարում:

«Արագէի» Խծկոնքը աննշան արձանագրութիւնների մի աննշան հաւաքածու է: Զարծէր կանգ առնել նրա վերաէ. մնում է միմիացն էլլի «Զաւախիքը», որը մասնագիտական հանդիսի հում նիւթերի դլխառորդագինը չի կարող փրկել: Աղաքանի, Պոռշեանի, Քաջըլեռունիի, Սարգիս Հակունիի, Ճանիկեանի և որոնց նման ժողովրդի կեանքին ծանօթ գրողների գործակցութիւնը անհրաժեշտ է նուն նապատակի համար: Սրանց նմանների աշխատակցութիւնը ձեռք բերելու համար հարկաւոր է վարձատրել, բոլոր ոչ աշխապէս ինչպէս հրատարակչական ընկերութիւնն է վարձատրում: Վարձագրելու է կանոնաւոր կերպով՝ որ աշխատողը հանդիսաւ կարողանալ

ապրել, և տաչ անպիսի կանոնաւոր ազգագրական նկարագիրներ, որոնք բացի ազգային տեսակէտից ունենալին ընդհանուր գիտական հաշուակութիւն:

Ազմ փորձառական մեթոդի դարն է: Ամեն բան ֆակտերի հիման վրայ հաստատած պիտի\* լինի: Հայկական կեանքից քաղւած զանազան ֆակտեր կարող են ազգագրական գիտութեան ծառակել՝ ընդունելու կամ մերժելու համար մի որ և իցէ գիտնական ենթադրութիւն (անտիթես): Սլաւեան ազգերի կեանքի հետազօտութիւնը ազգագրական գիտութեանը տևց թանկադին ֆակտեր: «Ազգագրական հանդէսը» այս ասսպարէզում կարող է լաւ ծառակութիւն անել՝ գիտութեան տալով բազմաթիւ ազգագրական հետազօտութիւններ, բայց դժբազգաբար աշխատակիցներ պակասում են իրեն: «Գուցէ հայ ուսուցչունիներն եւ ուսուցիչներն պիտի լսեն Եր. Լալակեանի սիրավիր հրաւելը և լաջորդ համարում բազդ պիտի ունենանք կարողալու բաղմաթիւ: Նկարագրութիւններ Սպասենք:

Գանք «Ազգագրական հանդիսի» երկրորդ նպատակին—ինքնուրուն և թէ թարգմանական գիտնական հետողուսութիւններ տալուն: Այս բաժինը չի լայած կարող նոյն գոհունակութիւնը լայանել լալալեանի «Ճամառօտ» տեսութիւն Հայ ազգագրութեանը վերնագրով գիտական հետազօտութեան մասին ինչ որ ասել էինք նրա և նկարագրական հաւաքածուի մասին: Առաջինը որչափ օգտաւէտ և նշանաւոր, երկրորդը նոյնքան անօգուտ է և աննշան:

Աւելափիշեալ լուրածը մի համառ-  
ոստ ամփոփումն է Գողթան երգերի  
մասին եղած քննութիւնների և ու-  
րի ոչինչ։ Աւելի լարմար էր ազդ-  
քածածը մակագրել ասպիկս, «Համա-  
ռօստ տեսութիւն գողթան երգերի»,  
քան թէ «Հար՝ օստ տեսութիւն հայ  
ազգագրութեալ»։ Հայ ազգագրու-  
թեան ամենաաղլիսաւոր և զրեթէ  
միակ ազգիւրը հայ ժողովրդի կին-  
յազավարութիւնը և աւանդութիւն-  
ներն են, ինչ տեսակի ազգագրական  
տեսութիւն կարելի է անել առանց  
ուշադրութիւն դարձնելու սրանց  
վերաբերյալ։

Անցաւ աղն ժամանակը՝ որ դրու-  
ները անուշադիր թողնելով ժողովը-  
դի իրական կեանքի հետազօտու-  
թիւնը, ընդամենը մի քանի տողից  
բաղկացած գողթան երգերի մասին  
էին գրում և դիմուականի անունն վաս-  
տակում. Անցած է զուր ջուր ծեծելու  
դարը. Եր. Լալալեանը չի պատկա-  
ռում ալս վերջինների շրջանին, նա  
իրականութեան մարդ է, նա իւր  
աջաւախքով» ցուց տւառ որ հասկա-  
ռում է և դիտէ դիտել և նկարագրել  
ժողովրդի իրական կեանքը. Ե նրա  
զրական դործունչութիւնը պիտի  
ինդրոնանաւ ալս ասպարէցում.

Թարգմանական լուսածների ընտ-  
րութիւնը լաջող է, բայց զրանց  
թարգմանութիւնը բոլորովին ան-  
լաջող է: Մեր կարծիքով աւելի լաւ  
է աղ տեսակ զիտնական լուսած-  
ների ամենովումները տա՞ երբեմն  
Ընդարձակելով և երբեմն համառօ  
տելով: Աղ տեսակ թարգմանութիւն-  
ները տպագրելուց առաջ մի ժողո-  
վում կարդալի բաղդատել բնադրի

հետ և սրբագրել հարկաւոր է։ Լա-  
լավեան և իւր աշխատակիցները շատ  
լաւ են անում որ ընդհանրապէս  
զիտնական օտար բառերը նոյնու-  
թեամբ ընդունում են։ Պարբերու-  
թիւնների անհասկանալի լինելու  
գլխաւոր պատճառը օտար բառերը  
չեն, այլ ազդ բառերով բացադրւած  
մասնագիտական միտքը։ Միննոյն  
դժւարութիւնները մնում են եթէ  
օտար բառերի տեղ հավերէն բառեր  
թիսնք։ Միթէ աւելի հասկանալի է  
լինում երբ պայէստոլոց՝ բառի  
տեղ հնէաբանութիւն բառը դնենք  
(ԱԱզգ. Հանդէս» երես 33) և կամ  
«լիննէը տարբերում է սիստէմը մե-  
թողից» նախադասութիւնը հակացնե-  
լով փոխադրենք՝ «լիննէը տարբե-  
րում է դրութիւնը եղանակից» (ԱԱզգ.  
Հանդէս» երես 26)։ Օտար թէ հա-  
վերէն լինեն ազդ բառերը՝ հասկանա-  
լու համար հարկաւոր է զիտենալ  
դրանց գիտնական առումները, նշա-  
նակութիւնները, և որովհետև մեր  
ժողովուրդը նոր է ընտելանում ազդ  
բառերի նշանակութեանը, աւելի  
նպատակալարմարէ՝ որ նշանակու-  
թիւնները ծառւած օտար բառերը  
սոմսորի <sup>1)</sup>։

Թարգմանական լոդւածների մէջ

1) Մենք կարծում ենք, որ օտար տերթմինների հակեացնելը հեշտացնում է ընթերցողին, ու խօսքի իմաստը ըմբռնի և օգտակար ենք գտնում, ընթերցողների ահազին բազմութեան օգտի համար՝ յաջորդած հակերէնը դորժածել, փակագծում դնելով օտար տերթմինը և կամ ընդհակառակի, զրելով՝ օրինակ՝ պարունակութիւնը,

է և Լետուրնօի անդրանիկ գործերից «La sociologie d'après l'ethnographie» գրքից «Մերական լարաբերութիւնը կենդանական թագաւորութեան մէջ» հասուածը որը մեր թերթերից մէկին (Մշտկ'ի քննադատ Լ.) ամենից շատն է դիւր եկել, որովհետեւ երեխ նրան ալդ չօղւածն է եղել միակ մատչելին. մինչ զեռ իսկապէս նիտակամ տևսակէտից ամենից աւելի անգոն, հինցած և աննշան չօղւածը ացդ է «Ազգագրական հանդիսում», Լետուրնօն ինքնին մի գիտնական շղոլա չի կազմում, ուրիմն ուղղութեան տեսակէտից նշանակութիւն չունի այդ չօղւածը, բայց նա լաւ կոմպիլատոր է և շատ ընդունակ դէսից դէնից տեղեկութիւններ հաւաքելու և մի հետաքրքիր բան կազմելու ինձ կարող են պատասխանել թէ մի կոմպիլատորնի հետաքրքրութիւնը համեմատական է և կախւած է հաւաքւած նիւթերի թարմութեան աստիճանից. Ամուսնութեան սկզբնաւորութեան մասին մինչև Լետուրնօի իւր վերուիշեալ աշխատութիւնն կազմելը ծանօթեղող տեղեկութիւնները ալիս հետաքրքիր չեն, որովհետեւ, առաջին, ալս որ աւելի նոր, աւելի մանրամասն հետազոտութիւններ կան ալդ կիսավարենի ազգերի կազմակերպութեան մասին. երբորդ, անժամանակ ճշմարիտ կարծւած ֆակտերն ալսօր հերքում են. օրինակ այդ չօղւածում Լետուրնօն խօսում է բազմակրութեան (polyandrie) մասին, որի երբեց գոլութիւն ունենալն անգամ հերքում է.

Մի քանի խօսք էլ Հանդէսի

վերջում Եր. Լալաչեանի կողմից առաջարկւած ծրագրի մասին և վերջացնենք. Կազմովը ալդ ծրագրով ուղում է առաջնորդել ամուսնութեան և հարսանիքի մասին հումնիւթեր հաւաքողներին, բայց ցատում ենք, որ ծրագիրը շատ թերի և անցնող է խմբագրած: Թերի է, որովհետեւ ամուսնութեան մի քանի գլխաւոր հանգամանքների մասին անենքին հարցեր չկան. օրինակ ազգակցութեան կապերի, դրանց տեսակների մասին խօսք անգամ չկայ և նովսովէս չի վիշտւմ ամուսնացողների կամ զրանց ծնողների կամ ինամակալների համաձայնութիւնը:

Ազգակցութիւնը և համամայնութիւնը որոնք մեծ զեր են խաղում ամուսնական էւոլյուսիօնում, չի կարելի անուշացիր թողնել մի ծրագրում, որը ամուսնական կազմակերպութեան գորգացումը հետազոտելու նպատակով է կազմւած: Գուցէ դա մոռացութիւն է: Բայց ալդպիսի մի մոռացում միթէ ներելի է:

-Մինք ասացինք ալդ ծրագիրը բացի թերի լինելոց՝ անյաշող էլ է: Անյաշող է, որովհետեւ հարցերից մի քանիսը շատ մութ և ճապադ են զրւած, օրինակ ալս հարցը՝ պինականդութիւններ մակրական տիրապետութեան մասին». եթէ հաւաքութեան մասին: Եթէ հաւաքութեան մասին, ալդ և զրանիւթիւններ ապահովութեան մասին. երբորդ, անժամանակ ճշմարիտ կարծւած ֆակտերն ալսօր հերքում է իւր չի հասկանալ. իսկ եթէ հմուտ է իւր գործին հաւաքողը ալդ ծրագրին պէտք չունի: Մեր կարծիքով փոխանակ մի ալդպիսի ընդհանուր հարց տալու, պէտք է հատ-հատ հարց ցեր դնել մակրական տիրապետու-

թիւնից մնացած բնորոշ սովորութիւնների մասին. օրինակի համար այ նպատակով կարելի է գնել մի ախպիսի հարց. «Ո՞ւմն են դիմում աղջիկ ուզելու ժամանակ. առանձին նշանակութիւն տալիս են, աղջկաց մօրեղքոր (քեռու) համաձանութեանը. կամ քեռին ստանում է մի առանձին ընծառ փեսաչի կողմից և ալնո»:

Վերջացնելով մեր խօսքը կրկնում ենք – Ազգագրական թերթի հրատարակիչը անհատական ոչից բարձր զործի է ձեռնարկել ու շատ էլ աճապարել է, և մեր նկատած թերութիւնները աշխատակիցների մեծ մասամբ պակասութեան և աճապարելու արդիւնքներ:

Յ. Մէշտեռը:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հնդիանուր ղրութիւնը: Նիմական նպաստի զործը:

Տաճիկ կառավարութիւնը հիմնական խնդրում իւր քաղաքականութիւնը չի փոխում դէպի հայկական խնդիրը, միշտ ձևանալով թէ այդ գործով զբաղւած է, միշտ ձևանալով թէ պատրաստում է իրագործել բարենորոգումների իրադէն: Այսպէս, օրինակ, իրադէն ստորագրելուց մօտ վեց ամիս անց կառավարութիւնը վստահացաւ միայն այսքանը յացոնել մարտ ամսին թիւրքաց լրագիրներում թէ «վալիների հայ օգնականները պատրաստ են ճահբայ ընկնելու»: յացուրարւեց նաև թէ նահանգացին իշխանութիւնները հրահանգ ստացած են հայերից ոստիկան գրել մայիսի 13-ից սկսած: —Գործը ուրեմն ձգձգել —մինչև որ եւրոպական զեսպանների պահանջներ անելու եռանողը նստի, սառչի —զա հին փորձած տակարիկան է, որի յաղթանակը անկասկածելի է թւում տաճիկ կառավարութեան: Նոյնքան յարգանք է ցոյց տալիս նա նաև դէպի Զէյթունի դաշնագիրը: Հազիւ այդ գտւառը խաղաղեցրած է, հարկաւ ոչ տաճիկ զինուրներով, այլ օտար պետութիւնների միջնորդութեամբ —և ահա առաջին քաղլերը որ անում է կառավարութիւնը —այդ՝ խախտումն է կայացրած համաձայնութեան: Նա իւր զօրքը դեռ չի հեռացնում Զէյթունից —հակառակ կայացրած համաձայնութեան: և այդ վարմունքը նա պատճառաբանում է նրանով, որ զէյթունցիներից պատերազմական զէնքերն ետ իմլու գործը գեռ չի վերջացրած: Եւ երեք պետութիւնների հիւս պատոսները ստիպւած են մնալ Զէյթունում, մինչև որ որոշւած պայմանները կատարւած կը լինեն: Աւելի ևս յուզիչ եղաւ Դրան միւս քայլը: ապրիլի 2-ին նա հաղորդեց դեսպաններին, որ Զէյ-

թունի կառավարիչ նշանակւած է մի մահմեղական, այն է Մահմուդ Ալի (թէ Մահմուդ-բէյ)։ մինչդեռ դա հակառակ է Զէյթունի համաձայնութեան, որով Զէյթունի կառավարիչը միմիայն քրիստոնեաց կարող է լինել (կամ եւ բոլորացի կամ հայ)։ Անզլիացի, Ռուսիացի և Ֆրանսիացի գեսպանները ապրիլի 8-ին միաձայն բողոքեցին Դրան ացդ վարմունքի դէմ, յայտնելով որ դա խոսաննազանցութիւն է Թիւրքիացի կողմից։ Եւ անզլիական սպարզամէնտում արաքին գործերի մինիստրի օգնական Կըրգոնի բացատրութիւնից (ապր. 8) երեաց, որ Թիւրքաց կառավարութիւնից դեռ ստացւած չէր սպատասխան գեսպանների բողոքին։ Այդ պատասխանը թիւրքաց կառավարութիւնը տւեց յետոյ, յայտնելով որ Թիւրք կառավարիչ նշանակւում է միայն ժամանակատրապէս, իբր թէ «մահմեղական ժողովուրդը չգրգռելու համար» և որ շուտով կը նշանակի քրիստոնեաց կառավարիչ։

Անկեղծութեան պակասութիւնը իրեն զգացնել է տալիս իւրաքանչիւր քայլափոխում։ Սուլթաննը այս վերջին ժամանակները միեւ է հաշո գիրք բռնել գէպի պատրիարք Խզմիրլիշան, որին պաշտօնից հեռացնելու համար արւած թէև զուր ջանքերը Պոլսի բարձր զիրք վայելող էֆէնդիների միջոցով արդէն յայտնի է մեր ընթեցողներին։ Բայց առ երես հաշո զիրք բռնելով հանդերձ գէպի պատրիարք Խզմիրլիսան՝ Ասիական զաւառներում զեռ ևս շարունակում է սարսափի ոհծիմը, տեղտեղ շարունակում են նոյն իսկ կոսորածները, իսլամացումները և այլն։ Խօսքով թոյլ է տրւած իսլամութիւն նոր լնդունածներին վերստին եկեղեցու գիրկը վերագառնալը բայց երբ բնակիչները փորձում են ացգալէս անել—սպանում են ամբոխից կամ—սպառն սիլքներ ստանում։ Ուրժայում հայերի մեծ կոռորած էր եղել մի քանի ամիս առաջ Քիլիսում (Հալէպի մոտ) մարտի 8-ին հայերի և Թիւրքերի մէջ նոր խոռվութիւններ եղան, քաղաքը պաշտրւած էր զօրքերով և ոչ ոքի թոյլ չէր որւում ոչ ներս մտնել և ոչ զուրս զալ։ Սպանուած են 125 լուսաւորչան, 5 կաթոլիկ, որոնցից մէկը քահանաց։ Աղանացի մօս Տարսում հայերը նոր բանութիւնների ենթարկեցին։ Ֆրանսիական հիւպատոսի հեռագրի համեմատ՝ Անտիոքում արիւնալից դէպքեր եղան։ Եւ առհասարակ զրութիւնը այնպէս է, որ մարտի 19-ին

նըրգոնը հաղորդեց պարլամենտում, թէ հիւսատոսների զեկուցում ներին նայելով՝ պէտք է ենթադրել որ մի քանի նահանգներում նորից անկարգութիւններ են ծագելու:

Այդ ամենը նպաստաւոր հանգամանքներ են իսլամիւթիւնը հայերին ընդունել տալու և հաստատելու նոցա մէջ: Մամեդականութիւն ընդունած հայերի թիւը հաշւում են շուրջ 40.000 հոգի: Այսպիսի ազգային-կրօնական մեծ տագնապի և դրժբաղկութեան օրերին ծածկա-Հայոց պատրիարք Կղմիրեան զիմելէր Վեհափառ Կաթողիկոսին հրահանգ խնդրելով թէ ինչպէս վարի նորից Հայաստանեաց եկեղեցին դիմողների վերաբերմամբ: Կաթողիկոսը պատասխանեց հեռագրով (մարտի ամսին) ընդունել մահմեդականացած հայ ժողովուրդը և քահանաներին եկեղեցու զիրկը առանց եկեղեցական առաջիւարանքի ենթարկելու նոցա, բաւական է որ նորա իրենց կամքը յայտնեն:

Բայց, ինչպէս ասացինք, դարձը գժւարացրած է մահմեդական ների ֆանատիկոսութեամբ. դոքա խիստ հսկողութիւն են անում այդ երէկւայ հայերի վրայ, թլապտում են այժմ թէ մեծին թէ փոքրին ու ստիպում կատարել մահմեդական բոլոր ծէսերը:

Մուշից, օրինակ, հաղորդում են, որ իսլամացումը սովորական երեսյթների կարգն է անցած Մուշի դաշտի մէջ: Կինճի 6 գիւղում ողջ մնացածները քիւրդի զիւղն են ապաստանած, և մի Մոլլա-Հասանի որդին հրաւիրած է նոցա իսլամութիւն ընդունել: Պահմոտալի և Կրեխօխէի գիւղերը իսլամացած են, և մնում են քրիստոնեաց միայն Դուռնկայ, Սաղստան և Արա գիւղերի բնակիչները: Վանի Սկապերս, Կարկառ, Մամբատանք գիւղերի կրօնափոխներին խստիւ արգելած է հեռանալ իրենց գիւղերից:

---

Ինչ վերաբերում է տնտեսական կեցութեան, մեր ընթերցող ներին արգէն յայտնի է որ հայ ազգաբնակութիւնը Փոքր-Ասիայում, մեծ մասամբ խսպու թալանւած կոտորածների ժամանակ, մեծագոյն մասամբ մհւրացիկ դրութեան է հասցրած: Աւ մանաւանդ գիւղական ազգաբնակութիւնը, որի թշւառութիւնը շատ զարհութելի է: Ներկայ ամիսներում հայկական ինդիրը

կարծես այլակերպւել է, զառնալով ծայրայեղ չքաւորութիւնից և սովիդ մի ազգ փրկելու. ինդիր: Երէկւայ բարենորոգումների խնդիրը այժմ փոխւել է հայերին օրսայ ապրուատ հայթայթելու խնդիր դառնալով: Եւ նա դարձել է միջազգային, ինչպէս որ հայկական խնդիրը միջազգային էր և դեռ շարունակում է մնալ: Հայերին նիւթական օգնելու գործում գեր կատարում են գըլ-խաւորապէս Հիւսիսային Ամերիկացիք, Անգլիացիք, Հայերը և աւելի նւազ շափով այլ և այլ կաթողիկ ազգեր: Նիւթական օգնութեան մէջ այլ և այլ երկիրներ գրեթէ նոյն աստիճաններով են մասնակցում, ինչ աստիճանի եռանդով նոցա պետական մարմինները վերաբերել են գէալի հայկական շահերը Թիւրքիայում: Նիւթական նպաստների մէջ չեն մասնակցում այն ազգերը, որոնց պետութիւնները բաց է ի բաց թշնամական են գէալի հայկական խնդիրը նկատելու է, սակայն, որ նիւթական օգնութիւնը ոչ մի պետութիւն իր այդպիսին իւր վրայ չառաւ. օգնութիւնը սկսւեց և շարունակում է մասնաւոր բարեգործութեան հիմունքով: Մի փորձ սակայն արւեց Անգլիայում մասնաւոր բարեգործութիւնը որ և է կերպ կատել կառավարութեան անւան հետ: Մարտ ամսին էր որ Անգլօ-հայկական ֆոնդի վարչութիւնը դիմումն արաւ մինիստրութեան զլուխ լորդ Սալսբիւրին խնդիրքով, որ անգլիական կառավարութիւնը իւր հովանաւորութեան ներքոյ առնէ հանգանակութեան գործը: Լորդ Սալսբիւրին պատասխանեց, սակայն, թէ որովհեաւ մինչև այսօր օտար երկիրների սովեալներին և տառապեալներին օգնելը եղել է մասնաւոր առատաձեւնութեան և կարեկցութեան գործ, ուստի նա (Սալսբիւրին) օդտակար չի համարում թագուհու կառավարութեան մինիստրների պաշտօնական միջամտութիւնը այդ գործում: Բայց որքան էլ որ մասնաւոր լինի հայերին նիւթապէս պահպաննելու գործը, այնուամենայնիւ իսկապէս մասնաւորը միայն հանգանակութիւնն է. բայց հանգանակածի բաշխումը անհնարին կը լինէր, եթէ օտար պետութիւնների հովանաւորութիւնը և միջամտութիւնը չլինէր. իսկ այդ հովանաւորութիւնը արտայացուում է Պոլսի գեսապանների միջամտութեամբ յօդուած Փոքր Ասիայի քրիստոնէական կրօնական հաստատութիւնների, որոնց ձեռքով գլխաւորապէս և կատարուում է նպաստների

բաշխումը։ Այդ հովանաւորութիւնը կատարւում է նաև մի քանի պետութիւնների հիւպատոսների միջոցով, որոնք հրահանդ են ստանում հսկել այն նպաստները բաշխելու գործի վրայ, որոնք ստացւում են իրենց կառավարութեան երկրից։

Կրօնական հաստատութիւնների թւումն է նաև հայ-լուսաւորչական եկեղեցին, որի օրգանների ձեռքով կատարւում են հայոց պատրիարքարանից ստացած նպաստները։

Օտար պետութիւնների (զլսաւորապէս Անգլիայի և Հիւսուցին Ամերիկայի միացեալ նահանգների) հովանաւորութիւնը նպաստներ հանգանակելու և մանաւանդ բաշխելու գործում իրական պէտք է համարել և ոչ պլատոնական։ Առանց այն բարեգործութեան, որ կատարւում է ներկայում Փոքր-Ասիայում օտարների ձեռքով և կամ առանց այդ օտարների հովանաւորութեան՝ պէտք է կարծել որ հայ ազգը այդ երկում իսպառ ջնջւած կը լինէր։ Կոտորածը կը լինէր զեռ աւելի ևս մեծ չափսերով, եթէ չը լինէր Անգլիայի ու այլ եւրոպական պետութիւնների պատապանութիւնը։ Իսլամացումը կը լինէր նոյնպէս աւելի ընդարձակ չափսերով։ Իսկ ողջ մնացածները այսօր իրենց ապրուստը հայթայթում են գլխաւորապէս օտարների նիւթական օգնութիւնով և օտար պետութիւնների հովանաւորութեան շնորհիւ։

Եւ ահա, տաճիկ կառավարութիւնը, այդ օտար քրիստոնեաների միսիոնէրական հաստատութիւնները խոշընդուռ ճանաչելով հայերի իսպառ ջնջման Փոքր-Ասիայում, սկսեց այս վերջին ժամանակներս իւր հալածանքը նաև միսիոնարների դէմ ուղղել։ Եւ այն էլ՝ արմատական կերպով—վճռելով բոլոր ամերիկական միսիոնարներին դուրս վանտել Փոքր-Ասիայից։ Տաճիկ կառավարութեան այդ որոշումը, որպէս հասկանալի է, զօրեղ բողոքների հանդիպեց Պոլսի դեսպանների կողմից։ Այդ միջադէպի մասին իսկութիւնը իմացւում է մի նամակից, որ լորդ Սալիսբիւրիի կողմից սորա քարտուղար Սանդերսոն ուղարկեց անգլօ-հայկական նպաստողարին։ Այդ նամակը հետեւալն է.

«Լորդ Սալիսբիւրիի կողմից լատնում եմ, որ ստացւած է, Զեր ան « նամակը, որով Դուք զարձնում էք նորա ուշադրութիւնը սուլթանի հրատարակած նոր իրադէի վրա։ միտիոնարներին Փոքր-Ասիայից ար-

« տաքսելու մասին։ Այդ գործի առիթով ոքր ֆիլիպ կերրի հաղորդում է, « որ նա, Միացեալ-Նահանգների ղետպանի պաշտօնակատարի հետ միա- « սին, առաջադրութիւններ է արել թիւրքաց կառավարութեանը և ստա- « ցել է հանգստացնող պատասխան, թէ ամերիկական միսիոնարները « կը մնան իրենց տեղում, քանի որ նոքա չեն խախտիլ թիւրքաց « օրէնքները»։

Այդ ինդիրը աւելի ևս պարզում է անգլիական համայնքների ժողովում (ազարլամենտ) տեղի ունեցած հարց ու պատասխանից միսիոնարների վերաբերմամբ։ Այդ նիստում (ապրիլի սկիզբներին), չին տոմար) Ստիւենսոն հարցրեց արտաքին գործերի քարտուղա- րին, թէ ինչ տեղեկութիւններ ունի նա տուլթանի իրադէի մա- սին, որ ստորագրւած է, բայց գեռ չի հրատարակւած, և որի զօ- րութեամբ Թիւրքիան արտաքսում է քրիստոնեաց միսիոնարներին և խառնւում է հայերին նողաստներ բաշխելու գործի մէջ։ Կերպոնը առ այդ պատասխանեց։

« Մուշի հիւպատոսը հեռագրել էր, որ թիւրքաց տեղական իշխա- նանութիւնները՝ կազերական իրադէի համաձան՝ պահանջեցին բոլոր « միսիոնարներից թողնել Փոքր-Ասիան և զուրս դնալ Աւելքսանդրետ- « տափի վրացով։ Ֆիլիպ կերրին այդ մասին առաջադրութիւններ արաւ և « պատասխան ստացաւ որ իրադէն չի վերաբերում չատկապէս միսիո- « նարներին, այլ միայն այն անձերին, որոնք մասնակից են ապստամբա- « կան շարժումներին, և որ միսիոնարները, քանի չեն խախտել երկրի « օրէնքները, չեն ենթարկել հալածանքի։ Միացեալ-Նահանգների ներ- « կաչացուցին էլ լաւտեցին, որ իրադէն ետ է վերցրած»։

Թիւրքաց կառավարութիւնը, նաև քան միսիոնարների վերա- բերմամբ արմատական որոշման հասնելը (որ և չաջողւեց հրատա- րակել)՝ փորձել էր ճնշումների այլ եղանակներ։ Նա կամեցել էր, որ եւրոպական նողաստները բաշխւեն թիւրքաց առեաննե- րում։ Այդ մոլոր շատ աշխատեցին օրինակ՝ Բիթլիսի և Խարբերդի կուսակալները։ բայց երբ այդպիսի միջոցները չաջողւեցին, տեղա- կան իշխանութիւնները սկսեցին գաղանի կերպով Պոլսից եկած հրա- մանը գործադրել։ Պոլսից նոր առմարտով ապրիլի 1-ին հեռագրեցին անգլիական լրագիրներին, թէ Բիթլիսի (Բաղէշ) ամերիկական մի- սիոնարները հեռագրել են թէ տեղական իշխանութիւնները արգե- լեցին նոցա իրենց աներից գուրս գալ։ նոյն օրը տաճ մի այլ

հեռագրով նոքա հազորդեցին որ իրենց հրաման է տրւած թողնել  
երկիրը և հարաւային ճամբով գնալ Ալեքսանդրէտուա:

Սցդ իրողութիւնից երևում է որ սուլթանի իրադէն, ղեա  
չհրատարակւած՝ արդէն սկսել էր իրազործւել. տեսանք նաև որ  
անդիսական և ամերիկական գետապանների միջամտութեամբ՝ միսիո-  
նարները մնացին շարունակելու իրենց մարդասիրական գործը  
առանց յարմարւելու աեղական իշխանութիւնների սկզբնական պա-  
հանջներին, որոնց նպատակը ակնյացտնի էր: Թիւրքական միջա-  
մտութիւնը պէտք է սահմանափակւէր միայն մի բանով, ան է  
որ նպաստները տրւեն կարօտեալներին թիւրք սլաշտոնեաների ներ-  
կայութեամբ:

Մեր ընթերցողներին ամսագրիս անցեալ համարից արդէն  
յայտնի է ամերիկացի օրիորդ Բարտընի անունը, որը  $2^{1/2}$  միլիոն  
ֆրանկի օգնութիւն պիտի հասցնի Հայաստանի կարօտեալներին և  
որը արդէն ամենաեռանդուն գործունէութիւն է սկսել իւր գոր-  
ծակալների ձեռքով, ինքը մնալով Կ. Պոլսում: Թիւրք կառավարու-  
թիւնը շատ բաց և իզուր աշխատեց նորան յետ կանգնեցնել  
իւր գիտաւորութիւնից. թիւրքաց մինիստրների խորհուրդը որո-  
շեց վերջը, որ կարելի է թոցլ տալ նորան նպաստները բաժանել  
բաց միայն այն ցուցակներով, որ կ'առաջարկի թիւրքաց հանգանա-  
կիչ յանձնաժողովը (որովհետեւ մի այդպիսի յանձնաժողով էլ կայլ):  
բացի այդ, օրիորդ Բարտընի գործակալները կարող են գնալ միայն  
քաղաքները, իսկ գիւղերում մուսթարները պիտի ցուցակներ  
պատրաստեն և ուղարկեն չքաւորներին քաղաք՝ նպաստ ստանալու  
համար, ցուցակի համաձայն. և այդ մոքով իրադէ պիտի հրա-  
տարակւէր:

Հալածւած միսիոնարների մէջ ամենից շատ խօսակցութեան  
առարկայ եղան ամերիկացի միատր Զորջ Բ. Նապ և միաոր Ռ. Ֆ.  
Քոլ, որոնց թիւրք կառավարութիւնը ստիպեց հեռանալ Բաղէջից:  
Նապը մեղադրւում է թիւրք իշխանութիւնների կողմից՝ թէ հոյ-  
կական շարժումների մէջ խառն է: Նորան այժմ պէտք է որ Դի-  
արբեքիր տեղափոխած լինեն և պահւում լինի այդ տեղի նահան-  
գապետի մօտ իբր հիւր, որ նոյնն է թէ քաղաքավարի կերպով կա-  
լանաւորւած է:

Մի այլ միսիոնար՝ ամերիկացի կնապ զրկւեց Հալէպ, որտեղ պիտի զրկւէր Ալեքսանդրետոտա՝ ամերիկական հիւպատոսին յանձնելու համար։

Ինչ վերաբերում է նպաստների քանակին, մի համագումար կազմել այժմ վաղաժամ է քանի որ գործը շարունակում է, և միւս կողմից մեզ հասած տեղեկութիւնները թերեւ չեն վերաբերում ամբողջութեանը։ Յայտնի է կացուցւած Կ. Պոլի հայոց Պատրիարքի հանգանակածը, որի հաշիւը հրատարակեց ի՞նքը պատրիարք Խղմիրլեան։ բայց այդ հաշիւը առայժմ վերաբերում է ժամանակամիջոցին մինչև յունարի 31.ը. դորա գումարն է 11.320 թրքական լիրա, այսինքն շուրջ 90.000 ռուբլի, չհաշւած այլ նիւթեղէն նորաբերութիւնները։ Անզիւական նպաստները հասել էին մարտ ամսին 34 000 անգլիական ռոկիի, այսինքն մօտ 340.000 թղթադրամ ռուբլու. այդքան գոնէ ստացած էր անգլիական դեսպան Ֆիլիպ Կերբին մինչ մարտի վերջը<sup>1)</sup>։ Կաթոլիկ հոգեւորականութեան յորդուներով դոյցացածը, Ֆրանսիայում, Աւստրիայում և այլն, մեզ յայտնի չէ. յայտնիներից ամենախոշորը Հռոմի սրբակի տւածն է 80.000 ֆրանկ կամ շուրջ 30.000 ռուբլի։ Բայց ամենախոշոր օգնութիւնը գալիս է Հիւսիսացին Ամերիկայից, գլխաւորապէս ամերիկական բողոքական ընկերութիւններից, որոնց նպաստները բաշխում են Փոքր-Ասիայում ամերիկական բողոքական միսիոնարները և Ամերիկական Կարմիր Խաչի ընկերութիւնից, որին նախագահ օր. Բարտըն բերածէ իւր հետ Կ. Պոլիս արդէն  $2\frac{1}{2}$  միլիոն

<sup>1)</sup> Անզլիւական հանգանակութիւնը դեռևս շարունակում է. բնորոշելու համար անգլիական մասնակցութիւնը այդ գործին՝ վիշենք մի քանի ամր նւէրները։ Անզօհական Փոնդը, Գլադստոնի հրաւերով, նւէրներ ստացաւ վերջերքում Ստոկհոլմի (Շվեցիա) մի խումբ համակրողներից 100 լիրա, the Christien լրագրի Ընթերցողներից 88 լիրա, Ուէլսի բարեկամներից 100 լիրա, օր. Հելէն Գլադստոնից 10 լիրա, մի եպիսկոպոսից 10 լիրա—կանագալի Աւետարանական դաշնակյութ եան Տորոնտօվի ձիւղից 198 լիրա, Գլասգովի քաղաքացիներից 100 լիրա, Ազգնի դպրոցի աշակերտներից և ուսուցիչներից 71 լիրա, ինկունի եպիսկոպոսից 20 լիրա. և այլն։

ֆրանկ և կամ շուրջ 1 միլիոն ռուբլի։ Մնացած ամերիկական օգնութիւնը մեզ յացտնի չէ, բայց պէտք է որ խոշոր դումարներ ուղարկւած լինեն։

Մեծ խնդիր է, սակայն, թէ որքան տեսզական ոլիորի լինի նիւթական օդնութիւնը և թէ որքան եղածը կարող է բաւել կարիքի այն ահազին ծաւալին, որ նա ստացել է Փոքր-Ասիայի ամրողջ ընդարձակութեան վրայ։ Տեղեկութիւնները այդ կողմից շատ էլ միսիթարական չեն։ Անա, օրինակ, Տրապիզոնը, ուր հայկացաւ ամերիկական աղքատահնամ յանձնաժողովից օգնութիւն ստացող կարօտեալների թիւը ներկայացնում է 1.728 անձ և ամեն մէջ ստանում է շաբաթական 60 փարա (13 կոռէկ) օգնութիւն միայն, բայց բացի այդ, յանձնաժողովը զիւղացիների համար շինում է խոփ, բրիչ, կացին։ Սակայն մարտի վերջից տեղեկացնում են որ դրամը արդէն սպառելու վրայ է։

Վանից նաև տեղեկութիւն կայ ոչ միսիթարական։ Այդուղ ամերիկացի օրիորդ Քեմբլի կատարած բարեգործութիւնների թէ քանակի և թէ խելացի ձեւի մասին մեր ընթերցողները ծանօթ են արդէն ամսագրիս անցեալ համարից։ և յայտնի է նաև որ նորանից նորաստ ստացողների թիւը (գրեթէ միայն Վասպուրականի զիւղացիներ) 10—12 և մինչև իսկ 15 հազարի են հաշւում։ Արդ միջոցների սղութեան սպառմառով ձրի հաց ստացողների բաժինները արդէն կէսի են իշեցրած, ըստ տեղեկութեան մարտի փեր ջից։ Միա Քեմբլ կամենում էր նաև դարբնոց և հիւսնի աշխատանոցներ բանալ՝ զիւղացիներին երկրագործական զործիքներ շինելու համար։ Սակայն այդ զիւղաւորութիւնը չիրագործեց և դրամ մնացել էր միայն 2—3 շաբաթւայ համար։ Մարտի սկզբները զիւղացիներից շատերը զիւղ բաշւեցին տաճիկ կառավարութեան սահմանը և անդիմական հիւսպատոսի յորդորանքով։ Բայց երիւ շաբաթ անց՝ նորից քաղաք թափւեցին՝ ընդհանուր անսապահովութեան պատճառով։ Զօրք ուղարկւեց զիւղերը կարդ պահպաներու համար։ բայց արդէն յայտնի է թէ ինչ ապահովութիւն է ներփակացնում տաճիկ զօրքը անզէն զիւղացու աչքում, որը ըշապատուած է քիւրդերով և վանաատիկոսներով։

Վասպուրականի զիւղացիք կենդրուացել են զլսաւորապէս Բաշ-

կալայում և Վանում, և վերջինում 20—25 տեղ փոքր խմբերով զօրբեր՝ են կանգնեցրած՝ կարգը պահպանելու համար։ Եւ այդ այդպիս է Վասարուրականում, ուր կոտորածը համեմատապէս ամենից քիչն է եղել։ Թիւրք ամբոխի վրայ վատահութիւն չկայ, չնայած որ Վանի կուսակալը խոհեմ անձն է ճանաշւած հայերի կողմից և չնայած որ մինչ այժմ նա կարողացել է ծանր պատահականութիւնների դէմն առնել։ Բայց շուկան գոնէ մինչ մարտի վերջը որիմն վեց ամիս շարունակ փակ էր։

Բայց ինչքան և անբաւարար լինի հասնող օգնութիւնը՝ մանաւանդ ամերիկական միսիոնարների ցոյց տւած բուն քրիստոնէական անձնիրութիւնը հիմնալի է։ Վանում գործող բժիշկ օրիորդ Քեմբլի մասին արդէն մեր ընթերցողները գիտեն ամսագրիս անցեալ համարից։ Նոյն երեսյթն է Խարբերդում, ուր օրիորդներ Սէյմուր և Պուշիրնց բոլոր ժամանակը նւիրել են կանանց աշխատանոցին, ուր, ըստ աեզեկութեան 1-ից փետրւարի, 330 կարանողներ էին աշխատում։ Նոքա պատրաստած էին գեռ այդ ժամանակ 4000 ձեռք շոր, շաղիկ և վարտիկ, 281 անկողին, 395 վերմակ, որոնք բոլորը բաշխւած էին կարօտեալներին։

Ճրապակ կոնի հայկա-ամերիկական յանձնաժողովի մասին տեղեկութիւն տւինք վերև. իսկ Ամերիկայից Պոլիս եկած օրիորդ Բարունի մասին դիտենք, որ ամեն երկու շաբաթ մի անգամ գաւառներն է ուղարկում հազուստի և մթերքների մեծ քանակութիւն, որոնք նորա գործակալների ձեռքով բաժանւում են կարօտեալներին։ Համաձայն տեղեկութեան մարտ ամսից՝ նորա կարգադրութեամբ Բէյրութից Մարտ և Զէյթուն ուղևորւեցին 8 բժիշկ և շատ դեղագործներ, գեղերի մեծ պաշարով։ Այդ կողմերը նպաստներ ստացողների թիւը հաշում են 14.000 հոգի, և այդտեղ, որքան գիտենք, գլխաւորապէս այն գլխական օգնութիւնն է գործում։ Եւ մարտին էր, որ անգլիական նպաստող ֆոնդը պաշտօնական ճամբով նորից 5.000 անգլիական ոսկի (մօտ 50 հազար ռուբլի) ուղարկեց։ Եւ Վեստմինստրեան դուքսը մտադիր էր Զէյթունի կողմերը յասուկ մարդ ուղարկել նպաստները բաշխելու համար։

Հեռաւոր Ամերիկայի մարդասէր վերաբերմունքի հետ, ինչպէս այժմ պարզում է, զուգընթաց չի եղել Հիւս. Ամերիկայի Միա-

ցեալ Նահանգների դեսպան ալ. Թողլի գործունէութիւնը Կ. Պոլսումն Պր. Թողլը իւր պաշտօնատեղից կանչւած է այժմ. կարծում է թէ նա թրքամոլ է եղած և չի կարողացել յաջողցնել որ Խարբերդում միստր Հընթը և Կարինում միստր Զըլթն ամերիկան հիւպատոսներ անւանւեն:

Պէտք է առած, որ պետութիւնների ներգործութիւնը Թիւրքիայում այն չափով իրական է լինում, որքան շատ հիւպատոսներ են ունենում երկրի մէջ: Դեռ ևս անցեալ տարի Խոալիտն, կամնալով հայկական խնդրի մէջ աւելի ներգործական դեր կասուրել աշխատեց իւր հիւպատոսների թիւրք Փոքր-Ասիայում աւելցնել որին արգելք եղաւ Դուռը: Անգլիան Փոքր-Ասիայում երկ նոր հիւպատոսներ հաստատեց. և այդ բաւական չհամարելով՝ Անգլօհայկան մասնաժողովը Լոնդոնում վճռել էր անգլիական կառավարութեան հետ խօսել՝ կրկին նոր հիւպատոսութիւններ հաստատելու մասին Փոքր-Ասիայում:

Քայց թշւառութիւնը շատ է մեծ. առւս և անգլիական լրադիրների տեղեկութիւններով՝ թշւառութիւնը Փոքր Ասիայում աւելի է մեծ է քան մինչ այժմ յայտնի էր: Նաև Վանից օրիորդ Կեմբը հազորդել է կանանց նպաստող անգլիական լնկերութեան, թէ օգնութեան գործը դեռ շատ աշխատանք է պահանջում:

Այս վկայութիւնների դիմաց մենք զարմանում ենք Հայերի համեմատալէս անտարբեր վերաբերմանքի վրաց դէպի կարօտեալներին օգնելու գործը: Կ. Պոլսի հայոց-Պատրիարքի ստացած գումարները թշւառութեան ահազին ծաւալի հետ համեմատած՝ շատ են չնչին: Որևէ է 100 կամ 200 հազար ռուբլի մի ազգից, որը խոշոր դրամատէրերի մեծ գասակարդ ունի, և մի անպիսի ժամանակի երբ հեռաւոր ազգերը այնքան ուշադրութիւն են դարձած նոյն այդ ազգի թշւառութեան վրաց—ահա մի հաշւեկիու, որը պարծանքի տիտղոս չպիտի լնծայէ հայ ազգին:

Ասացինք, որ թշւառութիւնը շատ է մեծ: Եւ չպիտի կարծել թէ հայ ժողովրդի հարստահարութիւնը վերջացած է...ոչ, նայած

որ հայ ժողովուրդը օտարների նպաստներով է ապրում, թիւրք կառավարութիւնը ամենայն խստութեամբ իւր հարկերն է ժողովում: Դիարբեքիրից, օրինակ, հաղորդում են որ նահանգապետի կարգադրութիւնամբ՝ հարկերը վճարել չկարենալու պատճառով՝ հայրի ունեցած հողերը ծախում են ամենաէժան գնով և թիւրքերը ձեռքը անցկացնում, որպէս զի հայը հողից զրկւի:

Օգնութեան անբաւարարութիւնը դրգել է Սինկլէր հոգեւորականին առաջարկել ամոգլիսկան եպիսկոպոսներին ցաւակցութիւն յայտնել եղբայրակից ։ Հայ քրիստոնեաներին և դիմել նոյն իսկ ռուս եպիսկոպոսներին, որ սոքա գործ դնեն իրենց ազգեցութիւնը ի պաշտպանութիւն հարեւան քրիստոնեաց ժողովրդի:

Հանգանակութիւնները դեռ ևս շարունակում են:

### Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ:

Ահա հանգանակութեան հաշւեցոյցը, որ ներկայացրել է Ա. Պատրիարք Խղմիրլեանը և որի մասին վերևի յօդւածում ցիշատակութիւն կար:

### ՀԱՇԻԵՑՈՅՑ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Ինպատ Սասունի եւ ընդհանուր արկածելոց

1895 թ. ապրիլի 11-ը 1896 թ. լուսար 31

Հաշիւ հանգանակութեան Սասունի արկածելոց

Կ. Պոլսով թագերէ հանդանակեալ 1744 օտարանեան ոսկի 77 $\frac{1}{2}$  դրուշ:  
Մի քանի գաւառներէ 1105 ոսկի 12 $\frac{1}{2}$  դր., Սգիպսոսէ 441 ոսկի  
75 դ., Արտասահման բնակող ազգալիններէ հանգանակեալ 1504 ոսկի  
62 $\frac{1}{2}$  դ.:

Մասնաւոր ազգալիններէ նւիրեալ 435—71: Գումար 5231 ոսկի  
98 $\frac{1}{2}$  դրուշ:

Սասուն դրկած նպաստ զանազան թւականներով 3510 ոսկի:  
Դրոշմաթուղթ և դրամական միաս 1 ոսկի 80 $\frac{1}{2}$  դր.: Պատրաստի  
դրամ 1720 ոսկի 18 դր.: Գումար 5231 ոսկի 98 $\frac{1}{2}$  դր.:

Հաշիւ հասարակութեան ընդհանուր արկածելոց

կ. Պոլսու թաղերէ հանգանակեալ 1198—60 $\frac{1}{2}$ , Մի քանի գաւառ-ներէ 622—61 $\frac{1}{2}$ , Եղիպտոսէ 1654—20 $\frac{1}{2}$ , Արտասահման գտնւող ազգա-վին պաշտօնական մարմիններէ և ազգակիններէ հանգանակեալ 5509—41 $\frac{1}{2}$ , Մասնաւոր ազգավիններէ նվիրեալ 1169—36, Քրէդի Լիօնէ՛ի ձևուար հասած նպաստ 1169—2, Գումարը 11.320 լիրա 22 դրուչ:

### Ուղարկւած է՝

Կարին քաղաք և գիւղօրակք 230 ոսկի, Բասէն 130, Քղի 220, Դերջան 150, Խապէր 50, Բաբերդ 450, Քեմախ 180, Երզնկալ 300, Խնուս 120 ոսկի, Գումար 1830 լիրա:

Վան քաղաք և գիւղօրակք 700, Աղթամար 100, Գումար 800 լիրա Բաղէշ քաղաք և գիւղօրակք 700, Աղերդ 380, Մուշ 150, Գումար 1230 լիրա:

Քարբերդ քաղաք և գիւղօրակք 700, Արաբկիր 500, Աղբն 100, Զմշկածագ 230, Չեքուչ 230, Բալոն 360, Ակն 250, Արղբն 150, Մալ-թիս 300 լիրա: Գումար 2820 լիրա:

Սեբաստիա քաղաք և գիւղօրակք 300, Սեբաստիակի գիւղօրէից հա-մար 100, Կիւքին և գիւղօրակք 250, Շապին քաղաք և գիւղօրակք 250, Տիւըրիկ և գիւղօրակք 280, Ամասիա-Մարզուան և գիւղօրակք 250, Տա-րենտէ 150, Թամլարա 150, Մանճըլըխ, Եսքէխսար, Գարս-հածի-օղլու Գանդալ, Ղաղի, Մաղարա, Գանթարող, Խուրտլու-Գակեա, Պօղարմու և Ռերաշի թեմներուն 100, Գումար 1830 լիրա:

Տիգրանակերտ և գիւղօրակք 550, Զարսանճագ և գիւղօրակք 330, Գումար 880 լիրա:

Տրապիզոն քաղաք և գիւղօրակք 300, Ատանա Կիլիկիու արկածե-լոց համար 500, Մարաշ 300, Անթապ 50, Գումար 1150 լիրա:

Եղեսիա քաղաք և գիւղօրակք 290, Կեսարեակ քաղաք և գիւղօրակք 200, Գումար 490:

Մասնաւոր արկածելոց 13 լիրա 10 դրուչ:

Զանաղան ծախս և դրամական մեաս 14 լիրա 94 դր., Պատրաստի

դրամ 262 լիրա 18 դրուչ:

Ընդհանուր գումար 11.320 լիրա 22 դրուչ:

## ԴԱԻՎԱՆԻԹԻՒՆԵՐԻ ԽՆԴԻՐ

ՍԼԱԼՈՆԱԼԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷջ ՊԵՏԵՐՅՈՒՐԳՈՒՄ:

Քեներալ Ա. Կիրէեւի «Ռուսաստանի կոչման մասին յունադաւան Արեւելքում» ճառը,  
(Ընկերութեան ժողով, ապրիլի 7 <sup>1)</sup>)

«Ա. Ստեֆանովի դաշնադրութիւնից ի վեր ոչ մի պետութիւն չէ համարձակում խաղաղութիւնը վրումիլ. բայց դա մի ժամանակաւոր բան է: Յունադաւան արևելքում անշոշած մի կոիւ պիտի բրթիւ Ռուսաստանին վերապահւած է ապահովել ու հաստատել արևելքում լունական դաւանութիւնը և դրա ներկազացուցիչը հանդիսանալ միւս պետութեանց առջև ալդ է նրա վեհ կոչումը:

«1853 թւեկանի պատերազմը դրամակի առաջին արարւածն էր. երկրորդ արարւածը Ս. Ստեֆանովում տեղի գտաւ. երրորդը մօտակալ է: Օսմանեան ժառանգութեան բաժմնումը կարող է շուտով վրաչ համել և և մենք պիտի պատրաստ լինենք: Օսմանեան զօրութեան շուքն արդէն նախմանալու վրաչ է:

Մեր հերթական խնդիրն աչժմ կրօնականն է: Պէտք է ասել որ ինքնուրուն եկեղեցիներն արևելքում բազմաթիւ չեն և մոզ են, և այս պատճառով նրանք ստիպւած են ոչ միայն օտարազգիներին դիմել, այլ և օտարազաւաններին. ստրկութիւնը կորստաբեր է եկեղեցու համար, իսկ հովանաւորութիւնը՝ ևս աւելի:

Բայց Բնիչ կը լինի կոււի հետեանքը. Պատմութիւնը ցոչց է տալիս մեզ Հոռմի անթիւ քաղթանակները արևելքն իրան ենթարկելու զործում: Արդ Բնիչ կը լինի, երբ որ թիւրքերը գէպի Ասիա վերապաւնան: Արդեօք մասձել էք ալդ մասին: Խոկ Հռոմը վաղուց մտածել է:

Արդ Բնիչ զէնքեր կարող է հանդէս հանել Հռոմը արևելքի թուլ ուժերի դէմ կուելիս: Նախ նա ապագան հեռւից նախատեսելու շնորհ ունի. երկրորդ՝ նա ունի առ ձեռն պատրաստ զօրապետների մի ահագին խումբ՝ արևելքի տատանումը տեսնելուն պէս՝ ալդ արևելքը եպիսկոպոսներով հեղիղելու և իւր իշխանութեան ենթարկելու համար. նրա երրորդ զէնքը

1) Տպում հնք իր վկաչաթուղթ:

Նենդութեամբ հնարւած ունիան է և այն ձգտումը, որով գժառեցնում է յօնադաւաններին իրար հետ և ասպա թէ չօգուտ այն կողմի վճիռ զնում, ով որ իրան կը դիմէ: Պապի իշխանութիւնը զուրկ է իրաւ ստեղծողական զօրութիւնից, բայց քաջազելու համար նա միշտ զօրեղ է. զուր չէր Պամբէտաւէի ասածը, թէ կղերականութիւնը ներքին գործածութեան համար մի անպէտք բան է, բայց արտահանութեան համար շատ ձեռնտու ապրանք է:

«Անչպէս որ քաղաքական առմամբ մեզ համար կարենը է ոլաւոնական աշխարհը, անպէս էլ կրօնական առմամբ՝ արևելեան աշխարհը՝ որով հետեւ Ռուսիան ընդհանրական եկեղեցու մէկ մասն է: Եւ ինչպէս որ 20 տարի առաջ աղաղակում էին, թէ ինչո՞ւ մենք չօգուտ սլաւոնացոց չարժումն սկսանք, նոյնպէս և ալժմ կարող են հարցնել ընդհանրական եկեղեցու համար սկսած շարժման առթիւ: Սակայն արդեօք մտածում ենք մօտալուս փոթորկի մասին: Արդեօք զգուշութեան միջոցներ գործ դրէլ ենք չանկարծակի չմոնւելու համար:»

«Մեզ անհրաժեշտ է փութով պատրաստել զերահաս վտանգն դիմադրելու համար, անհրաժեշտ է անմիջապէս ձեռնամուխ լինել լուսադաւան արեելքի մանրակրկիտ ուսումնասիրութեանը. պարզել թէ ինչ է պատճառը նրա չլութեան հոռմէական պրոպագանդավի առջև չատով ներկայացուցիչներ ունենալու ինքնուրուն եկեղեցիների մօտ՝ մթութեան մէջ չխարիսափելու համար. միանալ տաճը և համաձայնութեան գալ թէ ինչ է մեր անելիքը: Ամենից առաջ մեզ հարկաւոր է մի ընդհանրական ժողով գումարել: Ընհանրական ժողովի հեղինակութիւնը մեզ անհրաժեշտ է հործւածի խնդիրը պարզելու, Հայկական եկեղեցու խնդիրը որոշելու և նմանապէս հաբեշստանցոց ու դպտացոց եկեղեցիների խնդիրները պարզաբանելու համար:»

«Արդեօք այդ բոլորը բաւական է: որպէս զի մեր լաղթանակն ալեւլքում ապահովի: Ոչ, այդ զեռ բաւական չէ: Մենք ինքներս պիտի տոգորւած լինինք մեր գործի արդարութեան համոզմամբ: Միան այն ժամանակ Ռուսիան ձեռնաս կը լինի զլուխ բերել իւր գործը լունապաւան արենելքում, և թող Աստւած այդ գործում չաջողութիւն պարզենք մեզ:»

## ՅԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԱԽԱԼՑԽԱՅԻ ՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Մուրճ»-ում մեր չողւածին դուք՝ Արտահամ՝ քահ. Ղազագեան,  
Ա. Սիմէօնեան, Ա. Ալվազեանց, Յ. Յակոբեանց և Ս. Տէր-Կարապետեանց,  
այսինքն ճիւղի վարչութեան նախագահ և անդամներ միասին—թիֆլիսի  
բոլոր հայոց օրաթերթին մի շրջաբերական նամակ էք ուղարկել, որով  
դուք առաջարկում էք մեզ ափաստերով և միմիայն փաստերով ապացուցա-  
նել մեր այն խօսքերը, որոնցով մենք ձեզ՝ Ընկերութեան Ախալցխակի  
ժիղի վարչութեան՝ մեղադրում ենք կանոնադրութեանը չյարմարելու, հաշիւ-  
ները ուշացնելու, գործը ծգծելու, խանդաբելու, ինքնագլուխ կերպով ուրիշ  
անկանոնութիւններ կատարելու և խորհրդի ադդարարութիւններին հեշտու-  
թեամբ հնապատկիւնու. և Խորհրդին միշտ որ և է զինացաւանք պատճառելու մէջ։  
Հակառակ դէպքում վարչութիւնդ սպառնում է բարտարարել որ  
«պարոնի (Լուսինիի) գրածը համարելու է ծայրէ ի ծայր ստութիւն և ան-  
խիս գրաբարտութիւն»։

Նթէ չենք սխալւում, սա առաջին անգամն է, որ այսպիսի մի լե-  
զու է գործածում Մուրճի գլւմ. Աղ առաջնակութեան պատիւը Ախալ-  
ցխակի մի մարմնին է պատկանում։

Այժմ, երբ ընթերցողը կը կարդաই մեղնից պահանջւած ապացուց-  
ները, ապշած կը մնաই թէ այդ ինչ խելքով մեր ախալցխացի պարոնները  
ալլքան ջանք են գործ գնում ընդհանուրի գլւտութեանը հասցնել այն,  
ինչ որ իրմեց սկետք է քաջ լայտնի լինի. թէ գուցէ նոքա մոտածել են  
որ մեր ասածները հաստատելու համար մենք կարօտութիւն կ'ունենանք  
կենդանի վկաներ դուրս կանչելու, և գուցէ դժւարանանք մարդիկ  
գտնելու, որոնք պատրաստ լինեն հրապարակաւ վկալութիւն տալ?»

Դիմնենք, ուրեմն, Ախալցխակի ճիւղի կողմից ացդքան վստահութեամբ  
մեղնից պահանջւած ապացոյներին և զորա համար վկաէ կանչենք Հայոց  
թարեգ. Ընկերութեան Խորհրդի նիստի № 4 արձանագրութիւնը, մի նիստ,  
որին մասնակցել են նախագահող Բ. Մելիք-Ղարազեօքեան, այլ անդամներ՝  
Ալիքս. Մելիք-Աղարեանց, Ներսէս Ալվարէզեան, Յովհ. Ալենդրիանեան,  
թէ. Վահան Արծրունի, Նիստը եղել է 25 լուն. 1895 թ.. Ացդ արձա-  
նագրութիւնից առաջ կը բերենք այն կտորները, որոնք ուղղակի մեր

գործին են վերաբերում։ Այդ կտորները հասկանալի դարձնելու համար չափանենք, որ նոքա վերաբերում են հէնց պ. իս. Մելիք-Հայկազեանցին պատւաւոր անդամ ընտրելու ինդրին, մի խնդիր, որ Ախալցխալի ճիւղը ինքնազուխ կերպով, հակառակ կանոնադրութեան վճռել էր ինքը, առանց զիտութեան կենտրոնի, 1894 թ. նուեմբեր ամսին։ Բաց որովհետև վերջապէս մի օր պէտք է դիմէն կենտրոնին, ուստի կենտրոնը (Խորհուրդը) զբաղել էր այդ խնդրով առաջին անգամ իւր նիտում առ 25 տուն։ 1895 թւականի Աշտեղ առաջարկւած է եղել Խորհրդին Ախալցխալի ճիւղի թողթը նորա կազմած տեղեկադիրը պ. Մելիք-Հայկազեանցի գործունէւթեան մասին և արձանագրութիւնը տեղական ընդհանուր ժողովի, որը, ինչպէս վկայում է արձանագրութիւնը, և ինչպէս արդէն չափանի է ամենքին՝ ամիաձան որոշել է ընտրել պ. իս. Մելիք-Հայկազեանցին ընկերութեան պատւաւոր անգամ, չանձնարարելով վարչութեան առն վեռի պատճէնը տեղեկագրի հետ ուղարկելու խորհրդին՝ ի հաստատութիւն, նաև ժողովի վեռը տեղեկագրի հետ միասին անմիջապէս ուղարկել պ. Մելիք-Հայկազեանցին։

Այս օրինազանցութեան մասին գեռ չետու բաց գանք մեր քաղաքաներին Խորհրդի նիտու արձանագրութիւնից։ Դուրս մէջ առաջ ինչ խօսքեր են ասւած Ախալցխալի ճիւղի կամակորութիւնների մասին հպատակւելու Ընկերութեան կանոնագրութեանը։

« Կանոնագրութեան § 44-ի համաձան Ընկերութեան պատւածու առ անդամի ընտրութիւնը կատարում է կենտրոնի ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկութեամբ։ Այդ ընդհանուր ժողովում մի « քանի անգամ կարդացել եւ ընտել են Խորհրդի գեկուցումները Ախալցխալի « վարչութեան գանցառութիւնների մասին։ 1891, 92 և 93 թւականների « գեկուցումների եւ տեղեկագրիների մէջ արձանագրուած են Ախալցխալի « վարչութեան գանցառութիւնները։ Թէ այդ գեկուցագրերից և թէ Խորհրդի գործերից չափնուում է, որ... (Ախալցխալի ճիւղի) վարչու « թիւնը զլացել է շատ անգամ կատարելու կենտրոնի օրինական պահանջները, ցուցմունքները և հրահանգները և նոյն իսկ մինչեւ այսօր « Խորհուրդը որ և է տեղեկութիւն չունի Ախալցխալի ընթերցաւ « բանի, այն է նրա շինութեան և այլ պահմանների մասին...»

Լաւ հասկացէք. Ընկերութեան խորհուրդը այդ առդերով վկայում է, որ նա, հիմնւած կանոնագրութեան վրայ ձեզ հրահանգներ է տալիս չէք կատարում. ցուցմունքներ է անում—դուք չէք ընդունում. օրինական պահանջներ է անում ձեզնից պաշտոնապէս—և դուք չէք լսում. Ընկերութեան խորհուրդը այդ պաշտօնական արձանագրութիւնով դալիս է նաև վկայութիւն տալու, որ ձեր զանցառութիւնները այնքան շատ են, որ նոքա մի քանի անգամ ընդհանուր ժողովներում քննութեան նիւթ են եղել, և որ վերջապէս այդ օրինազանցութիւնները թւած են 1891, 92 և 93 թւականների պաշտօնական գեկուցագրերի և տեղեկագրիների մէջ»

Մենք կը տեսնենք թէ Ընկերութեան Ախալցխամի ճիւդի վարչութեան ներկաւ անդամները ինչպէս են կարողանալս դուրս գալ մեր առաջ բրած վկայութիւնների ծանրութեան տակից։ Մեր կարծիքով՝ այժմ նոցա ուրիշ ոչինչ չի մնում անել եթէ ոչ, իսկը Ընկերութեան բարձրագուն շահերի՝ հեռանալ իրենց տեղերից՝ գեթ մի քանի տարի ապաշխարելու համար և իրենց ալդ միակ խելացի վճռի մասին մի լրջաբերական նամակով և իրենց լիակատար՝ ստորագրութեամբ շտապել հաղորդելու թիֆլուի անհաջողութեան, որոնց փրկարար զօրութեանը անքան հաւատացած են...

Կան անհատներ, որոնց մէջ իսպառ մարած է կազմակերպութեան գաղափարը. զոքա չեն կարողանում ըմբռնել թէ ինչին են ծառակում Ընդարձակ կաղմակերպութիւնները. զցէք աղդպիսի անհատին մի կարգաւորած և բաղմաճիւղ Ընկերութեան մէջ—նա, ինչպէս մի վայրենի, որը չի ընտելանում Ընկերական բարդ կաղմակերպութեան պահանջներին, կը չարունակի չճանաչել Ընդհանրութիւնը. Ինչով արդեօք պիտի բացատրել Ախալցխամի ճիւդի վարչութեան ընթացքը, ինչով բացատրել որ մի բազմաձիւղ Ընկերութեան կենտրոնը տարիների ընթացքում չի չաջողում վկայի բերելու ալդ մարդկանց. Ինչ վերաբերում է մեզ՝ մենք ալդ բացատրում ենք նրանով, որ ոչ թէ միայն անհատներն են որ Ընդունակ են իրենց մէջ հաճգցնել կաղմակերպութեան պատկանելու զգացմանքը, ալդ ալդ բանին ընդունակ են ամբողջ հասարակութիւններ և, լավոնի պարմանակում, նոյն իսկ մի ազգ իւր Ընդհանուր առմամբ. Դոցա մէջ որքան նսեմացած է զաղափարը, անքան զօրեղ է ընազդը, ինստինկտը, ան է ինստինկտը՝ ամեն ինչ իրենց նեղ չըշանին զարմարեցնել, ամեն ինչ դէպի իրենց քաշել. զոքա արհամարում են նոյն իսկ այն պայմանը, առանց որի առիր չեն կարող, որովհետեւ նոքա թէն լսում են թէ ինչ որ մի աղդպիսի պայման կաչ, բայց ալդ պայմանի գիտակցութիւնը նոցա մէջ հեշտութեամբ չի մարմնանում. Դոցա ասում էք—մի խախտէք. կանոնադրութիւնը, որովհետեւ այդ կանոնադրութիւնովն է միայն որ ճիւղը գոյութիւն ունի. բայց չէ, նոքա այն աստիճանի խորթ են կաղմակերպութեան գաղափարին, որ կ'սկիեն վիճել նոյն իսկ կանոնադրութեան պարզ չօդածների զէմ. Մենք ծանրանումենք ալդ հանգամանքի վրաց որովհետեւ այս զէպէքը պիտի գալ պարզելու մեր միտքը թէ չախտնի հասարակութիւնների և անհատների մէջ որ ասովիճան կարող է կորած լինել կեանքի անհրաժեշտ պայմանին ինքնաբերաբար և նթարկելու հասկացողութիւնը. Բարեգ. Ընկերութեան կանոնադրութիւնը (§ 44. զ.) պարզ ու որոշ ասում է թէ Ընկերութեան կենտրոնի ընդհանուր ժողովն է չատկացնում պատւաւոր անդամութեան կոչումը. Բայց ինչ է անում Ախալ-

ցիսակի ճիւղը. նա անցնում է կանոնադրութեան ալդ լոդւածի գլխի վրախվ էն, ինչ գործ ունի կենտրոնի ընդհանուր ժողովը, մենք ախալցիսացի չենք. և նա, ում մենք պատւել ենք ուզում՝ ախալցիսացի չէ, մեր ճիւղի համար չի գործել. ուրիշն՝ էլ ինչ մէկ էլ զլուխ ցաւացնենք. վճռենք ինքներա. Եւ այս անդամ նոյնաբէս Ընկերութեան Խորհուրդն է զալիս պատմելու մեզ, թէ ինչպէս է վարւել Ախալցիսակի ճիւղը ալդ խնդրում կարգացէք Խորհրդի 25 չունաւրի 1895 թւականի նիստի պաշտօնական արձանագրութեան հետեւալ տողերը. Խոսքը Ախալցիսակի ճիւղի վարչութեան մասին է, որը՝

«1894 թ. օգոստ, 29-ի նիստում որոշեց պատւել պ. Մ.-Հ.-ին և աղն « որոշումն առաջարկեց սեպտ. 18-ին կազացած տեղական ընդհանուր « ժողովին, որն չանձնեց վարչութեանը կազմել պ. Մ.-Հ.-ի գոր « և ծունչութեան մասին մանրամասն տեղեկագիր. Այդ տեղեկագիրը « վարչութիւնը առաջարկեց նույնը. 6-ին կազացած տեղական ընդ « հանուր ժողովին, որը միաձան որոշել է, ինչպէս գրւած է արձա « նագրութեան մէջ<sup>1)</sup>՝ «ընտրել նրան ընկերութեանս պատւար անդամ, « չանձնարարելով վարչութեանը սոյն վճռի պատճէնը տեղեկագիր « հետ ուղարկելու խորհրդին ի հաստատութիւն, նաև ժողովի վճրոը տե « դեկագրի հետ միասին անմիջապէս ուղարկել պ. Մ.-Հ.-ին»:

Ինչպէս տեսնում էք՝ Ախալցիսակի ճիւղը իսկի չի էլ չիշել կմնացունի ընդհանուր ժողովը, որին միայն պատկանում է պատւաւոր անդամի ընտրութիւնը. այլ նա, Ախալցիսակի ճիւղը, շատ-շատ բարեհաճած է եղել Խորհրդին ուղարկել իւր վճռի պատճէնը ի հաստատութիւն. Սինչդեռ ըստ կանոնագրութեան նաև կենտրոնի Խորհուրդը իրաւումք չունի հաստատել ալդպիսի մի վճիռ, քանի որ միայն կենտրոնի ընդհանուր ժողովին է պատկանում այն էլ ոչ թէ հաստատելը, այլ ուղղակի ընտրելը մէկին պատւար անդամ.

Նկատեցէք, որ Ախալցիսակի ճիւղը ոչ միայն ուղեցել է ինքը օրինագանցութիւն անել, այլ զեռ ուղեցել է ընկերութեան Խորհուրդն էլ ինչպէս ասենք... Ո՛՛ՈՎԵՌԻ... Եւ նկատեցէք, որ ալդ հաստատութիւնն էլ Խորհրդի կողմից Ախալցիսակի ճիւղը լոկ ծեւականութիւն է համարել, այն աստիճան, որ իւր՝ ճիւղի՝ ինքնաղլում կերպով կազացրած վիրոը տնօրինել է անմիջապէս ուղարկել պ. Մելիք-Հայկացեանցին, չսպասելով թէկուզ Խորհրդի կողմից վճռի հաստատման...

Դէ, ասացէք խնդրեմ, օրինաղանցութիւններ կատարելու անելի տրամադիր մի պաշտօնական մարմին կարմղ էք երևակաչել:

Խորհուրդը այդ գործում իսկոցն նկատել էր օրինաղանցութիւնը

<sup>1)</sup> Այսինքն Ախալցիսակի տեղական ընդհանուր ժողովի արձանագրութեան մէջ,

իսկ այն պատիւը, որ Ախալցխացիք կամեցել էին տալ ոչ միայն պ. Մելիք-Հայկազեանցին, այլ և Ծնկերութեան Խորհրդին՝ սա չէր ընդունել և իր արձանադրութեամբ հասկացրել է որ իրեն՝ Խորհրդին՝ չի պատկանում աղ գործի հաստատման իրաւունքը, Բաց Խորհուրդը որը անքան տարիներ շրջունակ չէր կարողացել ախելքի բերել Ախալցխայի մասնաճիւղը, այս անգամ ևս չէր կամեցել խիստ միջոցների զիմնել օրինադանցների դէմ. և գուցէ Խորհուրդը չէր էլ նկատել որ ախալցխացոց արածը ալդ գործում սկզբից մինչև վերջ օրինազանցութիւն էր. նա զեռ համեմատապէս մեղմ է վերաբերել դէպի Ծնկերութեան ճիւղը. Խորհրդի անդամները, բաւականացել են նկատելով, որ իրենք, ինչպէս առած է նիստի արձանագրութեան մէջ, «ուշագրութիւն են դարձնում և այն հանդամանքի վրայ, որ Ախալցխայի տեղական ընդհանուր ժողովը շտապել է հաղորդել իւր վճռը պ. Մելիք-Հայկազեանցին, չսպասելով խնդրի վերջնական վճռին» և նկատելով որ «այդ վարմունքը ամենաքիչը անտակտութիւն է»:

Հասկանում էք—ամենաքիչը անտակտութիւն է. տեսէք, ուրեմն, որ Խորհուրդը հասկացել է բանի խակութիւնը, բաց չի կամեցել Ախալցխացոց արարքին իւր խոկական անունը տալ...

Եւ ահա Խորհուրդը վճռում է սուն նիստում.

« Դիմել տալ Ախալցխայի ճիւղին որ նա անտակտութիւն է գործել, հաղորդելով տեղական ընդհանուր ժողովի վճռը պ. Մելիք-Հայկազեանցին և չէ սպասել խնդրի վերջնական լուծման»:

Եւ ահա, երբ առթից օգտւելով, ստուգ տեղեկութիւնների հիման վրա մենք քննադատութեան էինք առել Ախալցխացի հասարակութեան արարքը, երբ, Խորհրդի և ընդհանուր ժողովների կողմից քանից վկազած ապօրինութիւնը մենք լիշտակել էինք մեր լուսածում, գոքա, ալդ անողելիները, ի լուր ամենքի մեզնից ապացուցներ են պահանջում: Եւ դոքա այս աստիճանի անուղղիլիներ են, որ փոխանակ սթափելու, ոչ միայն ապացուցներ են պահանջում իրենց կատարած զանցառութիւնների մասին, ալլ և նուն շրջաբերական նամակում նոքա նորից և նորից խնդիր են շնուռ կամունադրութեան որուց կէտերը, Տեսէք թէ ինչպէս կը հաւանէք այս լեզուն.

«...պ. Լուսինին, առաջ բերելով Բարեգործական Ծնկերութեան կանոնադրութեան այլ եւ այլ կէտեր, պատւաւոր անդամ ընտրելու ինդրի վերաբերմամբ իր հայեացքներն է պարզում. պարոնը ճգնում է ապացուցանել, ու իբր Ախալցխայի վարչութեան պատւաւոր անդամ ընտրելու վերաբերութեամբ արած առաջարկութիւնը անկանոն է, և թէ վարչութեան այդ վարմունքը անտակտ է և այն. Թող-

« Նելով մի կողմ պր Լուսինիի փաստաբանութիջները պատւաւոր անդամ  
« Ընտրելու խնդրի վերաբերեալ, մի խնդրի, որի մասին այնքան  
« գրւեց ու խօսւեց ու որը, մեր կարծիքով, նորից պարզելու հարի  
« չէ տեսնուում...»

Եւ դուք կը հարցնէք թէ ալդ ինչիցն է որ Ախալցխալի ճիւղը չ  
ուզում խելքի գալ... Երևակալցէք որ ալդ նոյն լեզուն, ինչ որ նոքա  
բանեցնում են լրագիրների էջերում իմ վերաբերմամբ, նոքա նոյնն են  
ասում և Ընկերութեան խորհրդի վերաբերմամբ։ Խորհրդի անդամներից  
մէկը ինձ ասում էր ալդ առիթով—«Եղբարը, ինչ չանդիմանութիւն կո-  
րող ենք գրել Ախալցխալի ճիւղի վարչութեանը, դուք դրանց չէք չա-  
նաշում։ Դրանք մեզ են չանդիմանութիւններ գրում»։ Եւ իրօք, ալդ պա-  
րոնները, երբ Խորհուրդը նոցա գրում է թէ դուք կանոնադրութեան չէք  
հետեւում, մոտածում են՝ ալդ ձեր կարծիքն է։ Երբ Խորհուրդը նոցա գրում  
է թէ իրենց վարմունքը անտակտ է, նոքա մոտածում են՝ ալդ ձեր կար-  
ծիքն է։ Հիմա էլ, երբ ես նոցա առաջ կանոնադրութեան չողւածներն եմ  
դնում, դոքա արհամարանքով չալտուում են թէ դոքա ինչ են որ—Ակա-  
նոնադրութեան այլ եւ այլ կէտերո, Լուսինիի փաստաբանութիւնն եր... Մի  
խօսքով ուզում են ասել թէ իրենք անուղղելի են։

Հիմանալին այն է, որ գտնուում են մարդիկ, որոնք մամուլի էն-  
րում գալիս են թե տալու Ախալցխալի ճիւղին, որ սա շարունակէ իւր  
ըմբոստութիւնները կանոնադրութեան դէմ։ Ահա ձեզ Մեսրոպ քան,  
Մելեանց, տեսէք սորա վարդակետութիւնը «Մշակոի էջերում» (№ 42):  
«Ընկերութեան կանոնադրութեան ողին (ասում է նա) պարզապէս տրա-  
մադրում է ճանաչել իւրաքանչիւր մի տեղական վարչութիւն իրք։ Ո՛  
փոքրիկ տեղական հալոցքարեգործական ընկերութիւն» Դիցուք պատճեն,  
բայց գորանից զուրա բերել այն եղրակացութիւնը թէ ուրեմն չպէտք է  
կանոնադրութեան որոշ պահանջներին հետեւել։ Ազգիսով խօ ընկերութիւնը  
կը տանէք դէպի անդունդ։ Եւ ահա նոյն Մելեանի մի ալդ զատողութիւնք։  
«Քրահանգի 15 րդ չօգածի գ. պարբերութիւնը, (ասում է նա, Մելեանց)  
իր մէջ գրեթէ ամփոփում է ալդ իրաւունքը» (աւսինքն ուրեմն իրաւունք,  
որ ճիւղը որոշումներ կալացնի պատւաւոր անդամ ընտրելու մասին այ-  
պէս, ինչպէս ախալցխացիք են արել)։ Եւ ինչու կարծում է թէ հրա-  
հանդի § 15, գ. գրեթէ ամփոփում է ալդ իրաւունքը. որովհետեւ ալդակ  
ասւած է թէ տեղական ընդհանուր ժողովին է պատկանում, ի միջի այ-  
լոց, տալ նաև «լուծումն զանազան հարցերի», որոնք առաջարկում  
են տեղական վարչութիւնից կամ մասնաժողովներից։ Եւ Մելեանը  
կարծել է թէ ազանազան հարցերը խօսքով կարելի է ամին բան հասկա-  
նալ! Բնաւ ոչ. ալդ հարցերը այն հարցերն են միաշն, որոնց կարող է  
տեղական ընդ. ժողովը լուծումն տալ. իսկ լուծումն տալ պատասխ անդամ

ընտրելու խնդրին չի կարող տեղական ընդհանուր վարչութիւնը, քանի որ կանոնադրութեան § 44-ում պատւաւոր անդամութեան մասին առանձին յիշատակութիւն կաչ, ուրեմն պարզ է որ այդ գործը չի կարող «զանազան հարցերի» մէջ ամփոփուած լինել. Նույն այդ § 44-ում առանձին յիշւած է թէ ընդհանուր ժողովի պարապմունքի առարկաներից մէկն է նաև «Խորհրդի անդամների ընտրութիւնը». Եթէ Մելեանի լոգիկազով դատելու լինենք, ուրեմն Ախալցխակի տեղական ընդհանուր ժողովը կարող է նաև կետրոնի խորհրդի անդամների ընտրութեան գործով զբաղել. չէ որ Մելեանի լոգիկազով «զանազան հարցեր» ասելով կարելի է ամեն բան հասկանալ...»

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի

# ԴՐԱՄԱ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

«Օթէլօ», տրագեդիա հինգ արարւածով; Շէքսպիրի; — «Երւանդ Ա», պատմական գրամատիս հինգ արարւածով; — 18<sup>98</sup>/96 թ. Թատրոնական սեղոնի վերջը՝ 1).

Բարեկենդանի տօներին դերասանական ընկերութիւնը տեսց իւր վերջին ներկայացումները, որոնք էին՝ «Օթէլօ», «Երւանդ Ա», Օթէլօի գերը կատարում էր պ. Աբէլեանը, Դեղկեմոնակի գերը — օր. Ախաշեանը, Խագօի՝ գերը պ. Վրուրը.

Առաջին անգամն էր, որ մենք պիտի տեսնէինք պ. Աբէլեանին մի կլասիկական և պատաժանառու գերի մէջ, եթէ ի հարկէ, չհաշւենք կար Սօօրի գերը; — իւր բննիքիսի համար նա ընտրել էր «Օթէլօն», և մենք շատ ուրախ էինք նորա այլայիսի ընտրութեանը; Խնչ ասել կ'ուզէ, մենք թատրոնասէրներս, հաճութիւն ենք զգում, տեսնելով քեմի վերաէ ժամանակակից կեանքին վերաբերեալ դրամաներ և կոմեդիաներ, որոնց մէջ արծարծում են ժամանակակից խնդիրներ, որոնց մէջ խօսում և գործում են կարծես մեր աչքով տեսած տիպական անձնաւորութիւններ; Բայց դսական որքան էլ լաջողւած են լինում այդ տեսակ զրամաները և կոմի իանները, նոքա անուամենանիւ չեն կարողանում մեզ պատճառել այն բարձր էսթետիկական դւարձութիւնը, որ լատուկ է կլասիկական տրագեդիային, մանաւանդ Նեքսպիրի երկասիրութիւններին, որոնց ներփակացման ժամանակ, եթէ միայն տաղանդով են կատարում, հանդիսականի առջե բացւում է լուսատուն մտքերի, հսկայական ձգտումների և բոցավառ զգացմունքների մի աշխարհ, հանդիսականի հոգին վերանում է, սիրով զարկում է աւելի ուժին զրամաներ, որոնց տեսնելուց լիւ մարդ պլ իս-

1) Աւս լոգւածը անկարող եղանք հասցնել «Մուրճ»-ի անցեալ համարին Վաղուց վերջացել է ձմերապին սեղոնը, և ներկայ լոգւածը իւր հետաքրքրութիւնը զուցէ մասամբ կորցրած կը լինի.

երբէք չէ մոռանում, օրինակ, ոչ Լիր թագաւորին, ոչ Մակրէթին, ոչ Օթէլլօվին, որը խանդի տանջանքների մէջ ընկած՝ մնաս բարով է ասում իւր երջանկութեանը, իւր ընկերներին, պատերազմական դրշակներին և փող ու թմրուկներին... Ազգիսի ներկայացումների կարօտը չէ կարող չզգալ թատրոնասէրը և չցանկանալ միենոն ժամանակ, որ տարւաւ ընթացքում գոնէ մի քանի անդամ երևակին բեմի վերաչ կրամիկական տրա-դեղիաներ:

Ահա ինչի համար մենք ասացինք, թէ ուրախ էինք պ. Աբելեանի ընտրութեանը. Քայլ միա կողմից, մեզ հետաքրքրում էր նաև հենց ինքը պ. Աբելեանը. Որքան խորը նա պիտի կարողանաց թափանցել մաւրի նորու մէջ? Որքան աղղու պիտի լինի նորա խաղը? Աւապիսի հարցեր էին ծագում մեր մէջ ներկայացումից առաջ. Ահա երևացին Օթէլլօն Եազօնի նես Օթէլլօն լսում է հանգիստ և խօսում է հանգիստ, որովհետեւ իր խղճի առաջ նա իրան արդար է զգում. «Թող, ուրեմն, կատաղի Դեզզեմոնացի հարը, որքան կամենապոյ:

Նա ալդ բոպէին բարկացած չէ, միան սեպհական արժանապատռու-թեան զգացմունքն է, որ առանձին շեշտով հնչում է նորա ձանի մէջ. Մենք ասում ենք արժանապատռութիւն, և ոչ հաբարտութիւն, որը միան-դամակն բացակացում է Օթէլլօի բնաւորութեան մէջ. Այսպէս պէտք է վին Օթէլլօի առաջին տպաւորութիւնը. Պր. Աբելեանը, սական, սկսեց խօսել կրքով, թեթեւ բարկութեամբ, որ մեզ թւաց անսեղի և սխալ. Քայլ չետով, երբ եկաւ Քրաքանցիօն իւրավիններով և սոքա մերկա-ցրին իրանց սրերը, որոնց դէմ մերկացրին սրեր նաև Օթէլլօի պաշտպանները, և Օթէլլօն սրտի անզորրութեամբ երկու ձեռքե-րով ևս մկեց մերկացրած սրերը, ալդ լուպէին մեր առջև ներկա-ցաւ մի քաջ զինուոր, որը, եփւած ծանր պատերազմների մէջ, ոչ մի նշանակութիւն չէ տալիս նոցա սրի շողշողալուն և թեթեւ հեղնու-թեամբ պատերում է նոցա պատեանների մէջ զնել սրերը. Այդ տեղը փառ չէր պ. Աբելեանի խաղի մէջ, և ընդհանրապէս առաջին տեսարա-նում նա բաւարար տպաւորութիւն թողեց, և, եթէ նուն լաջողութեամբ չարունակէր մինչև վերջ, մենք պիտի չնորհաւորէինք նորան տաղանդա-ւոր զերակատարութեան համար. Հետեւել տեսարանը ներկայացնում է խորհրդի պալատը. Այնուեղ, սենատորների առաջ, Դեզզեմոնացի հօր մե-շալրանքը լսելուց վետ, Օթէլլօն բացատրում է իւր սէրը ամենան ան-կեղծութեամբ և առանց զրդովելու. Նա չէ վրդովում, որովհետեւ նորա գործածը ան է միան, որ ամուսնացել է իւր ընտրածի հետ, իսկ ազ-պիսի ամուսնութիւնը միթէ լանցանք է. Այս տեսարանումն էլ Օթէլլօն խօսում է ոչ թէ ահնապէս, ինչպէս մի մարդ, որին վտանգ է սպառ-նում լանցանքի համար և նա աշխատառում է արդարանալ, ոչ, ալլ

ինչպէս մի մարդ, որ հոգով հաճգիստ է, որ չէ վախենում զտանգից և զիտէ, որ իւր «խիղճը, աստիճանը և տէրութեանը մատուցած ծառալութիւնները» բաւական են անարդար ամբաստանութիւնը ջնջելու համար։ Միայն մի թեթև հեգնութիւն է արտավագտում Օթէլօն, երբ խօսքը դալիս է հմագութեան, որով իբր թէ նա հրապուրելէ անմեղ կոչին։ Օթէլօվի բացաղրութիւնները ալս տեսարանում պ. Արէլեանը արտասանեց զարձակալ կրցով, որը անտեղի էր։ Նորա սիրոց հանգիստ է, նու երջանիկ է Դեղդեմոնակի սիրով և իւր արեսվ կարող է երդւել նորա հաւատա բմութեան համար։ Այգապէս է Օթէլօն առաջին արարւածում։ Յեւ ոչ կը զաւ ժամանակ, երբ նա պատճառներ կ'ունենայ լուդւելու և բարկանալու, երբ նորա հոգու նոր չատկութիւնները կը բացւին մեր առաջ, և մենք կը տեսնենք, թէ ինչպէս ծովի նման վեն անդորր հոդին կարող է լուզել և մուշկը փոթորկւած ծովի պէս։ Շատ բան է կարւած նորանից, թէ ինչպէս է հասկացել կամ ինչպէս է պատկերացնում իրան արտխատը Օթէլօվի հոգու դրութիւնը առաջին երկու տեսարաններում։ Եթէ նա կարծում է, որ Օթէլօն հոգով շատ էլ հաճգիստ չէ այդ միջոցին, իբրև տաք բնաւորութեան տէր և ամբաստանւած մի մարդ նորա խաղի տպաւորութիւնը բոլորովին ալ կը լինի, քան այն զերասանի խաղը, որ Օթէլօվի հոգեկան շարժումները ըմբռնել է մեր հասկացածի պէս։

Երկրորդ արարւածի առաջին տեսարանում Օթէլօվի ուրախութեանը սահման չկաց։ Մի կողմից՝ նորա չաջող արշաւանքը թուրքերի դէմ, միւս կողմից՝ նորա սիրեցեալ կակի ներկազութիւնը—ալս բոլոր լցնում է նորա սիրար անհուն ցնծութիւնը և դորանից առաջած շփոթութիւնը աւելի զգալի աւելի ռելիքֆ կերպավ պէտք է արտավագէր Պ. Արելեանը։

Ոչ մինչի այդ վալրկեանը, ոչ այդ վալրկեանից լետոց Օթէլօն ոչ մի անգամ այնքան ուրախ չէ լինում, որքան ալս տեսարանում։ Այդ պէտք է երեակ դերասանի ձախնի և խաղի մէջ—Պ. Արելեանին մասամբ լաջողւեց արտավագտել մաւրի ցնծութիւնը, բայց նորա շփոթութիւնը չերեաց բոլորովին, և չերեաց, մենք կարծում ենք, այն պատճառով, որ նա ուշադրութիւն չէր զարձրել այդ կէտի վերաց Հետևեալ տեսարանում Օթէլօն վրայ է համում այն բողէին, երբ կասիօն և Մօնտանօն մեր

<sup>1)</sup> «Ինչպէս են կիպրոսի իմ հին ծանոթները?... Աստեղ, սիրելիս քեզ լաւ կ'ընդունին։ Սթաշ ինձ շատ էին սիրում ալսակը... Օ ինչ շատախօս զարձակ բախտաւորութիւնիցու!... Խնդիր ում եմ, նագե...» ևակն

կացրած սրելով կռւում են իրար հետ, երբ քաղաքի կենտրոնում գիշեր ժամանակ աղմուկ է բարձրացել, երբ հնչեցնում են տագնատպի զանգա- հարութիւնը,—մաւրի բարկութիւնը այդ միջոցին չափազանց մեծ է, մա- նաւանդ այն պատճառով, որ, երբ նա հրամակում է դադարել կռւելուց, կռւղները տաքացած դարձեալ շարունակում են կռիւը։ Սրի մի հատիկ ալուածով նա զետին է ձգում կռւղների սրերը, և այդ րոպէին երեսում է քաջ և հմուտ պատերազմովի ձեռքի կորովը, նորա արիւնը գլուխն է հաւաքւել, նա կատաղութեան է հասել, և այդ աչնպիսի մի վագրկեան է Օթէլօվի համար, որ կարող է «ձեռքի մի շարժումով լաւագոննի զետին տապալել», Բացի այս, այսուղ գործով ցոյց է տալիս Օթէլօն, որ նա պարտածանաչ պաշտօնեալ է և ոչ մի զիջում չէ կարող թուլ տալ իրան իւր սատրազմալի վերաբերմանը, երբ այս վերջինը պարտազանց է գըտ- նել,—մի չատկութիւն, որի մասին առաջ սենատորների ներկայութեամբ բանել էր մի քանի խոսք, այն է թէ «թնդ չկարծեն չարգելի սինիոր- ները, որ Օթէլօն, իւր կնոջ պատճառով, կարող է արամարել տէրու- թեան կարսոր գործը»։ Գերասանը պիտի ցոյց տաէ Օթէլօվի կորովը՝ կռւղներին միմեանցից բաժանելու րոպէին, նորա բարկութիւնը՝ սկզբից մինչ վերջ, նորա պարտածանաշութիւնը՝ կասսիօվին պաշտօնից գրկելու գործում։ Ա. Արենեանի խողը այս անօարանում ընդհանրապէս թուլ էր. ձանին պակասում էր աւելի բարձր աստիճան, զդացմունքներին՝ աւելի տաքութիւն, իսկ միմիկալին՝ աւելի մուծւած արտաչափութիւն։

Երրորդ արարւածը սկզբից մինչև վերջ ներկալացնում է աճնպիսի հոգեբանական գեւարութիւն, որպիսին կարելի է գտնել միան «Այր թա- գաւորիս և «Մակրէթի» մէջ։ Նէքսպիրը, իբր մեծ սրասագէտ, երեսում է այսուղ իւր հանձարի բոլոր փազով։ Մարդ պէտք է շատ խորը մտածէ, որպէս զի կարողանաց հասկանալ Օթէլօվի հոգին իւր բոլոր նուրբ շար- ժումներով։ Մենք վատահանում ենք ասել, որ ներկալացման չաջողու- թիւնը կախւած է երրորդ արարւածը չածող կատարելուց։ Գերասանի համար պէտք է շատ պարզ լինի Օթէլօվի հոգեկան դրութիւնը։ Բաւա- կան չ ասել, թէ Օթէլօն կասկածում է և տանջւում. այլ հարկաւոր է իմանաս թէ երբ է ընկնում կասկածը նորա որտի մէջ, թէ ինչպէս է զարդանում այդ կասկածը և այն, Օթէլօվի բոլոր զդացմունքները—դաւա- ծանւած սիրոց տանջանքը, վիրաւորւած ինքնասիրութիւնը և պատիւը; զա- րովմը, չուսահատութիւնը—այս ամենը համնում ծակալեզ աստիճանի երրորդ արարւածում։ Գերակատարի ամեն մի քավափոխը, ձեռքի իւրաքանչիւր չարժածքը, հակեացքը, ձանը, դէմքի գծերի վոփոխութիւնը—այս ամենը պիտի միանաչ մաւրի ներքին լոգերը կատարելասիչ արտաչափելու հա- մար, Ցանկալի տպաւորութիւն գործելու համար հարկաւոր է, որ խաղը մինի ոչ միայն խիստ հոգեբանօրէն մտածւած, այլ և աղջու։ Մոսկալի մի

թատրոնում մենք բազդ ենք ունեցել տեսնելու մեր անմոռանալի Աղամենին։ Տեսել և հիացել ենք, և նորա ստեղծած մաւրի պատկերը, կարծում ենք, երթք չի ջնջւելու մեր փիշութիւնից։ Այս առղերը գրեիս նա աչքիս առաջ է դարձեալ։ Ահա նա սեղանի մօս նստած դրում է և Եազօն կանգնած է նորա կողքին։ Օձի թունը կաթիլ կաթիլ ընկնում է Օթէլլօվի սրտի մէջ, և հանդիսականը պարզ տեսնում է թէ ինչպէս է ներդործում այդ թունի իւրաքանչիւր կաթիլը։ Նորա լան բացւած աչքերի փալուն բիբերը, սուր սլաքների պէս, ուզգած են Եազօվի աչքերին, որոնց մէջ, կարծես նա կամենում է կարդալ ան սարսափելի միտքը, որ բարեկամը չէ համարձակուում լայտնել։ Նալում է և լուռ է, երբ խօսում է, աչքերի բիբերը արագութեամբ շարժուում են, զարծեալ կանգ առնում Եազօվի աչքերի վերաց Նա անհանգիստ է, նա զադար չոնին Վեր է կենում, մի քալ է անում դէպի մի կողմ, և ինքն էլ չզիտէ թէ ինչու այդ քալըն արաւ։ Նա նորից նստում է իւր տեղը, բայց տեղումն էլ հանգիստ չէ, նա շուռ է զալիս ակս ու աճն կողմը, բարձրանում աչքերը ծածկելով կարծես ուզում է հեռանալ, նորից ետ է դառնում, նորից Եազօվին նացում... Նթէ այս տեսարանում Աղամեանը մի հաս բառ անգամ չարտասանէր, նորա միան լոկ մնջախաղը բաւական կը լինէր Օթէլլօվի տանջող կասկածը, անհանգստութիւնը, վիշտը, բարկութիւնը և առհասարակ հոգու բոլոր լուզմունքը արտավատելու համար։ Խգէպ է այստեղ ասել, որ մեր հանճարեղ դերասանի խաղը Օթէլլօվի երրորդ արարւածում ալճքան հիացըել էր մի ուռու բէցէնզէնտի, որ մի պատւարը լրագրի էջերում նա լայտնել էր, թէ ինքը Սալւինին կը նախանձէր Աղամեանին, եթէ տեսնէր նորա Օթէլլօվի երրորդ արարւածը։

Աղամեանին մենք դիտմամբ լիշեցինք, ցոյց տալու համար, թէ ինչպիսի հոգեբանական գժւարութիւն է ներկալացնում մաւրի կառկածանքի առաջին շրջանը և թէ որքան մեծ հիացմունք կարող է պատճառել դերասանը այդ տեսարանում։ Պ. Արելեանը անկարող եղաւ ոչ միան արտաքարել Օթէլլօվի հոգու դժոխալին տանջանքը՝ բնադրին լաստոկ նըր բութիւններով, ալ նոյն իսկ նորա հոգեկան զրութեան պարզ ստերագիծը։ Կասկածը սկսեց շատ ուշ երեցնել, կասկածի աստիճանաբար զարգանալը աննկատնելի եղաւ, մաւրի տանջանքները տպաւորութիւն չին գործում։ Եազօվի երկդիմի խօսքերը ելեկտրական զօրութեամբ ցնցում են Օթէլլօվի ամբողջ էութիւնը, իսկ պ. Արելեանը հազիւ կարողանում էր ցոյց տալ հոգեկան վրդովմունք։—Օթէլլօվի «մեսա բարով»-ի հետ կարծես հոգին ուզում է զուրս գալ, պ. Արելեանի «մեսա բարով»-ը շինծու ոգեսորութեան հնչիւններ էին։—Ընդհանրապէս երրորդ արարւածը առելի քան անբաւարար էր, և, եթէ մեր չնորհալի դերասանը մտազիր է նորից երեւալ մաւրի դերում, նորան հարկաւոր է մանաւանդ աշխատել վերև ցոյց

տած գործողութեան վերաէ. Մենք չենք կարող ասել, թէ ինչու, բայց չորրորդ արարուածի կիսից պ. Աքելեանը սկսեց աւելի հետաքրքրական դաւնալ, նորա ձախը աւելի տաքութիւն ստացաւ. Մանաւանդ դուր եկաւ մեզ այն տեղը, երբ Օթէլլօն չաշուում է Դեղղեմոնալին, թէ նա ամեն տեսակ զրկանքների և վիրաւորանքի կը զիմանար, բայց երբ նորա սիրածը իրան դաւաճանում է, այն ժամանակ նորա սիրած պիաի լցւի կատաղի վրէժինդրութեամբ—Հինգերորդ արարուածի սկիզբը, սպանութեան տեսարանը, շատ ազդու էր, և մենք աւելին չենք պահանջում պ. Աքելեանից—Ընդհանրացնենք մեր խօսքը: Օթէլլօի դերը բաւականաչափ ուսումնասիրւած և մտածւած չէր: Տեղ տեղ նա լաջող էր, բայց թող էր, իրը ամբողջութիւն: Պ. Աքելեանը կարող է մշակել այդ չնորանապարտ դերը, և մենք չու ունինք, որ նորա երկրորդ Օթէլլօն ամելի հետաքրքրական և աւելի ազդու կը լինի:

Օթէլլօի ուսումնասիրութեան վերաբերմամբ՝ ալատեղ, կարծեմ, անտեղի չի լինիլ չափնել, որ նորա հավերէն թարգմանութիւնը ոչ միայն առանձին ծառապութիւն չէ կարող մատուցանել գերասանին, ալլ նոյն խակ շատ անգամ սխալների մէջ հը ձգէ նորան: Ազդ պատճառով պ. Աքելեանը իւր դերի համար նոր թարգմանութիւն էր արել, բայց աչդ թարգմանութիւնը, թէկուզ աւելի մօտ լինէր բնագրին, բանաստեղծական չէր: Դա մի հանդամանք է, որը կարուզ էր նոյնակս վնասած լինել նորա դիրի ընդհանուր տպաւորութեանը—Գալով օր. Ախոչեանի (Դեղղեմոնա) խաղին, մենք պէտք է լավտնենք մեր կատարեալ գոհունակութիւնը: Խաղը խելացի էր, զգացւած և ազդու: Սենատորների առաջ, երբ Դեղդիմոնան չափնուում է իւր ոէքը դէպի Օթէլլօն և իւր պարտականութիւնը հօր վերաբերմամբ, օր. Ախոչեանը համարձակ էր, նորա արտասանութիւնը—շեցուած, շարժումները ազատ: Ցետո՞չ չէ մոռացւում նաև օրինիքի թախանձանքը, որով նա խնդրում էր Օթէլլօից ներել կառիոցին, նայի մանաւանդ ազդու էր նորա ձանը և խաղը սպանութեան տեսարանում: Դժւար էր զսպել մեր արտասուրքը, երբ նա, լուսահատական ծիւր արձակելով, Օթէլլօի զիին վաթաթւելով, աղաչում էր նորան չսպանել կամ չետաձգել սպանութիւնը:

Նազօն (պ. Վրոյ) վաստ չէր: Իւր դերի վերաէ պ. Վրոյը աշխատանք դրել էր, ինչպէս այդ նորա սովորութիւնն է: Բայց Եազօի դերը դժար դեր է. նորա լաւ կատարելը երկարատես ուսումնասիրութիւն, ինքնաշխատութիւն է պահանջում: Եազօն աւելի թունաւոր օծ է, քան այդ ներկալացնում էր պ. Վրոյը: Նորա կեղծ հաւատարմութիւնը դէպի Օթէլլօն, նորա օձալին գալարումները մաւրի սրտում կասկած ձգելիս, նորա մեծամոռութիւնը և կիսահեղնական վերաբերմունքը դէպի մարդիկ, ալս բոլորը արտաչալտենու համար պահանջւում են աւելի թանձր գոյներ:

«Երևանդ Ա» եղաւ 18<sup>38</sup>/96 թ. թատրոնի ճմերադին ուղղոնի վերջին հերկապացումը։ Զարմանալի նմանութիւն կաէ մեր Երևանդ Ա-ի և Սալբէթի բնաւորութեան, չարագործութիւնների և տրագիկական վախճանի մէջ։ Երկուսն էլ փառասէր են, երկուսն էլ ձգտում են զահի, երկուսին էլ դրդում են կանաչք, երկուսն էլ սպանում են ծերուանի թագաւորներին (Գունդկան և Սանատրուկ) և ոչնչացնում սուխների ժառանգներին, երկուսն էլ հասնում են զահի, երկուսն էլ զոհ են գնում նոյցա ոճրազործութիւնից ազաւածած անձանց ձեռքով։—Անզէս որ հազ հեղինակը, որը կը կամենար գրել Երևանդ Ա-ի մասին մի զրամա, նոյն իսկ առանց ծանօթ լինելու Շէքսպիրի տրագեդիալին, կամաց ակամաչ պիտի վիշենէր մեզ իւր երկասիրութեամբ անզլիացի ողբերգակի գործը։—Բաց բանը այն է, որ «Երևանդ Ա»-ի հեղինակը ոչ միացն ծանօթ է երեւում Մակրէթի հետ, այլ նոյն իսկ աշխատել է մօտեցնել նորան իւր պիեսը։ Արքապական ինճուքի ժամանակ Բանկօվի ուրաւականը գալիս և լուս նստամէ Մակրէթի անդում։ Նոյնամսան մի բան անում է «Երևանդ Ա»-ի հեղինակը։ Սանատրուկի ուրաւականը գալիս և լուս բազմում է զահի վրաց անրանդ Ա»-ը ընդհանրապէս հարուստ է բովանդակութեամբ և բեմական պատկերներով, բաց միանդամացն անմշակ է և ծգծգած։ Հոգերանական վերլուծում չկաչ բնաւորութիւնները թուլ են նկարագրած։ Իսկ լիզոն շատ ազքատ և տղեղ։—Դերասանների համար չնորհապարտ դերեր չկան

Այսպիսով հազ գերասանական ընկերութիւնը առանց վհատելու իր գործը տարաւ մինչև վերջ։—Սեղմնի սկզբում դրութիւնը փոքր ինչ վատեցուցիչ էր, թետու հասարակութիւնը կամաց կամաց սկսեց աւելի հետաքրքրել թատրոնով։—Դերասանները սիրու տառան և աւելի եռանդով առաջ տարան իրանց արևստուր։—Մենք ըստ ունինք, որ մեր գերասանները, որոնք ալֆմ ներկապացումներ են տալիս բաժան բաժան, վետապ սեղոնին նորից կը միանան և ձեռք ձեռքի տւած կը շարունակին իրանց սկսած աղնիւ և օգտաւես գործ ։—Յուր ունինք, որ գերասանական խումբը կ'աշխատէ գրաւել նոր պիեր, որոնք ուրախ պիտի լինին խմբի մէջ լինելու համար։ Բաց մի գուցէ դերասանական խմբի ողերից մէկը կամ միւսը կամենալ անջատել և մրցման մէջ մտնել խմբի հետ Վէդպիսի վարժունք մնասակար պիտի լինի բեմի համար։

Ազգամեանից իստ մենք չունինք բեմի մի փալլուն աստղ, նորա անւան արժանի, որը կարողանար գործել նաև խմբից անկախ, թէպէս նոյն իսկ աց դէպքում աւելի լաւ կը լինէր խմբի մէջ լինելը։ Մեր մշտական քեմի ապագան կախւած է նորանից, թէ որքան սերտ կը լինի դերասանական խմբի անդամների կապը միմենաց հետ և որքան համերաշի կը լինի նոյցա գործունէութիւնը բեմական ասպարիզում։

Մենք վերջացնում ենք մեր յօդածների շարքը, արտանց ցանկանակ մեր ապագակ գերասանական խմբին միտոթիւն, համերաշխութիւն և չաղողութիւն!

# ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐԶԸ

Հ. Ս Ե Խ Ե Ա Ն Ի

VII

Հայ ղերասանական ընկերութիւնը միահամուռ ոչժերով 1895—96 թականի թատերաշրջանը (մինչև բարիկենդան), կատարւած վերջացած է համարում իւր զործը:

Թէև առաջիկաչ սեպտեմբերից սկսելու են ներկայացումները, բայց ընկերութեան հիմնադիրները ոչ մի նախապատրաստութիւն չեն տեսել ապագայի համար Նախապատրաստութիւն ասելով մինք ի նկատի ունինք դիմադրաբար երկու կարենորագոյն խնդիրներ:

1) Խումբը ուժեղացնել նոր ոյժերով. սա մի աճնպիսի պահանջ է ղերասանական խմբի համար՝ որի մասամբ լաջող լուծելուց է կախւած ընկերութեան ապահովութիւնն և չառաջդիմութիւնը. Ամբողջ սեղոնի ընթացքում անչափ նեղութիւններ է կրել խորամբը. պիէսներն իւր անկատար անսամբլին չարմարեցնելու համար. Առաւելապէս խմբին զգալի է եղել կանանց դերակատարների պակասութիւնը. Ամբողջ սեղոնի ընթացքում կանանց դերերն շարունակ ընկած են եղել խմբի երկու ղերասանուհիների վրայ. (տ. տ. Մելիքեան և Փառանձէմ), և հասարակութիւնն պարտաւորւած էր տեսնել նրանց իւրաքանչիւր ներկայացման՝ ամեն մի պատահած զերութ. Անտանելի էր խմբի զրութիւնը երբ ստիպւած էր ներկայացնել աշնակիսի մի պիէս, որի մէջ երեք կանանց զերեր կալին, պէտք էր զիս ու զէն ընկնել և կողմնակի կերպով լրացնել երրորդ դերակատարը. Ակներն է որ ազգայինի պատմաններում հազն. զուութիւն ունենաչ մի խումբ երկար ժամանակ. Կանոնաւոր կերպով ներկայացումներ տող խմբի համար առ նւազն պէտք է նինդ դերասանուհի. իսկ ղերասանական առաջին ընկերութիւնը ունեցաւ ալդ թվի կէսիցն էլ պակաս երկու,

Այս պահանջում են նոյն խոկ իրենց՝ դերասանուհիների շահը Նրանք դուրս գալով ամեն անդամ, չարմար թէ անչարմար դերերում՝ բողնոցում են հանդիսականի աչքը և ակամաչ ձանձրով պատճառում, Նոյն կարելի է ասել և դերասանների նկատմամբ:

2) Բէպէտուարի վերակազմութիւնը.—«Մուրճ»-ի էջերում քանից առիթ ունեցել ենք խօսելու թատրոնական խմբի համար դոյցութեան ինդիք համարւող աչս հարցի մասին. Ամեն մի ներկաչացումից լետու դերասանները գլուխ զլիսի են տալիս և հարցնում միմեանց.

—Ի՞նչ խաղանք...

Այս. «Ինչ խաղանք»-ի խնդիրը ժամեր է խել դերասաններից և շատ անգամներ էլ խումբը ցրւել է առանց համելու մի որոշ եղբակացութեան. Այս ալսպէս չի կարող շարունակել, ելք գտնելը ընկերութեան դործն է. Ելք գտնելու համար ընկերութիւնը մի սկզբունք պէտք է հաստատապէս ընդունել, այն է՝ նիւթական վարձատրութիւն հեղինակներին և թարգմանիչներին. Վերջիններին կարելի է առաջարկել թարգմանել պիեսները. Լաւ բեպերտուարով զինւած մի բաւարար խումբ միտ կարող է չաջողութիւն գտնել Թիֆլիսում:

Դերասանական ընկերութեան ներկաչացումներից լետու (մեծ պահոց օրերում) դարձեալ տրւեցին մի քանի ներկաչացումներ. Ա. Վ. րոյրը տես «Գոռն Գրիգորիօ» կոմէդիան, ուր մեր նորեկ դերասան Յ. Օհանեանը երգեց «Խելագարը». Հասարակութիւնը շատ հետաքրքրւեց պ. Օհանեանովի միան նորա «Խելագարը» չկարողացաւ լադեցնել նորա հետաքրքրութիւնը:

Օր. Ախաշեանը ևս տւեց մի ներկաչացումն դերասանական խմբի աջակցութեամբ. Խաղացին Բիէրնսոնի «Մուանկութիւն» լաւանի կոմէդիան՝ Աւելի հետաքրքրութիւն էր շարժում պ. Օհանեանի առաջին գէրիսալը. Մի նոր ուժ հաէ բեմի համար եկել էր ցուց տալու իւր ընդունակութիւնը. Նա ընտրել էր «Խաղանի ոյժ» դրաման. Մամուլը միաձաւն խոստովանեց պարոնի ընդունակութիւնները և գովից խաղը՝ գուշակելով փալուն ապագաւ. «Մուրճ»-ը միան սպասողական զիրք է բռնել. Հլստահանալով առաջին գէրիւտից կարծիք կազմել:

Զատկից լետու դերասանական ընկերութիւնը երրորդ անգամ ներկաչացրեց «Ալսան Բալասի» դրաման սակաւ հատարակութեամբ, որին աշխորդեց մի այլ նորութիւն, այն է օր. Մարի-Հրանոյշի գէրիւտը. Օրիորդը Կ. Պոլսեցի է և զեռ շատ ժամանակ չէ որ բեմի վրակ է. Իւր ոչիրը գաւառական բնմուրի վրաէ փորձելուց լետու օր. Մարի-Հրանոյշը անցեալ տարի կամենում էր իւր քրոջ օր. Վարդիթէրի հետ մասնակցել դերասանական ընկերութեան ներկաչացումներին, բայց նրանց և խմբի մի

քանի անդամների մէջ պատահած տարածանութեան պատճառով չաշող-  
աց նրանց մասնակցութիւնը. Օր. Մարի-Հրանով «ոռուբրէտ» դերեր է  
կատարում և իւր գէրիւտի համար ընտրել էր «Պարիզի շրջմղիկը» պիէսը,  
որ արդէն ծանօթ էր հասարակութեան. Օրիորդի խաղը շատ լաւ տպա-  
տրութիւն ժողեց հասարակութեան վրաչ՝ ցուց տալով նրան «Ճողէֆո-ի  
մի նոր վառվրուն տիպ. Լաւ ապագայ ունի օրիորդը, և խմբի ներկայա-  
ցումներին նրա չմասնակցելը մի մեծ կորուստ կարելի է համարել; «Պա-  
րիզի շրջմղիկ»-ին չաշորդեց զառամեալ «Խաթաբալան», որ տալիս էր  
օր. Վարդուհին իւր գէրիւտին. Այս առթիւ երկու խօսք. աչմեան հանգա-  
մանքները այնպէս են, որ գերասանը խաղալու համար աճապատճառ ինքը  
պիէս պէտք է սլատրաստէ. հետեալէս պէտք է վազօրօք հոգաչ ալդ մասին,  
ապա թէ ոչ օրիորդի նախորդ տարւաչ «Խանում»-ը (որի մասին խօսել  
ենք իւր ժամանակին), որ խաղացել էր արդէն մի քանի անդամներ,  
նոնպէս և այս «Խաթաբալան» ոչ մի հետաքրքրութիւն չէին ներկայաց-  
նում, բացի այն որ նա առիթ տևեց պ. Միրադեանն լիշելու հաջոց բեմը  
նրա խաղը մեծ դւարձութիւն պատճառեց հանդիսականներին:

---

Ապրիլի 11-ին Թիֆլիսում թոքերի բորբոքումից վախճանւեց 45  
ամեաչ հասակում՝ հայ գերասանական խմբի երկարամեաչ չուշարար կա-  
րասպետ Մատինեանը. Հանգուցեալը նախ բեմ էր զուրս եկել իբրև գերա-  
սան, և չետու մասնակցել էր խմբի ներկայացումներին իբրև չուշարար.  
Նա 20 տարի ծառացել է բեմին, լինելով Թիֆլիսի հայոց կոնսիստորիակի  
երկարամեաչ քարտուղարը. Կ. Մատինեանցը թողեց կին և հինգ երեխա-  
ներ անապահով վիճակում:

---

Արդէն գերասանները սկսեցին իրենց ճանապարհորդութիւնները  
դէպի զաւառները. պ. պ. Աբելեան, Ստեփանեան և տ. Զարէլ՝ Գանձակ  
և Բաղու. օր. օր. Վարդիթեր, Մարի-Հրանով, պ. պ. Վլույ և Օհանեան  
և միասին՝ Անդրկովկասի զանազան քաղաքները. Ի սրտէ չաշողութիւն  
նոք ցանկանում բոլորին:

## ԳԵՂՐԳ ԲԱՇԻՋԱՂԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԱԿԱՆԴԵՍԸ

(Ապրիլ 5—ապրիլ 28, 1896 թ. Թիֆլիս, տուն Զուբալովի)

(Նկարագիր կարեռագուն նկարների №-ների թւանշաններով),

1) Արագածի ստորոտում—Ս զօնացած Ալացէսկի գործ՝ Ներկացած հն հասած արտեր Արագածի ստորոտում, կէս ժամ առաջ անձնի է եղել, որի հետքերը նկատելի են զաշտի վրաց: Անձրևաբեր ամպերը քաշմակ են հեռու լեռների մաս և փաթաթւել նորա շրջը: Միմիան ձիւնապատ դագաթները ազատ են մնացել մառախուղից: Դաշտը լուսաւոր ած է արեգակի մեջմ լուսով:

Դարաւոր ձկւներ ու սառողիներ մի կողմից—և հասած արտերն ու տաք արել միւս կողմից: Մի կոնտրաստ՝ որ լատուկ է կովկասեան բնութեան:

3) Գիշեր Դարենալի կիրճում—Խօչ վե Ճարյալսկոմ ցածրական սառութիւնը գիշեր ժամանակի մէջ է լուսնի շողերով, Երկու կողմի ասպառամները սև սիլուէտի նման իրար լեռների աստիճանաբար հառանում են և խառնւում գիշերավին մընոլորտի մէջ, Թերեք գետը արծաթի լուսով լուսաւորած է:

Ահարկու բնութիւնը գիշեր ժամանակ առանձին խորհրդաւորութիւն ունի: Աջնակ է թագնւած բնութեան գաղտնիքը:

4) Մառախուղ անտառում—Դ յանձն վե քառական բարձրաւանդակներում, ուր ազատ մեծանում են ծառերը: Արել տարածել է իր ճառագալթները անտառի մէջ: Ներքն անդունդների միջից բարձրանամ է թանձր մառախուղ և, միախառնելով արեի լուսի հետ, աստիճանաբար խաւարեցնում է:

Հզօր բնութեան երկու Փակտորներ մրցում են իրար հետ: Այս մէնատը շատ չաճախ է կրկնւում լեռնալին տեղերում:

5) Սեւանայ լիճը խաղաղ ժամանակ—Գորշական օզերո (զատիշ) Պատ կապուտ երկինք և ամենախաղաղ ծով: Զուրը համարեա կանգնած է, անշարժութիւն է տիրում ամեն տեղ: Սպիտակ մեծ ամպը, Սևանի կղզին, փոքրիկ նաւակը, սպիտակ թռչունները ամբողջապէս անդրադարձ ած են մաքուր ջրի մէջ:

Ծովը, որ սարսափելի կատաղել գիտէ միննոցն ժամանակ ընդունակ է ամենահանդարտ և գրաւիչ լինել:

9) Գիշեր Արփազայ զետի վրայ— Խօն և թ. Արպազան. Երկինքը անամպ է: Տեսաբանը վերցրած է Ալեքսանդրովովից գէպի Անի տանող ճանապարհից: Ընդգարձակ դաշտը տարածում է մեր առաջը և, աստիճաբար հուանալով՝ կորչում է գիշերագին մաւախուղի մէջ: Հորիզոնի վրան նըշմարւում են Ալաջալի լեռները: Ախուրեանը հանդարտ հոսում է պտույտներ գոլ ծելով դաշտի մէջ: Բարձրից լուսնեակը արտափալում է ջրի մէջ:

10) Առաջին ձիւն—Первый снѣгъ при закатѣ солнца. Երկու գլ-  
մացի բարձրութիւնները ծածկւած են ձիւնով:

Վերջալոսի ժամանակ արեի վերջի ճառագալթները կարմրագոյն ու պենագոյն լուսով ամենաքննացը ելեւչներ են ցուց տալիս:

13) Լուսինը թղպեց—Լుսա ըորդալած։ Լեռնալին տեղ, Քարքարոտ  
կրկի վրայ ալս ու աճնտեղ ցրւած են թփեր։ Նոյա միջից բարձրանում  
է մի մեծ բարդի ծառ (ТОПОЛ) և սև գողնով նկարում է երկնքի վրա։  
Լուսինը ծածկւած է աջ ծառի ետեւ։ Խնքը չի երևում։ Բայց ամեն տեղ  
պահառ լուս է տարածում։ Դիւզը նիրնում է խաւարի մեջ։ Ճրադներ են  
երկում։ Մի թփի մօտ Փասիորի գողնով լուսատնիկ է վալցում։

Մելամաղձուս զիշեր, երբ մարդս խորասուզում է մտքերի մէջ և այխասում է միախնակ մնայ, որպէս զի չխանգարեն իրան:

14) Հիւսիս—Ծեւերտ. Փոքրադիր պատկեր. Հիւսիսավին տափարակ-ներ մշուշով պատած, Արագածի պլանի վրայ կանդնած են երեք հատթղութեաներ (բերեզ), որոնք արտացոլում են ճահճին մէջ. Արտակարտած են մուալլ ող և արեի անգօր ճառագայթներ:

17) Առաւօտ Արաբատի վրայ—Մերո և Արարատի Շատ անդամ կրկնած Արաբատներից մինչ է, Վերցրած է Կըսեանի Էջմիածին տանսզ ճանապարհից Առաւօտ է: Դաշտի վրայից բարձրանում է մատախուղ: Դաշտը դեռ ևս մուալ է, այն ինչ լեռան գագաթը լուսաւուած է արևեգակի մեջի լուսով:

19) Լուսնկայ գիշեր Սեւ ծովի վրայ—Լунная ночь на Черномъ морѣ.  
Մեծագիր պատկեր: Ամպերով պատած երկնքի մէջ փազում է լուսինը:  
Ծովը տարածւած է Նալողի առաջ: Զուրը բաւականաչափ ծփում է: Մանր  
ալիքները իւր մէջ պատկերացրել են լուսնի հաղարաւոր մանր շողեր: Ոչ  
մի տեղ ցամաք չի երեսում: Հորիզոնի մօտ նշխարւում է միակ նաև Ներ-  
կապացրած է ծովախն աշխարհու:

20) Օրայ չորս մոլէնտներ—Четыре момента два. Զորա պատկեր ի-  
րար հետ օղակներով միացրած (ширма). մինը ներկազացնում է առաւտ,  
երկրորդը հէսօր, երրորդը երեկոյ, երր արեք մայր է մտնում, և չորրորդը  
լուսնկայ զիշեր Տեսարանները տարբեր են, թէն բոլորն էլ Կովկասնեան  
մնութիւնն է Եղենակին տեսառաններ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑԻՑ<sup>1)</sup>

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

79

Մի անգլուհի նկարիչ, որի հետ ծանօթացել էինք դնացքի մէջ, երբ լսեց որ կամենում էինք այցելել Լոնդոնի նկարչական թանգարանը պատրաստականութիւն լայտնեց մեղ առաջնորդել և բացատրութիւններ տալ այնուղիւնքը ։ Խնքը նկարչուհին թանգարանի մշտական լաճախորդներից մէկն էր ս, ինչպէս ինքն էր ասում, մի ամսից ի վեր էր որ աշխատում էր օրինակել Լէնդսիրի (Landseer)՝ հոչակատր կենդանիների նկարչի մի առիւծը։

—Ես ձեզ կը ցուց տամ ալդ տոխւծը, ասում էր նա ոգեսրութեամբ ալղափի նկար և ոչ մէկ նկարիչ չէ դուրս բերել դեռ իր վրձինից։

Եւ ալղափս մենք մտանք National gallery կոչւող նկարչական թանգարանը։ Նա բանել է Տրաֆալգար հրապարակի մի ամրող պատը. զբուխոց կորնթական պարզ սիւներով է պատշգամած և առջեւմն ունի Յ մնջ շքեղ շատրւաններ։ Ներսում, երբ մտանք, նկատելի էր որ ամենից պատւոր և ընդարձակ տեղը տւած էր անդլիական շկոլավի նկարներին Անգլիական գեղարվեստի ալդ ճիւղը, իր սաղմից մինչև ներկայ զարգացումը կարելի է մանրամասնարար ուսումնասիրել թանգարանում։ Ամեն ինչ կարգով չարադրած է, իսկ մեծ նկարիչների համար առանձին որաներ քատկացրած։ Միւս ազգերի շկոլաներից թէն քիչ, բայց կան ընտիր նկարներ։ Մենք հարեւանցի ակնարկ նետեցինք դրանց վրայ որովհետ վիճնակի նկարչական թանգարանը տեսնելուց լիտոչ, աւելորդ կը լիներ Լոնդոնի միւղէում ժամանակ կորցնել օտար ազգերի շկոլաների նկարները ուսումնասիրելով։

Օտար նկարիչներից, Լէնդսիրի նկարների կողքին, պատւառը տեղ է

1) Տես «Սուրճ» 1894 թ. № 11-12, 1895 թ. № 2, 5, 8:

տած Բողաքօները Քրանսուհու մի գործին։ Նրա մի մեծ պատկերն է ալդանդ։ պատկերը ներկայացնում է տօնավաճառի տորւող բազմաթիւ ձիեր, որոնց՝ նկարի վրայ տած է ամեն տեսակ զիրք։ անպէս որ, կարելի է ասել թէ նկարի վրայ ձին ներկայացրած է իր ամեն կողմով և ամեն շարժւածքներով։ Ազդ պատկերը մենակ բաւական է նկարչունու մեծ տաղանդը ակներեւ անելու համար։ Անդսիրից ետ չէ մնացել մինչև իսկ տեղ-տեղ աւելի փալում է, որովհետեւ լաջողւել է աւելի շեշտել և կեղրոնացնել վրձինի ովքը մի քանի կէտերի վրաց։

Անդսիրի նկարներից շատ կան բոլոր նշանաւոր գործերը աչդ սրանուն են։ Աշխարհահռչակ նկարն է «Հափսրութիւն» եւ յանդնութիւն» կոչսով մի նկար, որ ներկայացնում է երկու չներ։ աչդ պատկերի օրինակ-ները կարելի է տեսնել բոլոր պատկերազարդ թերթերում։

Չքեղ նկարներ են Անդսիրի երկու առիւծները։ ոչ մի փաչ-լուն գոյն չունին սրանք, բայց աճնքան բնական են, որ կարծում ես թէ ահա շարժւելու են։ կենդանիները նկարւած են հանդարտ վիճակի մէջ և նրանց հակեացքը պատկառանք է աղդում։ Ազդքան կենդանի նկարւած առիւծ ոչ մի աեղ չէի տեսել։ Նոյնը կարելի է ասել նկարչի բոլոր միւս նկարների համար էլ, որոնք մէկ մէկուց կենդանի, շքեղ են և որոնց առջև անդադար դրւած են լինում եռուսանիներ, պարզւած կտաւներ որոնց ի դուր նմանեցնել են կամենում բազմաթիւ նկարիչներ։

Ան օրը, Նրբ մենք միւզէն մտանք, չատկացրած էր միան ուսանողների, մենք էլ, իբր օտարերկեակ ուսանողներ, չաջողեցրինք ներս մտնել։ Բազմութիւնը շատ չէր, բայց ուսանողների բոլոր եռուսանիները բռնել էին Անդսիրեան սրանք։ Նրա ոչ մի նկարը չէր մնացել որ օրինակող չունենար, մանաւանդ երկու փոքրիկները, որոնց գիտելու համար մոլ հարկաւոր եղաւ եռուսանիների արանքներից նակել։ Ազդ նկարները գտնում են Տուրներեան սրանի մուտքի աջ կողմում և ունին ազսպիսի անուններ։ 1) Խաղաղութիւն։ 2) Պատերազմ։ Առաջինը ներկայացնում է յուութեան մի պերճ անկիւն։ մի ծաղկաւէտ, ջրաշատ կանաչ բլրակ, որի բազմաթիւ երիններանդ ծաղկիների սուրուով հոսում են արծաթափառ փակներ։ Երկինքը պարզ է, մի թեթև զով քամի շարժում է խոտերի ծալիքը։ Հովիւը իր ցոււի հետ գտնուում է մի բարձր տեղի վրայ և ոչ-խարները բազմութեամբ նստել են մի քիչ ցած։ գառներ ու մայրեր տեղ են բանել խոտերի մէջ, կիսովին ծաղկեալատ, կիսովին գլուխը խոտերով պսակւած... ամեն ինչ խաղալ է, ժպուն... որքան հրաշալի նըր-բութեամբ են նկարւած գառների մորթերը, նրանց անմեղ, հրեշտակալին արտաչափութեամբ դէմքերը։ Եւ ահա զառնում ես միւս պատկերին... Կոյն տեղն է, բայց, ծաղկիները կոխուած, տրորած, ոչխարները ցրւած և խոտերը արիւնով ներկւած։ մարդկանց վիակներ, զինքեր, փոշի, արիւն... բնութիւնն անդամ զարացկուած է, գունատել է։

Լէնդսիրի նկարներից լետոյ աչքի է խփում Բահնոլսի դիմանկարները՝ Նրանցից նշանաւորն է «Փոքրիկ Սամուելը»—մի պատաճի որ ազօթում է, լետոյ 5 հրեշտակների գլուխներ, որոնք ներկայացնում են Բահնոլսի ժամանակակից (1723—1792) ամենագեղեցիկ կանանց գլուխներ, հուսկ ուրեմն աչքի է խփում «Երեք շնորհիներ» մեծ նկարը. ավտեղ նկարւած են Դուքս Մոնղէմերի բարոնի զեղեցկութեամբ երեք աղջիկները. երեք տեսակ զեղեցկութիւններ են ներկայացնում, թեթև, լրջախառն և լուրջ.

Գէնսբորոնի (Gainsboröuch) նկարների մէջ երեւում է մի սքանչելի նրբութեամբ նկարւած աԾխական քահանայի» դէմք. Յետոյ գալիս է Հոդարիթ—18 րդ դարի մի ալլ նկարիչ, որի պատկերներից մատնանիշ կարմի է անել «Մի մողայով ամուսնութիւն»—մի շարք նկարներ և «Զողարթը իր աղախններով» կտորները. Ի վերջու Ռոզէտտիի տարօրինակ, զրեթէ ողեկան՝ նկարներն են, որոնք իրենց նորատեսակ չկոլազով՝ գրաւում են մարդու ուշագրութիւնը. Ալլ նկարները կարծես երազի մէջ երեցող ստերանման կողմեր լինէին. Մեր տեսած երկու նկարներից առաջինը ներկայացնում է Կալս Մարիամը երբ աւետում են նրան իր չուութիւնը, երկրորդըն է Դանտէլի «Քէաթրիչէ» ն, որ նմանում է մի ոգու, օդի մէջ ցնուող մի արարածիւ Եթէ սպիրիտիստները լուսանկարելու լաջողւէին իրենց կարծիքով գոյութիւն ունեցող ոգիները (ինչպէս որ կարծում են լաջուած լինել), անշուշտ Բոզէտտիի Բէաթ րիչէի պէս պատկերներ պիտի ստանալին. Ալլ գործը մի ինչ որ խորհրդաւոր, միստիկական դրոշմ է կրում իր վրան՝ իր կանաչագունի հակող լուսաւորութեամբ, մանաւանդ երբ մի քին երկար են նալում նստած կոճսի վերացած, ոգիացած աչքերին և ցնուող մարմնի՝ օգի հետ խառնող գծերին. Մի քանի ուսանողներ, քրանաթորի փորձում էին ընդօրինակնել ալլ տրանսցենդենտ նկարները, բայց ծիծաղնիլ ծեփւածքներ էին միան ստանում:

Ալլ բոլորը տեսնելուց լետոյ էր միան, որ մենք մտանք Տուրներեան սրահը, այնտեղ երկար մնալու համար:

Տուրներ (Turner) անզիւացի նկարիչը, որ մնուաւ 1851 թվին, ստեղծեց մի նոր—կարելի է ասել ժամանակից առաջ նոր, ապագայի շկոլա «Երիտասարդ հասակից սկսելով նկարել, 14 տարեկան, հասակում մտել է արքունական ճիմարան. 25 տարեկանում արդէն անդամ էր ակադէմիային. Ամուսնացած չէր. մեռել կեղծ անունով և թաղւած է Ս. Պողոսի եկեղեցում. Իր բոլոր նկարածները կտակնել է ազգին, իսկ հարստութիւնը թողել է տարիքուր և հիւանդ արտիստների ապատարանի համար:

Ալլող Լորին նկարչից անկախ կարիերի մէջ, նա ունի 3 պերիօդներու:

Ահա ազստեղ, թանգարանի այն մեծ «Աւղեցոցի գիրքը», որից քաղեցի վերտուշնալ խոռքերը, սկսում է մի քանի խօսքով թւել Տուրների 3 պերիօդների նկարած պատկերները և վերջումը չէ մոռանում ասել որ

Տուրները շատերից նկատուած է եղել որպէս մոտավին խանգարման մէջ եղաղ նկարիչ, որ իր հիւանդ ուղեղի արտաչափութիւններով երեան է հանել ազանդակ լուսաւորութիւն իր նկարների մէջ։ Ասում են որ նա պրիզմավին գոյների այնպիսի անօրինակ խառն լուսեր է արտադրել, որ անկարելի է բնական համարել։

Ալստեղ արդէն ուղեցոցը կանգ է առնում, սկզբից մի քիչ նախապաշարելով մարդու միտքը. բայց, որքան որ չիշում եմ, անգլիացի ազդ մեծ նկարչի համար կաչ մի ամբողջ գրականութիւն թեր և դէմ, ճիշտ այնպէս, որպէս գերմանացի մեծ երաժիշտ Վագնէրի մուղլիկան, որին Նիշէն անզամ խենթալին հրաժարութիւն է անւանում։

Հոգեբանական փորձերից լայտնի է, որ քննակատութեան մէջ լինել կառարելապէս օքեկտիւ—անհնար է՝ ազատ ազդեցութիւնից, ազատ ներքին, ջղալին համակարգութեան տեսակի արդիւնքից։ Կրիտիկան մեծ մասամբ սիրեեկտիւ է լինում։ Շատ լաճախ է պատահում որ բնութեան մի տեսարան, հոգեկան որոշ տրամադրութեան ժամանակ զմալեցնող, մի ուրիշ զրութեան ժամանակ կամ անտարբերութիւն է առաջացնում և կամ նոյն խակ ձանձրութ։ Կամ թէ մի տեսարան, մի իր, մի նկար որ լարմարում է ալս ինչ անձի ջղալին համակարգութեան, միւսին լիովին հակառակ է ազդում։ Օրինակ. կամ մարդիկ, որոնք սիրում են մուղիկա, ոգերւում են, լուզում, արտասուսմ նրան լսելիս, տեսել եմ անձեր, որոնք ամենասքանչելի մուղլիկավի առջև մնացել են անտարբեր և զարմանք են լալտնել թէ ինչպէս կարող էր ազդախի ականջ քեղրտող զգուղոցը։ Խոգել մարդու Նոյնը պատահում է նկարների առջև, մի հեղինակութիւն կարդալիս. նա մանաւանդ երբ հարկաւոր է, անկախ սրանրականակալ ազդեցութիւնից, ինքնուրովն դատողութիւն տալ առանց կեղծելու, առանց կրտելու նրան իր ստացած կրթութեան կամ ուսման մկրատովը։

Ազգպէս, ջղալին իւրաքանչիւր համակարգութիւն ունի իր արդիւնք զգացողութիւնը և եթէ դիտողը, դատողը, ազատ է լինում կանխակալ ազդեցութիւններից և կազմւած տպաւորութիւններից, այն ժամանակ ստանում է մինչեւ այն ժամանակ եղած դատողութիւններից լաճախ տարբերը։

Ազգպէս էլ պատահաց ինձ հետ Տուրների մասին պիտի ասեմ որ կարդացել էի, բայց այնքան քիչ և այնքան անուշադիր էի թողել նրան, որ հաղիւ լիշում էի թէ ինչպէս նրա սե թանաքով, գրքերի մէջ տեսածու նկարները ծիծաղս էին շարժել և ես գոչել էի թէ «ինչու են որան մեծ նկարիչ կոչում և այս նկարները՝ գլուխ գործոց»։ Ազդ մինուն բանը պատահել էր Վագների երաժշտութեան մասին, երբ առաջին անգամ լսեցի նրա «Ալակիրի» օգերան մի փոքրիկ երաժշտական խմբից և մի չնշին բնմի վրա։ Նրան—մասամբ էլ ննթարկւած կետուրնօի ազդեցութեանը —

լսենթաւին մուղիկա էի կոչում. բայց ևս ինքս ինձ խենթ կոչեցի, երբ շատ լսող առիթ ունեցաւ վագներից շատ բան լսել և նրա մուղիկան ուսումնասիրեմ:

Ուրիշ է, ազդպէս էլ Տուրներին տեսնել մի գրքի երեսների վրայ ուրիշ է ժամերով կանգ առնել նրա բնագիր նկարների առջև:

Բանը այն է, որ իմ հասկացողութիւնը, քննադատութիւնը Տուրների նկարների առթիւ, երբ մի քանի բոպէ անցաւ, շատ տարօրինակ թմբ մեզ ընկերացող նկարչունուն: Նայ, առաջնորդելով մեզ Տուրներիան սրահը ասել էր.

—Գնաճք ալժմ մեծ խենթի նկարները տեսնելու:

Եւ երբ մի քանի բոպէ նաև եցինք, ասաց.

—Ասացէք ինսդրեմ, բնութեան որ երեսնթի մէջ տեսել էք գոների այս տեսակ վաշրենի, անբնական խառնուրդ:

—Եւ շեշտած գոյներ, աւելացրեց բարեկամու:

—Վայրենի այս, ասացի ևս—իսկ շեշտած՝ երբէք... Տուրները և նկարիչն է...

Բարեկամու ու նկարչունին միմեանց երեսին նաև եցին զարմացած: Մենք ազդ միջոցին աւելի ներս էինք մանոււմ Տուրներին լատկացրած գետնափոր սրանք, որի պատերը ծածկւած էին նկարչի ակւարելներով: Ազդ տեսակ նկարների մէջ նա ունեցել է երկու նշանաւոր պերիոդներ առաջինում նա հետեւ է ուրիշ վարպետների: ոչինչ նորութիւնն Երկրորդ պերիոդումն է միայն որ նա սկսում է փորձեր անել բնորոշ լինելու առաջացրել է մի շարք ամենաընտիր տեսարանները: Դրանց մէջ երեսն և վենետիկեան վեց կտոր չքեղ պատկերները. մասնաւանդ մէկը իր մոխրագոյն և սպիտակ ֆոնով, որ չենքերը ուղիէքի պէս դուրս ցցած է երեցնում: № 57—62 ջրանկարներն են որ սկսել են բնորոշելու նշաններ տալ. ազդակից սկսում է երեսակ այն մի տեսակ մշուշագին խացուց արւած է վրձինի լանդուգն և արագ շարժմամբ:

Ազդաեղից արդէն Տուրները սկսում է փալեցնել իր ապադաւ այն հանձարը, որին «հիւանդու» պիտի կոչէին շատերը:

Ակւարելներից չետոց, երբ նկարիչը ձեռնարկել է իւղաներկ նկար ների, ըստ երեսնթին պահ մի չէ յաջողւել նոյն բնորոշութիւնը արոտ չայտել և մի առ ժամանակ հետուել է հին շկոլաների, մանաւանդ Ուիլսոն նկարչին. ալդ ժամանակ իսկ նա արտադրել է բաւական սիրուն պատկերներ պատմական կեանքից: Նշանաւորներն են.—«Սէդէանտ տեսնիլլը» և «Ծովալին ալեկոծը թիւնը», «Ծովապետ Նելմոնի մահը», «Զայրլդ Հալբըլից մի տեսարանու եալին:

Բայց ահա, 1831 թիւն, երբ նա նկարելիս է եղել իր «կալիպու-

լավի պալատը՝ պատկերը և հասել է կէսին, լանկարծ առաջացել է նրա մէջ այն փոխութիւնը, որի չնորհիւ նա արտադրեց շնուագաւ տարօրինակ գոյներով պատկերները: «Աալիգուլավի պալատը» պատկերը ներկալացնում է մի պերիոդից միւսը՝ անցքը. ազդտեղ, մի մասը հին շկուան է ներկալացնում, իսկ միւսը իւր նոր ստեղծածը, երկու մասն ևս խիստ կը պով շեշտաւած՝ երեսում ևն մինուն պատկերի վրա:

Անուհետեւ արդէն, մեծ նկարիչը սկսում է արտադրել իր անօրինակ պատկերների շարքը, մէկը միւսի ետեից, մէկը միւսից աւելի նրաացքած, կատարելագործած և իբր գալթակղեցուցիչ քար ձգելով նրանց՝ ին սովորութիւններով և մտաւոր կաշկանդումներով ծթռած նկարողների առջև:

Ահա, օրինակ, ալդ պատկերներից մէկը:

Սլանում է երկաթուղին մի կամուրջի վրավից, շրջապատաւած իրենից վիժող ծուխի և շոգու խառնուրդով. երկնքից շեշտակի կերպով ալդ իսունուրդն ևն պատառում անձրիւալին զօրեղ զծեր. քմահած քամին խառնել է ալդ բոլորը միմեանց, գիշերավին խաւարը իր ստւերն է դրոշմել նրանց վրայ և լոկոմոտիվի առջենի երկու խոչոր կանթեղների մոռելավին դուն ստացած լուսը՝ սկսելով խիստ, գնում է իր լուսը մնոցնելու խաօսի ամենամութ խորչերի խաւարի մէջ... Անքան կենդանի, անքան բնական է արտազակտաւած ալդ բոլորը, այնպիսի զօրեղ վրձինով պատկրացրած, որ մտրդ մի տեսակ երկիւզալից պատկառանքով է որ խորասուլում է ալդ անքատակ նկարը դիտելու:

Ահա այժմ մի ուրիշ նկար.—«Մի մահ ծովի վրայ». Բնչ է ալդ, կուսինը մի ամպանդակ կերպարանքով ամպերի պատռաւածքներից ցոլանում է ծովի այն մասի վրայ, ուր ստւերացել է կանգ առած նաւի սի առագաստը. և նաւի քթի կողմից արձակւած թնդանոթի կրակը դոյների աճնպէս ցալսող խառնուրդ է դոլացրել, որ նաւը ստացել է ֆանտաստիկան կերպարանք:

Իսկ ալս միւսը:—Գոյների տժգոյն խառնուրդ, գլուխ պտանցնող միւրաքի լորձանք ծովի վրայ, մի քանի բեկանւող նաւերի խառն ստւերագծեր, ապա մի պալմող նաւի բեկորներ... ալս բոլորը միմեանց խառնած. ջուրը տակից վրդիրալից կերպով սիւնակներ է կազմում, քամին լորձանքներ է գոլացրել և խաղալիքի վոյսել նաւի առագաստները. երկնքը ամպատ, ջուրը թունդ կանաչագոյն. և ալդ բոլորին լուսաւորողն է կավմի վրավի միւսկ միծ կանթեղը խոնարհւած դէպի ջուրը և կիսովին ծածկւած սիւն կազմող ջրերով...

Ազդպիսի տեսարան, որ երևակացութեան մէջ կազմելու համար իսկ նարկաւոր էր ոչ, ջուրները կտաւի վրայ է դլոշմել առանց մոռանալու մի կէտն իսկ, տմինաշնչին մասրամասնութիւնն անդամ:

Բոլոր ակտ նկարների մէջ լոյն էր, որ հանճարեղ նկարչի ուշաղը բութեան գլխաւոր կտորն է եղել Նամ աշխատել է արտագրել մանաւանց լոյսի ան նիւլանմները, որոնցով լըջապատւած են առարկաները, որով բնութիւնն է ողողւած մանաւանդ անգլիական երկնքի տակ և Վենետիկան ջրանցքի վրաց. ոչ մի նկարչի զեռ չէ լաջողւել Տուրների պէս պատկերացնել լոյսի աղջ խորհրդաւոր դոյները, որոնք առաջին անգամ տեսնողին ապչեցնում են, Այդ ան լոյսի խառնուրդն է, որ գոյանում է ոչ թէ չեշտուած գոյներից կամ նրանց կոնտրաստներից, այլ նրանց ստերներից, որ ոչ սահման ունի, ոչ զիծ իր մէջ. կարծես անմարմին բաներ են, որոնք ձուլւել են միմեանց մէջ ամեն մէկը պահելով իր տիպարը.

Եւ իսկապէս, ինչ զոյներով կարելի է արտաւագանել գարնանալին առաւօտեան մի կիսազօտ, արեգակի առաջին թուլ ճառագալթներով մի տեսակ մեռելալին գոյն ստացած լոյսը, որ ոչ գեղին է, ոչ ոսկեղջօծ, ոչ կարմիր և ոչ ել կապուտ, այլ բոլորն էլ միասին, ամենքից մի մի ստեր, մէկը միւսի մէջ ձուլւած և գոյացրած մի նոր անօրինակ գոյն. Այժմ երեսակալեցէք մի մացաւոս քարայրի բերանի մօտ, կանգնած բարձրուն, զիտում էք քարայրից դուրս սահող չողիները՝ լուսաւորւած կարմրագոնին թէ կանաչագոն (սակայն հս դալտոնիստ չեմ որ չկարողանամ որոշել) մի անհասկանալի նիւլանսով անոսր օդի հետ, մացաւոների կանաչուի եան անդրադարձութիւնը, ցածում հոսող ջրի, վերևից երկնքի երկնադին կապուտակութիւնը, գորշ ժալուերի ստերները, արենի մեղմ ճառագալթների բերած պլազման գոյները... և ինչ գոյն կը ստանաք. արդեօք պն ծեփած ներկերը որոնցով շատ նկարիչներ նկարում են արշալուսը, վերջալուսը, դիցուհիների քարալըներ և կամ բնութեան այլ և այլ տիսարաններ...

Եւ իսկապէս, երբ մարդ գտնուում է ակտ տեսակ տափակ նկարիչների պէլզամների առաջ, լաճախ գտնուում է որ բնութիւնը կտաւների վրայ տանջում են, չարչարում և տեսնողին էլ ատելի անում, ինձ պատահել է տեսնել շատ նշանաւոր նկարիչների պէլզամներ, հիմանլու սակայն մարդ գտնում է, որ ազդ նկարների վրայ պակասում է միշտ մի բան. ինչ արդիօք ծառերի ճշտութիւնն է, ֆոնը, սիրապիկոտի ւական օրէնքները. ոչ, այդ բոլորը տեղն են, միմիայն լոյսը լոյսը չէ արտակարուած, չէ ըմբռնւած ճշտութեամբ. ոչ մի կէտում, ոչ ֆոնի և ոչ էլ տերների արանքներում, ոչ ջրի և ոչ օդի մէջ ան չէ, ինչ որ կայ բնութեան մէջ. առանց շրջագծերի, առանց որոշ, շեշտւած գոյների, այլ մի խառնուրդ անորոշ և անսահման լոյսի ողողման, որով շրջտպատւած է բնութեան մէջ. ամեն առարկայ. այդ լոյսը, որ կարծես կիսովին իրեն—մարմից (մանաւանդ կինդանական մարմնից) է արտադրուում, շրջապատում է, օրինակ, ոչ միայն ծառը, այլ և նրա խորաքանչիւր տերելը, տերելի իրա-

քանչիւր ծալքը, խորշը... Արտակալուր եթէ կարող ես, տերեի իւրաքան. յուրի, իր դիրքի համեմատ՝ ունեցող լուսը, սումբը, որոնք փոփոխում են իրենց դրացիների ձգած սուերներից, անդրադարձրած լոյներից...

Տուրներն է ահա որ կարողանում է այդ վերին աստիճանի նուրբ գոյների խառնուրդը իր զօրեղ վրձինով եթէ ոչ կատարելապէս արտա-լալտել, գոնէ ստեղծել նրան արտակալող շկոլան. Նրա վորձերը, որոնք սուաշինն են, չաջողած են անսպէս, որ մարդ իրեն զզում է ընու-թեան առջե, զգում է որ բնութիւնը թէ ելի այդ չէ, բայց այդ ուղղու-թիւնով գնալով է, որ կարող է կտակի վրայ արտակալուել:

Սական Տուրների նկարները առաջին անգամ տեսնողին կամ ծի-ձաղն է շարժում, կամ ասլեցնում է, չանկարծակի բերում, անողիս որ մարդ ընդունակ է խենթ կուել նկարչին:

—Անբնական գոյներ են. ահա վեր ի վերոց դատողի առաջին դիտո-ղութիւնը,

Անբնական են երևում այն, որովհետեւ սովոր չէինք տեսնել բնու-թիւնը ճշդութեամբ արտակալուելու ակալիսի վորձ. սովոր չենք ալզպիալի նկարների, աչ սովոր էինք հիանալ, ոդիորւիլ միապազաղ, շեշտւած և սանմանաւոր որոշ գոյների վակուն լուսաւորութեամբ. սովոր էինք տես-նել—շատ շատ—մի քանի զոյների խառնուրդներից գոյացրած պապզուն, վարդնի ճաշակի համեմատ լուսաւորութիւն և նրանց մէջ, առարկաները որոշ շրջանագծերով—մի քարտէզի պէս... մինչ Տուրների նկարների վրա և մենք տեսնում ենք առարկաները գրէթէ մեռնող, իրենց շրջապատող օդի լուսի հետ խառնուղ և նրա մէջը հալուղ՝ շրջագծերով և այդ լուսը արտա-լալտւած ոչ սովորական նկարներինի պէս, աչ անսպէս, որպէս բնութեան մէջ կայ:

Երկար, գրէթէ տաս րոպէ է հարկաւոր, ազատւելու համար նկար-չութեան վրայ մինչեւ այն ժամանակ ունեցած աւանդական կամ կրթու-թեան թողած կապերից, եթէ մարդ ուզում է Տուրներին հասկանալ. Տես-նել և անցնել նրանց մօտից, աչ կը լիներ անել ամբոխի պէս. և իսկա-պէս, ամբոխը ծիծաղում է այդ նկարների վրայ երեցող խարխլւած, քար-ռքանդ իրերի վրաչ...

Տեսնում էք օրինակ նկարւած նաւի ոտւերներ, շրջապատւած՝ մինչեւ ալդ ժամանակ նկարիչների համար իսկ անօրինակ՝ լուսի ողողումով, որը թափանցում է նրա իւրաքանչիւր ծալքում, նրա ամէն մի խորշում, սուա-նալով նաւի, խորշերի և դիրքի համեմատ սուերներ, որոնք շրջապատել են նաւը և մեռցրել նրա մէջ իւրաքանչիւր շեշտւած գիծ. իսկ նաւի շրջագծերը սուերի պէս հալում են լուսի մէջ առանց որոշ տեղ բռնելու խնկ փանը, հորիզոնը... որպիսի խառնուրդ գոյների...

Եւ արդ է որ մարդու լանկարծակի է բերում և հանել է տալիս  
նրա բերնից.

—Այս ինչ հիւանդ ուղեղի արտաւախտութիւն է:

Սական, երբ անցնում են բոպէներ, երբ դուք աղատում էք ավել  
մինչև արդ ժամանակ գոճների և նկարչութեան վրայ ունեցած հասկացո-  
զութեան կապերից և կուսական մտքով ու զիտողութեամբ էք նարու  
ծուրների նկարներին, այն ժամանակ մի ինչ որ բարձր բան լախա-  
կում է ձեզ. դուք ձեզ զդում էք վերացած, հիացումի մէջ և ձեզ կար-  
ծում էք նկարւած ընտթեան մի անկիւնի մէջ՝ որպէս նրա մի մասը  
կազմող և ամբողջութեանը վրայ զմալող...

Վսիմութիւնն ու վեհութիւնը ճնշում է ձեզ. մարդ ուղում է ծնկեր  
ծալել արդ բարձրութեան առջև, չկարողանալով մեր խզճալի ուղեղի  
տանել աշղպիսի ծանր վեհութիւններ...

Եւ ահա, մարդիկ, որոնք չեն հասկացել արդպիսի վեհութիւնները  
լինի նա Վագների մուղեկան, զոթական ճարտարապետութիւնը կամ  
ծուրների նկարները, նբանց կոչել են հիւաննդոտ արտաւախտութիւնները  
իսկ նրանց արտադրողներին՝ հիւանդներ և խննթեր...

(Շալունակելի)

„ՄՈՒՐՃ“ ԱՍՍԱԳՐԻ ՆԻՀԹԵՐԻ ՑԱՆԿԸ  
1889—1895

(Շարունակութիւն 1)

IX. ԴՊՐՈՑԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ (շարունակութիւն)

Անգլիական ժողովրդական դպրոցները: (Արտասահմ. թղթակ.)

1890, 3:

Մանկական ընթերցանութիւն և Ղ. Ազայեանց: Երւ. Ղազա-  
զարեանցի: 1890, 3:

Ուսուցական ռոճիկները հայոց եկեղ. ծխական դպրոցներում  
և Կաթողիկոսական կոնգակը: Լուսինիի: 1890, 6:

Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցը: Լուսինիի: 1891, 2:

Պետալոցին հայ գրականութեան մէջ: Յովհաննէս Բարխուդա-  
րեանցի: 1891, 7—8:

Յովհաննէս Ամոս Կոմենիոս: Յովհ. Բարխուդարեանցի, 1892 3:

Դպրոցական-վարչական ռեֆորմ: Աւետիք Արասիանեանցի:  
1892, 9—10:

Էնտանիքը և Դպրոցը: Խշանուհի Սովիա Արդութեանի:  
1893, 7—8, 9:

Դիւղանտեսութեան ուսումը Գ' րմանիայում: Աշոտ Աթանա-  
սեանցի: 1893, 9:

Խրիմե սի Հայրիկ և գիւղատնտեսական ուսումը: (Քարոզ: Գրի-  
առաւ Յ. Յակոբեան): 1893: 10:

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1896 թ. № 2.

Դպրոցական նամակներ։ Լեռն Մանւէլեանցի։ 1894, 3, 4,  
6, 11—12, 1895, 1, 6։

Կովկասի կառավարչապետի շրջաբերականը Հայոց եկեղ. ծխ.  
դպրոցների մասին։ (Տես Լուրեր)։ 1894, 7—8։

Ուսուցչական խնդիր։ Երև. Ղազարեանի։ 1894, 7—8։

Աւագ ուսուցիչը մեր դպրոցներում։ Մկրտ. Տէր-Մկրտչեանի։  
1894, 7—8։

Գիւղական վարժուհու յիշառակարանից։ Օր. Ա. Շտեւէնի.  
թարգմ. Յովհ. Մէդնիկեանի։ 1894, 9, 10։

Ղարաբաղի թեմական դպրանոցը։ Ա. Արասիւ. (Ա.)։ 1894, 1։

Հայոց թեմակ. դպրոցների կազմը 1894/95 թ. (Ներսիսեան  
դպ., Ղարաբաղի թեմ. դպ., Նոր-Նախեջևանի դպ.):  
1894, 9։

Շուշւայ դպրանոցը 1893/4 թ.։ Լեռն Սարգսեանցի։ 1894,  
11—12։

Դպրոցական խնդիրներ։ Գր. Վանցեանի։ 1894, 1։

Յովհնանեան դպրոցի հոգաբարձ. ընտրութիւնը. Ա. Արասիւ.  
1894, 3։

Քաղաքակրթութեան պատմութիւնը ուսուցման մէջ։ Յովհ.  
Տէր-Միրաքեանի։ 1895, 1, 2։

Մոսկ. հայ ուսանողութիւնը։ Գար. Սարգսեանցի։ 1895, 5.  
Թիֆլիսի քաղաք. դպրոցն. խնդիրը։ 1894, 9, 1895, 8։  
Զայնագրութեան դասաւութիւնը հայոց եկ. ծխական դպ.  
րոցներում։ Գէորգ Ստեփանեանի։ 1895, 12։

#### X. ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ ԵՒ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Ուղղագրութեան մասին Մուրճ ամսագրում։ (Խմբ.): 1889, 1։

Ուղղագրութեան խնդիրներ—Հիւն թէ վեկ։ Սարգիս Սարգւ.  
սեանցի։ 1890, 4։

Սուրբ լեզու։ Ղազարոս Աղայեանցի։ 1890, 11. 12։

Երկրաբառները մեր լեզում։ Նոյն։ 1891. 4։

Հայոց այբուբենը և թւագրութիւնը։ Նոյն։ 1891, 12։

Հայկաբանութիւնը Եւրոպայում։ Գուստավ Շոռում Փի, թարգ.  
Ա. Արասիւ։ 1891, 1, 3, 7—8, 9. 1892, 7—8։

Հայերէն գրքերը 1891 թ. Պետր. Զաքարեանցի։ 1892, 7—8։

- Ասողիկը «Արարատ» ամսագրում: Ստ. Մալխասեանցի:
- Հայոց զրի մասին: Ղազ. Աղայեանցի: 1892, 12:
- Մովսէս Խորենացու նոր աղբիւրը: (Պրոֆ. Կառիեռի նոր հրատարակութեան առթիւ): Ստ. Մալխասեանցի: 1892, 12:
- Խորենացին Ուխտանէսի մօտ: Եղիշէ Մադաթեանի (վանի): 1893, 5:
- Եկուն և ուղղագրութիւնը: Սարգ. Սարգսեանցի: 1894, 2, 3:
- Մովսէս Խորենացին և «Թւելեաց երգք»: Մկրտիչ Նաւասարդեանի: 1894, 3:
- Հայերէն ձայնաւորների ծագումը: Պրոֆ. Ֆրիդրիխ Միլլերի (թարգմ.): 1894, 7—8:
- Գարագաշեանի «Հայոց Քննական Պատմութիւն»: (Քննադատական): Գալուստ Տէր-Մրտչեանի: 1895, 6, 7:
- XI. ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ:
- Պոչեռնց և նորա վէպերը: Ն. Քարամեանի: 1889, 1, 2:
- Ցովհ. Ցովհաննիսեանի բանաստեղծութիւնը: Ալէքս. Քալանթարի, 1889, 7:
- Ազգային վէպ — Դաւիթ և Մհեր: Մանուկ Աբեղեանի: 1889, 10. 11, 1890, 1, 2:
- \* Մանկական ընթերցանութիւն և Ղազ. Աղայեան: Երւ. Ղազարեանի: Տես բաժ. X:
- Ցովհ. Թումանեանի բանաստեղծութիւնը: Լևոն Մանուկելեանցի: 1891, 1:
- Սիրոյ պատրանք — Եւելինա Գր. Արծրունու: Երւ. Ղազարեանի: 1891, 12:
- Հրապարակախոս-բանաստեղծ: Սմբատ Շահազիզեան: Եղիշէ Մադաթեանի: 1891, 3, 5, 7—8, 12. 1892, 1:
- Վրժ. Փափազեանի պատկերները: Ալ. Քալանթարի: 1892, 3:
- Ազդի երգիչը — Ռաֆայէլ Պատկանեան (Գամառ-Քաթիպա): Եղիշէ Մադաթեանի: 1892, 10, 11. 1893, 4:
- Նամալեանի «Պատրիկեանի նամակները»: Պետր. Մելքոնմեանի: 1893, 6:
- Անցեալի յիշաստակը: Եր. Ղազարեանի: 1894, 10, 11:

Հայ գրողը քննադատութեան առաջ: Տիկ. Մարիամ Խատիսիանի: 1895, 11:

## XII. ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ.

Վիպասան Օկտատ Ֆեօդի: Գ. Անակեանի (Ժածկ.): 1891, 2:  
Գլեք Ռւսակէնսկի և Հոգի իշխանութիւնը: Երւ. Ղազարեանի: 1891, 3:

Վրաց գրականութիւն. իշխ. Ճաւճաւաձէի Կացիա-Ադամեանի  
վէպի առիթով: Տիգր. Փիրումեանի: 1891, 4:  
Կոմս Լեւ Տոլստօյի սկզբունքները: Յովհաննէս Սաղաթելեանի: 1891, 6:

Միխայիլ Խորեիչ Լերմոնտով: Լևոն Մանուէլեանի: 1891, 6:  
Մուացւած խօսքեր—կոմս Տոլստօյ: Երւանդ Ղազարեանի: 1891, 12:

Պեսալոցցին հայ գրականութեան մէջ: Յովհան. Բարխուդարեանցի: 1891, 7—8:

Միտք և Զգացմունք—կոմս Տոլստօյի առիթով: Երւ. Ղազարեանի: 1892, 1:

Նասուրալիսմ և էմիլ Զոլա: Ֆելիքսի (բժշկ. Վ. Արծրունի): 1892, 5. 6, 11. 1893, 7—8, 11:

Գինա Ռայնիչիչ—բոշա բանաստեղծ: Վլիսլոցկիից Գր: Վանանեանի: 1893, № 3:

Տոլստօյ „Հե-դելանիէ“ դրւածքի առիթով (Դայլի գլուխն աւետարան): Եր. Ղազարեանի: 1894, 10, 11, 12:

Լերմոնտովի «Դեւ»: Յովհ. Գնունու: 1894, 11—12:

ՅԱԻԵԼԼԻՔԻ: «Մուրճ»-ի անցեալ համարում յիշւածների մէջ աւելցնելու է:

### I. ԲԱԺՆՈՒՄ

Ուղիղ ճանապարհը: Ա. Արասխանեանի: 1895, 1.

### II. ԲԱԺՆՈՒՄ

Ռուսաց գատաստանական վերանորոգութիւնը: Կ. Եաղուբեանի: 1898, 1. 2. 3:

Գիւղակսն վարկը Ռուսիայում և Անդրկովկասում: Գր. Վարդգանեանցի: 1889, 2:

Հողաչին պայմանները և գիւղական վարկը: Նոյն: 1898, 9:

VII. ԲԱԹՆՈՒՄ

Զւիցերիական պետութիւնները: Մկրտ. Մանուչարեանի: 1891,  
9. 10. 11:

Տաճկա-Հայաստանի ազգաբնակութիւնները: Սէլանի: 1895, 7:  
Կինը Հին Նախիջևանի գաւառում: Յովհ. Գնունու: 1895, 11:  
Անդլիական նամակներ: Լոնդոն: Վ. Փոփազեանի: 1894,  
11—12. 1895, 2, 5, 8:

VIII. ԲԱԺՆՈՒՄ

Բնագէտների ժողով Սոսկւայում: Ս. Բալազեանի: 1894, 2:  
Երմաբուժութիւնը: Բժ. Գարեգին Սարգսեանցի: 1895, 12:  
Բժշկութիւնը և հողեբանութիւնը: Բժ. Թ. Զաքարեանի:  
1894, 1. 2:

(Շարունակելի)

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃԱ-Ի ՓՈԽՍՌՈՒԹԻՒՆԸ» Զնայած որ «ՄՈՒՐՃԱ-Ի բաժանորդագրութիւնը ներկայ 1896 թ. գերազանցում է ըոլոր նախկին եօթ տարիներից, բայց մի հանգամանք սովորմ է մեզ փոխառութեան դիմել։ Այդ հանգամանքը նախկին տարիների դեֆիցիաներից գոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արգէն ծածկւած են, բայց որոնց համեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ ևս ծանրացած է խմբագրութեան վրայ։ Կանոնաւորել այդ մնացած պարտքի հատուցումը—ահա այն հոգսը, որ մեզ հարկադրում է փոխառութեան դիմել։ Այդ փոխառութիւնը միակ կարող է մեզ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների համար չծանրանալ ամսազրի ներկայ տարւայ բիւջէի վրայ։ Փոխառութեան գումարը խոշոր չլինելով (2500 ռուբլի) մենք յոյս ունինք որ «ՄՈՒՐՃԱ-Ի» համակրող աւելի ունեար անձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւայն հարիւրական (100) ռուբլիով իւրաքանչիւրը՝ փետրւարին 1897 թւականի կրկին յետ ստանալու պայմանով։ Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառութին պարտամուրհակ երկու սարի ժամանակամիջոցով, խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ։ (Վրաստած «ՄՈՒՐՃԱ» № 1-ից 1896 թ.):

ԱՐԴՍՏԱԿԵՍ ԱՐՔԻԵՊՈՒՍԿ. ՍԵԳՐԱԿԵՆԱՆ զբաղւած է պատմական և այլ ուսումնասիրութիւններով։ Աւատուելու վրայ է մի պատմական աշխատութիւն, որին պիտի ծառավեցնի Աստրախանի վիճակավին կոնսինաորիալի արխիւից քաղած նիւթերը և Լազարեան ձեմարանի արխիւից, որից սրբազանը պիտի օգուտ քաղէր թաղաղրութեան հանդէսին Մոսկվա զանւելու միջոցին։ Այդ աշխատութիւնները նշանակւած են ՄՈՒՐՃԱ-ում տպագրւելու համար։

թ. ԹԱԴ. ԶԱՔԱՐԵԱՆՑ, որի բնագլուտական-բժշկական զողոածների հետ «Մուրճ»-ի ընթերցողները տարիներից ի վեր ծանօթ են, ներկաւումս պատրաստում է «Մուրճ»-ի համար մի հետաքրքրական զողուած՝ «Ամուսնութիւնը բժշկութեան տեսակիտից», ուր ի նկատի են տունւելու մեր եկեղեցական կանոնները և այդ մասին մեջնում եղած գրականութիւնը:

ՄՈՒՐՃ»-ի 1889—95 թթ. ՆԵԽԹԵՐԻ ՑԱՆԿԸ սկսել ենք կազմել. Ի նկատի ուր ունենալով ցուցակագրելու և գասաւորելու նիւթերի շատութիւնը, մենք այդ ցանկը, նախքան զրգութով հրատարակելը, տպում ենք մաս առ մաս, թէ մեզ համար անհնարին լինելով մի այդպիսի մեծ աշխատութիւն միանգամից կազմել և թէ մանաւանդ այն նպատակով, որ վերջնական խմբագրութիւնից առաջ հնարաւոր լինի ստուգել ցանկը. Այդ պատճառով խմբագրութիւնս դիմում է մեր ընթերցողներին առհասուրակ և մանաւանդ մեր աշխատակիցներին, որ եթէ որ և է մոռացութիւն կամ սխալ նկատեն մաս առ մաս հրատարակող ցանկի մէջ—բարեհաճեն իրենց զիտողութիւնը լավանել խմբագրութեանաւ Յանկի վերջնական խմբագրութեան ժամանակ կարելի է որ նիւթերի դասաւորութեան մէջ փոփոխութիւններ անհնք—այն աւելի ես նպատակաբարմար դարձնելու համար:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻԾՈՒՅՈՒՆԻ մասին այս անդամ տպելով դոկ. Յ. Մեզու որեանի չողուածը, Առործ-ի գալ համարում կը տպագրենք նոյն «Հանդէսի» մասին պ. Գր. Վանցեանի ընդարձակ քննադատութիւնը, որ միան նոր ստացանք Բերլինից:

ԱՏՏՐՈՆԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԻ «ՄՈՒՐՃ»-ՈՒՄ. Ինչպէս մեր ընթերցողները նկատած կը լինեն Մուրճ-ում հայկական թատրոնը կազմում է ամսագրի մշտական բաժիններից մէկը և բաժանւած է երկու ճիւղի՝ 1) ներկալացումների քննադատութեան և 2) թատրոնական քրոնիկի. Այժմ երբ անցնեալ ճմեռւայ սեղոնի ներկալացումների վերջին քննադատութիւնն է տրում Մուրճ-ում; պատշաճ ենք գտնում նկատել հետեւալը: «Մուրճ»-ի մէջ այդ բաժինը ստանձնել էր վարելու մեր մշտական աշխատակից պ. Լոռն Մանուկլեանը. Արդ, արգարութիւնը պահանջում է վկանելու, որ պ. Մանուկլեան իւր թատրոնական ռեցենզիաներով ոչ միայն մի կանոնաւոր բաժին հաստատեց «Մուրճ»-ում, այլ և թատրոնական քննադատութեանը պատշաճ դիրք տեց մեր հայկական մամուլի մէջ առհասուրակ: Եթէ մի կողմ թողնենք հանճարաւոր Աղամեանի ներկալացումները, որոնք ակամակ դէպի իրեն էին դարձնում ընդհանուրի ուշագրութիւնը և մամուլը զրադեցնում, հայ թատրոնը երբէք չի եղած առարկակ այնպիսի սիստեմատիկական լուրջ քննադատութեան, ինչպիսին այդ բաժին ընկաւ

հաչ թատրոնական անցեալ ձմեռւաչ սեղոնին «Մուրճ»-ի կողմից Մենք կ'ասենք աւելին, հաչ թատրոնական խմբերը երբէք չեն տածած ան յարգանքը դէպի հաջկական մամուլը, ինչ լարգանք որ տածեց ան ցեալ ձմեռւաչ խումբը դէպի «Մուրճ»-ի թատրոնական քննադատութիւնները, մի բան, որ բաղմիցս վկանել են ղերասանները իրենք, առանց բացառութեան, Մենք այդ վկացութիւններին նամանաւանդ հաւատում ենք, որ վիտենք թէ ձեռնհասաւթեան հետ միասին՝ որքան հեռու են «Մուրճ»-ի քննադատութիւնները որ և է անձնական մի տումներից:

Նկատենք ի վերջու և այն, որ «Մուրճ»-ի մէջ թատրոնական քննադատութիւնները լինելու են կանոնաւոր միմիան սեղոնի վերաբերմամբ. յսկ սեղոնից դուրս ներկայացումների համար կանոնաւորութիւն չի պահպանելու: յսկ ինչ վերաբերում է թատրոնական բրոնիկին որ վարում է պ. Հ. Սեեան, նա երեալու է պարբերաբար, արձանադրելով հայոց թատրոնական կեանքի բոլոր կարևոր երեսիթները:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒԹՈՂՆԵՐ. (Սկիզբը 25 օրինակի համար տես «Մուրճ» 1895 թ. № 12 և 1896 թ. №№ 1 և 2), Պր. Միքայէլ Արամեանց Բաքւից, ուղարկելով մեզ 12 բաժանորդագներ, «Մուրճ»-ի 11 օրինակը թողել է խմբագրութեանս կարգադրութեանը, Մենք լատիկացրիք — 26) Ս. Էջմիածնի մալր-զբաղարանին. 27) Սեանաւ վանքի միաբանութեանը. 28) Թիֆլիսի աշաբուժարանին. 29) Թիֆլիսի պր հետաւորաց զպրոցին, 30) Նոր Նախիջևանի Ս. Համբարձման եկեղ. զպրոցին, 31) Գանձակի արհեստագիտական զպրոցին. (Քայլաւ օրինակների մասին կը հաղորդենք գալ ամսւաչ համարում):

ՆԱՍՐ-ԷԴ-ՌԻՆ ՇԱՀԻ ՄԱՀԻ Ապրիլի 19-ին (հին տոմար) կէսօթի մօտ, երբ շահը գնացել էր քաղաքից գուրս Աբդուլ-Ալիմ սուլթի շիրիմը երկրպագելու, սրբավայրի պատապարած բագում սեւովելի զնդակով սպանւեց Նասր-Էդ-Ռինը, Յանցանքը կատարողը բարի պահնդաւոր է, որը ձեռբակալած է,

Նասր-Էդդին շահին մահը եկաւ խլելու Պարսկաստանից երբ գահակալը պատարաստում էր իւր վիսնամեաց թագաւորաթիւնը տօնելու, Ամեն տեղ լուրը ընդունեց խորը տիրութեամբ, ի նկատ ունենալով այն բարիքները, որ արել էր հանգուցեալ զանափառ իւր երկրին: Նասր-Էդդինը լաջորդել էր իւր հայ Մոհամէդ շահին 1848 թւականին 17 տարեկան հասակում, ծնւած լինելով 5 տա լիսի 1831 թ., Գահակալութիւնը, չնորհիւ Ռուսիան և Անդլախ

պաշտպանութեան, կատարել էր առանց վտանգաւոր անկարգութիւնների, որ անքան սովորական էին Պարսկաստանում։ Ամենամեծ ջանքը միայն Խորասանի ապաստամբութեան ձնշելն եղաւ։ Այս 48 տարւաք ընթացքում, չնորհիւ Նասր-Էղդինի, Պարսկաստանը համեմատապէս բաւականին ամրացաւ և մտաւ միջազդացին պետութիւնների շարքը, որի չնորհիւ Պարսից շահը առաջին անգամ Եւրոպա ճանապարհորդեց, որ և կատարեց նա երեք անգամ 1872-ին, 1878-ին և 1889-ին, առիթ գտնելով դորանով մօտիկից շվեյլ եւրոպական քաղաքակրթութեան հետ։ Դա ունեցաւ իւր հետևանք-ները Պարսկաստանի համար—բարք ու վարքերի լայտնի չափով մեղմացումը, անողորմ մահապարտութիւնների նւազումը և այն, Շահի հեղինակութիւնը ամրացաւ այնպէս, որպէս առաջ չէր եղել, և չնորհիւ գորան՝ Պարսկաստանը սկսեց վայելել արևմտեան Եւրոպավինիւթեական բարիքներից շատերը։ Յանասիկոսութեան մեղմացումը նույն հետևանքներից էր այդ ժամանակի սկսեց Պարսկաստանում բարիքական աղանդը՝ որը սկսեց տարածւել շահի կամքի և խիստ հալածանքների հակառակ, որի հետեղներից մէկը զեռ երկու տարի առաջ անաջող փորձ էր փորձել շահին սպանել, բայց որոնցից մի ուրիշը այժմ կատարեց ոճիրը։

Մանաւորապէս մեծ է Պարսկա-Հայերի երախտիքը դէպի Նասր-Էղդինը, որը իւր հայ ժողովուրդը հայրաբար էր կառավարում, և պաշտպանում նրան նաև այս սարսափի տարիները, երբ հարեան Թիւրքիայում ամենքին չայտնի խժդութիւններն են կատարում հայ աղջի վրա։ Շնորհիւ դորան՝ պարսկահայ մողովուրդը սկսեց կրթական ասապարիզում առաջ ընթանալ։

ՄՈՒՀԱՖՖԱԾԻ-ԷՂ-ԴԻՆ ՇԱՀ. Պարսկաստանի նոր գահակալն է Մուղաֆֆար-Էղ-Դին շահը, որը մինչ այժմ Թաւրիզի ընդհանուր նահանգապետն (վալիադ) էր։ Նասր-Էղդին շահի մեծ որդին՝ Զելի-Մուլթան՝ ոչ իշխանական տոհմից ծագող մօրից ծնւած լինելով՝ պարսից գահաժառանգութեան օրէնքով՝ չի կարող գահը ժառանգել։ Այդ պատճառով գահը ժառանգեց երկրորդ որդին՝ Մուղաֆֆար-Էղդինը, որի մակը հանգուցեալ շահի հօրեղբօր աղջիկն էր։ Մուղաֆֆար-Էղդինը ծնւաց 1853 թ., և գահաժառանգ անւանեց 1858 թ։։ Դեռ փոքր հասակից նա նշանակւեց Թաւրիզի ընդհանուր նահանգապետ, բայց ինքը անմիջականապէս գրեթէ չի կառավարել իւր նահանգը, և երբէք Պարսկաստանից նա դուրս չի եկել։ Կրօնասէր է և վայելում հզգորականութեան պաշտպանութիւնը, լաւ որսորդ է, հեծող և սիրում է բուսաբանութիւնը։

ՎԵՀ, ԿԱՓՈՒՀԻԱՌՍԻ ՆԵՐԿՈՅԱՅՈՒԹԻՉԻՉԸ Թագաղորութեան հանդէսին, ԱՄՈՒՀԸ

№ 1-ում մենք լազոնեցինք որ թագաղը ութեան հանդէսին Մոսկալում հայ հոգեորականներից հրաւիրւած են ներկայ գտնւելու վեհ. կաթողիկոսը և Արքատակիս արքեպ. Սեղրակեան. վերջինս իբր ներկայացուցիչ Ռուսաստանի երկու հայ թեմերին Ալդ լուրը կարօտ է լրացման. Հայոց Կաթողիկոսը այն բարձր անձերի շարքումն է, որոնք հրաւիրւած են կամ անձամբ ներկայ գտնւելու և կամ իրենց ներկայացուցիչն ունենալու Վեհափառ Կաթողիկոսը իւր տկարութեան պատճառով ուղարկեց իւր իւր ներկայացուցիչ Երեմիա եպիսկոպոս Գալատեանին, արքութիւն շորջելով նրան:

ԵՐԵՄԻԱ. ԳԱԼԱՑՍՍԱՆԸ. ԱՐՔԵՊՈՂԱՎԿՈՊՈՍ. ՎԵհափառ Կաթողիկոսը արքութիւն է չնորհել ո. Սենողի նախանդամ Երեմիա եպիսկոպոս Գալատեանցին, կոնդակով առ 4-ն ապրիլի, որով Հայրազիտը նորան միաժամանակ անձնափոխանորդ է նշանակում Նոցին Մեծութիւններ Ռուսիայի հայուն և կալսելունու թագաղը ութեան հանդէսին ներկայ լինելու համար:

ՀԱՅՈՅ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՅՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ. «Արարատ»-ը հաղորդում է, որ Արքատակիս արքեպիսկոպոսը իւր առաջնորդ Աստրախանի հրաւիր ստանուալով պ. նախարարից ո. թագաղը ութեան հանդէսին ներկայ լինելու, խնդրեց Վեհ. Հայրազեանի օրհնութիւնը և հեռագրով պատեր ստացաւ փութալու Պետերբուրդ և Նորին ՎԵհափառութեան կողմից անձամբ բանակցելու ներքին գործոց պ. նախարարի հետ դպրոցական խնդրի մասին:

«ՏԱՐԱՁԼ» և «ԱՂԲԻՒՐԻ» խմբագիր-հրատարակիչ պ. Տ. Նազարեանի բացակալութեան միջոցին՝ նոյն թերթերի ժամանակաւոր խմբագրութիւնը ստանուանել է Մուրմի խմբագիրը. Ալդ առաջնորդ «Տարազ» № 16 (առ բիլի 28) ապագրել է հետեւեալ տողերը. «Մեր ընթերցողներին: «Մուրմ» «Աղբիւր» և «Տարազ» միշտ անկեղծ բարեկամմենք են եղել միմեանց ուղութեամբ, զաղափարներով և սկզբունքով հիմնական հարցերով միանգամայն համերաշխու Սական երբեմն եղել են «Մուրմ» ի և «Տարազ»-ի մէջ թեթև անհամաձայնութիւններ, որոնք պարզելոց լիտոյ, մոռացութեան միացն թիւրդի մացուածքին երթի շնորհած են տրեւել երկու կողմից եւ: Մհծ. պ. Աւետիք Արարատ նեանցի կողմից մեր առաջարկի պատրաստակամ ընդունելութիւնը՝ չնայած նրա ծանրաբեռնւած լինելը «Մուրմ»-ի խմբագրութեան դորձով—ամենալաւ ապացուցն է որ մեր դէպի «Մուրմ» ը և պ. Աւետիք Արարատանեանցը տածած անկեղծ զդացմունքները իսկապէս ճանաշւած են «Մուրմ»-ի լաբելի զեկավարի կողմից»:

Ա.ԴԵԼԵԱՆԻ «Նրա ցալը». որ տպւած էր «Մուրմ»-ում՝ առանձին հրատարակւելու է:

ԳԱՆՉԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ. Ապրիլի 12-ին կասարւեցին ընտրութիւններ քաղաքավին վարչութեան համար նախազահութեամբ քաղաքի սատիկանապետ Ս. Ս. Խարաֆիլբէկովին Քաղաքազլիսութեան համար առաջարկւած էին նահանգական ինժենէր գնդապետ Կողնովիցկից, երդւեալ հաւատարմատար Աֆանասեան և նահանգական դատարանի դատախազի ընկեր Լազարեան։ Երկրորդը հրաժարւեց քէարկւելուց։ Ընտրւաց պր. Կոզնովիցկիյ 32 ձաշնով ընդդէմ 27-ի (պր. Լազարեան ստացաւ 30 ձայն), Վարչութեան անդամներ ընտրւեցին պ.պ. Կ. Ս. Ցիրալիան (37 սպիտակ, 23 սե) և Յովհաննիսեան (Օգանեզով) (32 սպ., 23 սե)։ Առաջինը կը լինի միաժամանակ և փոխանորդ քաղաքապետ։ Ուրիշ քէարկւողներն էին Ա. Խան Ջիաթիւանով և Ա. Բ. Աշարեան, որոնք ընտրւեցին Քարտուղար քաղաքավին խորհրդարանի ըտնրւեց քաղաքավին սատիկանութեան հաշւապահ Խոջայեան (ընդդէմ փաստաբան Ամիրխաննեանի)։

Քաղաքազլիսի ոռոճիկը որոշւեց 3000 ռ., վարչութեան անդամներինը 1200-ական ուուրկի։

ՍՊԱԽԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ. Ապրիլին Սղնախում կատարւեցին քաղաքավին կրծատ ինքնավարութեան համար ընտրութիւններ, նախագահութեամբ պ. Ս. Տէր-Աւագեանի։ Սղնախ քաղաքի ընակիչների թիւն է 10.604 հոգի, դոցանից հայեր 5.854, վրացիք 4.644, ռուս 106 հոգի։ Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողներն են 191 մարդ, Ներկայ եղան միայն 98 ընտրողներ։ Պէտք է ընտրւէին 15 ձայնաւոր և 5 թեկնածու։ Ընտրւեցին՝ Ամիրխան Շահմերգեան, Ս. Տէր-Աւագեանց, Ա. Ամիրխաննեան, Ս. Ամիրխաննեան, Ս. Օթարեան, Յ. Շահմերգեան, Ա. Օթարեան, Մ. Բաշին-ջաղեան, Ն. Նաղիրիչւիլի, Յ. Կաջարաստղեան, Լ. Մոսուլիշւիլի, Յ. Բաշինջաղեան, Ա. Սարգսեան, Վ. Ենիկոլովինեան և Ս. Մատինեան։ Ընդամենը 13 հայ, 2 վրացի։

ԿԵՈՐԳ ՔԱՆԱՍԵԱՆՑ, վերատեսուչը Լազարեան Ճեմարանի, մարտ ամսին հանդիսաւոր կերպով տօնեց իւր մանկավարժական գործունէութեան 35-ամեակը։

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԱՆԳԼԻՅԻՆՈՒՄ. Մարտի սկիզբներին Հիւախ Ամերիկանում լուս տեսաւ անգլիերէն թարգմանւած հայ բանաստեղծների զրուժքների մի ժողովածուն երկրորդ տպագրութեամբ, գործ օրիորդ Ալիս Բլաքէլ'ի (Armenian Poeme. Rendered in to english verse. By Alice Blackwell). Ժողովածուի մէջ տեղ են գտած 60 ուսանաւոր, որոնցից 14-ը Պատկանեանից, 12-ը Դուրեանից, 8-ը Ալիշանից, 7-ը Նարբէլից, 4-ը Պեշիկթաշեանից, 2-ը Նալբանդեանից, մնացածը ուրիշներից, Դրւած է նաև Եղիշէի գրած Վ-րդ դարտւ հայ

կանանց նկարագրութիւնը։ Ամենից լաջող թարգմանւած են Պատկանիստնի ռոտանաւորները («Մայր Արաքսի»-ն մանաւանդ), Նարբեչից թարգմանւած են ի միջի ալլոց «Թէ ինձ տալին», «Առ քոյն իմո», «Գարուն»։ Ալիշանից՝ «Պլազուլը», «Հուսնեալը» և ալլն, Պեշվաթաշլեանից՝ «Դու զով խնդրեսո», «Ելքապր ենք մենք»։ Նալբանդեանից՝ «Մանկութեան օրեր»։ Համեմատապէս աւելի քիչ լաջողւած են Դուրեանից թարգմանութիւնները։

իլիս, ԽՈՆԵԼԻ, «ը զրականական անունն է Խլիս (Եղիա) Բախտաձելի (Խոնելի նշանակում է Խոնեցի, իսկ Խոնը բայտնի մեծ զիւղ է իմերեթիալում, Քութթակիսի նահանգ), այդ Խլիս Խոնելին, ասում ենք, որպէս աչժմ լաւտնուում է, մտերմական կապ ունի Մոսկվակին Վէղոմստի (Մոսկվան լրադիր) օրաթերթի հետ, ուր տպագրուած էին հայերի մասին զարդեցուցիչ թղթակցութիւններ Թիֆլիսից, Ազմ աչդ պարոնը, որը տեղական «կա՛ կաղ» արաշտոնական թերթի գլուխաւոր աշխատակիցն է, նշանակուած է Մոսկվակիսա Վէղոմստիի Թիֆլիսի թղթակից-աշխատակիցը: Խոնելին, իւր Փերեխտոնների տոնով «Առակաղ» լրագրում վազուց գուշակել էր տալիս իւր կապը Մոսկվան թերթի հետ: Աչժմ ալ ևս զարդնիք չէ աչդ:

Խոնելին այն լրագրական գործիչների տիպն է, որմնց համար ոճը, էֆեկտը ամեն բան է, իսկ առաքինութիւնը՝ զերօ: Նա ստացել է միան միջնակարգ ուսում և Թիֆլիսի ուղղավառ զպանոցի (սեմինարիա) աւարտածներիցն է, Նորա գրութիւնների գլխավոր առարկան հաջն է ու վրացին իբր ազգութիւններ: Նույնամցնել հավին և բարձրացնել վրացուն—աղդ նրա մօտիւըն է: Բաց չպէտք է կարծել թէ նա ներկայացուցիչ է երկրիս վրացականութեան: Գոյց նա, իբրև իմերէլ, մի լաւոնի չափով իւր նեղ հալրենիքի (Ամերիթի ավլի) հասարակական «իդէալների» արտավարտիչն է: աղդ կարելի է թէս պնդել չենք կարող որովհետե, եթէ չենք կարող պարծենալ թէ հիմունին ճանաչում լինենք քարթալինցի վրացիներին, տամապատիկ աւելլի քիչ ենք ճանաչում իմերիթցիներին: Ալսքանք սական հաստատ է, որ նա մերժւած է վրացոց միակ օրաթերթ «Փառքիալիդ» և վրաց հասարակութիւնը շատ հիմունին ճանաչող և վրացիներին բարեկամ «Նովոն Արագրենիե» լրազրից: Եւ միակ անձը, որի հետ բարեկամ լինելը Խոնելու ամենամեծ պարծանքն էր, և որից զուրս նա ոչոքին չէր ճանաչում իբր հեղինակ—այն է լայնի հասարակախօս և հասարակական գործիչ վրացի Ն. Նիկոլաձեն, հրադին տարիներ առաջ հրամարակակաւ՝ Խոնելու Արագրենինի էլերում՝ հրաժարւել է Խոնելու հետ առընչութիւնից: Խոնելու վերջին քաջագործութիւններից մէկը այն է, որ սկսեց հակերին մեղա

դրել, որ սոքա խլել են թիֆլիսի Դիղուբեան վրաց եկեղեցու շուրջը գտնւած մի հողի գրեթէ կէսը, հակ հաջոց կոնսիստորիան իրը թէ խլել է աիկին Սկիմոնովակի հողը և միացրել հայոց զերեզմանատանը Վերաբում (Թիֆլիսում): Տիկին Սկիմոնովան կինն է նախկին պատաւաւ վրացի Սկիմոնովի, որ ալժմ, ոստիկանապետ է Քութայիսում: Պէտք է խմանալ, որ վերապի գերեզմանատան դործը քննութեան մէջ է գատարանում: Գործը զեռ չփռւած՝ Խոնելին արդէն կանխում է դատարանի վճիռը՝ հաջութեան վրաց մեղադրանք բարդելով. և այդ նա անում է այն ժամանակի, երբ հայոց կոնսիստորի հաւատարմատարը գատարանում կեղծ է (ՈՇՈՋԱԿԱՅ) լայտարարել Սկիմոնովակի ցոց տւած սահմանաշախական մակարդակը: Ազգակին շահերի պաշտպանողի և ֆելետոնիութի դիմակի տակ, ուրեմն, Խոնելին, որպէս բանից դուրս է գալիս, մասնաւոր շահերի փաստաբան է հանդիսանում:— Խոկ ինչ վերաբերում է Դիղուբէվի եկեղեցական հողին՝ հանգամանքը աչս է, որ Խոնելին, այդ հողին կից տիկին Պոլուխանեանի պատսպարւած հողի վրաց գերեզմանաքարեր տեսած լինելով, ձեռաց Ակաւկազ» լրագրում յօդւած է գրում թէ «ուղղափառ» եկեղեցու բակի համարեա ամբողջ կէսը լափշտակել է մի հայ, և որ «ինչպէս կարող է ազգախիլ մի լափշտակութիւն տեղի ունենալ և ան՝ հողակին վաղեմութեան օրէնքների հիման վրաց ամբողջ ուղղափառութեան աչքի առաջ...»

«Մուրճ»-ի ընթերցողներին լիցեցնում ենք, որ ամսագրիս № 1-ում (էջ 163) առած էր թէ Խոսկովեան թերթում «Գրուզին» (վրացի) սառագրութեամբ մի թղթակցութեամբ հայերը մեղադրուում էին թէ նոքա «սիստեմատիկաբար աշխատում են վրացոց եկեղեցները, գերեզմանատները և հոռովիւնները իւրացնել՝ վրացական արձանագրութիւնները ջնջելով և տեղը հայերէն գրել տալով, որպէս զի ազգախով հայերը հաստատեն նոցա հայկական վենելը»:

Այժմ գոնէ գլուխնք թէ ակդ հակա-հայկական արշաւանքի հիմք կազմող «Փակտերը» որոնք են, Գնդապետի ամուսին Նունէ Պոլուխանեան (ծնւած իշխանուհի Ամասոսնի) ապրիլի 11-ին «Ակաւկազ» լրագրին ուղղած նամակում (տպւած միայն ապրիլի 18-ին) ասպարէզ է գալիս լավանելու, որ «Ակաւկազի» աշխատակից Խոնելու ակնարկած հայը, որը իրը թէ լափշտակել է վրաց եկեղեցու հողը՝ ինքը Նունէ Պոլուխանեանն է, և այդ նամակում նա, հիմնւած պաշտոնական վկաչագրերի վրաց լայտնում է, որ ոչ միայն ինքը չի խել վրացի եկեղեցու հողը, ալ որ ինքը Պոլուխանեանն է, որ այդ եկեղեցուն նւիրել է երկու անդամով 542<sup>1/2</sup>, քառակուսի

սաժէն իրեն պատկանեալ հողից. և ալդ նոյն տիկինը  
ծրիաբար մի կաոր հող էլ նւիրել է թիֆլիսի Կուկիոյ ուղղա-  
փառական զերեզմանատանը 1892 թւին. Նոյն տիկին Գոլոս-  
խանեանը տպել աւեց անդական ալ ռուս և հաջ թեր-  
թերթերում՝ «Կաւկազի ուղղած նամակի ան կտորները, որ չի  
տպագրել կաւկազի խմբագրութիւնը. Եւ ալդ կտորներից մէկը սա է,  
«Պարտքս իմ համարում լատոնի կացօւցանել, որ Դիզուրէի եկեղե-  
ղեցու ներկայացուցիչը (հոգեռաբան) պատւեց ինձ իւր ալցելու-  
թեամբ և ասաց, որ Դիզուրէի եկեղեցու հոգեռաբաններից ոչ ոք  
մի տեղեկութիւն չի հաջորդել Իլիա Խոնելի ստորագրութեամբ լոյս  
տեսած լուսածի համար և ալպիսի լողւածի հետ առնչութիւն ունե-  
նալուց հրաժարում է»:

Ուրեմն խոնելուց հրաժարում են նոյն իսկ նոքա, որոնց նապատակները է ձևանում...

Մի բնորոշում արաւ նորերս վերջապէս իշխան Պ. Ա. Դրուզինսկին Թիֆլուսի վրաց աղնուականների կալւածական բանկի Ընդհանուր ժողովում, ապրիլի 27-ին, մի դէպքի առթիւ, որը Խոնելին աղաւաղած ձևով գուրս էր բերել «Աւակադ» լրագրում, ի հարկ է ցանոնի Նախատակներով։ Խշման Գրուգինսկի՛ն ասաց, «Ազգ գէպքի մասին պատմւած է պ. Խոնելի՛ի Քելքէանում։ Ես, սարսոճներ, չեմ կամենում շօշափել այն, թէ ինչ անձնաւրութիւն է պ. Խոնելին, քանի որ ազ նմուշը արդէն ինքն իրա համար խօսում է...»

Եւ ժողովում տրտասանած ալս խօսքերը տպւած են նոյն «կաւկաց» լրագրում (№ 113): որի ազգան քաջ աշխատակիցն է Խոննելին, և այն լրագրում, որի կամուրջով Խոննելին այժմ անցել է Սոսկոսիան թերթի խմբագրութիւնը...

ԸՆԹԵՐՑԻԱԾՔ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆ. ՄԱՍԻՆ. Մարտի 30-ին կովկասեան  
զինուրական շտաբի շինութեան մէջ, ներկաւութեամբ ընդհանուր  
շտաբի գեներալների և օֆիցիերների, գնդապետ Ա. Յ. Վասովսկի  
զեկուցումն արաւ հայոց գրականութեան մասին, ոկոսած հայոց առաջին  
տարարանի հիմնելուց մինչև մեր ժամանակները, բնորոշելով Տաճկա-  
շաւ և Ռուսա-Հայ աշքի ընկնող գրողներին:

ՈՒՂԴԻՉ ՏՆԵՐ ԵՒ ԳԱՂԱԹՆԵՐԻ. Անչափահաս յանցաւորներին Կովկասում  
ես փորձեր են անում ուղղել, ուղարկելով նոյա զատուկ գորա հա-  
մար շինած աներ ու գաղութներ (исправительные пріюты и колонии);  
Մեր երկրում ապդպիսիներից առաջժմ կայ միացն մէկը, որ գտնում է  
Թիֆլիսից ոչ հեռու (գէպի Կոջորը տանող ճանապարհի վրա) Օք-  
րոզանա փոքրիկ գիւղում. Ազդ ուղղիչ գաղութներում և աներում  
փոքրանասակ անդաւորներին պարապեցնում են հողագործութիւն

նով և արհեստաներով։ Այդ դաղութների և տների համար կաէ մեզ-նում մի ընկերութիւն, որ կոչում է Կովկասուան ընկերութիւն եր-կրագործական արհեստագիտական ուղղիչ դաղութների և տների (Кавказское общество исправительных земледельческо-ремес-ленных колоний и пристоев): Դորա վարչութիւնը ալժմ խնդրա-տու է եղել պատշաճաւոր իշխանութեանը որ Օքրազանալինի նման Անդրկովիկառում ուրիշ նոր ուղղիչ դաղութներ աւ տներ հիմնեն նողն նպատակով և որ դորա համար ընկերութեանը բառկացնելի 10% ան տուզանքներից, որոնք ամեն տարի ամբողջ Կովկասից մտնում են զանձարանը զեմскій сборъ կոչւած հարկերի հետ և որոնք մինչ այժմ լատկացնուում են չափահաս չանցաւորների կալանաւորական տներին (арестные дома):

ՆՈՐ ՆԱԽԻԶԵԽԱՆԻ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 26.Ն մարտի կակացած ընդհ. ժողովում եղաւ ընկ. վարչութեան ընտրութիւններ մասնակցութեամբ 90 հոգու Ընտրեցին նախազահ Գր. Զալյսուչեան, գանձապահ Մ. Պոպով, քարտուղար Բուզզանեսին, սոսկ անդամներ՝ Մ. Մահուսեան, Դ. Խօջանեան, Վ. Քիրլինեան և Մին. Բերբերեան։  
Հնկերութեան հիմնական դրամագլուխները ներկակացնում են մոտ 60 հազար ռուբլի։

ՆԻՖՐԱԲԵՐՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ և ԿՏԱԿՆԵՐ. Ներկա ապրիլին վախճանւած խահակ Ծովիանեան կտակել է 3900 ռուբլի այս կերպ. <sup>1)</sup> Ներսիսեան գլուխին 1.500 ռ. <sup>2)</sup> Մողնաւ եկեղեցուն 500 ռ. <sup>3)</sup> Հալոց Բարեգ, ընկերութեանը 500 ռ. <sup>4)</sup> Թիֆլիսի Սոլուակ թաղի ձրի ճաշարանին 500 ռ. <sup>5)</sup> Կուսանաց վանքին 300 ռ. <sup>6)</sup> Կիրակնօրեակ գլուխին 200 ռ. <sup>7)</sup> Թիֆլիսի քահանաների ճանձարանին 200 ռ. <sup>8)</sup> Կուբերի ապաստանարանին Թիֆլիսում 200 ռ.

Գրիգոր Թումայեանցի ժառանգները (Բաքւաբնակ), կատարելով իրենց հօր բերանացի կտակը, նւիրել են 83.000 ռուբլի զանազան քարեգործական նպատակների, այն է՝ <sup>1)</sup> Բաքի Մարտասիրական ընկերութեան 33.000, որի տոկոսները ամեն տարի պիտի տրեն Էջմիածնի ճեմարանին այն նպատակով որ ամեն տարի երկու աշակերտ կրօնական բարձր կրթութիւն ստանան արտասահմանում՝ կամ Ռուսիայում; <sup>2)</sup> Էջմիածնի ճեմարանին 5.000 ռ. <sup>3)</sup> Ներսէսեան գլուխին 5.000 ռ. <sup>4)</sup> Շուշան թեմական գլուխին 5.000 ռ. <sup>5)</sup> Էջմիածնակ վանքի վերաշինութեան համար 15.000 ռ. <sup>6)</sup> Բաք-սում մի նոր եկեղեցի կառուցանելու համար 10.000 ռուբլի։

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆՆԵՐԸ ԺԼ'ՆԵՒՈՒՄ: «Տարազուում» (№ 14) տպւած մի թղթակցութիւնից երեսում է որ Փընեւում ներկակումս կան 43 հաչ, որոնցից 35 ը համալսարանի ուսանողներ և ուսանուհիներ

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՁԱԲԱՆԸ. Ոռուսաց գահակալների պսակա-  
դրութեան լիշտառակը լաւերժացնելու համար Թիֆլիսի քաղաքավիճ  
խորհուրդը վճռել է քաղաքավիճ գրադարան հիմնել. Այդ գրադարանը  
խոստանում է վնալ ամենաշահանաւորը Թիֆլիսի մէջ:

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՁԱԲԱՆ ԱԴՈՒՆԻԽՍՈՒՄ: Մեզ գրում են. Ոռուսաց գա-  
հակալների թագաղբութեան առիթով Վերին Ագուլիսի հասարա-  
կութիւնը թուլաւութիւն է ստացել իւր վազեմի ընթերցարանը, որ  
իշխանութեան կարգադրութեամբ փակւեց երեք տարի առաջ, նո-  
րից բաց անել այս հիմունքներով՝ հասարակութիւնը տալիս է  
բնակարան, ամեն տարի 150 ռուբլի և միանւագ 500 ռուբլի  
սկզբնական ծախքերի համար:

ՊԱՐՍՎԱԼՍՏԱՆԻՑ: Պարսից կտուավարութիւնը սկսել է ուշք դարձնել օտա-  
րանպատակ հայերի գրաւ: Ալսալիս օրինակ, Արամեան դպրոցի հո-  
գաբարձութեան նկատմամբ, որ կազմւած է թէ պարսկահպատակ-  
ներից և թէ ռուսահպատակներից, պահանջւեց որ օտարահպատակ-  
ներ չինեն: Պահանջման է նաև որ միան պարսկահպատակ ռուս-  
ցիներ լինեն: Նովապէս հայոց ներկաւացումներից պահանջմաց որ  
արդիւնքը մնայ տեղացիների օգտին:

Էացւել է հանգանակութիւն Հայաստանիների օղափին, Կիլա-  
ւալ թաղի կանանց նախաձեռնութեամբ: Հանգանակւած է մինչ  
31 մարտի 300 թուման: Կ'ուղարկի Խզմիրլեանին:

ՀԵՌԱԽՈՍԻ ՌԱՇՏՈՒՄ: Փիրաբաղարից (Լնզելիի մօմ) մինչ Ռէշտի կա-  
ռավարութեան դրւու անցէկացրած հեռախօս (տելեֆոն)` ձանապարհ  
շնորհ ընկերութեան ձեռքուլ:

ԾԱՆ-ԳԻՐԵՅԻ ՀՈՂԱՅԻՆ ԿԱՊԱԼՈ: 1872 թւին ծառակութիւնից թողած  
Շամս-Գիրէին 24 տարով կապալով տրւոց Մեծ-Կիր կոչւած արքու-  
նական մի մեծ կտոր հող 1950 դեսեատին, Հին Նախիջնանի գաւառում  
կապալը տրւած էր պալմանով որ Շան-Գիրէլը հողերը ջրելու հա-  
մար ջուր անցկացնի Զանգեզուրի գաւառի Բաղար չաէ զետից դէպի  
Նախիջնանի գաւառի Արփաչալ գետը, և դորա համար պետական  
կալւաների վարչութիւնը պարտք տեսց Շան-Գիրէին 15.000 ռուբ-  
լի: Զրանցքը պիտի վերջանար 6 տարում: Շան-Գիրէը իւր այդ  
պարտաւորութիւնը չկատարեց, և դորա փոխարէն իւր կապալով  
վերցրած հողերը ջրելու համար նա երկու արխ շինեց Արփաչալից  
դէպի իւր հողերը օգտւելով օրական 7 զլուխ (րաշ) ջրով, ի վեա  
աւելի ներքե գտնւող գիւղերի: Կապալով վերցրած հողերը նանգի-  
րէը մանր կտորներով սալիս էր գիւղացիներին կապալով, ստան-  
լով հունձի 1/4 կամ 1/2-ը, նայած հողի ըատկութեան:

Այս տարի լրանում է Շան-Գիրէի կապալի ժամանակամիջոցը

Ի նկատի ունենալով որ Շահ-Գիրէլը չի կասարել, իւր պարտաւորութիւնը բազար չափց ջուր անցկացնելու նկատմամբ, պիտական կալածնիրի կառավարութիւնը, մերժելով Շահ-Գիրէլի խնդիրը նորից ժամանակ տալ ազդ բանի համար և նորոգել կապալը՝ վճռեց նորա ձեռքից վերցնել հողերը իւր արխերով:

ԱՄԱՋԱԿԱՊԵՏ ՆԱԲԻ, որը իւր խմբով 1894 թ-ից սկսած ահի մէջ էր պահում Անդրկովկասի գաւառներից երկուալ՝ Նախիջևանի և Զանգեցուրինը, նա որ օր ցերեկով չարձակումներ էր զործում ամբողջ զիւղերի վրայ, կողոպսում և սպանում հակառակողներին և որին բռնելու բոլոր ոստիկանական միջոցները անօր եղան, այժմ ինքը սպանւեց մարտի 16-ին, Պարսկաստանում, ուր նա անցեալ տարի Ուրմիա քաղաքից երկու ժամ հեռու գտնուզ Լառնի զիւղում իւր բնակութիւնն էր հաստատել Նորա սպանումը վերագրում է մի ազ աւազակի, որի կնոջը Նաբին լափշտակել էր կամենում, նույն խականակառակ ազդ կնոջ կամքին:

Նաբին կավիկասի աւազակապետների մէջ տմենահռչակաւորն էր այս գերջին տարիներում, թէև աւելի սպակաս քան տասը տարի առաջ մեր երկում զործող աւազակապետ Վեարիմը, որը, որքան լայտնի է, իւր աւազակութիւնը թողեց՝ ընդունելով սպարսից ծառակութեան մէջ, ուր, որպէս կարծուումէ, նա մնում է մինչև այսօր։ ԱՄԱՋԱԿԱԿԵՆԵՐ, Նաբիի խմբի հետ միաժամանակ, Անդրկովկասի այլ գաւառներում, թէև միան 6-7 ամիս տեսզութեամբ գործում էր Դաւիլ-Ալի'ի աւազակալին խումբը Գանձակի նահանգի Ձեւանշիրի և Շուշաւ գաւառներում։ Ալդ խումբը կազմեց 1895 թ. գարնանը, Խումբը կազմած լինելով մի քանի բաժիններից, որոնք երբէմն միանում էին և երբէմն ցրւում զանազան գաւառներ, նոցա բռնելու համար հարկաւոր եղան միաժամանակ երեք՝ Գանձակի, Ձիւանշիրի և Շուշաւ գաւառների ոստիկանական ոչքերը, Ծնդհարման միջոցին սպանւեցին աւազակներից չորսը և զանազան տեղերում բռնւեցին 12 հոգի։ Խակ Դալի-Ալի անշատացաւ։ Խմբի ջնջումը տևեց նուեմբերի 28-ից մինչ ներկալ տարւակ լուսարի 15-ը։ Խմբի մէջ կակին նաև երեք հայեր։

Միաժամանակ Նուխտակ և Նըրեշի գաւառներում զործում էին 17 հոգուց բազկացած երկու աւազակալին խմբեր, զլսաւորութեամբ Նասիր Չելաբի օղլու (Նուխտակ գաւառի Խաչմազ զիւղից), Արգուր-բանան բէկ Աբբաս-բէկ-օղլու (Արէշի գաւառի Սափիլի զիւղից) և Սուրխալ-Աբաս-օղլու (Դաղստանից). զոցա ընդհանուր ուղղութիւնը տւող ձմռաչւած էր Արէշի գաւառի բնակիչ հայ Սիմէօն Ռուստամով։ Խումբը ամբողջապէս բռնւեց Նուխտակ գաւառի անտառներից մի-

նում՝ դաւառի ոստիկանական ոչերի հետ ունեցած ընդհարման միջոցին:

Այդ բոլոր խմբերի մէջ մեծ մասնակցութիւն ունէին Սիբիրից և Սախալինից տաժանակիր աշխատաճքներից փախածները, որոնք իրենց հարենիքը վերաղառնալով՝ հնարաւորութիւն չունին օրինական գոյութիւն ունենալ:

**ՖԻՂԱԿՍԵՐԱՅԻ ԴԵՄ:** Խնչակս լալանի է, Փիլոկոմերան խաղողի որթերի մի հիւանգութիւն է (փոքրիկ որթներ), որը Եւրոպակից ևովկաս անցնելով արգէն զգալի չափսերով վնասներ է հասցնում Վովկասի խաղողի աչքիներին: Պորա դէմ կուելու համար կառավարութիւնից հաստատւած է Ֆիլոկոմերային կոմիտէտ, որի հսկողութեամբ զործում են Փիլոկոմերային խմբերը, քննում են խաղողի որթերը, և Փիլոկոմերայով վեառաւածները ալրում են և կամ որթները սպանում զիտութեանը լալանի միջոցներով: Ֆիլոկոմերան տարածւած է զլխառորապէս Քութափսի ու Ֆիֆլիսի նահանգներում: Ֆիլոկոմերայի դէմ կը մելու միջոցներից մէկը համարում է ամերիկական որթեր անկելլու որովհետեւ ամերիկականի վրայ Փիլոկոմերան չի զարգանում: Այդ նպատակով զործում է մեղնում Սակարեան կայարան կոչւած տնկարանը:

Ֆիլոկոմերային գործի համար երկրագործութեան մինիստրութիւնը լատկացրել է 1896 թւականին 152.000 ռուբլի, որից 32.000 ռուբլի Սակարի կալարանի համար, մնացածը Փիլոկոմերային խըթերի համար:

**ՀՐԴԱՀ ԲԱՅԻՈՒՄ:** Ապրիլի 2-ին ալրուց բաքւոմ «Հալաեի պրոեզդ» կոչ ւած մեծ շինութիւնը տասնեակ մեծ խանութիւներով: Նինութիւնը կը լոլոր խանութները ապահովագրած էին: Հրդեհը սկսւել էր Սիբաքեանի լամպալին խանութիւներքնարկից:

**ԹԷՅԻ ԾԱՌԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ:** Թէյի թուփը մշակելու փորձեր վազուց որ եղած են մանաւանդ Սե ծովի ոռւսական ափերում: Կառավարութիւնը անցեալ տարի թէյի մշակութիւնը ուսումնասիրելու համար մի քանի հոգուց բաղկացած խումբ էր ուղարկել Հնդկաստան, Զինաստան և Նապոլիա, որը ուղարկել է «Օդեսաւ նաւով 4.500 թէյի թուփեր և սերմեր, որոնք հասան տեղ մարտի սկզբին: Թէյի թուփերի երկու երրորդը տնկեցին թագաւորական Չակինեան կալածում ՈԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ: Հին լուները չորս ազգակին խաղեր ունեին, որոնցից ամենահոչակաւորը Ոլիմպիական խաղերն էին, բաղկացած ըմբիւս մարտութիւնից, արշաւների մրցութիւնից և ալին: Այդ խաղերը կատարում էին ամեն չորս տարին մի անդամ, ի պատիւ Զես աստուծուն բոլոր լուսական ցեղերի մասնակցութեամբ, Ոլիմպիա հովիտի մօտ Ելիս գետի միջերքում: Յուները իրենց տոմարը սկսում էին

առաջին Ոլիմպիական խաղերից, որ 776 թ. Քրիստոսից առաջ էր, ամեն չորս տարին մէկ կաղմում էր մի շրջան և այդ շրջաններով որոշում էր տարեթիւը։ Այդ խաղերը ամեն չորս տարին մէկ կը ըլնւեցին մինչև 394 թ. Քրիստոսից ինտու։

Այժմ այդ խաղերը վերանորոգւեցին և ահա ինչպէս։ Նոր տումարով լուսնիսի 16-ին 1894 թ., աթլէտիկական (մարմնամարզական խաղերի) միջազգային կոնգրէսը վճռեց վերանորոգել Ոլիմպիական խաղերը և դոցա առաջին հանդէսը կատարել Աթէնքում։ Եւ այդ կատարեց այս տարւակ զատկաւակ տօներին, մասնակցութեամբ մըրցողների զանազան երկիրներից, ներկալութեամբ լունաց թագաւորական տան ու նախազահութեամբ լունաց թագաւորանդի։ Գլխաւոր հանդէսի համար շինւած էր մի ահազին բացօդեաւ շինութիւն սուադ կոչւած, 260 մէտր երկարութեամբ և 140 մէտր լայնութեամբ, և զա վերականգումն էր հնում չափոնի Պանաթէնալոնի ստագի, 60.000 հոգի տեղաւորելու համար Խաղերը կալանում էին դիսկեր գցելում և մարմնամարզական այլ մրցութիւնների մէջ. բաց ամենից զլիաւոր մրցութիւնը կացանում էր նրանում թէ ով ամենից չուտ ուուվ կ'անցնի 42 կիլոմէտր տարածութիւնը Մարաթոնի դաշտից մինչև Աթէնքի սա աղը։ Այդ մրցանակը տարաւ Աթէնքի մօտ գիւղի բնակլիչ Սպիրիդոնին Լուիս, որը այդ 42 կիլոմէտր տարածութիւնը (39<sup>3</sup>/<sub>4</sub> վերստ) կտրեց 2 ժամ 58 րոպէ և 5 0 վայրկենում։ Մարաթոնը այն դաշտն է, ուր աթենացիք Միլթիադէսի զօրավարութեամբ չաղթութիւն տարան պարօիների վրաւ սեպտ. 12-ին 490 թ. Քրիստոսից առաջ։

ԹՈՒՄԻԱՅԻ Ա.ՁԴԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ, հաշւած Ֆինլանդիան, բժշկական գեպարամենուի տեղեկութիւններով, 1892 թւականին կազմում էր 119.288.804 հոգի։ Ծնւածներ հաշւած են 5.976.385 հոգի, մեռածները 4.403.901 հոգի։

Միմիան Եւրոպական Ռուսիակում հաշըւած է 100.251.510 հոգի, ծնւածներ՝ 4.365.542, մեռածներ՝ 3.825.281 հոգի, ուրեմն այնտեղ աւելացածների թիւն էր 540.261 հոգի։

Կոմիկասը (Անդրկովկաս և Հիւսիսային Կոմիկաս միասին) ունէր 7.869.202 հոգի ազգաբնակութիւն, ուր ծնել էին 307.007 և մեռել 309.999 հոգի. ուրեմն պակասել էր 2.922 հոգի։ (Չպիտի մոռանալ որ 1892 թւականին խոլերավի տարին էր),

Սիբիրը ունէր 4.856.902 հոգի ազգաբնակութիւն. Ծնւեցին 77.985, մեռան 59.493 հոգի. ցաւելումն 18.492 հոգի։

Պարտք ենք համարում նախազգուշացնել, սաւան, որ այս վիճակագրական թւերը չեն ներկայացնում այն ճշութիւնը. որ լատով է արևմտեան Եւրոպավի ստատիստիկաներին։

ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ԹԻՖԼԻՍԻ ՆԱԽԱՆԴԱՊԵՏԻ առաջազրութեամբ, ԹԻՖԼԻՍ քաղաքի սատիկանապետը ներկայ ապրիլին նրան ներկայացլեց քաղաքի բնակիչների վիճակադրութիւնը, որ տպեց կաւկազ լրագրի ապրիլի 4-ի համարում: Ազդ թւմբին չպիտի վերագրել միօրեաւ վիճակագրութիւնների ճշդութիւնը: Բնակիչների ընդհանուր թիւն է 162.351 հոգի, որոնցից 88.274 արական, 74.077 իգական: Ներկայացրած թւերից մենք կազմում ենք հետեւեալ աղետակը, դասաւորելով թւերը համեմատական առաւելութեան համեմատ:

	արակ.	իգակ.	գումար
Հաէ . . . . .	34.764	31.437	65.201
Վրացի . . . . .	17.328	17.295	
» (լինրել)	3.905	2.000	
» (մինգրել)	578	316	41.494
» (լսնուր)	45	—	
» (փշաւ)	27	—	
Ոռու . . . . .	15.693	13.290	29.983
Պարսիկ . . . . .	4.491	1.334	5.825
Հրէաւ . . . . .	1.656	1.690	3.346
Լեհացի . . . . .	1.639	1.198	2.837
Թուրք . . . . .	1.601	1.094	2.695
Ասորի . . . . .	1.169	1.027	2.196
Գերմանացի . . . . .	1.321	808	2.129
Օս . . . . .	1.123	877	2.000
Յոզն . . . . .	485	276	761
Զեչն . . . . .	343	13	356
Քիւրդ . . . . .	177	46	223
Թուշ . . . . .	53	4	57
Գարաբին . . . . .	19	—	19
Ուրիշ ազգեր . . . . .	1.847	1.272	3.219

Հաստ դաւանութիւնների:

Ուզափառ . . . . .	73.268
Հաէ-լուսաւորչա .	59.307
Հաէ-կաթողիկ . . .	6.995
Մահմեդական-շիա	6.234
Հրէական . . . . .	3.359
Հռոմանակական-կաթ .	2.774
Աղանդաւորներ .	2.326
Մահմեդ,-սիւննի	2.217

Բողոքական . . .	1.900	
Ալ դաւանակն .	3.976	
<b>Ըստ դասակարգերի՝</b>		
Ազնւ. տոհմական 4.228 արակ. 4.165 իդական		
Ազնւ. անձնական 3.599 2.877		
<b>Մահմետական բար-</b>		
ձր դասակարգ . . . .	60	61
<b>Հոգեորական ուղղափառ՝</b>		
Կուսակրօն . . . .	31	—
Քահանակական . . .	90	63
<b>Հոգեորական Հայ-</b>		
լուսաւորչական . . .	96	66
Ալ քրիստոնկական		
դաւանանքների . . .	9	—
<b>Հոգեորական մահ-</b>		
մետական . . . .	23	2
<b>Տոհմական պատւա-</b>		
սոր քաղաքացի. 2.198		1.895
<b>Անձնական պատւ.</b>		
քաղաքացի. . . .	2.710	2.250
Վաճառական . . . .	1.7 2	1.413
<b>Մոքալաք. (Հին</b>		
քաղաքացի) . . . .	4.854	5.415
<b>Մեշան (արհեստաւ-</b>		
սր մահրավաճառ) 36.713		38.589
Պետ. գիւղացիք. 5.963		4.229
<b>Ժամանակաւոր</b>		
պարտաւորւած		
գիւղացիք. . . .	2.393	1.435
<b>Սեփականատէր</b>		
գիւղացիք. . . .	348	30 4
Կոլոնիաներ. . . .	165	149
<b>Ծառակալիւնը</b>		
թողած պահևստի		
զինւորներ . . . .	4.487	1.799
Օտարականներ . . .	4.861	1.721
<b>Ժամանակաւոր</b>		
բնակիչներ . . . .	10.294	5.133
Ալ և ալ (раз-		
ночицы) . . . .	3.439	2.511

1894թ. Թիֆլիսը ունէր 88.942 արական և 68.594 իգական բճակիչ, ընդամէնը 157.536։ Ուրեմն այդ հաշվով քաղաքի բնակչութիւնը թիւը պիտի աւելացած լինի 4.8% հոգով, արականը պակասել է 658 հոգով, իգականը աւելացել է 5.483 հոգով։

Աւելի ստուգ տեղեկութիւններ տալիս են եկեղեցական և մասնակի մատեանները։ Դոցա համեմատ 1895թ. պականներ եզել են քաղաքում 1.112 օրինական ծնւածննրի թիւը՝ 3.939։ ապրինի ծնւածններ՝ 188. ընդամէնը 4.132, որից արական 2170 և իգական 1.962։ Վախճանուած են նոյն 1895թիւն 1.787 արական և 1.325 իգական։ Որով աւելացածների թիւն էր 1.030 հոգի։ Ուրեմն եթէ բնակիչների չափումը եղած է 4.815 հոգի, պէտք է ընդունել որ գորա մէջ 3.785 հոգին եկովի մարդիկ են եղած։

**ԹԻՖԼԻՍԻ Ա.ՑԿԻՆՆԵՐԸ.** Պաշտոնական տեղեկութիւններով՝ Թիֆլիսի քաղաքում այդիների թիւն է 244, զոցա տարածութիւնը 288.000 քառ. սակում սաժէն։ տարեկան եկամուտը 64.494 ռուբլի։ Ազգիներից նոքա, որոնք զանուում են արքունիքի ձեռքում՝ Մուշտակով, բուսաբանականը (բուտանիկական) և պարտականը (գուրցովը) բունուում են մօտ 1918 դեսեատին քառկուսի սաժէն տարածութիւն։ Քաղաքիները՝ Ալեքսանդրեան ազգին և Պուշկինեան սկէր-ջ պէտական 350 քառ. սաժէն։ մնացածները մասնաւորների սեփականութիւն են։

**ՕԴԻ ՄԱՍԻՆ.** Պլոտի. Ասման զեկուցումն արաւ օդագնացների թիվնի ընկերութեան մէջ իւր կատարած 47 օդագնացութիւնների մասին։ Շահեկան են հետեւեալ տեղեկութիւնները։

Ամենամեծ բարձրութիւնը, որին երբ և իցէ հասել է մի օդապարիկ, լեցրած ջրածինով և բարձրացած առանց մարդու, եզել է . . . . . 18.500 մէտր

Ազգ անում է  $18\frac{1}{2}$  կիլոմէտր կամ մօտ  $17\frac{1}{4}$  վերստ։ Այդ իմացւել է օդաչափ գործիքով որ լարմարեցրած է եզել օդապարիկին։

Այդ բարձրութեան վրաէ Ցելսիուսի ջերմաչափը ցոց է տակ և աւել- $67^{\circ}$  զէրօից ներքեւ որ նոյնն է թէ— $57^{\circ}\frac{1}{4}$  Ռէօմիւրի ջերմաչափով։

Ամենամեծ բարձրութիւնը, որին երբ և իցէ հասել է օդագնացը եզել է . . . . . 9.151 մէտր

Ազգ-բարձրութեան վրաէ Ցելսիուսի ջերմաչափը ցոց է տակ  $48^{\circ}$  զէրօից ներքեւ ևսկ 7.700 մէտր բարձրութեան վրաէ նկատել են  $36\frac{1}{2}$  աստիճան զէրօից ներքեւ Ցելսիուսով։ (Ցելսիուսի ջերմաչափով 5 աստիճանը հաւասար է Ռէօմիւրի ջերմաչափի 4 աստիճանին)

ԷջՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ: Ս. Էջմիածնի տպարանից լուս տեսնող զրբերի վրաէ մերթ տպւում է «Տպարան Մալր-Աթոռուու Ս. Էջմիածնի» և մերթ «Տպարան Ո. Կաթուղիկէ Էջմիածնի»: Որ այդ երկու տեսակ անունները միենուուն տպարանին են վերաբերում, այդ գիտենք մենք և զիտեն ամենքը: Բայց միենուն հիմնարկութիւն երկու չոկ-չոկ անուններ չպատի ունենալ: ապա թէ ոչ Ս. Էջմիածնի տպարանը պէտք է ամբողջ աշխարհքում բացառութիւն ուզենաէ կազմել: Անհափառ կաթողիկոսին է պատկանում տպարանին մի անփոփոխ անուն լատիկացնել և ոչ թէ անւան ընտրութիւնը թողնել տպարանի կառավարչի կամ գուցէ և գրաշարների կոմքին:

† ՏՐԻԿՈՒՊԻՑԻ: Ապրիլի 1-ին վախճանւեց Պարիզում Յունաստանի ամենանշանաւոր քաղաքական գործիչը—Ժրիկուպիս, որը մի քանի անգամ զլուս էր լաւական մինիստրութիւնների և կամ արտաքին գործերի մինիստր: Նա ծնւել է 1832 թ. և երիտասարդ հասակից մտաւ դիլլումատիկական ասպարէզ:

† ՏՐԱՅՉԱԿԻ (Հենրիկ), լաւանի պատմարան և հրապարակախօս, վախճանւեց Բելինում, ուր նա պրոֆեսոր էր 1874 թ.-ից սկսած: Յայսնի էր որպէս նախանձախնդիր գերմանական ցեղի և լատիկապէս Պրուսիաի պատմական կոչման: Դնւած էր Գրեզզէնում, 1834 թ., 1871—84 թ. անգամ էր գերմանական պարլամէնտի, ուր մինչ 1879 թ. աղջակին-լիբերալ կուսակցութեան էր պատկանում: Գրեց «Պատմական և քաղաքական լողաւածներ», որը մի քանի տպագրութիւն անսաւ, «Տասը տարւաց գերմանական կոհիւներ, 1865—74», «Գերմանական պատմութիւն 19-րդ դարում», երեք հասոր (1879—85 թթ.) և ուրիշներ: 1866 թւականից նա հրատարակում էր Պրուսիան տարեգրութիւններ (Preussische Jahrbücher) ամսադիրը:

† ԲԱՐՈՆ ՀԻՐՇ: Ներկաւ ապրիլի կեսին վախճանւեց Ունդարիալում 64 տարեկան հասակում լաւանի գրամատէր և բարեգործ հրէաւ քարոն Մորիս Հիրշ Գերեխտեան (baron von Hirsch von Gereuth): Նորաբարեզորդութիւններից ամենալավունին է նորա 50 միլիոն ֆրանկի նէրը, որով Հարաւալին Ամերիկալում, Արգենտինան հանրապետութեան մէջ, պէտք է ընդարձակ հողեր գնւէին հրէական գաղթուներ հաստատելու համար որոնց սկզբնական ծախքերը այդ գումարից պիտի հոդացւէին: Այդ ծրագիրը կաղմնեց, երբ Ռուսիացում տարիներ առաջ սկսւեց հալածանք հրէաների դէմ: Այդ միտքը սական չկարողացաւ լիովին իրագործւել:

† ԱՅՆ ՍԵ (Say): Ապրիլի 10-ին վախճանւեց Պարիզում նշանաւոր ֆրանսիական ֆինանսագէտ Լէօն Սէ, (ծնւած 1831 թ.), թոռը

լալտնի քաղաքատնտես Ժան-Բատիստ Սէի, Լէօն Սէ մէկն էր ներկայ Փրանսիական հանրապետութեան կարեռագոյն անձերից, փինանսական ճիւղում իւր անունը կապած լինելով մէկ կողմից թիւրի և միւս կողմից Գամբետտավիչ հետ։ Ազդ նա էր Փինանսական մինիստրը Թիւրի հախազահութեան ժամանակ, երբ հարկաւոր էր Գերմանիակին վճարել 5 միլիարդ (5 հազար միլիոն) Փրանկ պատերազմական տուգանքը։ Լէօն Սէն այդ գործողութիւնը կատարեց զրեթէ անզգալի կերպով։ Ազդ մասին նա իւր զեկուցումը կարդաց պարլամէնտում 1875 թւականին։

Լէօն Սէ պարագլուխ էր Ֆրանսիակի աղատավաճառների (լիբրէշանժիստ), ալիքնքն ան ուղղութեան, որը պահանջում է կատարեալ աղատ մրցումն տնտեսական կեանքում, թէ արդինաքիրութեան և թէ ներքին ու արտաքին առեստի մէջ։ Ազդ ուղղութիւնը սական, վաղուց ի վեր արդէն ճանաչւած է որպէս անկատն և ոչ համապատասխան ներկայիս պահանջներին։ Շնորհիւ այդ ուղղութեան՝ Լէօն Սէ իր քաղաքադէտ՝ չունէր ընդհանուր ժողովրդական նութիւնն, մանաւանդ վերջին տարիներում։ Լէօն Սէ ներկայացնում էր կատարելատիվը բուրժուազիան վրերալիզմի թէ գրածքներում, թէ իր հասարակական գործիչ և թէ իւր ընկերուական կեանքում։ Ամուսնացած լինելով Հօնրալ դէբատ-ի հիմնադրի թոռան հետ Լէօն Սէ միծ մասնակցութիւն ունեցաւ այդ կարեսը թերթի դեկավարութեան մէջ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ։ Ապրիլի ամսին Լէօն Բուրժուաֆինին մինիստրութիւնը՝ ի զիմաց Սենատի հրաժարման նորա հետ գործ ունենալ աւեց իւր հրաժարականը։ Նոր մինիստրութեան գույն անցել է Մելին։ «Մուրճ. ի գալ համարում մենք առանձին չողուածութեան կը դասնանք այս քաղաքական խոշոր անցքերին։

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ առիթով մեր մ' քանի խօսքը ստիպւած ենք լիտաձգել զալ անգամին։

### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

- 1) ՇԱՆԹ.—Դուրսեցիները (վէպ)։ Արտասպած Մուրճ ամսագրից, թիֆլիս, տպ. Մ. Ռոտինիանցի, գինն է 50 կոպ։
- 2) ՍՈՒՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ. ազգային երգարան։ Հրատ. Գրիգոր քահ, Գրիգոր քահ, գորեանց։ Հասոր առաջին, Զորբորդ տպագրութիւն։ Մասկա, տպ. Ք. Բարխուդարեանի, 1894 թ. գինն է 1 ռ. 20 կոպ։
- 3) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահ։ Սրբազն պատմութիւն Նորուխտի (լարունակութիւն և վերջ)։ Գործք Առաքելոց, հատոր Գ. թիֆլիս տպ. Մ. Մարտիրոսեանցի, ընկ. 1896. գինն է 40 կոպ։

- 4) ԴԻԿԿԵՆՍ, Զարլս.—Վերագարձրած չանցաւորը (պատմւածք). Թարգմ., Արշակ Եղիգարեանց, Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1896, գինն է 8 կոպ.
- 5) ՀԱՅԿՈՒՆԻ, Ս.—Մոռու. ժողովրդական վեպ (Չարսանճակի բառբառով), բայ պատմածի Մինաս Բաբալին. Էջմիածին, տպ. Մայր Աթոռի, 1896, գինն է 25 կոպ.
- 6) ՀԱՅԿՈՒՆԻ, Ս.—Հութութիկ և Սամէլ Հովիկ. Բիւրակին լեռներուն վրայ հայ հովիւն ու հովուհին. Արատապած «Արարատ» ամսագրից: Էջմիածին, տպ. Մայր Աթոռի, 1895, գինն է 10 կոպ.
- 7) ԲԵՕՐՆՍԵՐՆԵ ԲԵՕՐՆՍՈՒՆ.—Միակնութիւն և բաղմակնութիւն: Հըրաւէր հիւսիսակին երխասարգութեան, Թարգմ. ոռուսնրէն թարգմանութիւնց Արշակ Եղիգարեան: Մասկա, տպ. Ք. Բարխուզարեանի, 1896, գինն է 30 կոպ.
- 8) ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Խշանուհի Մ. Թումանեանցի. գիրք № 1. Կարմիր զդակ (պատկերազարդ): Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1896, գինն է 20 կոպ.
- 9) ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Խշանուհի Մ. Թումանեանցի. գիրք № 2. Երկու կասուլի պատմութիւնը: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1896, գինն է 20 կոպ.
- 10) ԱԽՇԱՐՈՒՄՈՎԱ. —Շառատ: Թարգմ. ոռուսերենից: Մասկա, տպ. Ք. Բարխուզարեանի, 1896, գինն է 5 կոպ.
- 11) ՄԱԼԻՄՍԵԱՆ, Սանիան. —Ուսումնակիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան: Վիճննա, Մխիթարեան տպ. 1896, գինն է 50 կոպ.
- 12) ՄԱԼԻՄՑԻ—Նապատակ. Թարգմ. օր. Նունէ Պուլիջանեանի: Հրատ. Հալոց Հրատ. Ընկ.: Թիֆլիս, տպ. Շարամէի, 1896 թ. գինն է 7 կոպ:
- 13) ԿԱԿԱԿ-ՅԱՆՆԵՍՈՎՅ, Խ. - Армянскія надписи въ г. Григоріополѣ, Херсонской губерніи. Հանաձ. „Труды Вост. Комис. Имп. Моск. Археологич. Общ-ва.—Москва, тип. О. Гербекъ 1896, (ոչ վաճառելի):
- 14) ՅԵԼԻՆСКІЙ, С. П.—Описание города Шемахи (աւտինքն՝ Շամակի քաղաքի նկարագրը).—Тифлісъ, тип. Груз. изд. товарищ. 1896, գինը չի նշանակւած.
- 15) ԾՈՒԴԿԻԱՆՑՅ, Գաբրիելъ.—Պепо, бытовая комедия въ 3-хъ дѣйствіяхъ. Переводъ съ армянского А. Цатуріана и Ю. Веселовского, со вступительною статьей Юрія Веселовского.—Москва, тип. т-ва И. Н. Кушнеревъ и К°. 1896, գինն է 50 կոպ.

## ՖՈՏՈԳՐԱՖԻԱ ՅՈՎ. ԲԱՇԻՆՉԱՂԵԱՆԻ

Բացւած է 5-ից մայիսի 1896 թ.

Դուռը պատճենակի պրոսպեկտ, տուն Զուբալովի, № 8

Աշխատակիցներ Ս. Պետերբուրգից: Ամենակատարելագործւած ապահատներ ԴԱԼՅՄԵЙԵՐԱ և ՌՈՍՍԻ:

## ՖՈՏՈԳՐԱՖԻԱ Ի. ԲԱՇԻՆԴՋԱԳԻԱՆԻ

Открыта съ 5-го Мая 1896 г.

На Головинскимъ проспектѣ, въ домѣ Зубалова, № 8.

Сотрудники изъ С. Петербурга. Самые усовершенствованные аппараты ДАЛЬМЕЙЕРА и РОССА.

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Գարդիէլ Սունդուկեանցի

# Պ Է Պ Օ

ԿՈՄԵՖԻԱՅԻ ԱՊԻՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեցին

Ալ. ԺԱՏՈՒՐԵԱՆ եւ ԻԻՐ. ՎԵՍՆԻԼՎԱԿԻՑ

Գինն է 50 կրաքէկ

Դիմել թարգմանիչներին՝ Մոսկվա, Чистые пруды, домъ Балашовой, № 19, кв. 3.

ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒԲՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

		Բ.	Ա.
1.	ՊՌՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՑԵՑԵՐ» (վէպ) . . . . .	1	—
2.	ՏԵՐ-ԴՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳԻՒԴՐՈՐ (Դղլարցի) <sup>2</sup> «ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻ մարտզութ. գործարանների հիւանդութիւնները» . . .	05	—
3.	ԱՏՐՊԵՏԵԱՆՅ, Ս. — «ԽԵԼ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկ- ների կեանքից . . . . .	1	—
4.	ԼԵԶ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ) . . . . .	50	—
5.	Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՅԻ ՍԵՒ ՕԲԵ»: (կեանքից պատկեր) . . . . .	40	—
6.	ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵԽՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».	60	—
7.	ՊՌՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԵ», վէպ . . . . .	1	20
8.	ՓԱՓԱՉԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍՍԲԱ» (հայ բռշան. կեանքից	15	—
9.	ՄԱՐԻՄԵԱՆ, ՄԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը	50	—
10.	»       »       »       »       »       բ. մասը	75	—
11.	ՂԱՐԱԳԵԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵՒ-ԼԵԽՈՆՅԻՔ» (առհմագ. պատկ.)	15	—
12.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԽԱՆՆԵՐ».	03	—
13.	»       »       »       »       »       ՄԻՒՆԱԽ ԵՋԸ».	03	—
14.	»       »       »       »       »       «ԵԶԻԴ ԱՂՋԻԿԵ»	05	—
15.	»       »       »       »       »       «ԾԱՆՐ ՔԱՐԵ»	03	—
16.	»       »       »       »       »       «ՆԻԱԶԻՄ ԿԵԱՆՔԵ».	03	—
17.	»       »       »       »       »       «ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	03	—
18.	ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԵ»	15	—
19.	ԲԱԼԱԴԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ. — «ՄԻԿՐՈԲԵՆԵՐԵ»	10	—
20.	ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵԽՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԺԱԿԱՆՔԵ».	10	—
21.	ՏՈՒԵՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	15	—

22.	ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .	— 20
23.	ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՑԻՍՄ», Մասն ա. . . . .	— 50
24.	ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, Լեհոն. —«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» . . . . .	— 50
25.	ՇԻՐՎԱՆԶԱԴՔ. —«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» . . . . .	1 50
26.	ՍԵՆԿԵԽԻՉ, ՀԵՆՐԻԿ.—«ԱԼԱՆՅ ԴԱԿԱՆԱՆՔԻ» . . . . .	
27.	ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԽՈՐ ԴէՊՔԵՐԸ» . . . . .	
28.	«ԱԴԱՄԵԱՆՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ . . . . .	— 20
29.	ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊՆՈՑԻՍՄ», մասն բ. . . . .	— 50
30.	ՂԱՐԱՋԵԱՆ, ԳԷՈՐԳ.—«ԲԱՆԽՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄԸ Արեմուեան Եւրոպացում և Ռուսիացում» . . . . .	— 50
31.	ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԴ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱԻ. ՀԵՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . .	— 40
32.	ՓՈՓԱՋԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ԵՒՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ, (պատ- կերներ)» . . . . .	— 40
33.	ՇԱՆԹ.-ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐ. ՎԵպ . . . . .	— 50

## „ՄՈՒՐՃ“ ԱՄԱԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառական բն հեղեղեալ գներով

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ. . . . .	4 ռ. — կ
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ. . . . .	5 , — ։
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ . . . . .	10 , — ։
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ . . . . .	9 , — ։
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ . . . . .	10 , — ։
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ . . . . .	7 , — ։
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ . . . . .	8 , — ։
ԲՈԼՈՐ 7 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ . . . . .	45 » — ։
» » » » կազմով 14 հատոր . . . . .	50 ռ. — ։

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհածախիքի համար ուղարկում է մի-մի ոռորդի  
ամեն տարւայ համար:

Դիմել՝ Տիֆլիսъ, въ редакцію журнала „Мурчъ“.

20  
50  
50  
50  
0  
0  
0  
0  
0  
0  
0



# ՄԱՐԿՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՇՎԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ե Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ի Ռ Ո Ւ Յ Ե

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ 10 ռուբլի, կամ 30 ֆուանկի Առողջիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի, արհետաւորները 7 ռուբլի: Կարելի է վճարել մաս-մաս, 3 և սկզբում, 3 ռ. մինչ մարտի 1-ը, մնացեալը մինչ յուլիսի 1-ը:

Դիմել՝ Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝ Տիֆլիս. Въ Редакцію журнала „МУРЧ“. Արատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“. և կամ հետեւեալ անձերին:

ԲԱԲՈՒ—պ.պ. Ֆրիդրի Մարգանեանին և Սեղբակ Թառայեանին:  
ԲԱՅԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեալ:

ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առեւտր. բանկի ճիւղը:  
ԿԱՐՍ—պ. Արէլ Ապրեսեանին, գործակալ «Նազեթդա» ընկ.

ԱԳՈՒԽԻՄ—պ. պ. Սաեփան Արասիսանեանց և Աւետիս Գալթեանց:

ՆՈՒԽԻ—պ.պ. Աբրահամ Բունիաժեանց և Խաչատրու Խոջամիրեանց:

ՂԶԼԱԲ—պ. Հմայեակ Մաժինեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՊԱՐ—պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿՎԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան, Մ. Շորշորովի գրասենեալ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քր. Բաշինչաղեանին (Гостино. дворъ № 7):